


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ
2015թ.
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ`
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՅԹՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2015 թ. ԸՆԴՈՒՆԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Հունվար - 2016թ., ք. Երևան

ՀՏԳ- 34.25 (479.25)
ԳՄԳ- 67.99 (2Հ) 01
Հ-189

Հաստատվել է ՀՀ սահմանադրական դատարանի
19 հունվարի 2016թ. ՍԳ-ԱՌ- 4 աշխատակարգային որոշմամբ

Հ -189

«Հաղորդում ՀՀ ՍԳ- 2015թ. ընդունած որոշումների
կատարման վիճակի վերաբերյալ»
Եր.: «ՀՀ ՍԳ- աշխատակազմ», 2016, 364 էջ:

ԳՄԳ- 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

© «ՀՀ ՍԳ- աշխատակազմ», 2016

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թ. ՄԳԱՌ - 4
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ**

2015 թվականին ՀՀ սահմանադրական դատարանն մուտքագրվել է սահմանադրա իրավական խնդիր բովանդակող 205 դիմում, ինչպես նաև ներկայացվել են 2007 էլեկտրոնային /այդ թվում՝ 846 խորհրդատվություն հայցող/ դիմում և տարբեր հարցերի առնչվող 235 նամակ: Պատասխանվել է խորհրդատվություն ակնկալող 155 հարցման:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 40 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 0 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 146 դիմում,
7. իրավաբանական անձինք – 9 դիմում,
8. դատարաններ – 4 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 3 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 3 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և պատգամավորության թեկնածուներ – 0 դիմում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց թվով 155 դիմումներից 97-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 18, 32, 33 և 34-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 59 անհատական դիմում: Դրանցից քննության է ընդունվել 20-ը, մերժվել է՝ 35-ը, 4-ը տեղափոխվել է սահմանադրական դատարանի լիազումար նիստ: Երկու դիմումների հիման վրա մի-

ացյալ գործի վարույթը սահմանադրական դատարանի 07.04.2015թ. ՍԳԱՌ-19 աշխատակարգային որոշմամբ կարճվել է:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստերում քննարկվել է 4 անհատական դիմումի քննության ընդունման հարց, որի արդյունքում դրանցից 3-ն ընդունվել է քննության, 1-ը՝ մերժվել:

2015 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է 62 որոշում, որից 22-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում, 40-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում:

2015 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել 25 իրավական ակտերի՝ 25 օրենքների (որոնցից 5-ը՝ օրենսգիրք) սահմանադրականության հարցեր:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի Շ1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 11 ակտի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 45 հոդվածների կամ դրանց առանձին դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 1 դրույթի) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում՝

- վիճարկվող ակտերի 1 հոդվածի առանձին դրույթ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող.
- վիճարկվող 9 ակտեր, վիճարկվող ակտերի 4 հոդվածներ և 56 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրահրավական կոնկրետ բովանդակությամբ.
- վիճարկվող ակտերի 1 հոդված և 14 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր.
- վիճարկվող ակտերի 5 դրույթների մասով կայացրել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ.
- 1 որոշմամբ՝ 26.06.2015թ. ՍԳՌ-1222 սահմանել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու կոնկրետ վերջնաժամկետ:

ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները և դրանց կատարումը

2015 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագ-

բերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2015թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության են առնվել 40 միջազգային պայմանագրեր, այդ թվում՝ 11 բազմակողմ (2 համընդգրկուն և 9 տարածաշրջանային) և 29 երկկողմ (14-ը՝ օտարերկրյա պետությունների և 15-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ): Զննության առարկա դարձած պայմանագրերից 29-ը միջպետական են, 11-ը՝ միջկառավարական:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 40 պայմանագրերից 24-ն արդեն վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 16 պայմանագիր դեռևս չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին համապատասխան կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի հասցեականության պատշաճ մակարդակի ապահովման հիմնախնդիրը: Անցած տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով հստակեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին, նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը հիմք կհանդիսանա խուսափելու վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 10.03.2015թ. ՄԳՈ-1195 որոշման մեջ ևս անդրադարձել է նշված հիմնախնդրին՝ արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «5. Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2014թ. նոյեմբերի 12-ին Հռոմում ստորագրված՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի, Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2014թ. օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրի (ՄԳՈ-1187) և Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014թ. օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավար-

ման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի (ՄԳՈ-1186) համադրված վերլուծությունը վկայում է, որ.

- թվարկված համաձայնագրերում հատկացված միջոցների բաշխվածությունն ըստ ծրագրային բաղադրիչների (կատեգորիաների) ներկայացված է ընդհանուր գումարային (Հատուկ փոխառության իրավունքին (ՀՓԻ) համարժեք) արժեքով և տոկոսային հարաբերակցությամբ՝ որպես ընդունելի (թույլատրելի) ծախս, այսինքն՝ նշված են միայն գումարի առավելագույն չափը և տոկոսային բաշխվածությունը,
- մանրամասնված չէ ծրագրերի բաղադրիչներից յուրաքանչյուրի ենթաբաղադրիչների (ենթակատեգորիաների) համար նախատեսված գումարի չափը,
- ի տարբերություն «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային և ֆինանսավորման համաձայնագրերի, որոնց «Լրացուցիչ հմ. 3 նամակի լրացում» մասում ներկայացված են Ծրագրի արդյունքների շրջանակը և նպատակի քանակական ցուցանիշները, Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2014թ. նոյեմբերի 12-ին Հռոմում ստորագրված՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրում ներկայացված չեն ծրագրի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքները՝ ըստ քանակական ցուցանիշների, այդ ցուցանիշների մարզային կամ համայնքային բաշխվածությունը և այլն:

Ինչ վերաբերում է սույն գործով քննության առարկա Համաձայնագրում ծրագրային առանձին կատեգորիաների համար հատկացվելիք միջոցների բաշխմանը, ապա, չնայած այն ներկայացված է ըստ ենթակատեգորիաների, այնուհանդերձ, մանրամասնված չեն այդ հատկացումների նպատակային ծախսերը:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև սոցիալական բնագավառում դրված սահմանադրաիրավական խնդիրներից, և այդ պարտավորությունների բարեխիղճ կատարման դեպքում միայն դրանք սահմանադրականության խնդիր չեն կարող հարուցել:

Սահմանադրական դատարանը միաժամանակ կարևորում է վարկային համաձայնագրերով նախատեսվող ծախսային բնագավառների (կատեգորիաների) առավել հստակեցումը, ինչը սահմանադրաիրավական կայուն նախադրյալ կհանդիսանա միջազգային պարտավորությունների շրջանակներում վարկային և դրան հավասարեցված այլ միջոցների նպատակային ծախսման նկատմամբ պետական արդյունավետ հսկողություն երաշխավորելու համար»:

Իր մեկ այլ՝ ՄԳՈ-1211 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ևս արձանագրել է, որ. «... քննության առարկա Վարկային համաձայնագրով նախատեսված Ծրագիրը չունի հստակ հասցեական բնույթ, ինչը մեծացնում է վարկային միջոցների օգտագործման ռիսկայնության աստիճանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի, մասնավորապես, 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 22/5, 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 30/3 և 2014 թվականի մարտի 25-ի թիվ 10/2 որոշումներով հաստատված ընթացիկ հաշվետվություններով արձանագրվել են Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների օգտագործման տարաբնույթ խախտումներ:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ դրանց կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը ևս պահանջում է հասցեական վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի իրականացման և կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար»:

2015 թվականի նոյեմբերի 17-ի ՍԳՈ-1237 և 2015 թվականի դեկտեմբերի 1-ի ՍԳՈ-1239 որոշումներով ՀՀ սահմանադրական դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, գտել է նաև՝ «...որ առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի յուրաքանչյուր վարկային ծրագրի կատարման հաշվեքննությանն ու դրա արդյունքների հրապարակմանը: Հրատապ է նաև իրավասու պետական մարմինների կողմից վերոնշյալ վարկային համաձայնագրերով ներգրավված միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման համադրված վերլուծության ու գնահատման անհրաժեշտությունը»:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները և դրանց կատարումը

2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից սահմանադրական դատարան ներկայացված երկու դիմումներից մեկը սահմանադրական դատարան մուտքագրվել է 03.10.2014թ., ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 31.03.2015թ. /հետաձգվել է և նշանակվել 07.07.2015թ./, իսկ մյուսը սահմանադրական դատարան մուտքագրվել է 19.12.2014թ., ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 26.05.2015թ.:

03.10.2014 թվականին սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.06.2014թ. ընդունված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-67-Ն/ եւ կից՝ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն,

ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն եւ ՀՕ-77-Ն օրենքների, ինչպես նաեւ դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ եւ 10-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն իր՝ 07.07.2015թ. ՄԳՈ-1224 որոշմամբ որոշել է.

«1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վեճի առարկա 2-րդ հոդվածի 1-ին մասի 28, 36 եւ 37-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ մասը, 9-րդ հոդվածի 10-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 13-րդ մասերը, 37-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասի՝ «օրենքի 43-րդ հոդվածով» դրույթը, 39-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «որոնց կազմը եւ առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը» դրույթը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «ողջամիտ եկամտաբերություն» եզրույթը, 43-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ողջամիտ շահութաբերություն» եզրույթը, 44-րդ հոդվածի 2-րդ մասը, 46-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 62-րդ հոդվածի 5-րդ մասը, 62-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը, 63-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 67-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը, 81-րդ հոդվածի 5-րդ մասը, 81-րդ հոդվածի 7-րդ մասը, 81-րդ հոդվածի 13-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաեւ 45-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը՝ այն մասով, որով տարեկան գնաճով ճշգրտված չափով վերադարձնելու երաշխիքը չի տարածվում նաեւ տվյալ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների վրա, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 48-րդ /կետ 12/ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-68-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-69-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ եւ 10-րդ հոդվածները, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-74-Ն օրենք), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-76-Ն օրենք), «Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-70-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-71-Ն օրենք), «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-72-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-73-Ն օրենք), «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-77-Ն օրենք), «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ, թեպետ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 եւ 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանի 02.04.2014թ. ՄԴՈ-1142 որոշումն ընդունելուց հետո ՀՀ Ազգային ժողովը 21.06.2014թ. ընդունել էր «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը, այնուամենայնիվ, կուտակային կենսաթոշակային համակարգի նկատմամբ սոցիալական անվտանգությունը շարունակվում էր: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի խնդիրն էր ոչ միայն գնահատել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի սահմանադրականությունը, այլև հաշվի առնել այն հանգամանքը, թե տվյալ օրենքն ընդունելիս օրենսդիր մարմինը որքանով է հաշվի առել սահմանադրական դատարանի 02.04.2014թ. ՄԴՈ-1142 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանի 07.07.2015թ. ՄԴՈ-1224 որոշումից բխում է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքն ընդունելիս օրենսդիր մարմինը լիարժեք հաշվի չի առել սահմանադրական դատարանի 02.04.2014թ. ՄԴՈ-1142 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները:

րը, ինչը հիմք է հանդիսացել, որպեսզի սահմանադրական դատարանը բացահայտի «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի առանձին դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, իսկ նույն օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը, 44-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 45-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը ճանաչի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Սահմանադրական դատարանն առանձնահատուկ կարեւորել է հիմնախնդրի համակարգային բարեփոխումների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների համալիր իրացումը, ինչը դեռեւս բավարար չափով արված չէ:

Սահմանադրական դատարանի՝ 07.07.2015 թվականի ՍԳՈ-1224 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենքում փոփոխություն չի կատարել:

19.12.2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված մյուս դիմումի առնչությամբ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի, 298-րդ հոդվածի 3-րդ մասի, 305-րդ հոդվածի 4-րդ մասի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 223-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 26.05.2015թ. ՍԳՈ-1210 որոշմամբ որոշել է.

«1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը եւ 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասը, 298-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 305-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 223-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ, ի տարբերություն նախորդ իրավակարգավորման, որը նախատեսել էր վճարման կարգադրության ինստիտուտը, և վարչական մարմիններին կամ պաշտոնատար անձանց հնարավորություն էր ընձեռում վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով դիմել վարչական դատարան, գործող իրավակարգավորումը որդեգրել է «անբողոքարկելի վարչական ակտ»

ինստիտուտը և նախատեսել է անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա բռնագանձման արտադատական կարգ, որի պայմաններում ԳԱՀԿ որոշմամբ արգելանք է դրվում, ի թիվս այլոց, պարտապան անձի բանկային հաշիվների վրա:

Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ եզրահանգել է, որ օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում: Էականը վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է: Ընդ որում, տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը փաստել է ՀՀ օրենսդրության մեջ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցների առկայությունը:

Ինչ վերաբերում է սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափի ավելացման վերաբերյալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասին, ապա տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի դրույթները չեն կարող մեկնաբանվել եւ կիրառվել այնպես, որ սահմանափակվեն անձի՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները տուգանքի ավելացված գումարը գանգատարկելու կամ բողոքարկելու համար:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել տվյալ գործով կայացված որոշման մեջ անդրադառնալ 2012թ. նոյեմբերի 13-ի ՍԳՆ-1056 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին, այն է՝ «Ելնելով ... ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքնության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը եւ գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի եւ գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ եւ անհաղթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջեւ, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար եւ այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները»:

Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումներն ու դրանց կատարումը

Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումների մոտ 62 տոկոսը սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 32 և 33-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմնականում անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից 2015թ. քննության ընդունված 16 գործերով որոշումները կայացվելու են 2016թ. հունվար-ապրիլ ամիսներին:

2015 թվականի ընթացքում քննության առնված քսաներկու անհատական դիմումներից /դրանք ներառում են նաև 14 անհատական դիմումները, որոնք սահմանադրական դատարանում մուտքագրվել են 2014 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2015 թվականին/ 5-ը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր**, վերաբերում են հետևյալներին.

1. «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 27.01.2015թ. ՍԳ-Ռ-1189 որոշմամբ որոշել է.

«1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «...եւ այդ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ եւ չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթը՝ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 4-րդ մասի հետ, այն մասով, որով **դատարանի կողմից հարգելի ճանաչված դեպքերում** բացառություն չի նախատեսում նաեւ ավարտված սնանկության գործի շրջանակներում պահանջ չներկայացրած պարտատերերի համար, նրանց նկատմամբ սահմանելով իրավունքի պաշտպանության ոչ համաչափ սահմանափակում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ դիտարկվող կանոնակարգումը, որոշ բացառություններով (օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասեր), ազատում էր պարտապահին պարտավորությունների կատարման պարտականությունից ֆինանսական առողջացման գործընթացից հետո: Այսինքն՝ պարտատերերը պարտա-

վոր էին օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում դիմում ներկայացնել սնանկ ճանաչված անձի պարտատերերի ցանկում ընդգրկվելու համար, այլապես, եթե հետագայում սնանկ ճանաչված անձը ֆինանսապես առողջանում էր, ապա պարտատերերը գրկվում էին տվյալ անձից դատական կարգով իրենց պարտքը պահանջելու իրավունքից: Այս կապակցությամբ պարտատերերի վրա էր դրվում պարտապան անձի վերաբերյալ հնարավոր սնանկության գործի առկայության մասին տեղեկատվություն ձեռք բերելու բեռը, այն է՝ հետեւել մամուլի բոլոր հրապարակումներին եւ «www.azdarar.am» կայքին, որոնք տեղեկատվություն են պարունակում կոնկրետ պարտապանների առնչությամբ սնանկության գործերի մասին: Բոլոր այն պարտատերերը, ովքեր որեւէ պատճառով չէին տեղեկացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը կամ չեն համարվում պահանջների ընդհանուր ծավալում ամենախոշոր պահանջ հաշվառած պարտատերեր, ապա գրկվում էին իրենց իրավունքների հետագա պաշտպանության իրավական հնարավորություններից:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ բոլոր այն պարտատերերը, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն ծանոթացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը, հետագայում դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորություն պետք է ունենան:

Փաստելով, որ շահագրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* /պայման, առանց որի հնարավորը չէ/ կարելու պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, որ ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձեւական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտի (պարտապանի) բոլոր պարտատերերի հայտնաբերմանը եւ վերջիններիս՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը, սահմանադրական դատարանն առաջադրել է խնդիր օրենսդիր մարմնին՝ նախատեսել պարտապանի արդյունավետ ծանուցման եւ պարտավորությունների գրանցման ընթացակարգ, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները, նախատեսել այնպիսի կանոնակարգում, որպեսզի պարտատերը պատշաճ ծանուցում ստանա սնանկության վարույթի բացման եւ պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին, իսկ պարտապանն օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանի՝ 27.01.2015 թվականի ՄԴՌ-1189 որոշման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մշակվել էլ եւ շրջանառության մեջ է դրվել Պ-714-05.02.2015-ՊԻ-010/0 օրենսդրական նախա-

չեռնությունը՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելու վերաբերյալ:

2. «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Գվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարոզյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 03.03.2015թ. ՍԳՈ-1192 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաեւ անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ մինչեւ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ընդունումը ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքով ՀՀ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը միայն փաստաբանի միջոցով բերելու պարտադիր պահանջ առկա չէր, այսինքն՝ նախատեսված էր վճռաբեկ բողոքն անմիջականորեն ներկայացնելու կարգ: Մինչդեռ դիտարկվող դրույթը ոչ միայն սահմանում էր վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ, այլև բացառում էր վճռաբեկ բողոքն անմիջականորեն բերելու հնարավորությունն այն սուբյեկտների համար, ովքեր վճարումակ չեն: Փաստորեն, դիտարկվող կանոնակարգմամբ գործում էր միայն միջնորդավորված՝ եւ այն էլ միայն փաստաբանի միջոցով, վճռաբեկ դատարան դիմելու կարգը: Այսինքն՝ վերացվել էր այն միակ անհրաժեշտ ուղին, որով ապահովվում էր վճռաբեկ դատարան անմիջականորեն դիմելու հնարավորությունը: Նման իրավակարգավորման արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունն էապես սահմանափակվել էր՝ չնայած փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-765 եւ ՍԳՈ-833 որոշումների առկայությանը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը, վերահաստատելով ՍԳՈ-765, ՍԳՈ-833 որոշումներում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի առնչությամբ ամրագրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ դրանք անտեսվել են հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում: Մասնավորապես, այդ դիրքորոշումները վերաբերում են նրան, որ ՀՀ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու

առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում, որ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաեւ հավասարությունը դատավարության մասնակիցների միջեւ՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով, որ նշված ինստիտուտի գործունեությունն ունի ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթ, որի վրա հիմնված են հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից:

Սահմանադրական դատարանի՝ 03.03.2015 թվականի ՄԳՌ-1192 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնությունն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

3. «Քաղաքացիներ Վալենտինա Մկրտիչյանի եւ Սոֆյա Թորոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2015թ. ՄԳՌ-1196 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավարության այն մասնակիցների մասով, ովքեր չունեն պաշտպան եւ որոնց համար օրենքով սահմանված կարգով երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաեւ անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին պաշտպան չունեցող եւ օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած դատավարության մասնակիցների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն

առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ այնպես, ինչպես արձանագրվել էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նմանատիպ հարցի վերաբերյալ 03.03.2015թ. կայացված ՄԳՈ-1192 որոշման մեջ, այս դեպքում ևս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասում, 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները ոչ միայն սահմանում էին վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ, այլև բացառում էին վճռաբեկ բողոքն անմիջականորեն բերելու հնարավորությունը: Փաստորեն, դիտարկվող կանոնակարգումներով գործում էր միայն միջնորդավորված եւ այն էլ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու կարգը: Այսինքն՝ այս դեպքում ևս վերացվել էր այն միակ անհրաժեշտ ուղին, որով ապահովվում էր վճռաբեկ դատարան անմիջականորեն դիմելու հնարավորությունը: Նման իրավակարգավորման արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունն էապես սահմանափակվել էր՝ չնայած փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-765 եւ ՄԳՈ-833 որոշումների առկայությամբ:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը, վերահաստատելով ՄԳՈ-765, ՄԳՈ-833, ՄԳՈ-1192 որոշումներում հավատարմագրված փաստաբանի և փաստաբանի ինստիտուտի առնչությամբ ամրագրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ այս դեպքում ևս դրանք անտեսվել են հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում:

Սահմանադրական դատարանի՝ 17.03.2015 թվականի ՄԳՈ-1196 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

4. «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի եւ Կարապետ Հաջիյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 231-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 16.06.2015թ. ՄԳՈ-1220 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջանում

անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաեւ անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 4-րդ մասը՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին փաստաբան չունեցող եւ օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած՝ գործին մասնակցող անձանց մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ այնպես, ինչպես արձանագրվել էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նմանատիպ հարցի վերաբերյալ 03.03.2015թ. կայացված ՄԳՈ-1192 որոշման մեջ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասում, 231-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթները ոչ միայն սահմանում էին վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ, այլև բացառում էին վճռաբեկ բողոքն անմիջականորեն բերելու հնարավորությունը: Փաստորեն, դիտարկվող կանոնակարգումներով գործում էր միայն միջնորդավորված եւ այն էլ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու կարգը: Այսինքն՝ այս դեպքում ևս վերացվել էր այն միակ անհրաժեշտ ուղին, որով ապահովվում էր վճռաբեկ դատարան անմիջականորեն դիմելու հնարավորությունը: Նման իրավակարգավորման արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունն էապես սահմանափակվել էր՝ չնայած փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-765 եւ ՄԳՈ-833 որոշումների առկայությանը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը, վերահաստատելով ՄԳՈ-765, ՄԳՈ-833, ՄԳՈ-1192 որոշումներում հավատարմագրված փաստաբանի և փաստաբանի ինստիտուտի առնչությամբ ամրագրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ այս դեպքում ևս դրանք անտեսվել են հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում:

Սահմանադրական դատարանի՝ 16.06.2015 թվականի ՄԳՈ-1220 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնությունն ղեռնա չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

5. «Քաղաքացի Սամվել Ալավերդյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»

գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 26.06.2015թ. ՄԳՌ-1222 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածն այն առումով, որով արգելափակվում է ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության վիճարկումը «նոր երեւան եկած» իրավաչափ այլ հանգամանքների հիմքերով՝ հանգեցնելով անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի երկրորդ մասին, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի ուժը կորցնելու արդյունքում հաստատվելիք իրավական անվտանգությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասով, սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ հաշվի առնելով նաեւ հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին»:

Փաստվել է, որ իրականության մեջ առկա են տարբեր հանգամանքներ, որոնք իրենց բնույթով կարող են դատական ակտի վերանայման հիմք հանդիսանալ, մինդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում սպառնիչ կերպով թվարկված են նոր երեւան եկած հանգամանքները, ինչը հնարավորություն չէր տալիս դատարաններին, այդ հիմքերից բացի, դատական ակտի վերանայման համար այլ հիմք կիրառել: Կոնկրետ դեպքում իրականության մեջ առկա էր մի իրավիճակ, երբ ՀՀ դատական համակարգի երկու դատական ակտեր հակասում էին միմյանց: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանի դատական ակտով հաստատվել էր պարտավորության մի չափ, իսկ քրեական գործով կայացված դատական ակտով նույն պարտավորության մեկ այլ չափ էր ամրագրվել, և գործող օրենսդրությունը չէր նախատեսում այս իրավիճակի լուծման որեւէ կառուցակարգ:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը գտել է, որ եթե որպես «նոր երեւան եկած» հանգամանք գնահատելի այլ փաստարկների (ապացույցների) հիմքերով դատական ակտի օրինականությունը կասկածախարույց է, ապա օրենսդիրը պարտավոր է տվյալ գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում ոչ թե սահմանափակել նման ակտի վիճարկման իրավական հնարավորությունը, որն ուղղակի սահմանափակում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի իրավունքներն ու դրանց դատա-

կան պաշտպանության հնարավորությունը, այլ ընդլայնել որպես «նոր երեսան եկած» գնահատելի այլ հանգամանքները դատավարական համապատասխան գործընթացների շրջանակներում քննելու եւ դրանց իրավագնահատման արդյունքում գործին արդար լուծում տալու միջոցները՝ ապահովելով անձի իրավունքների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածների եւ 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ եւ 19-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

2015 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 26.06.2015թ. ՄԳՈ-1222 որոշման ընդունումից հետո, նշյալ իրավական ակտում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չեն անդրադարձել: Սրեղծված իրավիճակը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր, հարկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի կողմից հստակ արչանագրվել էր, որ գործող օրենսդրական կարգավորումները հանգեցնում են դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների սահմանափակման, սակայն հաշվի առնելով այն, որ հակասող ճանաչելը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի ուժը կորցնելու արդյունքում հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել էր 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ հաշվի առնելով նաև հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնելու ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին:

Նման իրավիճակները բացառելու համար օրենքով հստակ կարգավորում պետք է ստանա սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործընթացը:

Մյուս անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը կամ օրենքի վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ: Նշված դիմումներից ներկայացվում են հետևյալները.

ա/ «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարգարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 154-րդ

հողվածի 4-րդ մասի եւ 158-րդ հողվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 03.03.2015թ. ՄԳՈ-1192 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հողվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հողվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու վերաբերյալ դրույթում «էլեկտրոնային տարբերակը» հասկացությունը փակագծերի մեջ բացահայտված է որպես «էլեկտրոնային կրիչ»՝ առանց կոնկրետացնելու էլեկտրոնային փաստաթղթի ձևաչափն ու էլեկտրոնային կրիչի տեսակը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... թեպետ սույն հողվածով «էլեկտրոնային տարբերակը» հասկացությունը փակագծերի մեջ բացահայտված է որպես «էլեկտրոնային կրիչ», սակայն այս եզրույթները նույնական չեն. առաջինը վերաբերում է վճռաբեկ բողոքի տեքստը պարունակող համակարգչային նիշքին (ֆայլին), որը մատչելի է համակարգչային որևէ ծրագրի, իսկ երկրորդը՝ այդ տեքստը պահպանելու եւ փոխանցելու համար պիտանի տեխնիկական սարքին: Սահմանադրական դատարանը կարևորում է այս տարբերակումը, քանի որ բողոքի էլեկտրոնային տարբերակը հնարավոր է ներկայացնել ոչ միայն էլեկտրոնային կրիչի, այլև՝ էլեկտրոնային փոստի միջոցով ... Ուստի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հողվածի 5-րդ մասում ամրագրված պահանջը չի վերաբերում բացառապես բողոքի փաստաթղթային տարբերակին կից էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելուն, այլ թույլ է տալիս անձին ներկայացնել բողոքի էլեկտրոնային տարբերակը նաեւ էլեկտրոնային փոստի միջոցով»:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանի կողմից օրենսդիր մարմնին և իրավակիրառողին խնդիր է առաջադրվել առ այն, որ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հողվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջի իրացման միատեսակության ապահովման համար համապատասխան միասնական չափանիշները **պետք է ստանան իրավական ամրագրում**: Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է, որ այն դեպքերում, երբ անձի վրա դրվում է պարտականություն փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացնել նաեւ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը կամ ուղղակիորեն դիմել համապատասխան մարմնին էլեկտրոնային եղանակով, մանրամասնորեն սահմանվում են փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներին ներկայացվող պահանջները եւ հասանելի են լինում համապատասխան մարմնի պաշտոնական

Էլեկտրոնային կայքէջում (Կանադա, Մեծ Բրիտանիա եւ այլն) ... **իսկ մինչ այդ իրավակիրառական պրակտիկական պետք է զարգանա սույն որոշման մեջ խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:**

Սահմանադրական դատարանի՝ 03.03.2015 թվականի ՄԳՈ-1192 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

բ/ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի և «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 279-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 20.10.2015թ. ՍԳՈ-1234 որոշմամբ որոշել է.

«1. «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:** Այդ իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն իրավաչափ հիմք կարող է հանդիսանալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրույթում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և 279-րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արձանագրված իրավակարգավորումների շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքների պաշտպանության առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի

2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 279-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում չի կարող «այլ հաղորդումների գաղտնիության բացահայտման» արտահայտության մեջ ընդգրկվել «տեղեկատվության աղբյուրի բացահայտումը», ինչն ունի այլ նյութաիրավական հիմք եւ ինքնուրույն իրավակարգավորման առարկա է»:

Տվյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը որոշակիություն մտցրեց տվյալ հարցում, գտնելով, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է համարվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ **աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր հանցագործությունը կանխելու կամ ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:** Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից **ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող:**

Սահմանադրական դատարանն էապես կարեւորում է սույն որոշման դերը Հայաստանի Հանրապետությունում մամուլի ազատության երաշխավորման գործում.

զ/ «Ալիսա Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 22.12.2015թ. ՍԳՌ-1249 որոշմամբ որոշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՌ-1052 որոշման առկայության պայմաններում անձանց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ձևակերպումը տարակարծիք մեկնաբանությունների տեղիք էր տալիս. սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված վճռաբեկ բողոքի դեպքում անհրաժեշտ է, արդյոք, ներկայացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, եթե ժամկետը բաց է թողնվել այն պատճառաբանությամբ, որ բողոքարկվող դատական ակտը բողոք ներկայացնող անձն ստացել է ավելի ուշ ժամկետներում, և

այդպիսի միջնորդության բավարարումը դատարանի իրավունքն է, թե՛ պարտականությունը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանը բացահայտել է վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը և գտել, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով /ex jure/ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

Միաժամանակ, տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը նշելով, որ, մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից՝ օրենսդրին առաջադրվել է խնդիր օրենսդրորեն ամրագրել հարգելիության որոշակի խումբ հիմքեր:

Սահմանադրական դատարանի՝ 22.12.2015 թվականի ՄԳՌ-1249 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնությունն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

ՀՀ դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

2015 թվականի ընթացքում ՀՀ դատարանների հինգ դիմումներից /ներառյալ մեկ դիմումը, որը սահմանադրական դատարան մուտքագրվել էր 2014 թվականի հոկտեմբերին, սակայն դրա հիման վրա գործը քննության է առնվել 2015 թվականին/ 2-ը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր**, վերաբերում են հետևյալին.

1. «ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի եւ 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 09.06.2015թ. ՄԳՌ-1213 որոշմամբ որոշել է.

...

«2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «... ինչպես նաեւ մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավա-

րական օրենքի էական խախտումների» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ եւ 19-րդ հոդվածների պահաջներին հակասող եւ անվավեր»:

Ուշադրության է արժանի այն, որ իրավակիառական պրակտիկայում ձևավորվել է մի վիճակ, որի պայմաններում գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանը գնահատում էր մինչդատական վարույթում քրեադատավարական օրենքի էական խախտման հնարավոր փաստը և ըստ այդմ էլ որոշում էր կայացնում դատական քննություն նշանակելու մասին: Այսինքն, եթե դատարանը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում գտնում էր, որ մինչդատական վարույթում տեղի է ունեցել քրեադատավարական օրենքի էական խախտում, ապա հարցը մտնում էր փակուղի, առաջանում էր իրավական անորոշություն այն պատճառով, որ «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի՝ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրումը փոխկապակցված էր քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի հետ, որի իրացման հիմքում ընկած իրավակարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Մասնավորապես, սահմանադրական դատարանը 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը բովանդակություն էր ստանում հակասահմանադրական ճանաչված նորմերի հետ հարաբերակցությամբ: Ներկայումս, բնականաբար, այդ եզրույթը դարձել է կիրառման տեսանկյունից անհնար, եւ այն ունակ չէ միջամտելու քրեադատավարական առկա իրավահարաբերություններին, առկա չեն իրավական գնահատման օբյեկտիվ չափանիշներ՝ դրանով առաջացնելով իրավական անորոշություն: Միևնույն ժամանակ, տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը հանդես է գալիս որպես հակասահմանադրական ճանաչված դրույթների ամբողջականության բաղադրատարր, **ինչն օրենսդրի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությամբ չի շտկվել:**

Տվյալ գործով սահմանադրական դատարանը գտել է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են եւ պետք է դառնան համարժեք գնահատման առարկա:

Սահմանադրական դատարանի՝ 09.06.2015 թվականի ՍԴՈ-1213 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

2. «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 06.10.2015թ. ՄԳՌ-1231 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ «ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների եւ 92-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննությունը եւ լուծումը վերապահված էր նույն՝ վարչական դատարանին, թեկուզև կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում գործում է վարչական դատարանների եռաստիճան համակարգ, որի շրջանակներում վերաքննիչ բողոքների համար նախատեսված է վարչական վերաքննիչ դատարան: Այսինքն՝ խախտված էր ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական ատյանների աստիճանակարգությունը, անձի դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացումը, այլև վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները նույն դատարանի կողմից քննելու պարագայում առաջանում էր դատարանի անկողմնակալության վերաբերյալ ողջամիտ կասկած:

Սահմանադրական դատարանի՝ 06.10.2015 թվականի ՄԳՌ-1231 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

Մնացած երեք դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքի վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ: Նշված դիմումներից ներկայացվում են հետևյալները.

ա/ «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 10.02.2015թ. ՄԳՌ-1190 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը վարչական դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքում չէր նախատեսում վարչական դատարանի՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտը՝ գործնականում բացառելով այդ ակտի բողոքարկման հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության նախկին **(28.11.2007թ.)** օրենսգրքի իրավակարգավորումները նախատեսել են գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ինչն իրավակիրառական պրակտիկայում, մինչև **ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի** ուժի մեջ մտնելը, իրացվել է:

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ եւ ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ **գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով՝** առաջնորդվելով մարդու եւ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի եւ դրա կարելու բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, **իրավունքի աղբյուր են** դառնում իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները պետք է դրվեն ինչպես իրավակիրառական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրական զարգացումների հիմքում»:**

Մինևույն ժամանակ, տվյալ գործով կայացված որոշման մեջ փաստելով այն հանգամանքը, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից լիարժեք հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-719, ՍԳՈ-936, ՍԳՈ-1037 որոշումներում արտահայտված հստակ եւ հետետողական իրավական դիրքորոշումները: Բավարար հետետողականություն չի ցուցաբերվել քննության առարկա հարցի մասով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ եւ համահունչ զարգացնելու առումով: Չեն ապահովվել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները: Սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում սահմանադրական դատարանի՝ վերը հիշատակված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կյանքի կոչելու անհրաժեշտության վրա:

Բացի նշվածից, տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0), որով, ի թիվս այլ հարցերի, նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1. մասով. «2.1. Գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով»:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի՝ 10.02.2015թ. ՍԳՈ-1190 որոշումն ընդունելուց հետո դեռեւս չի ընդունել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0)՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտի բողոքարկման վերաբերյալ դրույթները.

բ/ «Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.07.2015թ. ՍԳՈ-1225 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ նախաքննության ժամկետի երկարացման

ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում առկա էր օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշություն, ինչի հետևանքով առկա չէր նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միասնական իրավակիրառ պրակտիկա: Ավելին, ձեռավորվել էին նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ հետևյալ տարբեր մոտեցումները.

- նախաքննության ժամկետը երկարացվում էր քրեական վարույթ իրականացնող քննիչի՝ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության մասին որոշման վերին աջ անկյունում տպագրված նշագրման ազատ հատվածում դատախազի ստորագրություն դնելով,
- հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման վրա՝ վերին մասում կամ որոշման եզրափակիչ մասից հետո ձեռագիր կերպով երկարացնում կամ չէր երկարացնում նախաքննության ժամկետը, ընդ որում, որոշ դեպքերում համապատասխան գրառման բացակայության պատճառով պարզ չէր լինում, թե ինչ ժամանակով է երկարացվել նախաքննության ժամկետը,
- հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման հիման վրա կայացնում էր առանձին դատավարական ակտ:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ տվյալ դեպքում առկա է օրենսդրական բաց, որը պետք է հաղթահարվի օրենսդիր մարմնի կողմից, ինչը հաղթահարելու համար հարկավոր է լրացնել նախաքննության ժամկետի երկարացման ինստիտուտն անհրաժեշտ նորմատիվ պատվիրաններով, որոնք բացակայում են այդ ինստիտուտում:

Սահմանադրական դատարանը գտել է, որ հակասական իրավակիրառական պրակտիկան կարող է հաղթահարվել օրենսդրական կարգավորումների հստակեցման, ինչպես նաև դատախազական հսկողության իրականացման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջի ամրագրման պայմաններում:

Սահմանադրական դատարանի՝ 28.07.2015 թվականի ՄԳՈ-1225 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված երեք դիմումներից երկուսի հիման վրա քննության ընդունված գործերը միավորվել են, և միավորված գործի դատաքննությունը նշանակվել է 2016 թվականի փետրվարի 2-ին:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված մյուս դիմումի հիման վրա քննության ընդունված գործը միավորվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպա-

նի դիմումի հիման վրա քննության ընդունված գործի հետ, և միավորված գործով սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 2015 թվականի նոյեմբերի 17-ին: Այսպես. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.11.2015թ. ՍԳՈ-1236 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրախրավական բովանդակության շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրախրավական բովանդակությունը հանգում է հետևյալին.

առաջին՝ այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում,

երկրորդ՝ մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**,

երրորդ՝ մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ**»:

Վիճարկվող նորմի անորոշության հետևանքով իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել է մի վիճակ, որի պայմաններում գործնականում հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները միևնույն հիմքով մի քանի անգամ վերացնելու դեպքում անձն անորոշ ժամկետով հայտնվում է քրեական հետապնդման մեջ: Իսկ տուժողի շահերի տեսանկյունից, վիճարկվող նորմի անորոշության հետևանքով վտանգվում էր հանցագործությունից տուժած անձանց՝ իրավունքների և ազատությունների պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Ընդ որում,

վիճարկվող նորմի անորոշությունն առաջացնում էր կարծիք, որ հսկող դատախազն իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը՝ առանց քանակական սահմանափակման: Բացի դրանից, հստակ չէր, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործվող «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը, թե՛ 7-օրյա ժամկետին: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը գործնականում զրկում էր հսկող դատախազին հետաքննության մարմնի ու քննիչի՝ քրեական գործը կարճելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին օրենքի խախտմամբ կայացված որոշումը վերացնելու օբյեկտիվ հնարավորությունից, իսկ գլխավոր դատախազին՝ իր սահմանադրական լիազորությունների լիարժեք կատարման հնարավորությունից: Այդ կապակցությամբ, ինչպես նշվեց, սահմանադրական դատարանը վիճարկվող նորմին տալով դրա սահմանադրահրավական բովանդակությունից բխող մեկնաբանություն՝ դրանով իսկ վերացրել է վիճարկվող նորմի անորոշության հետևանքով իրավակիրառ պրակտիկայում առկա տարաձայնությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված երեք դիմումներից մեկի հիման վրա գործով դատաքննությունը նշանակված է 26.01.2016 թվականին:

Մինչույն ժամանակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2014 թվականի հոկտեմբերին և նոյեմբերին ներկայացված երկու դիմումների հիման վրա գործերով սահմանադրական դատարանը որոշումներ է կայացրել 2015 թվականի ապրիլին:

2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հինգ դիմումներից /ներառյալ երկու դիմումները, որոնք սահմանադրական դատարան մուտքագրվել են 2014 թվականի հոկտեմբերին և նոյեմբերին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2015 թվականին/: Մեկը, որով օրենքի վիճարկվող դրույթը **ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր**, վերաբերում է հետևյալին. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.04.2015թ. ՄԳ-Ռ-1197 որոշմամբ որոշել է.

...

«2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ այնքանով, որքանով գործունակ ճանաչվող անձին հնարավորություն չի ընձեռում անձամբ իրացնել լավելու իր իրավունքը եւ հանդես գալ որպես դատավարության մասնակից, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին եւ 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթն ապաքինված անձի իրավունքների իրականացման առնչությամբ սահմանափակվում էր միայն դատական նիստին վերջինիս ներկա գտնվելու հնարավորություն սահմանելով: Ստացվում էր, որ գրկված չլինելով իրավասություններից՝ անձը, ում գործունակության հարցն էր քննվում դատարանում, դատական նիստին կարող էր մասնակից լինել որպես լրկ «դատաքննության օբյեկտ»: Այսինքն՝ այն անձանց համար, ում գործունակությունը քննվում էր դատարանում, հստակ չէին ապահովվում իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության եւ դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Ընդ որում, նշված հիմնախնդիրը չէր կարող որեւէ հիմնավոր ու ամբողջական լուծում ստանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի վիճարկվող դրույթի շրջանակներում: Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում, եւ այն հնարավոր է հաղթահարել օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով:**

Անդրադառնալով անձին գործունակ, անգործունակ եւ սահմանափակ գործունակ ճանաչելու ինստիտուտներին՝ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում է նաև օրենսդրին **առաջադրված խնդիր** առ այն, որ **հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում առավել ամբողջական պետք է դարձնել անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը՝ դրանով բացառելով անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները:**

Վերը նշված խնդրի առնչությամբ սահմանադրական դատարանը տվյալ գործով կայացված որոշմամբ ի գիտություն է ընդունել այն փաստը, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի թիվ Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0 նախագիծը, որով օրենսդիրը փորձում է լուծել դիմումում բարձրացված հիմնախնդիրները: **Սահմանադրական դատարանի կողմից արձանագրվել է, որ վերը նշված օրենսդրական նախագծի քննարկման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ տվյալ գործով կայացված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Նշված նախագծի՝ ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ ընդգրկելը ՀՀ**

Ազգային ժողովի 27.04.2015թ. որոշմամբ հետաձգվել է մեկ տարով, այնուհետև համապատասխան նախագիծը 15.05.2015թ. լրամշակվել է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մյուս դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանը թեև վիճարկվող իրավանորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործերով ընդունված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, սակայն տվյալ գործերով ընդունված որոշումներում արձանագրել է իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտել է համապատասխան դիրքորոշումներ: Նշված դիմումներից ներկայացվում են հետևյալները.

ա/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.04.2015թ. ՄԳՈ-1203 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված՝ վեճի առարկա դրույթը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: Իրավակիրառ պրակտիկայում տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել եւ կիրառվել այնպես, որ.

ա/ նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն,

բ/ տուգանք նշանակվի եւ գանձվի այն պարագայում, երբ տարբեր պատճառներով ավելի մեծ ցույց տրված վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման:

Այս մոտեցումը պետք է որդեգրվի նաեւ հինգ տարվա ընթացքում փոխանցվող վնասի հաշվարկման դեպքում: Իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից չի բխում այն մոտեցումը, երբ նախապես տուգանք կարող է սահմանվել եւ հաշվարկվել ենթադրյալ /հնարավոր/ խախտումների համար»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի վիճակ, որի պայմաններում հաշվարկված վնասն ավել ցույց տալու համար անձը կարող էր տուգանվել՝ առանց հաշվի առնելու, թե հաշվարկված վնասն ավել ցույց տալը հանգեցրել է շահութահարկի նվազեցմանը, թե՛ ոչ: Այսինքն՝ դրանով պետությանը հասցվել է գույքային վնաս, թե՛ ոչ: Այդ է պատճառը, որ օրենքի վիճարկվող դրույթը ճանաչելով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է այդ դրույթի սահմանադրահարավական բովանդակությունը, միաժամանակ սահմանելով այն մոտեցումը, որը պետք է որդեգրվի իրավակիրառ պրակտիկայում:

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ վերը նշված իրավական դիրքորոշումները համակարգային ձեռնարկով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում:

2015 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 28.04.2015թ. ՄԳ-Ո-1203 որոշման ընդունումից հետո, նշյալ իրավական ակտերում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չեն անդրադարձել:

բ/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասության, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասության և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 08.12.2015թ. ՄԳ-Ո-1244 որոշմամբ որոշել է, որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությամբ, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները, ինչպես նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված նորմը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ նշված որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

Իրավակիրառական պրակտիկայում ձևավորվել էր մի վիճակ, որի պայմաններում կրոնական համոզմունքներ ունեցող անձը հայտնվում է իրավական երկրնտրանքի առջև. կամ կատարել օրենքի պահանջը՝ հրաժարվելով ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով, 27-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իր համոզմունքներից, այսինքն՝ նույնականացման քարտ ստանալու համար ոստիկանության մարմնում հանձնել աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրշմները, կամ չկատարել այդ պահանջը՝ համապատասխանաբար իրացնելով իր սահմանադրական իրավունքը (հավատարիմ մնալով իր համոզմունքներին):

Տվյալ գործով կայացված որոշմամբ, արձանագրելով իրավակարգավորման բացի առկայության փաստը, սահմանադրական դատարանն **արձանագրել է, որ օրենսդրի կողմից պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կբացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով, ինչպես նաև այնպիսի այլընտրանքային ընթացակարգեր, որոնց պարագայում անձը կամընտրական հնարավորություն ունենա իր կրոնական համոզմունքներին համահունչ համապատասխանեցնելու իր վարքագիծը:**

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը **որպես խնդրի ժամանակավոր լուծման տարբերակ դիտարկել է համապատասխան փոփոխությունների կատարումը ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետու-**

թյունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման մեջ՝ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար երկարացնելով նախկին նմուշի անձնագրերի վավերականության ժամկետը:

Միաժամանակ, տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավական այնպիսի համարժեք պայմանների ստեղծումը, երբ հստակեցված է անձնական (կենսաչափական) տվյալների հավաքման իրավական նպատակը, **օրենքով չնախատեսված այլ նպատակներով (պայմաններով) օգտագործման բացառումը պետության սահմանադրաիրավական պարտականությունն է, ինչը միտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 11.3-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված և մի շարք այլ սահմանադրաիրավական նպատակներով պայմանավորված խնդիրների լուծմանը:** Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ իրավակարգավորման այսպիսի սկզբունքի ընկալման և կիրառման պայմաններում տվյալ գործով վիճարկվող նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցի:

2015 թվականին ՀՀ կառավարությունը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 08.12.2015 թվականի ՄԳՈ-1244 որոշման ընդունումից հետո, նշյալ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ չեն կատարել և դեռևս համապատասխան նախաշեռնությանը հանդես չեն եկել:

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՃԱԿԸ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

2015 թվականին սահմանադրական դատարանի տվյալ և նախորդ տարիներին ընդունած որոշումների և իրավական դիրքորոշումների իրացումը շարունակում է հրատապ խնդիր մնալ: Այդուհանդերձ, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, նախապատրաստվել են առանձին օրինագծեր: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախապատրաստվել են ՀՀ կառավարության՝ թվով մեկ, իսկ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից՝ երեք օրենսդրական նախաձեռնություններ:

1) 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ ՄԳՈ-1082 որոշման կապակցությամբ 19.03.2014 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

2) 2014 թվականի ապրիլի 8-ի ՄԳՈ-1143 որոշման կապակցությամբ 06.02.2015 թվականին ՀՀ Ազգային ժողովում մշակվել է և շրջանառության մեջ է դրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

պետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-717-06.02.2015-ՊԻ-010/0),

3) 2014 թվականի փետրվարի 4-ի ՍԳՈ-1137 որոշման կապակցությամբ 03.07.2014 թվականին ՀՀ Ազգային ժողովում մշակվել է և շրջանառության մեջ է դրվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն է լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-562-03.07.2014-ՊԻ-010/0), որը 05.09.2014 թվականին ընդգրկվել է Ազգային ժողովի օրակարգ,

4) 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-1140 որոշման կապակցությամբ 22.01.2015 թվականին ՀՀ Ազգային ժողովում մշակվել է և շրջանառության մեջ է դրվել «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-703-22.01.2015-ՄԻ-010/0): Նշված նախագծի` ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ ընդգրկելը ՀՀ Ազգային ժողովի 23.03.2015թ. որոշմամբ հետաձգվել է մեկ տարով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ արմատապես վերանայման անհրաժեշտություն ունի սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների իրացման գոյություն ունեցող պրակտիկան: Նշված խնդրի հրատապությունը պայմանավորված է հատկապես նրանով, որ 2015 թվականին նույնիսկ այն պարագայում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը 26.06.2015թ. ՍԳՈ-1222 որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի` ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնաժամկետ **սահմանել էր 2015 թվականի դեկտեմբերի 31-ը` հնարավորություն տալով Ազգային ժողովին` հաշվի առնելով նաև հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնելու ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին, շուրջ հինգ ամսվա ընթացքում այս հարցին լուծում չի տրվել: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սա արտառոց դեպք է, անհամատեղելի իրավական պետության հիմնարար բնութագրիչների հետ և երկրի իրավական անվտանգության սպառնալիք կարող է դառնալ: ՀՀ Ազգային ժողովի կողմից դեռևս չի ձևավորվել հստակ համակարգ, որպեսզի երաշխավորվի սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք իրացումը և սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը պատշաճ ձևով հաշվի առնվի որպես իրավունքի կարելուր աղբյուր:**

Հարկ է նկատի ունենալ, որ իրավական դիրքորոշումները հանդիսանում են սահմանադրական դատարանի որոշումների անքակտելի բաղկացուցիչ մասը, և

այդ առումով բացառիկ կարեւորություն ունեն սահմանադրական դրույթների մեկնաբանության, այլ իրավանորմների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և, ընդհանուր առմամբ՝ քննարկվող որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու տեսանկյունից:

Եզրահանգումը միանշանակ է՝ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք պետք է երաշխավորեն սահմանադրական դատարանի որոշումների կատարումը և իրավական դիրքորոշումների իրացումը: Նշվածը պետք է հանդիսանա իրավական պարտավորություն, այլ ոչ հայեցողական գործողություն: Ընդ որում՝ Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության ապահովման նպատակով Գատարանի որոշումների հիման վրա իրավական համակարգում կատարվող փոփոխությունները պետք է ոչ թե դրվագային բնույթ կրեն, այլ ընդգրկեն վերաբերելի իրավահարաբերությունները կարգավորող եւ փոխկապակցված իրավակարգավորումների ողջ շղթան:

2. Երկրում սահմանադրականության հաստատման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ինչին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաեւ նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում: ՀՀ սահմանադրական դատարանը շարունակում է կարեւորել հիշյալ սկզբունքի հետեւողական իրացման անհրաժեշտությունն ինչպես օրինաստեղծ գործունեության մեջ, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում: Իրավունքի գերակայությունը պետք է հանդես գա որպես անհատի սոցիալական վարքագծի, հանրային իշխանության եւ քաղաքական համակարգի հենքը: Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները պետության կողմից ճանաչվելով որպես բարձրագույն արժեք՝ **պետք է պայմանավորեն իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորեն իրավունքով իշխանության սահմանափակումը:**

Սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հռչակեն մարդու սահմանադրական իրավունքը, այլև **առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները:** Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, գուճակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով:

Սահմանադրական դատարանի կողմից քննվող գործերը վկայում են, որ այս հարցում լրջագույն խնդիրներ են առկա թե՛ իրավաստեղծ գործունեության մեջ եւ թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Խնդրի սահմանադրական լուծումները նոր որակ են ստացել սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Գլխավոր խնդիրը նոր հնարավորությունների համակարգային ու հետեւողական ապահովումն է:

3. ՀՀ Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության երաշխավորման տեսանկյունից բացառիկ կարեւորություն է ձեռք բերել անհատի սոցիալական վարքագծի եւ պետական իշխանության մարմինների հանրային-իրավական վարքագծի սահմանադրականացումը: Հանրային իշխանության իրավական վարքագծի սահմանադրականացման մեջ չափազանց կարևոր դերակատարություն ունի հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության մարմինների կազմակերպման եւ գործունեության ընդհանուր սկզբունք: Ընդ որում՝ այս սկզբունքը ոչ միայն նեգատիվ, այլ նաեւ պոզիտիվ բնույթ ունի, ինչը ենթադրում է, որ վերջինիս պատշաճ իրացումը պահանջում է սահմանադրական մշակույթի բավարար մակարդակ և հանրային իշխանության յուրաքանչյուր մարմնի ակտիվ դերակատարություն: Այդ հանգամանքը, սակայն, դեռեւս բավարար չափով չի դրսևորվում եւ այդ համատեքստում առաձնակի կարեւորություն են ստանում հետեւյալ իրողությունները՝

ա) լրջագույն խնդիրներից մեկը Սահմանադրության գերակայության երաշխավորման առնչությամբ պետական տարբեր կառույցների լիազորությունների ոչ արդյունավետ իրացումն է: Սույն հաղորդման մեջ բերված վիճակագրական տվյալներն ավելի քան խոսում են: Մեկ տարվա ընթացքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքների նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան ներկայացվել է ընդամենը 10 դիմում: Ընդ որում՝ անցած ամբողջ տարվա ընթացքում իրավական ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան որեւէ դիմում չեն ներկայացրել ՀՀ կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ՀՀ Նախագահը դիմել է միայն միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանում շարունակում է տիրապետող մնալ այն պրակտիկան, երբ սահմանադրական վերահսկողության հարցում արդյունավետ չէ պետական իշխանության այլ ինստիտուտների գործառնական դերը: Հետեւությունը միանշանակ է՝ Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անբավարար են իրականացնում Սահմանադրության գերակայության երաշխավորման իրենց սահմանադրական պարտականությունը:

Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական դատարան դիմելն իրավական պետությունում պետք է ընկալվի ոչ միայն որպես հայեցողական իրավասություն, այլև՝ որպես սահմանադրական պարտականություն,

բ) անընդունելի է նաև այն, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները կատարելու փոխարեն պետական մարմիններն առանձին դեպքերում փորձում են յուրովի «մեկնաբանել» նշված որոշումները և այդ ճանապարհով շրջանցել դրանց պահանջների կատարումը: ՀՀ սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ այդ պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրության պահանջներից և ձեռնադրում է սահմանադրական արդարադատության ամբողջ էությունը: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է այն ողջունելի իրողությունը, որ հիշյալ բնագավառում նկատվում են որոշակի դրական տեղաշարժեր, որոնք, սակայն, դեռևս կրում են հատվածական բնույթ: Այդ առումով հիշատակման է արժանի, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 04.03.2015թ. կայացրած՝ իրավունքի միատեսակ կիրառությունն ապահովելուն ուղղված որոշումը (վարչական գործ թիվ ՎԴ-3/0347/05/13), որի հիմքում դրվել են ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԳՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

4. Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ սահմանադրական իրավունքների խախտումները հաճախ պայմանավորված են ոչ թե օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ, ի թիվս այլ հանգամանքների, նաեւ օրենսդրական բացերով, նորմերի իրավական որոշակիության սկզբունքի ոչ լիարժեք ապահովմամբ, կանխատեսելիության, համաչափության սկզբունքների ձեռնադրումներով: Այս իրողությունը որոշակիորեն պայմանավորված է նաեւ իշխանության մարմինների հայեցողության սահմանների խիստ անհստակությամբ, հանրային-իրավական պատասխանատվության գիտակցման ոչ բավարար մակարդակով: Հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական դատարանի կողմից օրենսդրական բացերի եւ նշված մյուս խնդիրների արձանագրումը չի կարող անհետեւանք մնալ: Սահմանադրական դատարանի որոշումից պարտավորություն է ծագում՝ պատշաճ իրավական կարգավորմամբ լրացնել օրենսդրական բացը եւ վերացնել ոչ որակյալ իրավակարգավորումը: Օրենսդրի կողմից որոշումն անարձագանք թողնելը կամ նման բացի միայն մասնակի լրացումը դիտվում է որպես իրավակարգի անոմալիա: Հետեւաբար, մեր երկրում օրենսդրական բացի հաղթահարման խնդիրը պետք է դառնա օրինաստեղծ քաղաքականության առանցքային հարցերից մեկը:

5. Սահմանադրական դատարանը, դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու անհրաժեշտությունից, ինչպես նաեւ երկրում կայուն սահմանադրականություն հաստատելու եւ վերջինիս դինամիկ զարգացումն ապահովելու հրամայականից ելնելով, հանրային իշխանության, հատկապես՝ պետական իշխանության մարմինների եւ պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում հետեւյալ հանգամանքներին.

ա) անհրաժեշտ է արմատավորել սահմանադրական մշտադիտարկման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա շարունակական ու մշտական վերահսկողություն իրականացնել հանրային կյանքում սահմանադրական սկզբունքների եւ նորմերի իրացման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման նկատմամբ: Սահմանադրականությունը պետք է դիտարկել ոչ միայն սահմանադրական իրավունքի համատեքստում, այլ որպես իրավունքի

համընդհանուր սկզբունք: Միայն այս պարագայում է հնարավոր արդյունավետ իրավական երաշխիքներ ստեղծել հանրային կյանքում սահմանադրական հիմնարար արժեքների եւ սկզբունքների ձեւախեղումներից խուսափելու համար,

բ) սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունված պետական մարմինը պետք է հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը (փոխկապակցված դրույթներով) ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը՝ բացառելով իրավական վակուումի առաջացման հնարավորությունը,

գ) սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ պատշաճ կատարումը երբեմն պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավակիրառողները միատեսակ չեն ընկալում դրանք: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ ՀՀ իրավական պրակտիկայում բավարար ուշադրություն չի դարձվում նորմատիվ ակտերի դոկտրինալ ու պաշտոնական մեկնաբանությունների ինստիտուտների հետեւողական զարգացմանը:

6. Սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումներում բարձրացված հիմնախնդիրների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց գերակշիռ մասը կրում է շարունակական բնույթ, եւ, չնայած Դատարանի կողմից ինչպես իր որոշումներում, այնպես էլ տարեկան հաղորդումներում այդ հիմնախնդիրները բազմիցս փաստելուն, իրավական ակտերի որակն ու դրանց իրացման պրակտիկան շարունակում են զգալիորեն անկատար մնալ: Այս հանգամանքը պայմանավորված է նաեւ սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումների նկատմամբ պետական իշխանության մարմինների եւ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ վերաբերմունքով, ինչի արդյունքում տարիներ շարունակ բարձրաձայնված հիմնախնդիրներն իրենց իրավական անհրաժեշտ լուծումը չեն ստանում՝ խոչընդոտելով սահմանադրականության բավարար միջավայրի կայացմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դատարանի տարեկան հաղորդումների քննարկումը եւ դրանցում բարձրացված հարցերի վերաբերյալ պետական իշխանության մարմինների արձագանքը պետք է վերջիններիս համար պարտադիր նորմատիվ պահանջ հանդիսանան:

7. Միջազգային սահմանադրական պրակտիկան վկայում է, որ ժողովրդավարական զարգացման ուղին ընտրած երկրների համար առանցքային նշանակություն ունի հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը: Դա իր հերթին նշանակում է ոչ միայն իրավական համակարգում Սահմանադրության գերակայության երաշխավորում, այլեւ Սահմանադրության անմիջական գործողության ապահովում: Սահմանադրական ժողովրդավարությունն առկա է այնտեղ եւ այն չափով, որտեղ եւ որչափով Սահմանադրությունը դառնում է ապրող իրողություն, ձեւավորվում է սահմանադրական այնպիսի մշակույթ, երբ հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում սահմանադրական արժեքները, նորմերն

ու սկզբունքները հիմնարար ու գործուն նշանակություն են ստանում: Սահմանադրական արդարադատության պրակտիկան վկայում է, որ այս առումով լուրջ խնդիրներ կան մեր երկրում՝ ինչպես իրավական ակտերի որակի բարձրացման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում Սահմանադրության անմիջական գործողության ապահովման ուղղությամբ:

Նախորդ տարեկան հաղորդման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արձանագրվել էին սահմանադրական օրինականության տեսանկյունից առաջնային ու անհետաձգելի մի շարք խնդիրներ, մասնավորապես.

- երաշխավորված ու ապահովված չէ մարդու՝ սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- իրավունքի գերակայության սկզբունքը չի դարձել մարդկանց սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանությունների հանրային վարքագծի հենքը,
- խիստ անհստակ են իշխանությունների հայեցողության սահմանները, արդյունավետ չի գործում իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքը,
- մեծ խզում է առաջացել սահմանադրական արժեքանության եւ հասարակական պրակտիկայի միջեւ, հստակ ու հանրայնորեն ընկալելի չեն սահմանադրական բարոյականության չափորոշիչները,
- քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճումն ընդհուպ երկրի ազգային անվտանգության սպառնալիք է դարձել՝ դրանով պայմանավորված բոլոր հետեւանքներով հանդերձ:

Նշված խնդիրներն իրավական պետության կայացման ու կայուն առաջընթացի գլխավոր խոչընդոտներից են եւ առաջնահերթ սահմանադրաիրավական ու կառուցակարգային լուծում են պահանջում, որոնց հաղթահարման համար լրջագույն միջոց կարող են հանդիսանալ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրության փոփոխությունները:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում մեր երկրի համար իրավունքի միջոցով հասարակական կյանքի բոլոր ոլորտների զարգացման համար չափազանց պատասխանատու շրջան է սկսվում: Առաջնահերթ խնդիրն առկա իրավահարաբերությունների սահմանադրականացումն է, նորմատիվ իրավական ակտերի համակարգային համապատասխանեցումը սահմանադրական իրավակարգավորումներին: Սահմանադրական բարեփոխումների արդյունքում որդեգրված նոր սկզբունքային մոտեցումների իրացումն ուղղակիորեն պայմանավորված է անձի կողմից սոցիալապես ակտիվ վարքագիծ դրսևորելու, հանրային իշխանության կողմից հանրային-իրավական իր պոզիտիվ պատասխանատվությունն ընկալելու և իրացնելու համարժեք մակարդակով:

Սահմանադրական ժողովրդավարության հաստատումը ժամանակի հրամայականն է: Ժամանակի հրամայականն է եւ այն, որ Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն, ձեւավորվի սահմանադրական այնպիսի մշակույթ, երբ հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում սահմանադրական արժեքները, նորմերն ու սկզբունքները կենսական նշանակություն ստանան:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՄՈՒՍԱԼԵՈ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ
2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ս. Յակնյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի՝ 2014 թվականի հուլիսի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ից:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է. «Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են սույն օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով և 19-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված կասեցումները: Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը 01.02.2013թ. հայց է ներկայացրել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ «Արմավիրի կաթի գործարան» ՓԲԸ-ի՝ 1.073.940 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին (քաղ. գործ թիվ ԱՐԳ/0068/02/13):

20.06.2013թ. դատարանի կողմից կայացվել է վճիռ, որով դատարանը հաստատված համարելով հանդերձ պատասխանող ընկերության մոտ առկա 1.073.940 ՀՀ դրամ գումարի պարտքը, հայցադիմումը մերժել է՝ հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, այն է՝ պարտապան հանդիսացող «Արմավիրի կաթի գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ, առողջացել է, իսկ դիմողն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմում չի ներկայացրել սնանկ ճանաչված ընկերության պարտատերերի ցանկում ընդգրկվելու համար:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ և 18-րդ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթում բացակայում են սեփականության իրավունքից զրկման համար անհրաժեշտ՝ օրենքով նախատեսված օբյեկտիվ հիմքերը, և նման կարգավորումն ըստ էության առանց պահանջատիրոջ համար պատշաճ դատական ընթացակարգ ապահովելու, առանց վերջինիս՝ իր իրավունքների և շահերի պաշտպանության հնարավորություն ընձեռելու դատական ակտի կայացման է բերում: Դիմողի կարծիքով՝ հաշվի առնելով վիճարկվող իրավակարգավորումը՝ սնանկության գործը քննող դատարանը սնանկացման գործով կայացնում է դատական ակտ, որով սնանկացած և առողջացած անձին ազատում է նախկին պարտավորությունների հանդեպ պատասխանատվությունից, ինչն ըստ էության պարունակում է գործով մասնակից չդարձած անձին՝ իր գույքի (ներառյալ դրամը և գույքային պարտավորությունները) սեփականության իրավունքից զրկելու վերաբերյալ դրույթներ: Իսկ հետագայում հանգեցնում է նրան, որ անձը, ով օբյեկտիվորեն տեղեկացված չի

եղել իր պարտապանի սնանկության գործընթացում գտնվելու մասին դատական գործընթացի վերաբերյալ, որն առնչվել է նաև իրեն, փաստացի գրկվում է օրենքով պահպանվող իր սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունից, իսկ որևէ այլ իրավական գործիք, որը հնարավորություն կտար պարտատիրոջը ՀՀ քաղ. օր.-ի 14-րդ հոդվածով նախատեսված որևէ եղանակով հասնել իր իրավունքների պաշտպանության, չկա: Դիմողը նաև գտնում է, որ պարտապան ընկերության՝ սնանկության մասին կատարված հայտարարության վերաբերյալ տեղեկացված չլինելը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքին համապատասխան դիմում չներկայացնելը չի կարելի հիմք համարել գույքի նկատմամբ սեփականության իրավունքից զրկելու համար, քանզի պարզ է, որ «ՀՀ-ում չկա որևէ իմպերատիվ նորմ», որով պարտադրվում է քաղաքացիական շրջանառության սուբյեկտներին ամեն օր հետևել մամուլին կամ ներկայումս «www.azdarar.am» կայքին, ավելին՝ կարդալ դրա յուրաքանչյուր հայտարարություն և տող, որն իրատեսական չէ: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավական նորմը բերում է հակասության նաև ընդհանուր քաղաքացիաիրավական շրջանառության ընդունված կանոնների՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդված) հետ, քանզի ստեղծվում է մի իրավիճակ, երբ ընդհանուր կարգով անձին տրվում է օրենքով սահմանված ժամկետ իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար (հայցալին վաղեմության ինստիտուտ), որի շրջանակներում իր իրավունքների պաշտպանության համար անձն ազատորեն կարող է ընտրել օրենքով սահմանված կամ չարգելվող որևէ վարքագիծ և դրան գուգահեռ մեկ այլ նորմով, որով ոչ օբյեկտիվ կերպով և անուղղակիորեն սահմանափակվում է այդ հնարավորությունը: Դիմողը նաև գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի այդ նորմի կարգավորումը որոշակիորեն հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթին, քանզի անձի համար պայմանավորում է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացում՝ առանց օրենքով ուղղակիորեն սահմանված պարտականությունների խախտման դեպքի կամ դեպքերի նախատեսման, այլ կերպ ասած՝ այդ նորմով անձի վրա դրվում է օրենքով ուղղակիորեն չնախատեսված պարտականություն՝ հետևել մամուլի բոլոր հրապարակումներին և «www.azdarar.am» կայքին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ վիճարկվող դրույթը չի հանդիսանում սեփականության անձեռնմխելիության իրավունքի խախտում և դրա նախատեսումը պայմանավորված է սնանկության վարույթի շրջանակներում իրավական որոշակիության, կանխատեսելիության սկզբունքների իրագործման անհրաժեշտությամբ: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև հայցալին վաղեմության քաղաքացիաիրավական ինստիտուտի վերլուծության արդյունքում պատասխանողը հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ օրենսդրությամբ սահ-

մանված մի շարք այլ իրավակարգավորումներ ևս պարտատիրոջ կողմից որոշակի ժամկետում պարտապանին պահանջ չներկայացնելու դեպքում զրկում են դրանք բավարարելու հնարավորությունից, որի արդյունքում պարտատիրոջ սեփականության իրավունքը փաստացի սահմանափակվում է: Սակայն օրենսդրոթեն նշված ժամկետների սահմանումը չի կարող որակվել որպես սեփականության անձեռնմխելիության իրավունքի խախտում, այլ հակառակը՝ դրանց սահմանումը բխում է իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից, և նման կարգավորումների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովել քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և պարտավորությունների ժամանակին և պատշաճ իրականացումը, քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը: Պատասխանողը գտնում է, որ նման կարգավորման բացակայության դեպքում արդեն իսկ առողջացած կազմակերպությանը նախկինում չառաջադրված պահանջներ ներկայացնելու հնարավորություն կստեղծվի, իսկ պարտապանի ֆինանսական առողջացմանը կրկին անգամ կարող է հաջորդել սնանկության վարույթի վերսկսումը, ինչը կարող է անարդյունավետ և անիմաստ դարձնել նրա հանդեպ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների համալիրը, հանգեցնել դատական համակարգի ծանրաբեռնմանը և վնասել գործարար միջավայրին: Պատասխանողի կարծիքով, եթե պարտատերը սնանկության գործընթացում գտնվող պարտապանին չի դիմում և պահանջում իր նկատմամբ գոյություն ունեցող պարտավորությունների կատարում, ապա նա ըստ էության իր գործողություններով իրականացնում է պարտքի ներում, և այդ դեպքում օրենքի տեսակյունից ևս չի կարևորվում, թե ինչ պատճառով պարտատերը նման պահանջներ չի ներկայացրել՝ անտեղյակ լինելու, թե՛ պարտքից իրականում հրաժարվելու:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ գործի նյութերի՝ դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքներ է առաջացրել օրենքի վիճարկվող պարբերության՝ «...և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթի՝ նրա նկատմամբ կիրառումը:

Վերոնշյալ դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող կանոնակարգումը նախ դիտարկել չ՛հ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքի լույսի ներքո:

Չ՛հ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպա-

յին իրավունքի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009թ. հունիսի 11-ի վճիռ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումից և դիմումին կից ներկայացված նյութերից պարզ է դառնում, որ դիմողը սնանկության գործով պարտապանի հետ կնքել է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն պարտապանին մատուցել է տպագրական ծառայություններ, իսկ պարտապանը պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար, սակայն ամբողջությամբ չի կատարել իր պարտավորությունները: Հետևաբար, դիմողն իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց համապատասխան նյութական միջոց ստանալու իրավաչափ ակնկալիք ուներ:

Վիճարկվող կանոնակարգումը, որոշ բացառություններով (օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր), ազատում է պարտապանին պարտավորությունների կատարման պարտականությունից ֆինանսական առողջացման գործընթացից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը» վերտառությամբ 345-րդ հոդվածի համաձայն. «1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդված-ի 4-րդ մասը սահմանում է, որ պարտապանը չի կարող ազատ ճանաչվել՝

«ա) ալիմենտների վճարումից.

բ) սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից.

գ) կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից.

դ) հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններից»:

Վերոնշյալ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առողջացած սուբյեկտին ազատում է հիմնականում պայմանագրերից բխող պարտավորություններից, իսկ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում պայմանագրային պարտավորություններ

րի մեծ մասը՝ ըստ պարտավորության օբյեկտի (վճարել դրամ, հանձնել գույք կամ կատարել աշխատանք, մատուցել ծառայություն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից), կրում է ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային բնույթ:

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցերին: Մասնավորապես, ՄԳՈ-903, այնուհետև՝ ՄԳՈ-1073 որոշումներում դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ., 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ., 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

«Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է ՄԳՈ-630 որոշման մեջ, որում սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,
- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,
- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավագործությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Զննության առնելով դիմողի համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմը որևէ առնչություն չունի անձին պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ նաև սեփականագրկման հետ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը պայմանավորում է որոշակի հանրային արժեքներ պահպա-

նելու առաջնահերթ անհրաժեշտությամբ: Դրանք են՝ շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ:

Սահմանադրական դատարանն իր՝ 25.02.2008 թվականի ՍԳ-Ո-735 որոշման մեջ արտահայտել է նաև հետևյալ դիրքորոշումը. «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և **միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը**»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կանոնակարգումը կարող էր ուղղված լինել պարտապանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միայն **սնանկության գործընթացում**, որը ներառում է նաև ֆինանսական առողջացումը՝ նպատակ ունենալով զերծ պահել պարտապան հանդիսացող սուբյեկտին պարտատերերի կողմից ներկայացվող պահանջներից, որպեսզի վերջինս ֆինանսապես վերականգնվի, վճարունակ դառնա, լիարժեք մասնակցի քաղաքացիական շրջանառությանը, ինչը չի կարող արդարացված լինել նույն նպատակներով սնանկության գործի ավարտից՝ նրա ֆինանսական առողջացումից հետո, երբ առողջացած կազմակերպությունը դառնում է քաղաքացիական շրջանառության և քաղաքացիաիրավական հարաբերությունների լիարժեք մասնակից: Դրա մասին է վկայում նաև օրենքում գործածվող «ֆինանսական առողջացման ծրագիր» հասկացության սահմանումը, որի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելու մասին վճիռ (հոդված 59):

6. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթի վերլուծությունից հետևում է, որ.

1. ոչ միայն առողջացած անձն ազատվում է ավարտված սնանկության գոր-

ծի շրջանակներում չներկայացված պահանջներով պայմանավորված բոլոր պարտավորություններից, այլև իրավունքի ուժով տվյալ պարտատերերը գրկվում են հետագայում այդ անձի նկատմամբ նշված պարտավորությունների մասով ցանկացած՝ այդ թվում դատական կարգով, պահանջ ներկայացնելու իրավունքից, եթե այդպիսին չի բխում օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունից,

2. առկա են նաև բացառություններ.

ա/ եթե սնանկության գործն ավարտվել է սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա պարտապանը չի ազատվում բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում,

բ/ պարտապանը օրենքի ուժով չի կարող ազատվել այնպիսի պարտավորություններից, ինչպիսիք են՝ ալիմենտների վճարումը, սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումները, կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորությունները:

Իրավատրամաբանական վերոնշյալ մոտեցման շրջանակներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից պատասխան չի տրվում երկու հարցի.

1. ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված անձը սնանկության գործի շրջանակներում պահանջներ չի ներկայացրել,

2. արդյո՞ք առկա չէ խտրականության դրսևորում, երբ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, սակայն հարկային պարտավորությունների կատարման առումով բացառություն է նախատեսվում:

Այս հարցերի պատասխանները հնարավոր է տալ քննության առարկա օրենքի մի շարք այլ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում: Մասնավորապես, դա վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19, 33, 34, 42, 46, 69, 74 և 89-րդ հոդվածներին: Դրանցում նախատեսված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ.

1. պարտատերերի համար պատշաճ ծանուցում է համարվում <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությունը (հոդվ. 34),

2. եթե պարտատերը, անկախ պատճառից, պարտատերերի առաջին ժողովին չի մասնակցել, ապա հետագայում գրկվում է քվեարկության ձայնի իրավունքից (հոդվ. 33),

3. օրենքի 29, 33, 42, 46, 52, 69 և 87-րդ հոդվածներով նախատեսված՝ պարտատերերի պահանջների գրանցամատյանի կազմման, հաստատման և վարման կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ որևէ հստակ պարտավորություն չի

դրվում պարտապանի վրա պարտատերերի հանդեպ իր պարտավորությունների ներկայացման առումով: Բոլոր այն պարտատերերը, ովքեր որևէ պատճառով չեն տեղեկացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը կամ չեն համարվում պահանջների ընդհանուր ծավալում ամենախոշոր պահանջ հաշվառած պարտատերեր, ապա գրկվում են իրենց իրավունքների հետագա պաշտպանության իրավական հնարավորություններից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը ոչ միայն պարտատերերի իրավունքների ոտնահարման իրական վտանգ է պարունակում, այլև մեծ են նաև կոռուպցիոն ռիսկերը: Առաջին հերթին սնանկացման հայտ ներկայացնելիս պարտապանն է պարտավոր հստակ ներկայացնել իր պարտավորությունների իրական պատկերը: Դա կբացառի նաև պարտատերերի կողմից գույքի թաքցումը կամ անհիմն նվազեցումը, ինչի մասին շեշտվում է նաև Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում սնանկության խնդրի լուծման վերաբերյալ 2014թ. ներկայացված զեկույցի համառոտագրի 9-րդ և հիմնական զեկույցի 36-րդ կետերում:

Նշված իրական պատկերին համապատասխան պետք է կազմվի պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ դրանում իրավունքի ուժով ներառելով պարտապանի կողմից իրավաբանորեն ճանաչված բոլոր պարտավորությունները՝ չբացարձականացնելով հայեցողական մոտեցումը: Օրենսդրական կարգավորումն առավելապես պետք է հենվի այն մոտեցման վրա, որ սնանկության կառավարիչն առաջին հերթին պետք է գործի պարտապանի կողմից տրված տեղեկատվության հիման վրա, ինչը համապատասխան պարտավորվածություն կառաջացնի նաև պարտապանի համար: Բացի դրանից, **բոլոր այն պարտատերերը, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն ծանոթացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը, հետագայում դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորություն պետք է ունենան:** Հակառակ պարագայում, ոչ միայն ոտնահարվում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված նրանց իրավունքները, այլև խախտվում են համամասնականության և համաչափության սահմանադրական սկզբունքները՝ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված բացառությունների առումով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ շահագրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non*/ պայման, առանց որի հնարավորը չէ/ կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտի (պարտապանի) բոլոր պարտատերերի հայտնաբերմանը և վերջիններիս՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքներ-

րի պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի **արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ**, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները: Խնդիրն այն է, որ պարտատերը պատշաճ ծանուցում պետք է ստանա սնանկության վարույթի բացման և պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Իսկ պարտապանը պետք է օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում նաև սնանկության գործընթացի շրջանակներում առողջ ճանաչված պարտապանին ընտրողաբար պարտավորություններից ազատելը, քանի որ վիճարկվող իրավակարգավորումը տարբերակված մոտեցում է նախատեսում հարկային պարտավորությունների պարտատեր հանդիսացող պետության և այլ տեսակի պարտավորությունների պարտատերեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «...և այդ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթը՝ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 4-րդ մասի հետ, այն մասով, որով **դատարանի կողմից հարգելի ճանաչված դեպքերում** բացառություն չի նախատեսում նաև ավարտված սնանկության գործի շրջանակներում պահանջ չներկայացրած պարտատերերի համար, նրանց նկատմամբ սահմանելով իրավունքի պաշտպանության ոչ համաչափ սահմանափակում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**27 հունվարի 2015 թվականի
ՍԳ-Ո-1189**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը» վերտառությամբ 131-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

«Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան անվավեր կամ առ ոչինչ ճանաչել «ՀՀ ՊԵԿ տեսուչների կողմից հարկային հաշվանցումների եւ/կամ վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության վերաբերյալ 13.08.2013թ. կազմված թիվ 1415455 ուսումնասիրության արձանագրությունը»: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պահանջելով «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ:

17.02.2014թ. ՀՀ վարչական դատարանի որոշմամբ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի

սկզբնական հայցն «ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 13.08.2013թ. թիվ 1415455 ուսումնասիրության արձանագրությունն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով» ամբողջությամբ կարճվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի վճռով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության հակընդդեմ հայցն ընդդեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի՝ հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ, ամբողջությամբ բավարարվել է:

«Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին» ՀՀ վարչական դատարանի՝ 17.02.2014թ. թիվ ՎԳ-3/0347/05/13 որոշման դեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2014թ. որոշմամբ հիշյալ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է նաև այն հիմնավորմամբ, որ «Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ «Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին» որոշումը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, իսկ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել բացառապես միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված է տվյալ ակտի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը: Մինչդեռ վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը նշված հոդվածով սահմանված չէ որպես բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ»: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 30.07.2014թ. որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ, իսկ 09.10.2014թ. կայացվել են «Գործի վարույթը կասեցնելու մասին» եւ «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

3. Գիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով բացառում է վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին:

Գիմողը, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, նշում է, որ գործող վարչական դատավարության օրենսդրությունը չի նախատեսում գործի վարույթը կարճելու որոշման բողոքարկման իրավական հնարավորություն: Ըստ դիմողի՝ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը:

ՀՀ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում եւ վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը գտնում է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացակայությունն անհարթահարելի արգելքներ է առաջացնում գործի հետագա քննության համար, որոնք կարող են հանգեցնել մարդու հիմնական իրավունքների խախտման, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Հետեւաբար, վարչական դատարանի կողմից գործի վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկելու անհնարինության արդյունքում, ըստ էության, բացառվում է անձանց մի շարք հիմնարար իրավունքների գործնականում իրացումը, առաջանում է ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ եւ 13-րդ հոդվածներում նախատեսված արդար դատաքննության եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների հնարավոր խախտման իրական վտանգ:

4. Սույն գործով վիճարկվող իրավակարգավորման եւ բարձրացված սահմանադրաիրավական վեճի վերաբերյալ պատասխանող կողմը, մասնավորապես, հայտնում է, որ գործի վարույթը կարճելու մասին դատարանի պետաիշխանական կամքն իր արտաքին ձեւակերպումն է ստանում որոշման տեսքով, սակայն այն իր դատավարական նշանակությամբ համարժեք չէ միջանկյալ դատական ակտերին եւ չի կարող դասվել վերջիններիս շարքին: Պատասխանողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը սպառնիչ սահմանում է անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի ցանկը եւ ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Գործի վարույթը կարճելու մասին որոշումը պետք է դիտարկել որպես դատական քննության տվյալ փուլը եզրափակող վերջնական ակտ եւ բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտերի համար նախատեսված կարգով: Պատասխանող կողմը հայտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրը լուծելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004) 20 հանձնարարականով նախատեսված մոտեցումները՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0), որով նախատեսվում է գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կանոններով:

5. Բնության առարկա գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը բարձրացնում է **միայն այնքանով, որքանով այն բացառում է վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման ենթակա լինելը եւ չի բարձրացնում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության այլ հարցեր**: Հետեւաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը քննության է առնում բացառապես գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման սահմանադրականության գնահատման տեսանկյունից:

6. Սույն գործի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել պարզել եւ գնահատել.

- գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման տեղը գործն ըստ էության լուծող դատական ակտերի եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում,
- քննության առարկայի շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածությունը եւ ապահովումը,
- գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորության բացակայության ազդեցությունը վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացումն ապահովելու վրա՝ ելնելով որպես իրավական կողմնորոշիչ հանդիսացող այն մոտեցումներից, որոնք բխում են դատական բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից:

7. Գործի վարույթը կարճելու հետ կապված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է գործի վարույթը կարճելու հիմքերը, կարգը եւ հետեւանքները: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանվում է գործի վարույթը կարճելու հիմքերը, այդ թվում՝ նաեւ եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը (1-ին մասի 10-րդ կետ): Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է **որոշում**: Համաձայն հիշյալ օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 125-րդ հոդվածի 6-րդ մասի՝ կողմերի հաշտության համաձայնու-

թյունը հաստատելու դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին: Այսպիսով, գործի վարույթը կարճելու դեպքում դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելու, որի դեպքում կայացնում է վճիռ:

Վերոշարադրյալին զուգահեռ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն չի ամրագրվել, թե վարչական դատարանի ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները» վերտառությամբ 125-րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, սահմանված չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը նույն հոդվածի 6-րդ մասով սահմանելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին կայացնում է վճիռ՝ այն դիտարկում է որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Ինչ վերաբերում է գործի վարույթը կարճելու որոշման եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի հարաբերակցությանը, ապա օրենսդիրն ուղղակիորեն չի ամրագրել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: Հարկ է նշել, որ հիշյալ իրավական անորոշությունը խնդիրներ է առաջացնում նաեւ իրավակիրառական պրակտիկայում, որը փաստվում է դիմող կողմի այն մոտեցմամբ, որ «...թեւէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իմաստով վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը համարվում է միջանկյալ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ, սակայն այն իր իրավաբանական հետեւանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին»: Ի դեպ, հարկ է նշել նաեւ, որ պատասխանող կողմը եւս փաստում է իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդրի եւ այն լուծելու անհրաժեշտության մասին:

Հետեւաբար, վերոնշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության գործող իրավակարգավորումների պայմաններում հստակեցված չէ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի (բացառությամբ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում գործի վարույթը կարճելու մասին վճռի) տեղը գործն ըստ էության լուծող դատական ակտերի եւ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում: Չնայած այն հանգամանքին, որ ըստ պատասխանող կողմի՝ «Գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձեւ է, որն իր դատավարական ձեւակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որո-

շումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող դատական ակտ», այն իր հստակ օրենսդրական ձեւակերպումը չի ստացել: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է սահմանել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական կարգավիճակը: Այն պարագայում, եթե գործի վարույթը կարճելու մասին դատական ակտն օրենսդիրն համարի լիովին այլ կատեգորիայի ակտ, ապա անհրաժեշտ կլինի նման մոտեցումը լիարժեքորեն ներմուծել առկա փոխկապակցված բոլոր իրավակարգավորումներում (այդ թվում՝ ուժի մեջ մտնելու, բողոքարկման ժամկետների հետ կապված)՝ նպատակ ունենալով ապահովել այդ իրավակարգավորման համակարգային ամբողջականությունը եւ տրամաբանական փոխկապակցվածությունը: Միեւնույն ժամանակ, անկախ գործի վարույթը կարճելու մասին որոշման իրավական կարգավիճակից, պետք է համապատասխան իրավակարգավորումներով սահմանվեն այդ ակտի բողոքարկման հնարավորությունը եւ դրա իրացումն ապահովող անհրաժեշտ այլ հարաբերությունները:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (131-րդ հոդված) սահմանում է այն միջանկյալ դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.11.2010թ. ՍԳ-Ո-922 որոշմամբ ամրագրել է, որ «...օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», եւ միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է եւ ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված եւ շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջուկը ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ, մի կողմից, օբյեկտիվորեն հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝ «հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավա-

կարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաեւ դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, **մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:**

9. Սույն գործով առաջադրված սահմանադրաիրավական հարցի շրջանակներում, մի կողմից, ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի եւ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի եւ, մյուս կողմից՝ ՀՀ վարչական դատավարության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքերի համանման իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի իրավակարգավորումները նախատեսել են գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ինչն իրավակիրառական պրակտիկայում, մինչեւ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ուժի մեջ մտնելը, իրացվել է.

բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով՝ գործի վարույթի կարճման բոլոր հիմքերի դեպքում էլ դատարանը կայացնում է վճիռ (110-րդ հոդվածի 1-ին մաս) եւ այս իրավակարգավորմամբ պայմանավորված՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը դառնում է բողոքարկելի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված ընդհանուր իրավադրույթներին համահունչ: Հիշյալ իրավակարգավորումը իրավակիրառական պրակտիկայում իրացվում է:

Ի դեպ, հարկ է նշել, որ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքի դրույթների սահմանադրականության հարցերը (մասնավորապես, 25.11.2008թ. ՄԳ-Ռ-780, 13.04.2010թ. ՄԳ-Ռ-873 որոշումներով), արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության արդյունավետ իրականացման, ինչպես նաեւ վարչական դատարանի ակտը բողոքարկելու իրավունքի երաշխավորման առումով:

Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը եւ լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որեւէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

10. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի եւ միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով:

ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր բազմաթիվ որոշումներում (մասնավորապես՝ ՄԴՈ-652, ՄԴՈ-665, ՄԴՈ-673, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-780, ՄԴՈ-873, ՄԴՈ-936, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1037) դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության եւ ապահովման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Հիշյալ որոշումներով անդրադառնալով նաեւ դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովման, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, անհրաժեշտությանը՝ խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու եւ ապահովելու տեսանկյունից, սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետեւյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, եւ արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» (ՄԴՈ-719),

բ) «... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաեւ անձի իրավունքների դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (ՄԴՈ-936),

գ) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման եւ գործադրման հիմքում պետք է իրացվեն հետեւյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),
- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար եւ հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու եւ շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետեւաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,
- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրահրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից» (ՄԳՈ-936),

դ) «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական եւ էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից եւ արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՄԳՈ-1037):

Հարկ է նաեւ ընդգծել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն մեծապես կարեւորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարելու գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս ատյանին»: Հանձնարարականը նաեւ ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը եւ դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պա-

հանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,

- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Հանձնարարականի բացատրական հուշագրում, մասնավորապես, նշված է, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները եւ բողոքարկման մարմնի իրավագործությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Վարչական վարույթում վերադաս դատական ատյանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետետողականությունն ապահովելու հարցում:

11. Սույն գործով քննության առարկա հարցը դիտարկելով, մի կողմից, ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների, մյուս կողմից՝ կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է.

նախ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի հետ կապված իրավահարաբերությունների՝ տվյալ դեպքում բողոքարկման ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված հատակ եւ հետետողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրը բավարար հետետողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցի մասով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ եւ համահունչ զարգացնելու առումով, չի ապահովել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները: Ավելին, իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վարչական դատավարության նախկին (28.11.2007թ.) օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման մասով, ընդհանուր առմամբ խնդիրներ չեն հարուցել, սակայն Ազգային ժողովը ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով այլ մոտեցում է որդեգրել, որով չեն իրացվել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները,

երկրորդ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական ամրագրման բացակայությունն արգելափակում է ոչ միայն դատարանի մատչելիության իրավունքը, այլեւ անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից: Գործի վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավունքի նորմատիվ ամրագրումը կընդլայնի արդյունավետության եւ օբյեկտիվության նկատմամբ հանրային վստահությունը, կապահովի խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը, թույլ կտա վերադաս ատյանի դատարանին վերացնել ստորին ատյանի թույլ տված դատական սխալները, ուղղված կլինի

վերադաս դատական ատյանների մատչելիության ապահովմանը եւ կնպաստի դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությանը: Դատական բողոքարկման իրավունքը վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է, որը հետետողականորեն պետք է իր արտացոլումը գտնի օրենսդրության մեջ՝ նախատեսելով գործի վարույթը կարճելու մասին որոշման վերանայման համապատասխան ընթացակարգեր:

Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-573-01.08.2014, 29.09.2014-ՊԻ-010/0), որով, ի թիվս այլ հարցերի, նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1. մասով. «2.1. Գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով»:

12. Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաեւ դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական եւ միջազգային իրավական չափանիշներին, նաեւ ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, թե՞ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդպիսին, եւ վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետեւանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Հետեւաբար, մինչեւ ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ եւ ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ **գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով՝ առաջնորդվելով մար-**

դու եւ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի եւ դրա կարելու բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, **իրավունքի աղբյուր** են դառնում իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները պետք է դրվեն ինչպես իրավակիրառական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրական զարգացումների հիմքում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**10 փետրվարի 2015 թվականի
ՍԳՈ-1190**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԼԱՎԻԿ ՊՈԳՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 314.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ
8-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմող Ս. Պողոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սլավիկ Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սլավիկ Պողոսյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 314.1-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«Հոդված 314.1. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները

8. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը հրապարակման պահից ուժի մեջ է: Դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի որոշումները կարող են բողոքարկվել հրապարակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում»:

Վերոհիշյալ իրավակարգավորումը գործողության մեջ է դրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.02.2007թ. ՀՕ-93-Ն և 08.02.2011թ. ՀՕ-44-Ն օրենքներով:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ-1/0026/01/14 քրեական գործով 2014 թվականի մայիսի 20-ի նիստի ընթացքում փաստաբանի օգնական Սլավիկ Պողոսյանի նկատմամբ որպես դատական սանկցիա է կիրառվել դատական նիստերի դահլիճից հեռացումը: Դատական սանկցիա կիրառելու որոշման դեմ 2014 թվականի մայիսի 30-ին դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, ինչը ՀՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի որոշմամբ առանց քննության է թողնվել այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման: ՀՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի որոշման դեմ դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին՝ պատճառաբանելով, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության արդյունավետ միջոցներով վերականգնելու իր խախտված իրավունքները: Մասնավորապես, ինչպես գտնում է դիմողը, տվյալ դեպքում իրավական պաշտպանության միակ և արդյունավետ հնարավոր միջոցն իր նկատմամբ կայացված դատական ակտի անմիջական բողոքարկումն է, քանի որ որևէ այլ ձևով, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում («հետաձգված բողոքարկումն»), անհնար է վերականգնել իր խախտված իրավունքները: Միաժամանակ, ինչպես գտնում է դիմողը, սկզբունքորեն գոյություն ունի վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի կայացրած «ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն»: Հետևաբար, ինչպես եզրակացնում է դիմողը, ինքն իրավունք ունի իր

նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը, որով հեռացվել է դատական նիստերի դահլիճից, վերադաս դատարան բողոքարկելու միջոցով վերականգնել իր խախտված իրավունքները:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քրեական դատավարության մասնակիցները, որպես վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտներ, նիստերի դահլիճից հեռացնելու ձևով դատական սանկցիայի կիրառման իրավաչափության հարցը կարող են քննարկման առարկա դարձնել գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակներում՝ գործի հրապարակային քննության իրավունքի համատեքստում: Մինչդեռ այդպիսի սանկցիա կիրառելու վերաբերյալ որոշումը քրեական դատավարության այլ սուբյեկտների, այդ թվում՝ դատական նիստին ներկա գտնվող անձանց կողմից բողոքարկելու իրավունք օրենսդիրը չի նախատեսել, քանի որ «դրանք, ըստ էության, էականորեն չեն շոշափում վերջիններիս շահերը», և այն «կհակասի քրեական դատավարության նպատակներին»:

Անդրադառնալով փաստաբանի օգնականի կարգավիճակին՝ պատասխանող կողմը գտնում է, որ այն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերվում պարզեցված կարգով, վերաբերում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի «վերաբերյալ կարգավորումներին», և որ դատական վարույթին վերաբերող «առավել կարևոր գործառնությունների իրականացման հարցում» փաստաբանի օգնականի համար սահմանվել են «արգելքներ», հետևաբար՝ «քրեական դատավարությունում փաստաբանի օգնականը չունի կողմի կարգավիճակ, ուստի չի կարող օգտվել փաստաբանի իրավունքներից»: Արդյունքում՝ պատասխանող կողմը գտնում է, որ ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, դիմողն ըստ էության բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը որոշելիս նախևառաջ հաշվի առնել.

- դիմումի առարկա հանդիսացող վեճի շրջանակներում անձի դատավարական իրավունքների օրենսդրական սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը՝ ելնելով տվյալ անձի թե՛ ընդհանուր իրավական և թե՛ դատավարական կարգավիճակի առանձնահատկություններից ու այդ բնագավառում ձևավորված միջազգային իրավական փորձից,
- անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, այդ թվում՝ դատական մատչելիության, արդար դատաքննության երաշխավորման շրջանակները, դիտարկելով այն վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված դատական ընթացակարգի առանձնահատկությունների համատեքստում,
- վեճի առարկա իրավադրույթի, վերջինիս հետ համակարգային առումով

փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաև իրավակարգավորման միևնույն բնագավառի իրավական այլ ակտերի կիրառման իրավաչափության հարցի շրջանակներում սահմանադրական օրինականության պահպանման անհրաժեշտությունը:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ինչպես սահմանված է վերջինիս 2-րդ և այլ հոդվածներում, ի թիվս այլ խնդիրների, կոչված է երաշխավորելու անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանրորեն առավել վտանգավոր (հանցավոր) արարքներից: Այդ օրենսգրքի համապատասխան նորմերը կոչված են սահմանելու իրավասու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից քրեական գործերով վարույթի իրականացման կարգը, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Այսպիսով, քննության առարկա օրենսգրքը կոչված է երաշխիք հանդիսանալու հանրային իրավական այնպիսի կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար, որպիսիք անմիջականորեն բխում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և բազմաթիվ այլ հոդվածների պահանջներից: Հիշյալ խնդիրների լուծումը ենթադրում է ոչ միայն դրանց նորմատիվ հաստատագրում, այլև իրավական համապատասխան ընթացակարգերի և վերջիններիս իրականացման բավարար ու անհրաժեշտ պայմանների երաշխավորում, այդ թվում՝ արդարադատության իրականացման բնագավառում: Այսինքն՝ քրեական վարույթի իրականացման այնպիսի փուլում, որի շրջանակներում իրավական վերջնական գնահատական է տրվելու անձի՝ քննության առարկա վարքագծին, և անհրաժեշտության դեպքում կիրառվելու է քրեական օրենքով սահմանված պետական հարկադրանքի այս կամ այն միջոցը: Այդպիսի նպատակի իրականացմանն է կոչված սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը, քանի որ նախատեսված է հարկադրանքի համապատասխան միջոցի կիրառման հետ կապված հարաբերությունների կարգավորմամբ երաշխավորելու դատական նիստի բնականոն ընթացքը՝ այն ընթացակարգի շրջանակներում, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարե-

լու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

- նախազգուշացում,
- նիստերի դահլիճից հեռացնելը,
- դատական տուգանք,
- պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

Միաժամանակ, օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է հարկադրանքի այդ տեսակների կիրառման կոնկրետ իրավապայմանները, մասնավորապես՝ թվարկված սանկցիաները պետք է համաչափ լինեն արարքի ծանրությանը և նպատակ հետապնդեն ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը, կիրառվեն կոնկրետ (քրեական դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող) անձանց նկատմամբ և այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես քննության առարկա, այնպես էլ համանման իրավահարաբերություններ կարգավորող այլ նորմերի (9-րդ հոդվածի 2-րդ մաս, 314-րդ հոդված) բովանդակությունից նաև հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով: Սակայն դատական նիստի սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում՝ այդ կարգի խախտման փաստով պայմանավորված, հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է իր նախաձեռնությամբ՝ ելնելով դատական նիստի կարգի խախտման հետ կապված հանգամանքների իր հայեցողական գնահատականներից: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում դատական հայեցողությունից դուրս են դատավարական հարկադրանքի վերոթվարկյալ միջոցները կոնկրետ (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող) անձանց նկատմամբ կիրառելու իրավապայմանները: Մասնավորապես, դատարանի նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Դատական տուգանքը կարող է կիրառվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ: Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է կիրառել նախազգուշացում, կամ նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից: Միաժամանակ, գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել վիճարկ-

վող հողվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները (գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը), որն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Դատական սանկցիաների վերաբերյալ դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից (314.1-րդ հոդվածի 8-րդ մաս):

Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցում օրենսդիրն առաջնորդվել է անձանց (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց) **տարբերակման սկզբունքով**, բացառելով դատավարությանը մասնակցող և դատավարական (իրավական) առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ դատախազի, պաշտպանի (փաստաբանի, կողմի ներկայացուցչի) նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելը որպես սանկցիա կիրառելը: Այն ունի իրավական հիմնավորում: Ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) ՀՀ Սահմանադրության 103-րդ, 20-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ օրենսդրության այլ ակտերի հիմքերով կատարում են սահմանադրաիրավական գործառնություններ՝ կապված համապատասխանաբար՝ դատարանում մեղադրանքի պաշտպանման և անձանց իրավաբանական օգնության տրամադրման հետ, որպիսիք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված՝ անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացման՝ Սահմանադրությամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Այսպիսով, դատավարության մասնակից հանդիսացող վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց ունեցած իրավունքների ու պարտականությունների բնույթով:

Ինչ վերաբերում է վիճելի իրավակարգավորման սուբյեկտ հանդիսացող փաստաբանի օգնականի իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությանը, ապա այն մանրամասնված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս 23-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին, որի ինքնությունը հաստատվում է փաստաբանի օգնականի վկայականով՝ տրված ՀՀ փաստաբանների պալատի կողմից («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասեր): Փաստաբանի օգնականը «օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից» այն բացառություններով, որպիսիք հիմնականում թվարկված են վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասի 1-ից 3-րդ կետերում և միաժամանակ, որոշ բացառություններով, «կրում է բոլոր պարտականությունները», որոնք այդ օրենքով վերապահված են փաստաբանին, այդ

թվում՝ փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոններով նախատեսված (23-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր): Մասնավորապես, համաձայն տվյալ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ փաստաբանի օգնականը չունի դատավարական բնույթի այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են. «...ստորագրելու և ներկայացնելու հայցադիմումներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, բացարկներ, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև հարցեր տալու քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելիս»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի քննության առարկա վիճելի իրավակարգավորումը նախատեսող նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ փաստաբանի օգնականը **քրեադատավարական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ չէ**, այսինքն՝ իրավասու չէ առանց փաստաբանի (պաշտպանի) ինքնուրույնաբար իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով փաստաբանին (պաշտպանին) վերագրված դատավարական բնույթի հիմնական գործառույթները: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենսգիրքը (6-րդ հոդվածի 31-րդ կետ) հստակ տարանջատել է «դատավարության մասնակցին» (դատախազ (մեղադրող), քննիչ, հետաքննության մարմին, տուժող, քաղաքացիական հայցվոր, նրանց օրինական ներկայացուցիչներ և ներկայացուցիչներ, կասկածյալ, մեղադրյալ, նրանց օրինական ներկայացուցիչներ, պաշտպան, քաղաքացիական պատասխանող և նրա ներկայացուցիչը)՝ դատավարական հարաբերություններում այդ սուբյեկտին օժտելով որոշակի իրավունքներով ու պարտականություններով:

7. Անդրադառնալով դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումների բողոքարկելիության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին դրա համապատասխանության գնահատման համատեքստում:

Ինչպես հետևում է վերոհիշյալ նորմի բովանդակությունից, դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դրանք բողոքարկելի չեն, բացառությամբ՝ տուգանք կիրառելու մասին որոշման, որը կարող է բողոքարկվել եռօրյա ժամկետում:

Համադրելով հիշյալ նորմը քրեական գործերով դատաքննության փուլում դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ նորմերի հետ՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել վիճարկվող իրավակարգավորման հիմքում դրված հետևյալ սկզբունքային մոտեցումները.

- սանկցիայի կիրառման որոշումը դատարանը կայացնում է նույն դատական նիստում՝ միջանկյալ դատական ակտով, ընդ որում՝ այդպիսին կայացվում է կամ արձանագրային որոշման (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր) կամ առանձին որոշման ձևով (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր),
- կիրառված որոշ սանկցիաների կամովին չկատարման դեպքում նախատեսված է դրանց հարկադիր կատարման ապահովում (314.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետեր):

Այսպիսով, քննության առարկա նորմով իրավաբանական առանձնահատուկ ուժ է հաղորդված քրեական գործերով դատական նիստի՝ օրենքով սահմանված կարգը պահպանելուն, այն խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն կոչված դատական ակտերին: Այդ առանձնահատկությամբ են պայմանավորված թե՛ այդ ակտերի կայացման և թե՛ կատարման ապահովման գործող ընթացակարգերը: Միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմանների ստեղծման (ապահովման) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

8. Անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և վերջինիս՝ իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, օրենքով իրացումը երաշխավորելու, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկելիության արդյունավետությունը բարձրացնելու հիմնախնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՄԳՈ-665, ՄԳՈ-673, ՄԳՈ-690, ՄԳՈ-719, ՄԳՈ-720, ՄԳՈ-747, ՄԳՈ-752, ՄԳՈ-754, ՄԳՈ-758, ՄԳՈ-765, ՄԳՈ-780, ՄԳՈ-832, ՄԳՈ-922, ՄԳՈ-936 և այլն): Այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով հատկապես սույն գործով քննության

առարկա հարցադրումներից, սկզբունքորեն հանգեցնում են իրավահամակարգային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

- դատական ակտերի բողոքարկումն անձի խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխավորման, ինչպես նաև արդար դատաքննության իրականացման խնդրում առանձնահատուկ ինստիտուտ է,
- բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով իրականացնել արդարադատության նպատակները,
- օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտերը),
- բողոքարկելի են միջանկյալ դատական այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացումը, մինչդեռ բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությամբ,
- սահմանված են դատական ակտերը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայելու իրավասություն ունեցող դատարանները, ընթացակարգերը և արդյունքում կայացվող որոշումները,
- օրենքով սահմանված են դատական ակտերի բողոքարկման հիմքերը, այդ թվում՝ դատական սխալի հիմքով,
- գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման (վերանայման) հիմք կարող է հանդիսանալ ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա (հանգեցրել է գործի սխալ լուծմանը), մասնավորապես՝ խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, խախտել է կողմերի դատավարական իրավունքները, հանգեցրել է արդարադատության սկզբունքների խախտմանը:

Միաժամանակ, ընդհանրացնելով դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

- մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներն ըստ էության քննության առնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ ընթացակարգերի նախատեսումը, այդ թվում խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը,
- բողոքների ընդունման և քննության ընթացակարգերի դիտարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում:

Վերոհիշյալ իրավաչափ նպատակների իրացման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է միջազգային իրավակիրառական պրակտիկայի զարգացման այն միտումը, համաձայն որի՝ առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելու և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում:

Եվրոպական միության շրջանակներում հաստատագրված իրավական պրակտիկան վկայում է, որ դատական նիստի կարգը խախտելու հիմքով փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծում է ոչ թե դատարանն իր հայեցողությամբ, այլ վերջինիս ներկայացմամբ՝ փաստաբանական կառավարման համապատասխան մարմինը:

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

Այլ է խնդիրը, ինչպես վկայում են գործում առկա նյութերը, թե ինչպես են մեկնաբանվել ու կիրառվել վիճարկվող և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերը կոնկրետ գործով, տվյալ անձի (փաստաբանի օգնականի) նկատմամբ և փաստական ինչպիսի՝ հանգամանքների առկայությամբ: Դրանց ըստ էության քննությունն ու իրավագնահատումն ընդհանուր իրավասության դատարանների և, մասնավորապես, վճռաբեկ բողոքի շրջանակներում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 18.02.2015թ. Ն/142 գրությամբ ներկայացված գիտավերլուծական կենտրոնի եզրահանգումն առ այն, որ քննության առարկա գործի շրջանակներում «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից վիճահարույց չէ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**24 փետրվարի 2015 թվականի
ՍԳՈ-1191**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ԳՎԻՆ ԻՍԱՆՅԱՆՍԻ,
ՌՈՒԴՈՒՆՑ ՀՈՎԱԿԵՄՅԱՆԻ, ՄԱԳԳԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ, ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ,
ԽԱԶԱՏՈՒՐ ՄԱՐՈԶՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 154-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
4-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 158-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱ
ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՎՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ա. Գյուլումյանի,
Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող),
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Գ. Իսանյանսի, Ռ. Հովակիմյանի, Մ. Եղիազարյանի և Ա. Սարգս-
յանի ներկայացուցիչ Ա. Ջեյնալյանի,

դիմողներ Ա. Սարգսյանի, Խ. Մարոզյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դա-
տարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արա
Սարգսյանի, Գվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մազոա Եղիազարյանի,
Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարոզյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչա-
կան դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի
5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-
տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյան-սի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի, Խաչատուր Մարոզյանի համապատասխանաբար՝ 09.07.2014թ., 26.09.2014թ. և 27.12.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 09.12.2014թ. ՍԴԱՌ-70 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացիներ Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացի Արա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են:

Սահմանադրական դատարանի 20.01.2015թ. ՍԴԱՌ-1 աշխատակարգային որոշմամբ միավորվել են «Քաղաքացի Խաչատուր Մարոզյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի և 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողների գրավոր հաղորդումները, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Վճռաբեկ բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունվելուց ի վեր դրա 154-րդ հոդվածի 4-րդ մասում և 158-րդ հոդվածի 5-րդ մասում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2.1. ԳՎԻՆ Իսանյանի դիմումը

Ոստիկանությունը 20.11.2013թ. «Վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին» հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ դիմողի:

Դիմողի անունից 09.01.2014թ. «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի» 20.11.2013թ. ԳՎԻՆ Իսանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցը մերժելու, կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը ճանաչելու և ոստիկանների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին» ձևակերպմամբ հակընդդեմ հայց է ներկայացվել Վարչական դատարան ընդդեմ Ոստիկանության:

Վարչական դատարանը 20.01.2014թ. «Հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ մերժել է վարույթ ընդունել հակընդդեմ հայցը, ինչը բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Վերջինս իր՝ 24.02.2014թ. «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ մերժել է քննության ընդունել վերաքննիչ բողոքը:

Դիմողն անձամբ ներկայացրել է վճռաբեկ բողոք, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ բողոքին կից չի ներկայացվել բողոքի էլեկտրոնային տարբերակը և փաստաբանի արտոնագիրը: Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 29.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը քննել՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.03.2014 թվականի որոշմամբ ԳՎԻՆ Իսանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ ԳՎԻՆ Իսանյանը վերոնշյալ որոշմամբ արձանագրված սխալները վերացրել է մասնակի, մասնավորապես՝ վճռաբեկ բողոքը չի բերել

փաստաբանի միջոցով, ինչպես նաև վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել իր ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը), միաժամանակ բողոք բերած անձը կրկին ներկայացրած վճռաբեկ բողոքում դարձյալ բավարար չի նշել, թե Վերաքննիչ դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն է խախտել կամ սխալ կիրառել և բողոքում չի հիմնավորել գործի ելքի վրա դրանց ազդեցությունը և կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է»:

2.2. Մագդա Եղիազարյանի դիմումը

Մագդա Եղիազարյանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ հայցադիմումում թույլ տրված խախտումը վերացնելու՝ հայցը ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու համար:

Վարչական դատարանը միջնորդությունն ու հայցադիմումի ընդունումը մերժել է:

Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը նույնպես մերժվել է:

Դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԳ/1178/05/13 վարչական գործով 05.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է դիմողի բողոքն այն պատճառաբանությամբ, որ դիմումին կից ներկայացված չեն փաստաբանի լիազորագիրը և բողոքի էլեկտրոնային տարբերակը: Դիմողին մեկամսյա ժամկետ է տրվել սխալները վերացնելու և դիմումը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 14.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը քննել՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.03.2014 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 26.11.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Մագդա Եղիազարյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է. միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Մագդա Եղիազարյանի ներկայացուցիչը, չվերացնելով որոշմամբ արձանագրված սխալները, այն է՝ վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, և կրկին նույն հիմքով է ներկայացրել վճռաբեկ բողոքը, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել»:

2.3. Արամ Մարգսյանի դիմումը

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ ՎԳ-3/0222/05/13 վարչական գործով 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչն իր անձնական հասցեից էլեկտրոնային ստորագրությամբ (էլեկտրոնային փաստա-

թուղթ, էլեկտրոնային տարբերակ) 09.01.2014թ. էլեկտրոնային փոստով վճարել բողոք է առաքել Վճռաբեկ դատարան, Վարչական վերաքննիչ դատարան և պատասխանողին: Այն նույն օրը մուտքագրվել է հասցեատերերի էլեկտրոնային հասցեներին: Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարից 10.01.2014թ. ստացվել է թիվ Դ-Դ-6-Ե-33 գրությունը, որով վերջինս ընդունել է վճռաբեկ բողոքն էլեկտրոնային փոստով 09.01.2014 թվականին ստացված լինելու փաստը: Գրության մեջ նշվել է. «... ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն վարչական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով էլեկտրոնային դատավարության ձև սահմանված չէ, և նույն օրենսգրքի 118.4-րդ և 118.5-րդ հոդվածների կանոնակարգումների տրամաբանության համաձայն վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը պետք է ներկայացվի բնօրինակով: ...Վերագրյալի հիման վրա հայտնում եմ, որ Դ-ուք կարող եք Ձեր վճռաբեկ բողոքը ներկայացնել նշված իրավանորմների պահանջների պահպանմամբ, ուստի վերը նշված էլեկտրոնային փաստաթուղթ ֆայլը չի կարող համարվել որպես ՀՀ վճռաբեկ դատարանում մուտքագրված վճռաբեկ բողոք»:

Դիմողի անունից վերը նշված վճռաբեկ բողոքը ներկայացվել է փաստաթղթային տարբերակով, ինչի արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, մատնանշելով, որ դիմողը բողոքին կից չի ներկայացրել բողոքի էլեկտրոնային տարբերակը և սահմանված կարգով ձևակերպված փաստաբանի լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը): Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...Այսպիսով, կրկին օրենքի պահանջների խախտմամբ բողոք ներկայացնելու դեպքում սխալները շտկելու համար վերստին ժամկետ սահմանելը կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

Նկատի ունենալով, որ կրկին նույն հիմքով ներկայացված բողոքում սխալները չշտկելու պարագայում չեն վերացվում բողոքը քննության առնելու խոչընդոտները, իսկ մյուս կողմից տվյալ գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման դեպքերում կրկին ներկայացված բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության՝ նույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ որոշում կայացրած լինելու հիմքով:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.03.2014 թվականի որոշմամբ որպես Արամ Մարգարյանի ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Արամ Մարգարյանի ներկայացուցիչը չվերացնելով որոշմամբ արձանագրված սխալը, վճռաբեկ

բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, ինչպես նաև վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել իր ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը) և կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է»:

2.4. Ռուդոլֆ Հովակիմյանի դիմումը

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը 17.12.2013թ. «Վճարման կարգադրություն արձակելու մասին» երկու տարբեր հայցադիմումներով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ դիմողի՝ 50.000.00 ՀՀ դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու պահանջով, որոնց կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը համապատասխանաբար 19.02.2014թ. և 25.02.2014թ. արձակել է վճարման կարգադրություններ:

Նշված վճարման կարգադրությունների կապակցությամբ դիմողի անունից 21.03.2014թ. ներկայացվել են երկու տարբեր հակընդդեմ հայցադիմումներ, որոնցով պահանջվել է նշանակված և հնգապատկված տուգանքը բռնագանձելուն ուղղված՝ ՀՀ կառավարությանն առընթեր ճանապարհային ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչել և հայցադիմումը մերժել:

Նշված հակընդդեմ հայցադիմումների կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը համապատասխանաբար՝ 28.03.2014թ. և 02.04.2014թ. կայացրել է՝ «Վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու, հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» և «Վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու և հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին» որոշումներ, որոնք բողոքարկվել են ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: Այդ բողոքներից մեկով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 22.04.2014թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, իսկ մյուսով 09.06.2014թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշում:

Վարչական վերաքննիչ դատարանի 22.04.2014թ. «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 04.06.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ, որ. «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը ստորագրում են բողոք բերողը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի հա-

մաճայն՝ վճռաբեկ բողոքն ուղարկվում է վճռաբեկ դատարան, իսկ բողոքի պատճենը՝ վերաքննիչ դատարան ու դատավարության մասնակիցներին:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը բողոքին կից չի ներկայացրել վճռաբեկ բողոքի պատճենը Ճառայությանն ուղարկված լինելու վերաբերյալ ապացույց...»: Դիմողին տրվել է մեկամսյա ժամկետ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վարչական վերաքննիչ դատարանի 09.06.2014թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը նույնպես բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 23.07.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքն՝ հետևյալ պատճառաբանությամբ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ստորագրում են բողոք բերողը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բողոքը բերվել է Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչ (հիմք 18.03. 2014 թվականին տրված լիազորագիրը, գ.թ. 21) Արտակ Չեյնալյանի կողմից, սակայն գործում առկա չէ Արտակ Չեյնալյանի՝ փաստաբան լինելու վերաբերյալ ապացույց, ուստի բողոք բերած անձը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով, այսինքն՝ բողոքին կից չի ներկայացրել սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը (փաստաբանական գործունեության արտոնագիրը)»: Դիմողին տրվել է ժամկետ դիմումը կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 03.09.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ առանց քննության է թողել վճռաբեկ բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.07.2014 թվականի որոշմամբ Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է և միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչը չի վերացրել որոշմամբ արձանագրված սխալները, մասնավորապես՝ Ռուդոլֆ Հովակիմյանը կրկին վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով. թեև վճռաբեկ բողոքը բերվել է Ռուդոլֆ Հովակիմյանի ներկայացուցիչ Արտակ Չեյնալյանի կողմից (հիմք՝ 18.03.2014 թվականին տրված լիազորագիրը, գ.թ. 20), սակայն գործում առկա չէ Արտակ Չեյնալյանի՝ փաստաբան լինելու վերաբերյալ որևէ ապացույց: Այսինքն՝ Ռուդոլֆ Հովակիմյանը կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության...»:

2.5. Արա Սարգսյանի դիմումը

Երևանի քաղաքապետը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Արա Սարգսյանից 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով վճարման կարգադրություն արձակելու պահանջով, ինչի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը 01.02.2012թ. արձակել է վճարման կարգադրություն:

Նշված վճարման կարգադրության կապակցությամբ դիմողը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց՝ Երևանի քաղաքապետի 26.10.2011թ. թիվ Վ-35/4 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Նշված հակընդդեմ հայցադիմումի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը 21.02.2013թ. կայացրել է «Վճարման կարգադրությունից հայցային վարույթի անցում կատարելու, հակընդդեմ հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում:

Կրկին ներկայացված հակընդդեմ հայցադիմումի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանն իր՝ 03.07.2013թ. կայացրած վճռով հայցը մերժել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարել:

Նշված վճռի դեմ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 24.01.2014թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վճիռը բեկանել և փոփոխել է. հակընդդեմ հայցի առնչությամբ գործի վարույթը կարճվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի հայցը՝ բավարարվել:

Նշված որոշման դեմ դիմողի կողմից բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 12.03.2014թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, հետևյալ պատճառաբանությամբ. «Տվյալ դեպքում բողոք բերած անձը, ..., վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»: Դիմողին տրվել է տասնհինգօրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 14.05.2014թ. «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ առանց քննության է թողել վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ. «... Արա Սարգսյանը ... վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»:

2.6. Խաչատուր Մարոգյանի դիմումը

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Խաչատուր Մարոգյանից 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով վճարման կարգադրություն արձակելու պահանջով:

Խաչատուր Մարոգյանը հակընդդեմ հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ 14.05.2012թ. թիվ 1104074 ակտը և դրա հիման վրա ՀՀ կառավարությանն

առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչության 12.06.2012 թվականի թիվ 194186 որոշումն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջով:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 01.05.2012թ. որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցել է հայցային վարույթի և հակընդդեմ հայցադիմումը վերադարձրել, իսկ իր՝ 28.02.2014թ. վճռով բավարարել է ներկայացված հայցը:

Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 27.05.2014թ. որոշմամբ մերժել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը:

Դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը 09.07.2014թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, որով վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, հետևյալ պատճառաբանությամբ. «... բողոք բերած անձը ... վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»: Դիմողին տրվել է տասնհինգօրյա ժամկետ՝ որոշումն ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ սույն միավորված գործով դիմողների փաստարկները հանգում են նրան, որ օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1, 18, 19 և 20-րդ հոդվածներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, քանի որ բացառում է ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից իր անունից անձամբ կամ իր ընտրած անձի միջոցով վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը:

Արձանագրելով, որ նախկինում անձը կարող էր առանց որևէ խոչընդոտի վճռաբեկության կարգով բողոքարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերը, դիմողներն այն համոզմունքն են հայտնում, որ ներկայումս վերացվել է ՀՀ վճռաբեկ դատարան անմիջապես դիմելու կարգը՝ սահմանափակելով իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները:

Իրենց պահանջը հիմնավորելու համար դիմողները նշում են, որ ՀՀ վճռաբեկ դատարանին բողոքարկման ենթակա ակտերը բացառապես փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական արգելքի պայմաններում անհրաժեշտ է օրենքով կարգավորել փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ՝ անկախ կողմի նյութական դրությունից:

Դիմողները բարձրացնում են նաև այն հիմնահարցը, որ փաստաբանի մատուցած ծառայություններից օգտվելու համար ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ, ինչը հաճախ անհասանելի է դարձնում այդ ծառայություններից օգտվելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ դիմողների փաստարկները հանգում են նրան, որ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 18 և 19-րդ հոդվածներին:

Իրենց պահանջը հիմնավորելու համար դիմողները նշում են, որ օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության և կանխատեսելիության որակները: Այն ձևակերպված է անորոշ, քանի որ պարզ չէ, թե ինչ էլեկտրոնային տարբերակ պետք է կցվի վճարեկ բողոքին և ինչ էլեկտրոնային կրիչով: Դիմողները գտնում են նաև, որ նշված դրույթն անիրագործելի է դարձնում դատական ակտերի վիճարկումը վճարեկ դատարան այն անձանց համար, որոնց մատչելի չեն համակարգիչը, տպիչը, էլեկտրոնային կրիչները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի այն դրույթի առնչությամբ, որը վերաբերում է բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները վճարեկ բողոքին կցելու պարտականությանը, դիմողները գտնում են, որ նշված դրույթում «ուղարկել» եզրույթին իրավակիրառական պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որը բացառում է վճարեկ բողոքն էլեկտրոնային ստորագրությամբ էլեկտրոնային փոստով գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելը: Նշված տեսակետը հիմնավորելու համար դիմողները վկայակոչում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վերաբերյալ ՄԳՈ-722 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ թիվ ԵԿԳ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, փաստարկում է, որ վճարեկ դատարանում դիմողի շահերը որակավորում ունեցող փաստաբանի կողմից ներկայացվելու պահանջը չի կարող ինքնին համարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին հակասող, և այդպիսի ընթացակարգ սահմանելն արդարացված է ավելի գրագետ բողոքներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Հարցին անդրադառնալով փաստաբանի և հավատարմագրված փաստաբանի միջև նմանությունների և տարբերությունների տեսանկյունից և վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-765 որոշումը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, և, մասնավորապես, այդ հոդվածի այն դրույ-

քը, համաձայն որի՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է բողոքների կազմումը, պատասխանողն ընդգծում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով էականորեն ընդլայնվեցին անվճար իրավաբանական օգնության և անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակները: Ըստ պատասխանողի՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում նշված կատեգորիաների մեջ չընդգրկված ցանկացած անվճարունակ ֆիզիկական անձ ևս կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից:

Հարցին անդրադառնալով միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափության տեսանկյունից՝ պատասխանողն արձանագրում է, որ այդպիսի միջոցի ընտրությունը պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի խստացումով, ինչը պահանջում է անհրաժեշտ չափով իրավական գիտելիքներ:

Ամփոփելով՝ պատասխանողը գտնում է, որ **նախ**՝ վճռաբեկ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու՝ դատավարության մասնակցի հնարավորությունը, ինչպես նաև դատավարության կողմերի իրավահավասարությունը կախման մեջ չի դրվել անձի ֆինանսական հնարավորություններից, **երկրորդ**՝ ի տարբերություն հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի, բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ իրավակարգավորումը որևէ խտրականություն չի առաջացնում փաստաբանների միջև, **երրորդ**՝ խնդրո առարկա իրավապայմանը համաչափ է հետապնդվող նպատակին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ պատասխանողը փաստարկում է, որ վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներն ինքնանպատակ չեն, այլ իրենց տրամաբանության մեջ ուղղված են վճռաբեկ դատարանի գործառնությունների արդյունավետ իրականացմանը և թելադրված են գիտության ու տեխնիկայի զարգացմամբ:

Վկայակոչելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը՝ պատասխանողը գտնում է, որ էլեկտրոնային կրիչը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը պահպանելու և փոխանցելու համար պիտանի կրիչի ցանկացած տեսակ է, և դրա տեսակներն օրենսդրությամբ չեն կոնկրետացվել՝ նպատակ հետապնդելով տալ ընտրության լայն հնարավորություն և նվազագույնի հասցնել էլեկտրոնային կրիչի ձեռքբերման կապակցությամբ կատարվելիք ծախսերը:

Պատասխանողը հիմնավոր չի համարում դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն էլեկտրոնային կրիչ ձեռք բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորելը, քանի որ, ըստ պատասխանողի, վճռաբեկ բողոքի ներկայացումն ինքնին բողոքաբերից որոշակի ծախսեր է պահանջում՝ կապված, ի թիվս այլնի, պետական տուրքի և բողոքի պատճենները գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու հետ: Իսկ ֆինանսապես խոցելի վիճակում գտնվող անձանց համար

օրենսդիրը նախատեսել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, որը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, ներառում է բողոքների կազմումը:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով և 158-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավական պահանջների նշանակությունը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորվածությունը և լիարժեք իրացման անհրաժեշտ կառուցակարգերի ապահովումը,
- ՀՀ վճռաբեկ դատարան բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու օրենսդրական կարգավորման համակարգային տրամաբանությունն ու իրավաչափ նշանակությունը՝ հաշվի առնելով նաև փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի էության ու բովանդակության, դրա օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-765 և ՄԳՈ-833 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

6. Վերոհիշյալ որոշումներում, տվյալ գործերով քննության առարկա հարցերը դիտարկելով նաև դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների օրենսդրական լիարժեք և ամբողջական կարգավորման անհրաժեշտության համատեքստում, ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն և անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը» (ՄԳՈ-765),

բ) «Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջև հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ **օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում**, ..., սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմա-

գրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաև հավասարությունը դատավարության մասնակիցների միջև՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով» (ՄԳՈ-765),

գ) «... հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմնված՝ հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլ նաև սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով» (ՄԳՈ-765),

դ) «...պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի **յուրաքանչյուրի համար՝ անկախ սովյալ անձի ֆինանսական հնարավորություններից**» (ՄԳՈ-765),

ե) «... վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ...՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը» (ՄԳՈ-833):

Վերահաստատելով ՄԳՈ-765, ՄԳՈ-833 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները և արձանագրելով, որ **դրանք անտեսվել են հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում՝** սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված իրավական դիրքորոշումները վերաբերելի են նաև սույն գործի առնչությամբ:

7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրկել չէ՝ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:** Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

Չէ՛ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս առյանում ևս՝ **ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ:** Այսինքն, նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՄԴՌ-1167 որոշման մեջ ամրագրել է. «... ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն

էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

8. Վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդրին սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև վարչադատավարական օրենսդրության զարգացման համատեքստում: Մինչև ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ընդունումը ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքով ՀՀ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը միայն փաստաբանի միջոցով բերելու պարտադիր պահանջ առկա չէր, այսինքն՝ նախատեսված էր վճռաբեկ բողոքն անմիջականորեն ներկայացնելու կարգ: Մինչդեռ վիճարկվող դրույթը ոչ միայն սահմանում է վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ, այլև բացառում է վճռաբեկ բողոքն անմիջականորեն բերելու հնարավորությունը: Փաստորեն, ներկայումս գործում է միայն միջնորդավորված և այն էլ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու կարգը: Այսինքն՝ վերացվել է այն միակ անհրաժեշտ ուղին, որով ապահովվում էր վճռաբեկ դատարան անմիջականորեն դիմելու հնարավորությունը: Նման իրավակարգավորման արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունը էապես սահմանափակվել է:

Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է իրավաբանորեն գրագետ, հիմնավորված և օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանվածությամբ վճռաբեկ բողոք ներկայացնելու աստիճանով և հանգամանքով: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարագայում վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու, առանց քննության թողնելու, վարույթ ընդունելը մերժելու հանգամանքի հավանականությունը պահպանվում է: Այսինքն, ինչպես նախկինում, երբ առկա էր վճռաբեկ բողոք բերելու անմիջական կարգը, այնպես էլ ներկայումս, երբ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն փաստաբանի միջոցով, վճռաբեկ դատարանը վարույթ չէր (չի) ընդունում վճռաբեկ այն բողոքները, որոնք չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված և սույն գործով չվիճարկվող իրավական նորմերով սահմանվող այլ պահանջներին՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելով, առանց քննության թողնելով կամ վարույթ ընդունելը մերժելով: Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված գրությանն ի պատասխան ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.02.2015թ. թիվ ԴԴ-1 Ե-693 պատասխան գրության մեջ արտացոլված փաստացի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը, որի համաձայն, մասնավորապես, 2013թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ մակագրված 820 վճռաբեկ բողոքներից վարույթ է ընդունվել 43-ը, որը կազմում է մակագրված վճռաբեկ բողոքների 5.24 տոկոսը, իսկ 2014թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ մակագրված 1006 վճռաբեկ բողոքներից վարույթ է ընդունվել 50-ը, որը կազ-

մում է մակագրված վճռաբեկ բողոքների 4.97 տոկոսը: Նշված տվյալները փաստում են, որ նույնիսկ այն պարագայում, երբ վճռաբեկ բողոք միայն փաստաբանի միջոցով է բերվել, էական և շոշափելի փոփոխություններ չեն առաջացել՝ կապված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հետ:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումների համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևություններ, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

Ի դեպ, նման եզրահանգում է կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատը (ըստ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանին 27.02.2015թ. թիվ Ն/202 նամակով հասցեագրված մեկնաբանությունների):

10. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջի՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ նախապայմանի առկայությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն կանոնակարգումն անմիջականորեն կապված է ՀՀ Սահմանադրության հոդված 18-ում երաշխավորված իրավունքների, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի հետ (access to court): Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (*Luordo v. Italy*, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, *Staroszyck v. Poland*, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, *Stanev v. Bulgaria*, 2012 թ. հունվարի 17-ի վճիռ և այլն): Վիճարկվող դրույթն ամրագրված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածում, որով սահմանվում են վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջերը՝ թե՛ բովանդակությանը, թե՛ բողոքին կից ներկայացվող փաստաթղթերին: Այսպիսով, 158-րդ հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ այն ամրագրում է դատարանի մատչելիության իրավունքից օգտվելու համար որոշակի իրավական պահանջներ, ուստիև բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելը ևս հանդես է գալիս որպես այդ իրավունքի իրացման նախապայման: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի և Սահմանադրության արժեքանությանը հակասող վարքագիծ դրսևորելու պարտականություն, հետևաբար՝ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ո՛չ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ո՛չ որևէ այլ իրավական ակտով նախատեսված չեն բողոքի էլեկտրոնային տարբերակին ներկայացվող պահանջները (էլեկտրոնային փաստաթղթի ձևավորման չափանիշները, վավերապայմանները, ձևաչափը և այլն): Նման պահանջների բացակայությունը պետք է մեկնաբանվի որպես բողոքաբերի իրավունք՝ ընտրելու էլեկտրոնային եղանակով

փաստաթղթեր ներկայացնելու ցանկացած ձևաչափ և ցանկացած չափանիշի ընտրության հնարավորություն: Ընդ որում, որևէ պահանջ նախատեսված չէ նաև էլեկտրոնային թվային ստորագրության վերաբերյալ, հետևաբար՝ անձը չի կրում նման ստորագրություն ունենալու և այն օգտագործելու պարտականություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն իրացնելիս:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «էլեկտրոնային կրիչ» - ին ներկայացված պահանջները որևէ իրավական ակտով ևս նախատեսված չեն: «էլեկտրոնային կրիչ» հասկացությունը բացահայտված է «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է. «էլեկտրոնային կրիչ՝ մագնիսական սկավառակ, մագնիսական ժապավեն, լազերային սկավառակ, կիսահաղորդչային և այլ նյութական կրիչներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կամ այլ տեխնիկական միջոցներով տեղեկատվության գրանցման և պահպանման համար»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է «էլեկտրոնային կրիչ» եզրույթը և ինքնին՝ կրիչին ներկայացվող այլ պահանջ չի նախատեսում (կրիչի տեսակը), ուստի և անձի կողմից ցանկացած էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պարագայում նշված պահանջը համարվում է կատարված:

Պատասխանողն իր բացատրության մեջ նույնպես նման կերպ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, մասնավորապես նշել է. «Թեև դատավարական օրենսգրքերում ձևակերպման առումով օրենսդիրը միասնական մոտեցում չի դրսևորել և չի կոնկրետացրել էլեկտրոնային փաստաթղթի ձևաչափն ու չի կոնկրետացրել էլեկտրոնային կրիչի տեսակը, սակայն այդ հանգամանքը գործող իրավակիրառական պրակտիկայի պայմաններում չի կարող իրավունքների խախտման տեղիք տալ: ... Օրենսդիրը կրիչի տեսակը չորոշակիացնելով՝ ըստ էության, որպես ընդունելի տարբերակ է դիտել վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը պահպանելու և փոխանցելու համար պիտանի կրիչի ցանկացած տեսակ»:

Սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ նաև արձանագրում է, որ թեպետ սույն հոդվածով «էլեկտրոնային տարբերակը» հասկացությունը փակագծերի մեջ բացահայտված է որպես «էլեկտրոնային կրիչ», սակայն այս եզրույթները նույնական չեն. առաջինը վերաբերում է վճռաբեկ բողոքի տեքստը պարունակող համակարգչային նիշքին (ֆայլին), որը մատչելի է համակարգչային որևէ ծրագրի, իսկ երկրորդը՝ այդ տեքստը պահպանելու և փոխանցելու համար պիտանի տեխնիկական սարքին: Սահմանադրական դատարանը կարևորում է այս տարբերակումը, քանի որ բողոքի էլեկտրոնային տարբերակը հնարավոր է ներկայացնել ոչ միայն էլեկտրոնային կրիչի, այլև՝ էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ պատաս-

խանդն էլ սույն գործով ներկայացրած իր բացատրության մեջ նշում է. «Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը, եթե այն չի ներկայացվում էլեկտրոնային փոստի միջոցով, կարող է հասանելի դառնալ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կրելու ունակ որևէ կրիչի միջոցով»: Ուստիև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված պահանջը չի վերաբերում բացառապես բողոքի փաստաթղթային տարբերակին կից էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելուն, այլ թույլ է տալիս անձին ներկայացնել բողոքի էլեկտրոնային տարբերակը նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջի իրացման միատեսակության ապահովման համար համապատասխան միասնական չափանիշները պետք է ստանան իրավական ամրագրում: Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ այն դեպքերում, երբ անձի վրա դրվում է պարտականություն փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացնել նաև փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը կամ ուղղակիորեն դիմել համապատասխան մարմին էլեկտրոնային եղանակով, մանրամասնորեն սահմանվում են փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներին ներկայացվող պահանջները և հասանելի են լինում համապատասխան մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքէջում (Կանադա, Մեծ Բրիտանիա և այլն):

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշների բացակայությունը ենթադրում է դիմողի իրավունքը ներկայացնելու բողոքի էլեկտրոնային տարբերակը ցանկացած ձևաչափով և փաստաթղթի ցանկացած ձևավորմամբ թե՛ ցանկացած տեսակի էլեկտրոնային կրիչով, թե՛ էլեկտրոնային փոստով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշները պետք է իրավաբանորեն ամրագրվեն, իսկ մինչ այդ իրավակիրառական պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքնության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**3 մարտի 2015 թվականի
ՍԳ-Ո-1192**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՎԱԼԵՆՏԻՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆԻ

ԵՎ ՍՈՖՅԱ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 404-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ, 407-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 414.1-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 2-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

17 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝

դիմող Վ. Սկրտիչյանի ներկայացուցիչ Ռ. Այվազյանի, դիմող Ս. Թորոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացիներ Վալենտինա Սկրտիչյանի և Սոֆյա Թորոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Վ. Սկրտիչյանի և Ս. Թորոսյանի՝ համապատասխանաբար 02.12.2014թ. և 19.01.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 24.02.2015թ. ՍԳ-ԱՌ-9 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Սոֆյա Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացի Վալենտինա Մկրտիչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից: Հետագայում այն ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 404-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով»: Իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկ դատարան բողոքարկելու իրավունք ունեն՝ 1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողները»:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը» վերտառությամբ 407-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը: Վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)»:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը» վերտառությամբ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է հետևյալ իրավակարգավորումը. «2. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ ... 2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չունի»:

2. Միավորված գործերի դատավարական նախապատմությունները հանգում են հետևյալին.

դիմողներից Վալենտինա Սկրտիչյանը 08.04.2014թ. բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 26.03.2013թ. որոշումը վերացնելու վերաբերյալ: Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 06.05.2014թ. որոշմամբ Վալենտինա Սկրտիչյանի 08.04.2014թ. բողոքը մերժել է: Դիմողն ընդհանուր իրավասության դատարանի՝ 06.05.2014թ. որոշման դեմ 19.05.2014թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 06.08.2014թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, իսկ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2014թ. որոշումը թողել ուժի մեջ: Դիմողը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 06.08.2014թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 03.10.2014թ. որոշմամբ Վալենտինա Սկրտիչյանի վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

Դիմողներից Սոֆյա Թորոսյանը դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ քննիչի որոշումը վերացնելու պահանջով: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 21.07.2014թ. որոշմամբ բավարարել է դիմողի պահանջը: Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել դատախազը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 20.08.2014թ. որոշմամբ բավարարել է Շիրակի մարզի դատախազության դատախազի վերաքննիչ բողոքը: Դիմող Սոֆյա Թորոսյանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 20.08.2014թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 22.10.2014թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

3. Դիմողներից Վալենտինա Սկրտիչյանի կարծիքով՝ օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը, 407-րդ հոդվածի 5-րդ մասը և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 և 42-րդ հոդվածներին:

Օրենսգրքի՝ վերը նշված դրույթների և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի միջև հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ ըստ դիմողի՝ օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առկայության պայմաններում պետք է լրացուցիչ ներդրումներ կատարել էլեկտրոնային կրիչ պատրաստելու համար, իսկ մնաց պայմաններում օրենսդիրը չի սահմանել սոցիալական ծանր վիճակում գտնվող անձանց աջակցելու հնարավորություն:

Օրենսգրքի՝ վերը նշված դրույթների և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի միջև հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ ըստ դիմողի, փաստորեն, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները Հայաստանի Հանրապետությունում չեն գործում, քանի որ փոխվել են ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի, 407-րդ հոդվածի և 414.1-րդ հոդվածի դրույթները, ինչի հետևանքով իրական արգելք է առաջացել դատարանի մատչելիության համար:

Օրենսգրքի՝ վերը նշված դրույթների և ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի միջև հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ ըստ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը խախտել է Սահմանադրությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքը, քանի որ այդ օգնությունը չի կարող պարտադրված լինել: Դիմողն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ փաստաբանի մեկ ստորագրության համար ինքն ի վիճակի չէ վճարել այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքն ինքն է գրել: Դիմողի կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանին բողոքարկման ենթակա ակտերը բացառապես փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական պահանջի պայմաններում անհրաժեշտ է օրենքով կարգավորել փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ՝ անկախ կողմի նյութական դրությունից: Ներկա օրենսդրական կարգավորման պայմաններում անհամաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը:

Օրենսգրքի՝ վերը նշված դրույթների և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի միջև հակասությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ ըստ դիմողի՝ օրենսգրքի 404-րդ հոդվածի, 407-րդ հոդվածի և 414.1-րդ հոդվածի դրույթները «անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներ են, և այդ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:

Դիմողներից Սոֆյա Թորոսյանի կարծիքով՝ օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը և 407-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19 և 20-րդ հոդվածներին այն հիմնավորմամբ, որ դրանք, ըստ դիմողի, սահմանափակում են անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացման հնարավորությունը և հակասում են 19-րդ հոդվածում ամրագրված՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անձի իրավունքների պաշտպանության համար գործի արդարացի քննության իրավունքին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, փաստարկում է, որ վճռաբեկ դատարանում դիմողի շահերը որակավորում ունեցող փաստաբանի կողմից ներկայացվելու պահանջը չի կարող ինքնին համարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին հակասող, և այդպիսի ընթացակարգ սահմանելն արդարացված է ավելի գրագետ բողոքներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Հարցին անդրադառնալով փաստաբանի և հավատարմագրված փաստաբանի միջև նմանությունների և տարբերությունների տեսանկյունից և վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-765 որոշումը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը և, մասնավորապես, այդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է բողոքների կազմումը, պատասխանողն ընդգծում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով էականորեն ընդլայնվեցին անվճար իրավաբանական օգնության և անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակները: Ըստ պատասխանողի՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում նշված կատեգորիաների մեջ չընդգրկված ցանկացած անվճարունակ ֆիզիկական անձ ևս կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից:

Հարցին անդրադառնալով միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափության տեսանկյունից՝ պատասխանողն արձանագրում է, որ այդպիսի միջոցի ընտրությունը պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի խստացումով, ինչը պահանջում է անհրաժեշտ չափով իրավական գիտելիքներ:

Անվիտելով՝ պատասխանողը գտնում է, որ **նախ**՝ վճռաբեկ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու՝ դատավարության մասնակցի հնարավորությունը, ինչպես նաև դատավարության կողմերի իրավահավասարությունը կախման մեջ չի դրվել անձի ֆինանսական հնարավորություններից, քանի որ, ի տարբերություն հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի, տվյալ դեպքում օրենսդրությամբ սահմանվել են բավարար երաշխիքներ, որպեսզի փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորվի յուրաքանչյուր անձի համար՝ անկախ նրա ֆինանսական հնարավորություններից, **երկրորդ**՝ խնդրո առարկա իրավապայմանը համաչափ է հետապնդվող նպատակին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ պատասխանողը փաստարկում է, որ վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներն ինքնանպատակ չեն, այլ իրենց տրամաբանության մեջ ուղղված են վճռաբեկ դատարանի գործառույթների արդյունավետ իրականացմանը և թելադրված են գիտության ու տեխնիկայի զարգացմամբ:

Վկայակոչելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը՝ պատասխանողը գտնում է, որ էլեկտրոնային կրիչը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը պահպանելու և փոխանցելու համար պիտանի կրիչի ցանկացած տեսակ է, և դրա տեսակներն օրենսդրությամբ չեն կոնկրետացվել՝ նպատակ հետապնդելով տալ ընտրության լայն հնարավորություն և նվազագույնի հասցնել էլեկտրոնային կրիչի ձեռքբերման կապակցությամբ կատարվելիք ծախսերը:

Պատասխանողը հիմնավոր չի համարում դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն էլեկտրոնային կրիչ ձեռք բերելու համար անհրաժեշտ

Ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորելը, քանի որ, ըստ պատասխանողի, վճռաբեկ բողոքի ներկայացումն ինքնին բողոքաբերից որոշակի ծախսեր է պահանջում՝ կապված, ի թիվս այլնի, պետական տուրքի և բողոքի պատճենները գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու հետ: Իսկ ֆինանսապես խոցելի վիճակում գտնվող անձանց համար օրենսդիրը նախատեսել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, որը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, ներառում է բողոքների կազմումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առնչությամբ պատասխանողը փաստարկում է, որ դրանով ամրագրված է բողոքն առանց քննության թողնելու հիմքերից մեկը: Ի տարբերություն բողոքը վերադարձնելու հիմքերի, այս հիմքի դեպքում բողոքը չի վերադարձվում և ժամկետ չի տրամադրվում բողոքում առկա թերությունները շտկելու և բողոքը կրկին անգամ ներկայացնելու համար: Վճռաբեկ բողոքը փաստաբանի միջոցով ներկայացնելու պահանջի չպահպանումը տվյալ դեպքում համարվում է բողոքարկման կարգի խախտում և արգելակում է բողոքարկման ընթացակարգը:

5. Հաշվի առնելով ՄԴՈ-1192 գործով և սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճերի միջև որոշակի ընդհանրությունը՝ սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասով, 407-րդ հոդվածի 5-րդ մասով և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամրագրված իրավական պահանջների նշանակությունը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորվածությունը և լիարժեք իրացման անհրաժեշտ կառուցակարգերի ապահովումը,
- ՀՀ վճռաբեկ դատարան բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու օրենսդրական կարգավորման համակարգային տրամաբանությունն ու իրավաչափ նշանակությունը՝ հաշվի առնելով նաև փաստաբանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի էության ու բովանդակության, դրա օրենսդրական կարգավորման սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-765, ՄԴՈ-833 և ՄԴՈ-1192 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները,
- վեճի առարկա հիմնախնդրի առնչությամբ քրեական դատավարության առանձնահատկությունները:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում շահագրգիռ անձինք են հանդիսանում, ի թիվս այլոց, տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը, նրա ներկայացուցիչը, ինչպես նաև դիմողը: Ընդ որում, կասկածյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով համարվում է արդարացված, իսկ մեղադրյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով համարվում է ամբաստանյալ, դատապարտյալ կամ արդարացված, ինչից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակում ներառված են նաև **ամբաստանյալը, դատապարտյալը և արդարացվածը:**

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Օրենսգրքի՝ վերը ներկայացված դրույթների, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուսումնասիրության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քրեական դատավարությունում միայն փաստաբանի միջոցով անձանց օրինական շահերը ներկայացնելու և նրանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու պարտադիր պայմանը վերաբերում է բացառապես կասկածյալին և մեղադրյալին: Ընդ որում, վերջիններս, համաձայն օրենսգրքի, համապատասխանաբար՝ 63-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 65-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, ունեն ինչպես պաշտպանի միջոցով, այնպես էլ **ինքնուրույն պաշտպանվելու իրավունք՝ բացառությամբ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի, երբ անվճար հիմունքներով տրամադրվում է իրավաբանական օգնություն:**

Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչներ են հանդիսանում այն անձինք, որոնք դատավարության նշված մասնակիցների կողմից լիազորված են քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնելու նրանց օրինական շահերը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսգիրքը «պաշտպան» եզրույթն օգտագործելով բացառապես կասկածյալի, մեղադրյալի, ներառյալ՝ ամբաստանյալի, դատապարտյալի և արդարացվածի համար, «ներկայացուցիչ» եզրույթն օգտագործելով դատավարության մյուս մասնակիցների և դիմողների համար, 404-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսելով միայն **փաստաբանի** միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքը՝ 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում վճռաբեկ բողոքի ստորագրմանը և վճռաբեկ բողոքին կցվող փաստաթղթերին վերաբերող դրույթներում օգտագործում է «ներկայացուցիչ» եզրույթը: Հնարավոր տարբերակալումներից գերծ

մնալու նկատառումներից ելնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում **ներկայացուցչին** առնչվող դրույթները վերաբերելի են **փաստաբանին**:

7. Անդրադառնալով սույն որոշման 5-րդ կետում նշված հանգամանքները պարզելու և գնահատելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով ևս վերահաստատում է իր ՍԳ-Ո-765, ՍԳ-Ո-833 և ՍԳ-Ո-1192 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ արձանագրելով, որ, մասնավորապես, ՍԳ-Ո-765 և ՍԳ-Ո-833 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները լիարժեք չեն իրացվել հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում, գտնում է, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների առնչությամբ: Դա վերաբերում է հատկապես այն սկզբունքային մոտեցմանը, երբ առաջադրված իրավաչափ նպատակը պետք է իրացվի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման շրջանակներում: Այս պարագայում վերջինս ենթադրում է, որ օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, և դրա արդյունքում չապահովվելով անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը միանշանակ ճանաչում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ ինչն օրենքով նախատեսված դեպքերում ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականն անդամ երկրներին նույնպես առաջարկում է բացառել «տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց» դատարանի մատչելիության իրավունքի հնարավոր արգելափակումը:

8. Անդրադառնալով օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթի սահմանադրականության հարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ խնդրո առարկա դրույթի և օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների միջև: Այսինքն՝ օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների վերաբերյալ դիմող Վ. Սկրտիչյանի փաստարկները չեն կարող վերաբերելի համարվել նաև օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթի նկատմամբ:

Մասնավորապես, օրենսգրքի 414.1-րդ հոդվածը և դրա 2-րդ մասի 2-րդ կետի դրույթը կարգավորում են այն իրավական հետևանքները, որոնք վրա են հասնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատարանի մատչե-

լիության իրավունքից օգտվելու համար որոշակի իրավական պահանջները չպահպանելու արդյունքում: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ սույն գործի շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճն առնչվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատարանի մատչելիության իրավունքից օգտվելու համար որոշակի իրավական պահանջների բովանդակության սահմանադրականությանը: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող 2-րդ կետն իր բովանդակության մեջ չի ներառում միայն փաստաբանի կողմից դիմում չներկայացնելու բացասական հետևանքը, այլ ներառում է նաև ցանկացած այլ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածում նախատեսված սուբյեկտներից բացի այլ սուբյեկտների կողմից դիմում ներկայացնելու հետևանքները: **Նման իրավակարգավորումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև չի հանդիսանում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք ներկայացնելու ինստիտուտի ամրագրման անմիջական հետևանք:** Այսինքն՝ եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք ներկայացնելու պահանջ նախատեսված չլիներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող 2-րդ կետը որևէ կերպ չէր կարող սահմանափակել դատարանի մատչելիության իրավունքը և դիմողի համար առաջացնել որոշակի բացասական հետևանքներ: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող 2-րդ կետը չի կարող դիտարկվել որպես դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, մասնավորապես՝ դատարանի մատչելիության իրավունքը, սահմանափակող նորմ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավարության այն մասնակիցների մասով, ովքեր չունեն պաշտպան և որոնց համար օրենքով սահմանված կարգով երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյու-

նավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին պաշտպան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած դատավարության մասնակիցների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի երրորդ նախադասությունում ամրագրված՝ «Վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1192 որոշան մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՎ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**17 մարտի 2015 թվականի
ՍԳՈ-1196**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 171-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ, 173-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լ. Սարգսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 15.10.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ 29-րդ գլխի՝ «Դիմումի քննությունը» վերտառությամբ 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը սահմանում է. «Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը»: Իսկ նույն հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը սահմանում է. «Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ»:

Վերոնշյալ դրույթը փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

Օրենսգրքի՝ «Քաղաքացուն գործունակ ճանաչելը և նրա գործունակության սահմանափակումը վերացնելը» վերտառությամբ 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանը՝ խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումով, դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա, վճիռ է կայացնում ապաքինվածին գործունակ ճանաչելու մասին»:

Վերոնշյալ դրույթը փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

2. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին և 43-րդ հոդվածին՝ հետևյալ հիմնավորումներով.

- օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատարանի համար հայեցողություն է սահմանվում՝ անձին, որի վերաբերյալ քննվում է անգործունակության ճանաչման գործը, դատաքննությանը մասնակից դարձնելու հարցում: Մասնակցությունը պայմանավորված է համապատասխան անձի առողջական վիճակով, ինչպես նաև դատարանի հայեցողությամբ: Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, եթե անձի առողջական վիճակը թույլ է տալիս վերջինիս մասնակցությունը դատաքննությանը, նրան դատական նիստի կանչելու հարցը թողնված է դատարանի հայեցողությանը: Ըստ դիմողի՝ օրենսդրի կողմից սահմանվում է ոչ թե պարտադիր մասնակցության պահանջ, այլ համապատասխան դեպքում՝ մասնակցության հնարավորություն, որի իրականացումը պայմանավորված է դատարանի հայեցողությամբ,

- օրենսգրքով բացահայտված չէ նաև «առողջական վիճակը թույլ է տալիս» դրույթի բովանդակությունը, ինչն իր բովանդակությամբ պայմանավորված անորոշությամբ իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել անձի (որի նկատմամբ քննվում է անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը) դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները,
- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1991թ. թիվ 46/119 բանաձևով ընդունված՝ Հոգեկան հիվանդություններով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքներով սահմանվում է անձի, ում գործունակությունը հանդիսանում է դատական քննության առարկա, փաստաբանի միջոցով ներկայացման իրավունքը: Նախատեսվում է նաև վերջինիս, ինչպես նաև նրա ներկայացուցչի /առկայության դեպքում/ կամ ցանկացած այլ շահագրգիռ անձի կողմից գործունակության վերաբերյալ որոշումները վերադաս դատարան բողոքարկելու իրավունքը,

- «Հոգեկան խանգարմամբ անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2004) 10 հանձնարարականով սահմանվել է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան իրականացնելու իրենց բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Այդ իրավունքների իրականացման ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային և չպետք է հիմնված լինի միայն այն փաստի վրա, որ անձը հոգեկան խանգարում ունի (հոդված 4),

- «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանության սկզբունքների վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի R(99) 4 հանձնարարականով սահմանվել է, որ անգործունակ չափահասի իրավական գործունակությունը սահմանափակող որևէ պաշտպանության միջոց չպետք է կիրառվի, քանի դեռ համապատասխան միջոց սահմանող անձը չի տեսել չափահասին կամ անձնապես բավարարված չէ անձի վիճակի գնահատականով, և ներկայացված չէ առնվազն մեկ փորձագիտական եզրակացություն: Հանձնարարականի 13-րդ սկզբունքով սահմանված է անձի լավելու իրավունքը: Այսպես, անձը պետք է ունենա անձամբ լավելու իրավունք ցանկացած դատավարության ընթացքում, որը կարող է ազդել վերջինիս գործունակության վրա:

Դիմողը վկայակոչում է նաև ԵԽԽՎ թիվ 818 (1977) հանձնարարականը, ինչպես նաև ԵԽ նախարարների կոմիտեի R (83) 2 հանձնարարականը, որոնք նույնպես նախատեսում են, դիմողի կարծիքով, համանման ընթացակարգեր և երաշխիքներ:

Դիմողն անդրադառնում է նաև ՄԻԵԴ-ի մի շարք որոշումների: Մասնավորապես՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի, Կովալյովն ընդդեմ Ռուսաստանի, Վինթերվերփին ընդդեմ Նիդեռլանդների, Մանթովանելին ընդդեմ Ֆրանսիայի գործերով կայացված վճիռներով դատարանը, ըստ դիմողի, շեշտել է, որ հոգեկան խանգարում ունեցող անձին պետք է հնարավորություն ընձեռվի լավելու անձամբ

կամ անհրաժեշտության դեպքում՝ որևէ ներկայացուցչության ապահովման միջոցով: Ըստ դիմողի՝ թեև Վինթերվերփին ընդդեմ Նիդեռլանդների գործով քննարկման առարկա է եղել դիմողի ազատության հարցը, այնուամենայնիվ, դատարանը շեշտել է, որ տվյալ գործով դատավարության արդյունքն առնվազն նույնչափ կարևոր էր դիմողի համար, քանի որ քննարկվում էր նրա կյանքի բոլոր ոլորտներում անձնական ինքնավարության սահմանափակման հարցը: Ըստ դիմողի՝ դատարանը շեշտել է, որ նման գործերում անձը հանդես է գալիս երկակի դերում. որպես շահագրգիռ կողմ և դատարանի քննության հիմնական առարկա, հետևաբար՝ այդ անձի մասնակցությունը դատաքննությանն անհրաժեշտ է ոչ միայն իր շահերը ներկայացնելու, այլև դատարանի կողմից նշված անձի հոգեկան վիճակի մասին իր անձնական կարծիքը կազմելու համար: Ըստ դիմողի՝ դատարանը եզրահանգել է, որ գործի քննությունը միայն փաստաթղթերի հիման վրա իրականացնելու դատարանի որոշումը՝ առանց դիմողին տեսնելու կամ լսելու, ողջամիտ չէր, ինչով խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մրցակցային դատավարության սկզբունքը:

Դիմողը վկայակոչել է նաև Ռ-Դ համապատասխան օրենսդրական դրույթները և դրանց վերաբերյալ Ռ-Դ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասին՝ դիմողը նշում է, որ նշված դրույթի ուժով, որպես գործունակությունը վերականգնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, նախատեսված չէ այն անձը, որն անգործունակ է ճանաչվել դատարանի վճռով: Վերջինիս գործունակության վերականգնման հնարավորությունը պայմանավորված է բացառապես վերջինիս խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության կամաարտահայտությամբ, իսկ անգործունակ ճանաչված անձն ուղղակիորեն զրկվում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքից՝ ապաքինման դեպքում իր գործունակությունը վերականգնելու պահանջով:

Դիմողը վկայակոչում է նաև ՄԻԵԴ-ի մի շարք այլ վճիռներ: Մասնավորապես՝ Նատալյա Սիխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով կայացված վճռով դատարանը, ըստ դիմողի, արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքը բացարձակ չէ և կարող է համաչափորեն սահմանափակվել, եթե առկա է նման սահմանափակման համար իրավաչափ նպատակ, ինչպես, օրինակ, անգործունակ անձի կամ այլ անձանց շահերի պաշտպանությունը, արդարադատության պատշաճ իրականացումը: Ըստ դիմողի՝ դատարանը հաստատել է նաև, որ անգործունակության վերանայման խնդրանքով դատարան դիմելու՝ անգործունակ ճանաչված անձի իրավունքը նրա ամենակարևոր իրավունքներից է, քանի որ անգործունակության ընթացակարգը կարող է որոշիչ նշանակություն ունենալ անձի մյուս բոլոր այն իրավունքների իրականացման համար, որոնք սահմանափակվել են անգործունակության ճանաչմամբ: Ըստ դիմողի՝ դատարանը շեշտել է, որ ներպետական օրենսդրությամբ որ-

դեգրված մոտեցումը, որի համաձայն՝ անգործունակ ճանաչված անձը չի կարող անմիջականորեն դիմել դատարան իր գործունակությունը վերականգնելու հարցով, համահունչ չէ Եվրոպայում արձանագրված ընդհանուր միտումի հետ: Մասնավորապես, Ստանն ընդդեմ Բուլղարիայի գործով իրականացված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված 20 եվրոպական պետություններից 17-ի օրենսդրությունն անգործունակ ճանաչված անձանց իրավունք է վերապահում անձամբ և անմիջականորեն դիմելու դատարան՝ իրենց գործունակությունը վերականգնելու պահանջով: Ըստ դիմողի՝ դատարանի կողմից շեշտվել է նաև, որ տվյալ կատեգորիայի անձանց կողմից դատարան դիմելու ընդհանուր արգելքը որևէ բացառություն չի սահմանում, միաժամանակ, ներպետական օրենսդրությունը որպես երաշխիք չի նախատեսում դատարանի կողմից իրավական գործունակության վերականգնման պարբերական վերանայման կարգ: Ըստ դիմողի՝ դատարանի կողմից տվյալ գործով ճանաչվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ դատարան դիմելու իրավունքի բացակայությունն ազդել է դիմողի կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա, և չի կարող արդարացվել անգործունակ անձանց համար դատարանի մատչելիության սահմանափակումներով:

3. Պատասխանող կողմն սկզբունքորեն չի հերքում դիմողի փաստարկները և գտնում է, որ վեճի առարկա իրավակարգավորումների առնչությամբ առկա է օրենսդրության բարեփոխման խնդիր: Պատասխանողը նաև գտնում է, որ յուրաքանչյուր անձի՝ իր գործով դատաքննությանը մասնակցությունն արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքի երաշխիք է, առավել ևս, երբ գործ ունենք անձին անգործունակ ճանաչելու, այսինքն՝ նրա քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանափակման հետ:

Անդրադառնալով դիմումում նշված այն հարցին, որ օրենսգիրքը չի սահմանում անձի՝ իր գործունակությունը վերականգնելու հարցով դատարան դիմելու իրավունքը, պատասխանողը նշում է, որ նման իրավունքի բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ անձի իրավական կարգավիճակի վրա: Ուստի, պատասխանողը կարծում է, որ անգործունակ անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից պետք է սահմանվի այնպիսի հատուկ իրավակարգավորում, որը հնարավորություն կտա վերջինիս իր գործունակությունը վերականգնելու դիմումով անձամբ դիմել դատարան:

Միաժամանակ, պատասխանողն իր բացատրությանը կից ներկայացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի թիվ Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0 նախագիծը՝ արձանագրելով, որ տվյալ նախագիծը շրջանառության մեջ է դրվել ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորների կողմից՝ առկա խնդիրը լուծելու նպատակով:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերն անմիջականորեն առնչվում են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպա-

նության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքին, արդար դատաքննության սկզբունքներին, ինչպես նաև նշված իրավունքների թույլատրելի սահմանափակումներին:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա են հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությանն առնչվող մի շարք միջազգային փաստաթղթեր: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1991 թվականի 46/119 բանաձևով ընդունված՝ հոգեկան հիվանդ անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության սկզբունքներն ուղղակիորեն մատնանշում են որևէ խտրականության անթույլատրելիությունը, այսինքն՝ հոգեկան հիվանդության պատճառով այնպիսի տարբերակումների, բացառությունների կամ նախապատվություն տալու դրսևորումները, որոնց արդյունքում անհնարին կդառնա կամ կդժվարանա միջազգայնորեն ճանաչված քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից հավասար օգտվելը (1-ին սկզբունքի 4 և 5-րդ կետեր): Նշված սկզբունքները նախատեսում են նաև անձի, ում գործունակությունը հանդիսանում է դատական քննության առարկա, փաստաբանի կողմից ներկայացված լինելու իրավունքը, ինչպես նաև գործին մասնակցող ցանկացած այլ շահագրգիռ անձի հետ համահավասար անգործունակության վերաբերյալ որոշումը վերադաս դատական ատյաններում բողոքարկելու իրավունքը (1-ին սկզբունքի 6-րդ կետ):

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ նաև՝ ԵԽԽՎ)՝ «Հոգեկան հիվանդների կարգավիճակի մասին» 08.10.1977 թվականի 818(1977), Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (այսուհետ նաև՝ ԵԽՆԿ)՝ «Հարկադիր կարգով հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական պաշտպանության մասին» 22.02.1983 թվականի R(83)2 հանձնարարականներում, ինչպես նաև «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» 23.02.1999 թվականի R(99)4, «Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» 24.02.2004 թվականի Rec(2004)10 հանձնարարականներում նույնպես ընդգծվում է, որ հոգեկան խանգարում ունեցող անձինք պետք է ունենան քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներն իրացնելու հնարավորություն, իսկ այդ իրավունքների սահմանափակումները թույլատրվում են բացառապես Կոնվենցիային խիստ համապատասխան, և չեն կարող հիմնվել միայն անձի մոտ հոգեկան խանգարման առկայության փաստի վրա: Ընդ որում, վերը նշված հանձնարարականներով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է սահմանել, որ **դատական որոշում չի կարող ընդունվել միայն բժշկական եզրակացության հիման վրա:**

Վերը նշված հանձնարարականներով սահմանվում է նաև, որ **պետք է ապահովվի** հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց **լավելու իրավունքը** և երաշխավորվի ողջ դատավարության ընթացքում փաստաբանի մասնակցությունը: Վերը նշված հանձնարարականներով նախատեսված է նաև, որ հոգեկան

խանգարում ունեցող անձանց նկատմամբ որոշում կայացնելիս պետք է երաշխավորել ինչպես անձամբ լավելու իրավունքը, այնպես էլ կայացված որոշումը բողոքարկելու իրավունքը:

R(99)4 հանձնարարականում ձևակերպված են նաև անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության սկզբունքները, և նշված հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել նշված սկզբունքներով: Այդ սկզբունքներից է, մասնավորապես, իրավական կարգավորումների ճկունությունը, որը, ի թիվս այլնի, թույլ է տալիս կիրառել իրավական կարգավորումների այնպիսի գործիքներ, որոնք լիարժեք հաշվի կառնեն, ի թիվս այլնի, տվյալ կոնկրետ իրավական վիճակում անգործունակության աստիճանը: Նշված հանձնարարականը դատավարական սկզբունքների թվին դասում է նաև անձի՝ անձամբ լավելու իրավունքի պահպանման սկզբունքը ցանկացած դատաքննության ընթացքում, որը կարող է առնչվել անձի գործունակությանը, **ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու հետ կապված հարցերի լուծման համար պարբերաբար վերանայելու կամ բողոքարկելու հնարավորության ամրագրումը:**

5. Սույն գործով բարձրացված հիմնախնդրին, ինչպես նշել է նաև դիմողը, իր մի շարք որոշումներում անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ Ռուսաստանի Դաշնության դատական ատյանի կողմից անգործունակ ճանաչված Պավել Շտուկատուրովի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդված երաշխավորված իրավունքը խախտվել է՝ հիմնավորելով, որ.

- հոգեկան խանգարում ունեցող անձանց անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լավելու իրավունքի չապահովումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին (վճռի 70-րդ պարբերություն),
- համապատասխան անձը հանդիսանում էր և՛ դատաքննության օբյեկտ, և՛ շահագրգիռ կողմ, հետևաբար՝ վերջինիս մասնակցությունը դատաքննությանը պարտադիր էր ոչ միայն իր գործը ներկայացնելու համար, այլ նաև՝ որպեսզի դատարանն իր կարծիքը ձևավորի անձի հոգեկան վիճակի վերաբերյալ (վճռի 72-րդ պարբերություն), (*mutadis mutandis* Կովալյովն ընդդեմ Ռուսաստանի վճռի 35-37 պարբերություններ),
- ներպետական դատարանի կողմից անձի գործունակության վերաբերյալ որոշում կայացնելն առանց վերջինիս լսելու կամ տեսնելու, բացառապես փաստաթղթերի հիման վրա, հանդիսանում է արդար դատաքննության մրցակցության սկզբունքի խախտում (վճռի 73-րդ պարբերություն),
- դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել էր այն հիմքով, որ վերջինս չունի դատարանի առջև հանդես գալու իրավասություն: Արդյունքում՝ դատավարությունն ավարտվել էր միայն առաջին ատյանի դատավճռով (վճռի 75-րդ պարբերություն):

Նատայա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով դատարանը նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել, արձանագրելով, այդուհանդերձ, որ մյուս սահմանափակումը չպետք է լինի այնպիսին, որ խաթարվի իրավունքի էությունը. մյուս սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, ինչպես նաև առկա լինի ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև: Տվյալ գործով դատարանը գտել է, որ անգործունակ ճանաչված անձին դատավարական իրավունքներից զրկելը կարող է արդարացված լինել այդ անձի պաշտպանության, այլ անձանց շահերի պաշտպանության և արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից՝ դատարանը գտել է, որ դատավարական իրավունքների իրացման կարևորությունը կարող է տարբեր լինել՝ կախված այն գործողության նպատակից, որն անձը ցանկանում է ներկայացնել դատարանում: Մասնավորապես անձի՝ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերանայելու պահանջի իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ մյուս գործընթացը կարող է ուղղակիորեն ազդել բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման վրա, որոնք սահմանափակվել էին անձին անգործունակ ճանաչելու արդյունքում: Նման հնարավորության բացակայությունը չի կարող արդարացվել իրավաչափ նպատակով, որը կարող է դրվել անգործունակ ճանաչված անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմքում: Արդյունքում՝ դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

6. Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ վերը նշված միջազգային փաստաթղթերից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից բխում է, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները. դատարանում լավելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը: Մույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է պարզել, թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հոգեկան խանգարում ունեցող անձանց համար որքանով են հստակ երաշխավորված վերը նշված իրավունքները: Խնդրո առարկա հանգամանքը պարզելը էական է նաև նրանով, որ.

- անձի գործունակության սահմանափակումն անխուսափելիորեն հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում տվյալ անձի իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակման,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների արդյունքում անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, դատական քննության ընթացքում պետք է հանդես գա **ոչ միայն որպես դատաքննության օբյեկտ, այլ նաև՝ որպես շահագրգիռ անձ:**

7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ գլխի նորմերը սպառնիչ կերպով թվարկում են գործին մասնակցող անձանց, ինչպիսիք են կողմերը, երրորդ անձինք, ինչպես նաև դիմողները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ բաժնով նախատեսված գործերով (օրենսգրքի 27-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը սահմանում է գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, որոնք, ի թիվս այլնի, ապահովում են գործին մասնակցող անձանց՝ դատարանում լավելու իրավունքը, դատական քննությանը մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ գլխի նորմերը սպառնիչ կերպով թվարկում են դատավարության այլ մասնակիցներին, ինչպիսիք են վկան, փորձագետը, թարգմանիչը (օրենսգրքի համապատասխանաբար՝ 44, 45 և 46-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Դրանք են՝ գործին մասնակցող անձինք. դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում. գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ստորադաս դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Դրանք են՝ գործին մասնակցող անձինք, գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ պետական շահերի պաշտպանության հարցերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունված որոշումների դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Դրանք են՝ գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի համադրված վերլուծության արդյունքներով ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսգիրքը հստակ դատավարական կարգավիճակով չի օժտում այն անձին, ում գործունակության հարցը քննվում է դատարանում: Թերևս նշված անձանց դատավարական իրավունքների իրականացմանն անդրադարձ է կատարվում միայն օրենսգրքի վիճարկվող 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ: **Սակայն նշված իրավունքների իրականացումը սահմանափակվում է միայն դատական նիստին վերջինիս ներկա գտնվելու հնարավորությամբ, ինչն ինքնին ձևակերպման տեսանկյունից վիճահարույց է: Միաժամանակ, օրենսգիրքը չի ամրագրում նաև դատարանի իրավունքները և պարտականությունները դատական նիստի կանչված այն անձի առնչությամբ, ում գործունակության հարցն է քննվում: Ստացվում է, որ գրկված չլինելով**

իրավասուբյեկտությունից, անձը, ում գործունակության հարցն է քննվում դատարանում, դատական նիստին կարող է մասնակից լինել որպես լոկ «դատաքննության օբյեկտ»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոնշյալ կարգավորումներով՝ այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, հստակ չեն ապահովվում իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Երաշխավորված չէ նաև հոգեկան խանգարում ունեցողների իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային հիշյալ փաստաթղթերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով ամրագրված՝ դատարանում լսվելու իրավունքը: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում **առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով:**

Այդ հիմնախնդիրը չի կարող որևէ հիմնավոր ու ամբողջական լուծում ստանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի վիճարկվող դրույթի շրջանակներում: Խնդիրը չի վերաբերում զուտ դատավորի հայեցողությանը: Սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից վիճարկվող դրույթն ըստ էության միայն սահմանափակող բնույթ ունի: Այսինքն, օրենսդրական իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակներում տվյալ դրույթը ըստ էության պետք է մեկնաբանել և կիրառել այնպես, որ **քաղաքացին չի կարող կանչվել դատական նիստի բացառապես այն դեպքում, եթե իր առողջական վիճակը դա թույլ չի տալիս:** Սակայն այս հարցում նույնպես իրավական կանոնակարգումներն ամբողջական ու հստակ չեն: Ավելին, նույնիսկ որոշակի իրավապայմանների առկայությամբ դատական նիստին կանչվելը՝ վեճի առարկա դրույթի սահմանադրաիրավական վերոնշյալ բովանդակության շրջանակներում, իրավունքների պաշտպանության տեսանկյունից էական դեր չի կարող ունենալ, եթե տվյալ անձն օրենքով սահմանված կարգով չունի հստակ դատավարական կարգավիճակ: Այս խնդիրն է, որ պետք է ՀՀ Ազգային ժողովի կողմից իր համալիր լուծումն ստանա:

Խնդիրը դիտարկելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՌ-1135 որոշման լույսի ներքո, առաջնորդվելով իրավահավասարության սահմանադրական սկզբունքի խախտումը բացառելու նկատառումներով և հաշվի առնելով խտ-

րականության արգելման սկզբունքի, դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, ներառյալ դատական ակտերը բողոքարկելու՝ անձի իրավունքները պետք է հավասարապես վերաբերելի լինեն նաև այն անձանց, ում գործունակության հարցը քննվում է դատարանում:

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականության հարցին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթում առկա է **սահմանադրականության խնդիր**, քանի որ դատարան դիմող սուբյեկտների շրջանակում բացակայում է սուբյեկտը, ով պետք է ճանաչվի գործունակ: Արդյունքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ գործունակ ճանաչված անձը զրկվում է սեփական գործունակությունը ճանաչելու վերաբերյալ լավելու, դատական քննությանը մասնակցելու և դատական ակտի բողոքարկման իրավունքների իրականացման հնարավորությունից:

Անդրադառնալով վիճարկվող դրույթին առնչվող միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրում է նաև, որ ըստ Եվրոպայի խորհրդի անդամ 17 պետությունների՝ Խորվաթիայի, Գանիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Հունգարիայի, Լյուքսեմբուրգի, Մոնակոյի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության, Սլովակիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի համապատասխան օրենսդրությունների՝ անգործունակ ճանաչված անձանց թույլ է տրվում անձամբ կամ ներկայացուցչի միջոցով իրենց գործունակությունը վերականգնելու պահանջով դիմել դատարան:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անգործունակ ճանաչված անձի իրավական կարգավիճակի վերանայման վերաբերյալ դիմող սուբյեկտների հարցին մասնավորապես անդրադարձել է Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով 2013 թվականի օգոստոսի 30-ին կայացրած վճռում, որում դատարանը գտել է, որ ապաքինվածին իր գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն չնախատեսելը **համահունչ է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համապատասխան օրենսդրական մոտեցումներին**: Տվյալ վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև նշել է, որ նման արգելքը որևէ այլընտրանք, ինչպես, օրինակ, անգործունակ ճանաչված անձանց գործերի դատարանի կողմից պարբերական վերանայման կարգը, չի նախատեսում: Արդյունքում՝ Մարդու իրավունքների եվրոպական դա-

տարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, չնախատեսելով գործունակության ճանաչման համար տվյալ անձի լավելու և դատաքննությունում մասնակցելու հնարավորություն, փաստացիորեն զրկում է այդ անձին ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների իրականացման հնարավորությունից:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հասկացությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»:

Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածը բացահայտում է անգործունակության հատկանիշները՝ ամրագրելով, որ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածը, իր հերթին, անդրադարձ է կատարում «սահմանափակ գործունակություն» հասկացության սահմանմանը, մասնավորապես նշելով, որ «ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռով սահմանվել է, որ անձին անգործունակ ճանաչելը հանդիսանում է վերջինիս անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտություն: Շտուկատուրովի մոտ բժիշկների կողմից արձանագրվել էին որոշակի հոգեկան հիվանդություններ, սակայն, ըստ դատարանի, վերջինիս անգործունակ ճանաչելն անհամաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին: Դատարանի կողմից արձանագրվել էր նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ գործունակության և անգործունակության միջև միջանկյալ, այլընտրանքային (բացառությամբ՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահ-

ման հակում ունեցողների) տարբերակի բացակայությունը՝ հաշվի առնելով այն տրամաբանությունը, որ ոչ բոլոր հոգեկան խանգարումներն են հանգեցնում անձի ամբողջական անգործունակությանը (վճռի 91-95-րդ պարբերություններ):

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում **արձանագրել, որ հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև այս խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը:**

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի թիվ Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0 նախագիծը, որով օրենսդիրը փորձում է լուծել դիմումում բարձրացված հիմնախնդիրները, որի ընթացքում անհրաժեշտ կլինի հաշվի առնել նաև սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ այնքանով, որքանով գործունակ ճանաչվող անձին հնարավորություն չի ընձեռում անձամբ իրացնել լավելու իր իրավունքը և հանդես գալ որպես դատավարության մասնակից, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**7 ապրիլի 2015 թվականի
ՍԳՈ-1197**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱ ՎԱՐԳԱՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1058-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ Տ. Ավետիսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Արա Վարդանյանի՝ 15.10.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 05.05.1998 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 28.07.1998 թվականին և ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականից:

Քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2009 թվականի հուլիսի 3-ին «Նորարար» արտադրական կոոպերատիվը վերակազմակերպվել է «Նորարար» ՍՊԸ-ի, որը գրանցվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի ԵՔԲԳ/0382/01/08 դատավճռով Արա Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Դիմելով դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը (Դատախազություն) պահանջել է Արա Վարդանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 2.436.070 ՀՀ դրամ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 27.05.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 10.12.2010 թվականի որոշմամբ Արա Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 27.05.2010 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 09.02.2011 թվականի որոշմամբ Դատախազության բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.05.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 22.09.2011 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2011 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.11.2011 թվականի որոշմամբ Արա Վարդանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (Դատարան) 05.04.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.10.2012 թվականի որոշմամբ Արա Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի՝ 05.04.2012 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 05.12.2012 թվականի որոշմամբ Դատախազության բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 15.08.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 29.01.2014 թվականի որոշմամբ Արա Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 15.08.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Արա Վարդանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը վերադարձվել է:

Համաձայն ՀՀ վարչական դատարանի՝ 26.05.2010թ. թիվ ՎԴ/5290/05/09 վարչական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության հայցն ընդդեմ «Նորարար» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Վճռվել է «Նորարար» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչության բռնագանձել ընդհանուր գումարով 59.900.100 ՀՀ դրամ, որից ապառք՝ 29.121.700 ՀՀ դրամ, տույժ՝ 15.128.400 ՀՀ դրամ, տուգանք՝ 15.650.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 1.198.100 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դիմողի պնդմամբ՝ իրավակիրառական գործունեության սուբյեկտներն իրենց իրավական դիրքորոշումը կառուցելիս հաշվի չեն առել ՀՀ իրավական համակարգում առկա և իրավական ակտերով հստակորեն կարգավորված հարկային և քաղաքացիական հարաբերությունների տարանջատման հայեցակարգը: Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերը չեն կարող ենթարկվել այնպիսի անհամարժեք իրավական մեկնաբանման ու կիրառման, որոնց արդյունքում անձը կկրեր պարտականություններ (ենթարկվեր պատասխանատվության) մեկ այլ սուբյեկտի փոխարեն, բովանդակային, ըստ էության սուբսիդիար և կրկնակի գույքային պատասխանատվություն. հարկման ենթակա գումարը դիտարկվել է նախ՝ որպես հարկ՝ գանձելով իրավաբանական անձից (հանրային իրավական տարր), ապա արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարագայում՝ որպես վնաս քաղաքացիաիրավական բնութագրիչներով ու վավերապայմաններով (մասնավոր իրավական տարր), ըստ որում՝ այդ ամենը զուգադրելով քրեաիրավական գործիքներով և ուղղորդմամբ: Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմի դատաիրավական պրակտիկայի ամփոփ ուսումնասիրությունը վկայում է, որ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար-ֆիզիկական անձը (սեփա-

կանատերը) չի կարողանում արդյունավետ կերպով իրականացնել սեփականության իրավունքի դատական պաշտպանությունը: Դիմողը գտնում է, որ անձի (իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի) անձնական գույքի (սեփականության իրավունքի) նկատմամբ իրավահավակնությունը ներկայիս ձևավորված դատաիրավական պրակտիկայում լուծվում է հարկային իրավական համատեքստում՝ իշխանական մարմնի հայեցողությամբ: Դիմողը վկայակոչում է նաև ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը՝ առ այն, որ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և նշում է, որ «Դիմողը, փաստական և իրավական առումներով *բուխնդակային* (ըստ էության) վերլուծության ենթարկելով իր գործի առնչությամբ կայացված դատական ակտերը՝ դրանք դիտարկել էր հանրային իրավական պատասխանատվության ինստիտուտի և այդ համատեքստում կրկնակի պատասխանատվության արգելման սահմանադրաիրավական սկզբունքի անմիջական գործողության ուժի համադրությամբ»:

4. Պատասխանող կողմը՝ հիմնավոր չհամարելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը նպատակաուղղված է տուժողի՝ վնաս պատճառելու հետևանքով առաջացած գույքային շահերի պաշտպանությանը՝ հետապնդելով իրավաչափ նպատակ: Այսուհանդերձ, պատասխանողի հիմնական փաստարկը հանգում է նրան, որ դիմողի խնդիրը պայմանավորված չէ վիճարկվող նորմի սահմանադրականությամբ, այլ դիմողն առաջ է քաշում իր նկատմամբ կիրառված դատական ակտի իրավաչափության հարց:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ վիճարկվող նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ սահմանադրաիրավական վեճ: Դիմողը չի ներկայացնում նաև որևէ դատական ատյանի կողմից վիճարկվող նորմին տրված այնպիսի մեկնաբանություն, որը կարգելափակեր ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված որևէ իրավունքի իրականացումը, ինչի արդյունքում էլ կառաջացներ հակասություն վիճարկվող դրույթի՝ իրավակիրառ պրակտիկայում բացահայտված բովանդակության և ՀՀ Սահմանադրության միջև:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիտարկում է դատական մարմինների կողմից համապատասխան դրույթի ենթադրյալ սխալ կիրառման տեսանկյունից, արդյունքում՝ բարձրացնում է վիճարկվող նորմի կիրառման իրավաչափության հարց, ինչը չի հանդիսանում սահմանադրական արդարադատության առարկա:

Դիմողը բարձրացնում է նաև *ne bis in idem* սկզբունքի ենթադրյալ խախտման հարցը, որն այս պարագայում հիմնավոր չէ, քանի որ հենց դիմողը միմյանցից զատում է խնդրահարույց իրավահարաբերության սուբյեկտներին՝ իրավաբանական

անձին և նրա տնօրենին, ինչպիսի փաստն ինքնին բացառում է այս սկզբունքի քննության անհրաժեշտությունը, քանզի *ne bis in idem* սկզբունքը վերաբերում է նույն անձին կրկնակի պատասխանատվության ենթարկելու հարցին:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳ-ԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Արա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 ապրիլի 2015 թվականի
ՍԳ-Ո-1202**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 69-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ
ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԳՐՈՒՅԹԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի /զեկուցող/, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լ. Սարգսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումն է, որը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2014թ. նոյեմբերի 14-ին:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պա-

տասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ինչպես «Շահութահարկի մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքները, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց .**

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. սեպտեմբերի 30-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. նոյեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 1998թ. հունվարի 1-ից:

Ընդունման պահից առայսօր օրենքը փոփոխվել և լրացվել է թվով 49 ՀՀ օրենքներով: Դիմողի կողմից վիճարկվող 69-րդ հոդվածը ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխվել է չորս անգամ՝ 06.07.1998թ. ՀՕ-243, 14.12.2001թ. ՀՕ-286, 25.12.2003թ. ՀՕ-55-Ն և 19.12.2012թ. ՀՕ-238-Ն օրենքներով:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Սույն օրենքը խախտելու համար վճարողների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը» վերտառությամբ 69-րդ հոդվածի՝ գործող խմբագրությամբ 3-րդ պարբերության՝ վեճի առարկա դրույթով սահմանվում է.

«Հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով»:

2. Վիճարկելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 22-րդ հոդվածի 7-րդ մասին, 31-րդ հոդվածին, 33.1-րդ հոդվածի 1-ին մասին և 43-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ հաշվարկված վնասն ավել ցույց տալն ընթացիկ հաշվետու կամ հաջորդող տարիներին կարող է ինչպես հանգեցնել, այնպես էլ չհանգեցնել շահութահարկի նվազեցմանը, քանի որ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Դիմողը պնդում է, որ իրավակիրառ պրակտիկայում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության վիճարկվող դրույթը կիրառվում է առանց հաշվի առնելու, թե վնասն ավել ցույց տալն արդյոք հանգեցրել է հարկի նվազեցման, թե՛ ոչ, իսկ երբ առկա չէ պետությանը և հասարակությանը հասցված վնաս, հարկային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը չի կարող համարվել իրավաչափ՝ հանգեցնելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքների անհամաչափ սահմանափակման:

Դիմողը գտնում է, որ քննության առարկա իրավադրույթը չի համապատասխանում իրավական պետությանը բնորոշ իրավական որոշակիության սկզբուն-

քին, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով հարկային պատասխանատվություն սահմանող այլ դրույթների հետ մեկտեղ այն կարող է տեղիք տալ տարընթերցումների: Մինչդեռ հարկային պատասխանատվություն սահմանող դրույթների անորոշությունը կարող է հանգեցնել դրանց կիրառման հարցում գործադիր իշխանության անսահմանափակ հայեցողության՝ հանգեցնելով իրավահավասարության և իրավունքի գերակայության սկզբունքների խախտման:

Դիմողի պնդմամբ՝ այն դեպքերում, երբ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալը հանգեցրել է հարկի նվազեցմանը, կիրառելի կարող են լինել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և 27-րդ հոդվածը, իսկ որոշ դեպքերում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1691-րդ և 1706-րդ հոդվածները նույնպես կարող են կիրառվել, ինչը հնարավոր է դարձնում անձին նույն արարքի համար կրկին անգամ դատելը:

Դիմողը նաև նշում է, որ հարկային պատասխանատվությունը կիրառելիս չի քննարկվում մեղքի առկայության կամ բացակայության հարցը, կատարված իրավախախտման բնույթը, իրավախախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, իրավախախտողի գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և այլ էական հանգամանքներ: Դիմողն այս կապակցությամբ գտնում է, որ թվարկված պայմանները սահմանված լինելու դեպքում էլ վիճարկվող դրույթը խնդրահարույց է սահմանված բացարձակ սանկցիայի իրավաչափության տեսանկյունից:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի կողմից բերված փաստարկներին և վերլուծելով օրենսդրությամբ սահմանված իրավական ներգործության միջոցները՝ հարկային և վարչական պատասխանատվությունը, պնդում է, որ դրանք տարբերվում են միմյանցից իրենց էությամբ և նպատակային ուղղվածությամբ: Հարկային իրավախախտումների համար վարչական պատասխանատվությունն ունի պատժիչ և կանխարգելիչ բնույթ, և վարչական զանցանքները, որպես կանոն, ավարտված են համարվում գործողությունը կատարելու կամ անգործություն դրսևորելու պահից՝ անկախ հետևանքներից, իսկ հարկային պատասխանատվությունը նպատակաուղղված է պետությանը և հասարակությանը պատճառված գույքային վնասների փոխհատուցմանը:

Պատասխանողը, նշելով, որ հարկային իրավահարաբերություններում «տույժ» և «տուգանք» հասկացություններն իրենց իրավական բովանդակությամբ տարբերվում են վարչական իրավահարաբերություններում նույնանուն հասկացություններից, ի հիմնավորումն իր փաստարկների, վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1139 որոշումը, համաձայն որի՝ «... եթե վարչական իրավունքում տուգանքը տույժի տեսակներից մեկն է, ապա հարկային իրավահարաբերություններում հարկային տույժը և տուգանքը հարկային պատասխանատվության առանձին տեսակներ են, որոնք կարող են կիրառվել նաև համակցված, և ներառված են հարկային պարտավորություններում»:

Գիմողի կողմից մատնանշված իրավադրույթների միաժամանակյա կիրառելիության կապակցությամբ պատասխանողը պատճառաբանել է, որ շահութահարկով հարկվող օբյեկտը հարկվող շահույթն է և ոչ թե հարկային վնասը:

Պատասխանողը պնդում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված տուգանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ավել ցույց տրված հարկային վնասի ճշգրտման արդյունքում առաջանում է հարկվող շահույթ, որի արդյունքում՝ նաև պակաս հաշվարկված շահութահարկի գումար:

Անդրադառնալով *non bis in idem* սկզբունքի ենթադրյալ խախտմանը՝ պատասխանողը չի բացառում նույն արարքով պատճառված գույքային վնասի առկայության պարագայում մեղավոր անձի հարկային պատասխանատվությունը, պատճառաբանելով, որ անձը, ենթարկվելով քրեական կամ վարչական պատասխանատվության, համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է ենթարկվել նաև հարկային պատասխանատվության՝ պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման պահանջի շրջանակներում:

Պատասխանող կողմը պնդում է նաև, որ բացարձակ և հարաբերական սանկցիաների առկայությունը պարտադիր է պատժիչ բնույթ ունեցող պատասխանատվության դեպքում, որը հնարավորություն է տալիս անհատականացնել պատիժը:

4. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը գնահատել.

- սեփականության իրավունքի սահմանափակման համաչափության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի երաշխավորվածության տեսանկյունից,
- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից,
- օրենքի առջև բոլորի հավասարության ապահովման և խտրականության բացառման տեսանկյունից,
- նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման իրավական սկզբունքի ապահովման տեսանկյունից,
- իրավական պետության սկզբունքին համապատասխան համաչափ պատասխանատվություն երաշխավորելու տեսանկյունից:

Հաշվի առնելով կողմերի եզրահանգումները՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի այլ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված, ինչպես նաև հարկային օրենսդրության այլ ակտերում ամրագրված դրույթների համադրված վերլուծության արդյունքում:

5. Սեփականության իրավունքի և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական կարգավորումներն են նախատեսված ՀՀ Սահմանադրության 31, 33.1 և 43-րդ հոդվածներում:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սակայն սեփականության իրավունքը բացարձակ չէ և վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության իմաստով այն կարող է սահմանափակվել, եթե դրա իրականացումը կարող է վնաս պատճառել շրջակա միջավայրին, խախտել այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1073 որոշման մեջ անդրադարձ է կատարել սեփականության իրավունքի սահմանափակման միջազգային իրավական փորձին և վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ սեփականության պաշտպանությանն ուղղված սահմանադրական և միջազգային իրավական դրույթները «... այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Հարկը պետության գոյատևման անհրաժեշտ պայման է, և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այդ պարտականությունը վերաբերում է բոլոր հարկատուներին:

Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների համար կամավորության հենքի վրա սահմանադրաիրավական պարտավորությունների չկատարումն ինքնին հանգեցնում է պետության կողմից դրանց՝ իրավական հարկադրանքի միջոցով գանձմանը, որը չի կարող դիտարկվել որպես սեփականությունից զրկում:

ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»:

Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-780 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ արդեն իսկ բացահայտել է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը. «...ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, և որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման»: Դատարանը վերահաստատում է իր այն մոտեցումը, որ «... Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձևավորելու, իր գործունեության բնույթն ու ձևը

փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը որևէ կերպ չի կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

6. Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի համապատասխանությանը օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության բացառման սահմանադրական և միջազգային իրավական սկզբունքին, ապա ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ նշել, որ հարկային քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով, մասնավորապես 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորություններ են կրում ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները:

Նույն օրենքի 33-րդ և 61-րդ հոդվածների համեմատությունից ակներև է, որ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի շահութահարկը հաշվարկվում է նույն դրույքաչափով, ինչը վկայում է նրանց նկատմամբ պետության կողմից հավասարության սկզբունքի վրա հիմնված վերաբերմունքի մասին:

Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 69-րդ հոդվածը ռեզիդենտների համար նախատեսում է տուգանք՝ հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում: Այսինքն՝ ոչ ռեզիդենտներից տվյալ պարագայում տուգանք չի գանձվում: Նշված հանգամանքը չի կարող դիտարկվել որպես խտրական վերաբերմունք: Այս առումով սահմանադրական դատարանը վերահաստատում է իր ՄԳՈ-967 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումը, համաձայն որի՝ «... ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»: Ըստ առանձին հարկատեսակների կամ պարտադիր վճարների մասին օրենքների՝ անձի, որպես հարկ կամ պարտադիր այլ վճար վճարողի իրավական կարգավիճակը բնութագրվում է տարբեր հատկանիշներով, և հաճախ դրանք համադրելի չեն և պայմանավորված են տնտեսական քաղաքականության բնույթով ու առանձնահատկություններով:

7. «Հարկերի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ շահութահարկով հարկվող օբյեկտը հարկվող շահույթն է, այլ ոչ թե հարկային վնասը, և հարկային վնասն ավել ցույց տալը նշանակում է ավել նվազեցումների կամ պակաս եկամուտների հայտարարագրում:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Շահութահարկի հաշվարկների ճշտումը» վերտառությամբ 51-րդ հոդվածն ընդհանուր կանոն է սահմանում, որի համաձայն՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված

շահութահարկի հաշվարկներում հարկատուի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում հարկատուն կարող է հարկային տեսչության մարմիններին օրենքով սահմանված դեպքերում ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են **հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ**, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են, ինչպես նաև հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից (տեղական հարկերի դեպքում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) **կիրառվում են հարկ վճարողի օգտին**:

Վերոնշյալ դրույթները որոշակի երաշխիքներ են հանդիսանում նույն արարքի համար կրկնակի պատասխանատվությունը բացառելու համար:

8. Դիմողը թեև նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում նորմին տրվում է այլ մեկնաբանություն, որը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների տեսանկյունից, այնուամենայնիվ, չի վկայակոչում որևէ դատական ակտ, որի շրջանակներում վիճարկվող նորմին կտրվեր այդպիսի մեկնաբանություն: Դիմողը միայն ներկայացնում է մեկ դատական գործի դատավարական նախապատմությունը, որն իր փաստական հանգամանքներով էապես տարբերվում է դիմողի կողմից ներկայացված *non bis in idem* սկզբունքի ենթադրյալ խախտման հակասահմանադրական իրավիճակներից:

Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1139 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հասարակության և պետության համար իրենց ոչ բարենպաստ հետևանքներ առաջացնելու ծանրությամբ, պահպանվող հասարակական հարաբերություններին պատճառվելիք վնասով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հարկային իրավախախտումներ սահմանող նորմերն իրենց ամրագրումն են գտել ոչ միայն հարկային օրենսդրության մեջ, այլև վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև քրեական օրենսգրքերում: Բացի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված վարչական պատասխանատվությունից, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ, 205-րդ և 328-րդ հոդվածներով նախատեսված են կոնկրետ հանցակազմեր և համապատասխան պատժամիջոցներ՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերում: Այսպիսով, նպատակ ունենալով երաշխավորել հարկեր և տուրքեր վճարելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը, օրենսդիրը նախատեսել է իրավական պատասխանատվության կոնկրետ տեսակներ (հարկային, վարչական, քրեական), որոնց խստությունը, կիրառման իրավական հետևանքներն անմիջականո

րեն պայմանավորված են հարկային այս կամ այն պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հասարակական վտանգավորության աստիճանով: Մասնավորապես, եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային պարտավորության չկատարումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է նյութական պատասխանատվություն (համապատասխանաբար՝ հարկային և վարչական պատասխանատվություն), ապա նույն արարքը, ըստ սուբյեկտիվ հատկանիշի, քրեորեն պատժելի է չարամտության դրսևորման կամ ծանրացուցիչ այլ հանգամանքների առկայության դեպքերում: Հետևաբար, իր բնույթով ու բովանդակությամբ հարկային պարտավորությունից խուսափելն անհարիր է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում, այլ, նախ և առաջ՝ Սահմանադրության 1-ին, 3-րդ և այլ հոդվածներում ամրագրված իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին, ուստի այդ արարքի՝ օրենքով նախատեսված պատժելիությունը հետապնդում է իրավաչափ նպատակ»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի առաջին պարբերությունը պատասխանատվություն է նախատեսում հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում) և (կամ) գրանցումներ չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, **հաշվարկները**, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի առաջին պարբերությունը պատասխանատվություն է նախատեսում հարկվող օբյեկտը թաքցնելու կամ **այն պակաս ցույց տալու դեպքում:**

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ իր ՄԳՈ-1139 որոշման մեջ մանրամասն անդրադարձել է հարկային և վարչական պատասխանատվությունների տարանջատման հիմնահարցերին, մասնավորապես, հայտնել է այն դիրքորոշումը, որ հարկային պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) բնութագրիչներ պարունակող արարքի որակման և իրավագնահատման հարցում (եթե բացակայում են հանցակազմի հատկանիշները) օրենսդիրն ըստ էության **տարանջատել է վարչական և հարկային պատասխանատվության տեսակները:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ «օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում»:

9. Սահմանադրական դատարանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ շահութահարկի հաշվարկում հաշվարկված վնասն ավել ցույց տալը ոչ բոլոր իրավիճակներում է հանգեցնում հարկի նվազեցմանը: Հետևաբար՝ ոչ բոլոր դեպքերում է այդ իրավախախտմամբ պետությանը գույքային վնաս պատճառվում: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Հարկատուի գործունեությունից վնասները» վերտառությամբ 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով, բացառությամբ կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքերի: Հարկատուի գործունեությունից վնասը սույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

2. Սույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ»:

Այսինքն, տվյալ հաշվետու տարվա ընթացքում շահութահարկի հաշվարկում վնասն ավել ցույց տալը հարկ վճարողի հարկային պարտավորությունների պատշաճ կատարման վրա կարող է չանդրադառնալ, քանի որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Հետագայում շահութահարկի հաշվարկում սխալը շտկելու և պատճառված վնասն օբյեկտիվորեն ճիշտ ցույց տալու դեպքում հարկատուի հարկային պարտավորությունը չի նվազեցվում:

Բացի դրանից, «Շահութահարկի մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանց կարգավորման ոլորտում պատասխանատվություն նախատեսող նորմերը սանկցիա են նախատեսում միայն այն պարագայում, երբ իրավախախտման օբյեկտիվ կողմ հանդիսացող արարքի /գործողության կամ անգործության/ արդյունքում պետությանը, հասարակությանը գույքային վնաս է պատճառվել, այսինքն՝ իրավախախտման կազմը նյութական է, այլ ոչ թե ձևական:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորման կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք շահույթի հաշվարկում վնասի պակաս ցույց տալը հանգեցրել է հարկի նվազեցման, թե՛ ոչ, այսինքն՝ արդյոք պետությանը հասցվել է գույքային վնաս, թե՛ ոչ: Հակառակ պարագայում վիճարկվող դրույթը հանդես կգա որպես վարչական պատասխանատվությանը բնորոշ կանխարգելիչ, դաստիարակչական իրավակարգավորիչ գործառնությանից բխող պատասխանատվության ինստիտուտ նախատեսող դրույթ:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված՝ վեճի առարկա դրույթը կիրա-

ռելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: Իրավակիրառ պրակտիկայում տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ.

ա/ նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն,

բ/ տուգանք նշանակվի և գանձվի այն պարագայում, երբ տարբեր պատճառներով ավելի մեծ ցույց տրված վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման:

Այս մոտեցումը պետք է որդեգրվի նաև հինգ տարվա ընթացքում փոխանցվող վնասի հաշվարկման դեպքում: Իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից չի բխում այն մոտեցումը, երբ նախապես տուգանք կարող է սահմանվել և հաշվարկվել ենթադրյալ /հնարավոր/ խախտումների համար:

Սահմանադրական դատարանի սույն իրավական դիրքորոշումները համակարգային ձևով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 ապրիլի 2015 թվականի
ՍԳՈ-1203**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԷՄՍԱ ԽՈՉՈՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 199-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 մայիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Էմմա Խոջոյանի և Գևորգ Արշակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Է. Խոջոյանի և Գ. Արշակյանի՝ 15.10.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանը 10.03.2015թ. նիստում բավարարեց սույն գործի դատաքննությունը հետաձգելու

վերաբերյալ դիմողների ներկայացուցչի ներկայացրած միջնորդությունը և գործի դատաքննությունը հետաձգեց, որից հետո կողմերը որևէ լրացուցիչ նյութ չեն ներկայացրել:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելը և դրանից բաժին առանձնացնելը» վերտառությամբ 199-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո»:

Վերոնշյալ դրույթը փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. ըստ հայցի Լևոն Աբելյանի ընդդեմ Եղիշ Արշակյանի՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Եղիշ Արշակյանի ընդդեմ Լևոն Աբելյանի, երրորդ անձ Բայանդուր Գալստյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ընդհանուր հողամասից առանձնացնելու պահանջների մասին թիվ ԵԱԴԴ/0549/02/08 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 23.03.2009թ. վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարել է մասնակի՝ Երևան քաղաքի Ջանիբեկյան փողոցի թիվ 38 հասցեում դեպի Եղիշ Արշակյանի, Լևոն Աբելյանի և Բայանդուր Գալստյանի շինություններ տանող 94քմ հողատարածքը թողնվել է ընդհանուր օգտագործման: Մնացած 456.5քմ հողամասից 196քմ առանձնացվել է և հատկացվել Լևոն Աբելյանին, իսկ Եղիշ Արշակյանին հատկացվել է 260քմ, որը հանդիսանում է նրա շինության տակ գտնվող տարածքը և Լևոն Աբելյանին հատկացված հողատարածքի շարունակությունը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2009 թվականի որոշմամբ

Եղիշ Արշակյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 23.03.2009 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.10.2009թ. որոշմամբ Լևոն Աբելյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Ըստ հայցի Լևոն Աբելյանի ընդդեմ Եղիշ Արշակյանի (իրավահաջորդներ Էմմա Խոջոյան և Գևորգ Արշակյան)՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Եղիշ Արշակյանի (իրավահաջորդներ Էմմա Խոջոյան և Գևորգ Արշակյան)՝ ընդդեմ Լևոն Աբելյանի, երրորդ անձ՝ Բայանդուր Գալստյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ընդհանուր հողամասից առանձնացնելու պահանջների մասին թիվ ԵԱԳԳ/0549/02/08 քաղաքացիական գործի նոր քննության արդյունքում Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 15.03.2012թ. վճռով հայցը բավարարել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարել է մասնակիորեն՝ 91.84քմ մակերեսով հողամասն ընդհանուր սեփականության իրավունքով թողնվել է կողմերի ընդհանուր օգտագործմանը, իսկ ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ընդհանուր հողամասից առանձնացնելու մասին պահանջները մերժվել են:

Ընդ որում, դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ գտել է, որ որպես ընդհանուր համատեղ սեփականություն՝ հողամասը պետք է բաժանվի ոչ թե դրա վրա ամրակայված անշարժ գույքերի մակերեսներին համամասնորեն, այլ համատեղ սեփականության մասնակիցների միջև հավասար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2014թ. որոշմամբ Եղիշ Արշակյանի իրավահաջորդներ Էմմա Խոջոյանի և Գևորգ Արշակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.03.2012թ. վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Մերժելով վերաքննիչ բողոքը՝ վերաքննիչ դատարանը ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով կիրառել է թիվ ԵԿԳ/2343/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 27.05.2011 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, որի համաձայն. «Մինչև նախկինում գործող ՀՀ հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 15.03.1991 թվականը, քաղաքացին որպես անձնական սեփականություն կարող էր ունենալ բնակելի տուն (բնակելի տան մաս), իսկ հողը պետության բացառիկ սեփականությունն էր և հատկացվում էր բացառապես օգտագործման իրավունքով: Բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց՝ որպես սեփականություն, նրանց են թողնվել միայն ՀՀ նախկին հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.03.1991 թվականից: Միաժամանակ, ՀՀ նախկին հո-

դային օրենսգրքի համաձայն՝ այն բոլոր դեպքերում, երբ բաժինները որոշված չէին, ընդհանուր սեփականությունը համարվում էր որպես համատեղ սեփականություն: Ինչ վերաբերում է տվյալ պահին համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հետ կապված իրավահարաբերություններին, ապա դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի կանոնակարգման ուժով ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.03.2014թ. որոշմամբ Էմմա Խոջոյանի և Գևորգ Արշակյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Գիմողները գտնում են, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8-րդ և 31-րդ հոդվածներին այնքանով, որքանով անշարժ գույքով ծանրաբեռնված ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժանման դեպքում օրենսգրքի վիճարկվող դրույթը հաշվի չի առնում այդ հողամասին ամրակցված անշարժ գույքերի մակերեսները և հնարավորություն չի տալիս այդ հողամասը բաժանել դրան ամրակցված անշարժ գույքերի մակերեսներին համամասնորեն:

Վկայակոչելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ 06-1034 քաղաքացիական գործով 11.04.2006թ. կայացված վճիռը, որով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը **պետք է բաժանվի** այդ հողամասի վրա ամրակցված անշարժ գույքում սեփականատերերի բաժնեմասերին համաչափ, և թիվ ԵԿԳ/2343/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011թ. որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը **ենթակա չէ բաժանման** այդ հողամասի վրա ամրակցված անշարժ գույքում սեփականատերերի բաժնեմասերին համաչափ, դիմողները հանգում են այն եզրակացությանը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթի առնչությամբ իրավական որոշակիության առումով առկա է խնդիր, քանի որ մի դեպքում այդ նորմի կիրառմամբ ընդհանուր սեփականություն հանդիսացող տնամերձ հողամասը դատարանի կողմից բաժանվել է այդ հողամասին ամրակալված շինությունների մակերեսներին համամասնորեն, մեկ այլ դեպքում հողամասը բաժանվել է այդ հողամասին ամրակալված շինությունների բոլոր սեփականատերերի միջև համամասնորեն՝ անկախ դրանում առկա շինությունների մակերեսներից:

Գիմողներն օրենսգրքի վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալով.

ա/ դատարանը չի կիրառել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ 06-1034 քաղաքացիական գործով 11.04.2006թ. կայացված վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները, դատարանը խախտել է նախկին ՀՀ հողային

օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի և 199-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները,

բ/ «եզակի են այն դեպքերը, երբ հողամասի վրա ամրակայված շինությունները հավասար մակերես ունեն և հիմնականում, դրանք անհավասար են, օրինակ, երկու անձի պատկանող 1000քմ հողամասին կարող է ամրակցված լինել սեփականատերերից մեկին պատկանող շինություն, որի՝ հողամասին ամրակցված հատվածի մակերեսը 800քմ է, իսկ մյուս սեփականատիրոջ շինության՝ հողամասին ամրակցված հատվածի մակերեսը 50քմ է, իսկ 150քմ մակերեսով հատվածն էլ ընդհանուր բակն է: Նման իրավիճակում կստացվի, որ հողամասի 50քմ մակերես ունեցող անշարժ գույքի սեփականատիրոջը սեփականության իրավունքով պետք է անցնի ոչ միայն բակային ամբողջ տարածքը, այլ նաև մյուս սեփականատիրոջը պատկանող 800քմ մակերես ունեցող անշարժ գույքով զբաղեցված հողամասի հատվածից 300քմ-ն: Նման իրավիճակում սեփականատերերը զրկվում են հողամասերը բաժանելու և սեփականատիրոջ իրավագործությունից լիարժեք օգտվելու հնարավորությունից»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմն անդրադառնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության ինստիտուտի վերլուծությանը: Մասնավորապես՝ նշում է, որ. «Համատեղ սեփականության մասնակիցների բաժինների հավասարության վերաբերյալ դրույթը առանց խտրականության ուղղված է բոլոր համասեփականատերերի շահերի պաշտպանությանը, քանզի ընդհանուր գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է բոլոր համասեփականատերերին համատեղ, այն հավասարապես բոլոր մասնակիցների սեփականությունն է, և ընդհանուր գույքը բաժանելիս համասեփականատերերից մեկի օգտին կողմերի համաձայնությամբ չնախատեսված որևէ սուբյեկտիվ հանգամանք հաշվի առնելն ուղղակիորեն կխախտի մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը

Պատասխանողը նշում է, որ նախկինում բոլոր այն դեպքերում, երբ ընդհանուր սեփականությունն առաջանալիս մասնակիցների բաժինները նախապես հայտնի չէին, ընդհանուր սեփականությունը համարվել է համատեղ, իսկ հետագայում բաժինների առանձնացումն օրենքի հիման վրա իրականացվել է հավասարության սկզբունքով:

Ըստ պատասխանողի՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ համեմատելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերությունը խտրական է, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, այլ կերպ ասած՝ եթե այն չի հետապնդում օրինաչափ նպատակ կամ եթե առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն օգտագործված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Այս առու-

մով, պատասխանողի կարծիքով՝ «վիճարկվող իրավակարգավորումը չի պարունակում տարբերակված մոտեցում կիրառելու հնարավորություն նույնանման հանգամանքներում գտնվող անձանց նկատմամբ»:

Եզրափակելով՝ պատասխանողը նշում է, որ դիմողների իրավունքների հնարավոր և ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն վիճարկվող նորմի սահմանադրականությամբ, իսկ դիմողների կողմից առաջ քաշված ընդհանուր համատեղ սեփականությունը բաժանելու և դրանից բաժինն առանձնացնելու իրենց համար նախընտրելի տարբերակն «...ըստ էության, բարենպաստ պայմաններ կստեղծի... իրենց պահանջների բավարարման տեսանկյունից»:

5. ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողների փաստարկները, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը «մեխանիկական վրիպակի պատճառով» չի ներկայացվել որպես քննության առարկա խնդրանք: Սահմանադրական դատարանը 03.11.2014թ. ՍԳԳԿՈ/2-16 որոշմամբ գործն ընդունել է քննության վեճի առարկա հոդվածի 1-ին մասով, և դիմումի առարկան չի կարող փոխվել:

Հաշվի առնելով դիմողների նախապես ներկայացրած պահանջը և այն հիմնավորող փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի կառուցվածքի տրամաբանությունից չի բխում, որ նշված հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ անշարժ գույքով ծանրաբեռնված ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժանման դեպքում պետք է հաշվի առնվի այդ հողամասին ամրակցված անշարժ գույքի (դրա տարբեր միավորների) մակերեսը (մակերեսները), կամ որ այդ հողամասը պետք է ենթակա լինի բաժանման դրան ամրակցված անշարժ գույքի տարբեր միավորների մակերեսներին համամասնորեն: Այլ կերպ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասը համատեղ սեփականության մասնակիցների բաժինները որոշելու որևէ կանոն չի նախատեսում: Դիմողների կողմից վիճարկվող՝ համատեղ սեփականության մասնակիցների բաժինների հավասարության կանխավարկածը, որը գործում է սեփականության մասնակիցների համաձայնությամբ կամ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, սահմանված է նույն հոդվածի 2-րդ մասում, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը: Այսպես. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի դրույթներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բացակայում է պատճառահետևանքային կապը ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի և դիմողների իրավունքների ենթադրյալ խախտման միջև: Ավելին, ձևականորեն բարձրացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը, իրականում դիմողները վիճարկում են իրենց նկատմամբ կիրառված դատական ակտերի իրավաչափությունը, ինչը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չի հանդիսանում:

Վերոգրյալը համադրելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԳ-ԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջի վերաբերյալ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշման հետ՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ», և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետը, 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը, 69-րդ հոդվածի 7-րդ մասը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենսգրքի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ դիմողների փաստարկներն ակնհայտ անհիմն են, դիմողները գործնականում բարձրացրել են օրենքի նորմի իրավաչափ կիրառման հարց:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացիներ Էմմա Խոջոյանի և Գևորգ Արշակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**19 մայիսի 2015 թվականի
ՍԳՈ-1205**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 88-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ, «ԳԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 2-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԳ ԿԵՏԻ
ԵՎ 44-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 4-ՐԳ ԿԵՏԻ, ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍՊՐՔԻ 283-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
6-ՐԳ ՄԱՍԻ, 298-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ, 305-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ
ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 3-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
2-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 223-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 մայիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգա-
յին ժողովի պատգամավոր Հ. Մարգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության պետ Հ. Մարգարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդ-
վածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրեն-
քի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատ-
գամավորների դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչա-

կան վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի, «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի, 298-րդ հոդվածի 3-րդ մասի, 305-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 223-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի թվով 35 պատգամավորների՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, դիմումը և պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, հետազոտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը և ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 18.02.2004 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 16.03.2004 թվականին և ուժի մեջ է մտել 31.12.2004 թվականից:

Օրենքի վիճարկվող 88-րդ հոդվածը լրացվել է ՀՕ-141-Ն ՀՀ օրենքով, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից: 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված ՀՕ-249-Ն ՀՀ օրենքով վեճի առարկա հոդվածը ենթարկվել է փոփոխությունների:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Դրամական պահանջների կատարման կարգը» վերտառությամբ 88-րդ հոդվածը /05.12.2013 խմբագրությամբ/ սահմանում էր՝

«1. Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Եթե վարչական մարմնի իրականացրած վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմնին իրավասու է գումարի գանձման վերաբերյալ որոշումը կայացնելուց ոչ շուտ, քան 10 օր հետո ընդունելու պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին

որոշում: Արգելանք դնելու մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է կատարման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, բացառությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնելու մասին որոշման: Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում: ...»:

Օրենքի նշված հոդվածի համապատասխան դրույթները 17.12.2014թ. խմբագրությամբ սահմանում են.

«1. Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

1.1. Հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական քերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

2. Եթե վարչական մարմնի իրականացրած վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմնին իրավասու է գումարի գանձման վերաբերյալ որոշումը կայացնելուց ոչ շուտ, քան 10 օր հետո ընդունելու պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում: Արգելանք դնելու մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է կատարման Հայաստանի Հանրապետու-

քյան արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, բացառությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնելու մասին որոշման: Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2.1. Պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն է ներկայացվում սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ կցելով որոշման ընդունման համար հիմք հանդիսացած ապացույցները:

3. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 03.06.1998 թվականի հունիսի 3-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկվող 7-րդ կետը և 44-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող 4-րդ կետն ամրագրվել են ՀՕ-142-Ն ՀՀ օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ «Հարկադիր կատարման ենթակա ակտերը» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է՝

«Հարկադիր կատարման ենթակա են՝

... անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով»:

Նույն օրենքի՝ «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելը» վերտառությամբ 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է՝

«Արգելանքը կիրառվում է՝

... հանրային իրավական դրամական պահանջների կատարումն ապահովելու նպատակով պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանք դնելու մասին վարչական մարմնի որոշումը կատարելու դեպքում»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Խորհրդային Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և գործում է 1986 թվականի հունիսի 1-ից:

Օրենսգրքի 298-րդ հոդվածի վիճարկվող՝ «Որոշումն ի կատար ածելը» վերտառությամբ 298-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝

«Տուգանքի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ենթակա է հարկադիր կատարման սույն օրենսգրքի 305 հոդվածի առաջին մասով կամավոր կատարման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո»:

Օրենսգրքի 305-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասը փոփոխվել է ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից: 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով օրենսգրքի 305-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասը կրկին ենթարկվել է փոփոխության:

«Տուգանք նշանակելու մասին որոշումը կատարելու ժամկետներն ու կարգը» վերտառությամբ 305-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասը՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ի խմբագրությամբ, սահմանում էր՝

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը հնգապատկվում է: Տուգանքը բռնագանձվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:

Նույն մասը 21.06.2014թ. խմբագրությամբ սահմանում է.

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարաժամկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափը ավելանում է 50 տոկոսով, որը ենթակա է հարկադիր կատարման կարգով բռնագանձման»:

Օրենսգրքի 283-րդ հոդվածի վիճարկվող 6-րդ մասն օրենսգրքում ամրագրվել է ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2012 թվականի փետրվարի 7-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2012 թվականի մարտի 1-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի մարտի 17-ից: Հոդվածի այդ մասը փոփոխվել է 2014 թվականի սեպտեմբերի 29-ին ընդունված ՀՕ-146-Ն ՀՀ օրենքով և տեղ է գտել նույն հոդվածի 3-րդ մասում: Դիմողը թեև դիմումում վկայակոչում է օրենսգրքի 283-րդ հոդվածի վիճարկվող 6-րդ մասը՝ 2012 թվականի փետրվարի

7-ի խմբագրությամբ, այնուհանդերձ, դիմումին կից ներկայացրել է օրենսգրքի 283-րդ հոդվածի՝ ՀՕ-146-Ն ՀՀ օրենքով փոփոխված տեքստը, որի 6-րդ մասն այլ դրույթ է նախատեսում և որի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ դիմողն ըստ էության հիմնախնդիր չի բարձրացնում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Գործի վերաբերյալ որոշման հայտարարումը և որոշման պատճենի հանձնումը» վերտառությամբ 283-րդ հոդվածի 6-րդ մասը 2012 թվականի փետրվարի 7-ի խմբագրությամբ սահմանում էր՝

«Սույն օրենսգրքի 224 հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով ընդունված որոշումները համարվում են հանձնված (ստացված) նաև, եթե անձը, որին ուղարկվել է որոշումը, չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում կամ ճիշտ չի նշել հասցեն կամ հրաժարվել է ստանալ ուղարկված (հանձնվող) որոշումը»:

Հիշյալ վերտառությամբ տվյալ հոդվածն ամբողջությամբ 29.09.2014թ. խմբագրությամբ սահմանում է.

«Որոշումը հայտարարվում է անհապաղ՝ գործի քննությունն ավարտելուն պես:

Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով:

Որոշումը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրել է անձամբ հասցեատերը, կամ հասցեատերը որոշումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումն ստանալուց հրաժարվելու մասին: Որոշումը համարվում է անձամբ հանձնված նաև այն դեպքում, երբ հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցված լինելու փաստը: Որոշումը էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում ծանուցումն իրականացվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Եթե անձի (որին ուղարկվել է որոշումը) հայտնաձև հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեա-

տերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը և ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումն ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով և տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումն ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, անձը համարվում է պատշաճ ծանուցված որոշումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրը:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ և մաքսանենգության վերաբերյալ գործերի որոշման պատճենը հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ որոշումը կայացվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն օրենսգրքի 173 հոդվածով և 191 հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով, այն անձի նկատմամբ որոշման պատճենը, որին ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության կողմից հրազենը, ինչպես նաև զինամթերքը վստահվել է պաշտոնական պարտականությունները կատարելու կապակցությամբ, կամ այդպիսիք տրվել են ժամանակավոր օգտագործման նպատակով, ուղարկվում է համապատասխան ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ ի գիտություն, և ոստիկանությանը՝ այդ անձին հրազենից օգտվելն արգելելու մասին հարցը քննելու համար»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը փոփոխվել է 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-89-Ն ՀՀ օրենքով և վերացվել է վարչական մարմնի կողմից վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով դատարան դիմելու հիմքը: Նույն մասը 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-250-Ն ՀՀ օրենքով լրացվել է 2.1. կետով:

Նույն օրենսգրքի՝ «Անցումային դրույթներ» վերտառությամբ 223-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝

«3. Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը վարչական դատարան ներկայացված, սակայն վարչական դատարանի կողմից դեռևս վարույթ չընդունված՝ վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու վերաբերյալ հայցադիմումները վերադարձվում են վարչական մարմնին»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19, 21, 31 և 43-րդ հոդվածներին և բարձրացնում է օրենսդրական բացի ու իրավական անորոշության խնդիրներ:

Ըստ դիմողի՝ օրենսդրական բացը կայանում է նրանում, որ վերը նշված իրավադրույթները բացառում են վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից վարչական դատարան դիմելու, **փոխարենը նախատեսելով անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա բռնագանձման արտադատական կարգ**: ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգիրքն այլևս չի նախատեսել վճարման կարգադրությունների վարույթը, ինչպես նաև վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով՝ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից վարչական դատարան դիմելու հիմքը:

Վկայակոչելով օրենսդրական բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՌ-914 և ՄԴՌ-864 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ իր կողմից նշված օրենսդրական բացը սահմանադրական դատարանի քննության առարկա է այնքանով, որքանով օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, այսինքն՝ կոնկրետ դեպքերում վարչական ակտի հիման վրա դատական կարգով բռնագանձում իրականացնելու հնարավորություն:

Ըստ դիմողի՝ տուգանքի բռնագանձմանն առնչվող իրավակարգավորումները պետք է դիտարկվեն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում, և կարող են իրականացվել բացառապես դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներով կարգավորվող հարաբերությունները պետք է դիտարկվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների լույսի ներքո՝ հողվածի «քրեական» մասի համատեքստում, և տուգանքի բռնագանձումը կարող է իրականացվել բացառապես դատական կարգով՝ ոչ միջնորդավորված եղանակով:

Դիմողի կարծիքով՝ իրավական անորոշությունը կայանում է նրանում, որ, մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը հանրային իրավական դրամական պահանջների կատարումն ապահովելու նպատակով պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում չեն նախատեսում արգելադրվող գույքի **համարժեք** սահմանափակում, ի տարբերություն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գույքի վրա արգելանքի կիրառման դեպքերի, երբ արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի հարկային պարտավորությանը **համարժեք** գույքի վրա: Ըստ դիմողի՝ վերը նշված իրավական անորոշության արդյունքում իրավակիրառ պրակտիկայում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ արգելանքը դրվում է ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու հանրային իրավական դրամական պահանջի չափը, ինչը հանգեցնում է անձի սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակմանը: Դիմողը

գտնում է, որ չեն ապահովվում գույքի արգելադրման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՌ-1153 և ՄԳՌ-1073 որոշումներում սահմանված չափանիշներն ու այլընտրանքային կառուցակարգերը:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածները և ՄԳՌ-1056 որոշումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ դիմողը պնդում է, որ նշված իրավակարգավորումը հնարավորություն է ընձեռում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթացն իրականացնել՝ վերջինիս կողմից պատշաճ ծանուցված չլինելու և արդյունքում՝ համապատասխան վարչական իրավախախտման վերաբերյալ գործով ընդունված որոշման մասին ընդհանրապես իրազեկված չլինելու պայմաններում, ինչի հետևանքով տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից որոշակի ժամանակահատված հետո տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափն ավելանում է:

3. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ. «...Եթե անձը չի վճարում նշանակված տուգանքը՝ միևնույն ժամանակ չվիճարկելով վարչական ակտը, պետք է հիմք ընդունվի այն ենթադրությունը, որ կողմերի միջև բացակայում է վեճը, և տուգանքի գումարը պետք է բռնագանձվի՝ հարկադիր կատարման ընթացակարգի հիման վրա»:

Պատասխանողը պատճառաբանում է, որ մինչև 03.12.2013թ. կատարված օրենսդրական փոփոխությունները, երբ սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում տուգանք նշանակելու որոշումը կատարվում էր վճարման կարգադրություններ արձակելու վարույթի միջոցով, ևս գործում էր նույն սկզբունքը. «անձը վարչական ակտի վերաբերյալ իր անհամաձայնությունը պետք է արտահայտեր ակտիվ գործողությունների միջոցով՝ դատարան հակընդդեմ հայց ներկայացնելով, իսկ այդ հարցում անձի անգործությունը դիտվում էր որպես վեճի բացակայություն և հիմք հանդիսանում վճարման կարգադրություն արձակելու համար»:

Պրակտիկան վկայում է, որ վճարման կարգադրություններով վարույթի ինստիտուտն արդյունավետ չէր գործում: Գերակշռող մեծամասնությամբ գործի ըստ էության քննություն տեղի չէր ունենում, իսկ դատական կարգը ստանում էր բացառապես ձևական բնույթ, և դատարանները չափից ավելի ծանրաբեռնվում էին, ինչը չէր կարող բացասաբար չանդրադառնալ արդարադատության որակի վրա:

Պատասխանողը գտնում է, որ հանրային իրավական դրամական պահանջները, ընդհանուր կանոնի համաձայն, ենթակա են կատարման արտադատական կարգով՝ առանց դատարանի միջամտության: Նման պայմաններում վարչական ակտն ըստ էության կատարում է կատարողական փաստաթղթի գործառույթ:

Առարկելով դիմողի այն պնդմանը, որ հանրային իրավական դրամական պահանջների կատարումն ապահովելու նպատակով գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում նախատեսված չէ արգելադրվող գույքի համարժեք սահմանա-

փակում և արգելանքը գործնականում կարող է դրվել պատասխանողին պատկանող ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու հանրային իրավական դրամական պահանջի չափը, պատասխանողը նշում է, որ 2014թ. դեկտեմբերի 17-ին կատարված փոփոխությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասից հանվեց «հարկային» բառը, որը նպատակ ուներ ցանկացած պարտավորության պարագայում արգելանքը տարածել **միայն պարտավորությանը համարժեք գույքի վրա**: Բացի դրանից, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ 2014թ. սեպտեմբերի 29-ին կատարված փոփոխությամբ սահմանվեց դրույթ, համաձայն որի՝ եթե սպասարկող բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք է դնում ավելի չափով, քան նախատեսված է հարկադիր կատարողի որոշման մեջ, ապա վճարում է տույժ ավել պահած գումարի 0.1 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր օրվա համար: Ընդ որում, պարտապանը կարող է պահանջել պատճառված վնասի փոխհատուցում, եթե ապացուցի, որ պատճառված վնասը գերազանցում է սահմանված տույժի չափը:

Դիմողի կողմից վիճարկվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի կապակցությամբ պատասխանողը նշում է, որ դեռևս 2014թ. սեպտեմբերի 29-ին ընդունված ՀՕ-146 օրենքով համապատասխան հոդվածը ենթարկվել է փոփոխության, ինչի արդյունքում վիճարկվող մասն ամբողջությամբ դուրս է եկել հոդվածի տեքստից: Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ քաղաքացին պետք է պատշաճ կարգով ծանուցվի վարչական իրավախախտման վերաբերյալ, և որոշումը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Բացառիկ դեպքերում, երբ անձի հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված /հանձնվող/ որոշումը և ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումն ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ համապատասխան անձը համարվում է պատշաճ ծանուցված:

4. Դիմումի բովանդակությունից ելնելով կարելի է առանձնացնել դիմողի կողմից բարձրացվող հետևյալ հարցադրումները, որոնք կարող են հանդիսանալ սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա.

- ամբողջարկելի վարչական ակտերի հիման վրա պարտապանի գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելը,
- մինչև տուգանքի վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելը,
- վարչական տուգանքի մասին պատշաճ կարգով ծանուցելը:

Բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում պարզել.

- վիճարկվող իրավակարգավորումները արդյոք հանգեցնում են սեփականության իրավունքից զրկման, թե՞ այդ իրավունքի իրականացման սահմանափակման,
- արդյո՞ք անձին տուգանքի տեսքով պատասխանատվության ենթարկելիս երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ և բավարար նախապայմաններ,
- արդյո՞ք տուգանքի վճարումն ապահովելու նպատակով անձի գույքի վրա արգելանք դնելը և արտադատական կարգով բռնագանձում կատարելը հանդիսանում են սեփականության իրավունքի սահմանափակման համաչափ միջոցներ և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում:

Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ դիմողը դիմումում եւ գործի դատաքննության նախապատրաստման փուլում հաշվի չի առել այն հանգամանքը, որ վեճի առարկա հողվածների մեծ մասում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, ինչի վրա ուշադրություն է հրավիրել նաեւ պատասխանող կողմը:

5. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-630, ՍԳՈ-903, ՍԳՈ-1056, ՍԳՈ-1073, ՍԳՈ-1142, ՍԳՈ-1153 և մի շարք այլ որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի միջամտության ձևերին, բացահայտել նաև «սեփականությունից զրկելու» ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-903 որոշման մեջ սահմանել է, որ. «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար...»:

Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության

1-ին հոդվածին, որը նույնպես **տարբերակում է «սեփականությունից զրկում» և «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն» հասկացությունները**: Հոդվածի 2-րդ մասում շեշտվում է, որ անձին իր սեփականությունից անարգել օգտվելու և նրան իր ունեցվածքից միայն ի շահ հասարակության, օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով զրկելու վերաբերյալ դրույթները «... չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, **սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս զանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար**»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում հարկերի, այլ վճարների, տույժերի և տուգանքների վճարումն ապահովող միջոցները քննության է առել միայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի առումով, գտնելով, իհարկ», որ այդ միջոցները պետք է լինեն իրավաչափ և համապատասխան են համաչափության սկզբունքին:

Միկրոինտելեկտ ՍՊԸ-ն ընդդեմ Բուլղարիայի 2014 թվականի մարտի 4-ի վճռում (Microintellect OOD v. Bulgaria, 34129/03), որը վերաբերում է վարչական մարմնի որոշմամբ անձի գույքի **բռնագանձմանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ բռնագանձման իրականացումը վարչական մարմնի կողմից վերահսկողություն է սեփականության օգտագործման նկատմամբ և հանդիսանում է հարկերի և տուգանքի վճարման ապահովման միջոց**: Գատարանը համանման կարծիք հայտնել էր նաև Գասուս Դոսիերը և Ֆորդերտեքնիկն ընդդեմ Նիդեռլանդների գործով (Gasus Dosierund FΦrdertechnik GmbH v. The Netherlands, 15375/89, 23.02.1995թ.):

Այդ գործերով Եվրոպական դատարանը նաև նշել էր, որ անձի ունեցվածքի բռնագանձման դեպքում հատկապես կարևորվում է **նման որոշման դեմ բողոք բերելու արդյունավետ միջոցների ապահովումը**, չնայած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ուղղակիորեն նախատեսված չէ նման պահանջ:

Հիմնական եզրահանգումն այն է, որ **օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում**: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:

6. Անդրադառնալով տուգանքի բռնագանձման ինստիտուտի սահմանադրաիրավական բնույթին՝ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումների և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համադրության

արդյունքում գտնում է, որ տուգանքի նշանակումը, ինքնին, որպես պատասխանատվության միջոց, հանդես չի գալիս որպես սեփականագրկում: Տուգանքի նշանակումից հետո անձն օրենքով սահմանված ժամկետում հնարավորություն ունի կանոնի վճարել տուգանքը՝ **որպես օրենքով նախատեսված պարտականության կատարում**, կամ բողոքարկել վարչական մարմնի որոշումը: Տուգանքի վերաբերյալ վարչական ակտի բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցվում է, այսինքն՝ տուգանքի բռնագանձումն անվիճելի կարգով անձի կամ քին հակառակ չի կատարվում:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթների սահմանադրականությունը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել, թե ՀՀ օրենսդրության՝ տուգանքի հարկադիր կարգով բռնագանձման կարգ նախատեսող դրույթներն արդյո՞ք ապահովում են բավարար և անհրաժեշտ երաշխիքներ անձի դատական պաշտպանության իրականացման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլուխը վերաբերում է դրամական պահանջները կատարելուն, և այս գլխի 1-ին դրույթը՝ 87-րդ հոդվածի տեսքով, սահմանում է, որ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ): Նույն օրենքի 88-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նույն օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում: Իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է այն ժամկետները, որից հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Մասնավորապես, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի՝ վարչական բողոքը կարող է բերվել՝ ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում. բ) վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում. գ) վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում. դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Ինչ վերաբերում է տուգանքի արտադատական կարգով բռնագանձմանը, ապա այն, նպատակ ունենալով ապահովել տուգանքի վճարումը, հանդիսանում է վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ:

Դիմողի կողմից բարձրացված հիմնախնդրի համատեքստում հարց կարող է ծագել՝ արդյո՞ք տուգանքի բռնագանձումը վարչական մարմնի որոշման հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից կատարե-

լը կարող է մեխանիկորեն հանգեցնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սեփականությունից բացառապես դատական կարգով գրկելու սահմանադրական պահանջի խախտման:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Յանոշեվիչն ընդդեմ Շվեդիայի /Janosevic v. Sweden/ 23.07.2002թ. թիվ 34619/97 վճռի 106-րդ կետում արտահայտվել է դիրքորոշում առ այն, «որ ոչ 6-րդ, ոչ էլ Կոնվենցիայի որևէ այլ հոդված չի բացառում սկզբունքորեն իրավակիրառման միջոցառումների իրականացումը մինչև հարկային գանձումների վերաբերյալ որոշումների վերջնական դառնալը: Ավելին, որոշ քրեական սանկցիաների վաղ կիրառում թույլատրող դրույթներ կարելի է գտնել այլ Պայմանավորվող պետությունների օրենսդրությունում: Այնուհանդերձ, հաշվի առնելով այն, որ հարկային գանձումների վաղ կիրառումը կարող է լուրջ ազդեցություն թողնել համապատասխան անձի վրա և կարող է բացասաբար ազդել նրա պաշտպանության վրա համապատասխան դատական վարույթում, քրեական իրավունքում կանխավարկածների դիրքորոշման կիրառման հետ մեկտեղ, պետություններից պահանջվում է նման կիրառումը ողջամտորեն սահմանափակել, ինչը կպահպանի արդար հարաբերակցություն շահերի միջև»: Դատարանը դա հատկապես կարևորել է այն դեպքերում, երբ կիրառման միջոցառումներն իրականացվել են վարչական իշխանությունների որոշումների հիման վրա, այսինքն՝ մինչև քննության առարկա հարկային վճարումներ կատարելու անձի պարտավորության հաստատումը դատարանի կողմից:

Այն պնդման առնչությամբ, ըստ որի՝ տուգանքների բռնագանձման վերաբերյալ նախկին՝ դատարանի կողմից վճարման կարգադրությունների արձակման ինստիտուտն ավելի էր նպաստում դատական պաշտպանության իրավունքի երաշխավորմանը և համապատասխանում էր ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի՝ սեփականագրկման՝ դատական կարգով իրականացման պահանջին, հարկ է նշել, որ **վճարման կարգադրության ինստիտուտն ինքնին դատական պաշտպանության վրա բովանդակային առումով չէր ազդում**, քանզի նիստ չէր հրավիրվում, կողմերը ելույթ չէին ունենում, ակտի օրինականությունը չէր ստուգվում: Հայցային կարգով քննություն էր իրականացվում միայն անձի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու պարագայում: Փաստորեն, վճարման կարգադրության ինստիտուտի պարագայում դատարանը որոշում էր ընդունում բռնագանձման մասին, որը վիճարկվող կանոնակարգումների շրջանակներում իրականացնում էր այլ մարմին, ուստիս փոփոխությունը միայն տեխնիկական բնույթ է կրում, քանզի իրավունքի պաշտպանական կառուցակարգերը երկու մարմինների կողմից որոշում ընդունելու դեպքում նույնն են. երկուսի պարագայում էլ անձը չի ներգրավվում որոշումն ընդունելու ընթացակարգում, այլ վճարման կարգադրության պարագայում անձը ներգրավվում էր գործի քննությանը միայն վճարման կարգադրության դեմ հակընդդեմ հայց ներկայացնելու միջոցով, իսկ վիճարկվող կանոնակարգումների շրջանակներում՝ վարչական ակտի բողոքարկման միջոցով, ինչի պարագայում վարչական ակտի հարկադիր կատարումը կասեցվում է:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ առկա է օրենքի բաց այն առու-

մով, որ վիճարկվող դրույթները չեն նախատեսում տուգանքի բռնագանձման՝ դատական կարգով վճարման կարգադրություն արձակելու ինստիտուտը, սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում բացակայում է օրենքի բացի հիմնահարցը, քանի որ օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է գտնվում այս կամ այն ինստիտուտի ամրագրման հարցը: Բացի դրանից, օրենքի բաց՝ ինստիտուտի բացակայության տեսքով, կարող է արձանագրվել այն դեպքում, երբ հաստատվում է, որ համապատասխան ինստիտուտի բացակայությունն արգելափակում է այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Սակայն նշված ինստիտուտի բացակայությունը չի ազդում դատական պաշտպանության իրավունքի իրացման վրա: Հետևաբար՝ դիմողի կողմից մատնանշված ինստիտուտի բացակայությունը կարող է դիտարկվել ոչ թե որպես օրենքի բաց, այլ օրենսդիր մարմնի կողմից և նրա կամահայտնությամբ այս կամ այն իրավահարաբերության կանոնակարգման այլընտրանքային ինստիտուտ, որը վիճարկվող կանոնակարգումներով պարզապես փոխարինվել է մեկ այլ ինստիտուտով:

7. Դիմողը բարձրացնում է նաև անձի գույքի վրա արգելանք դնելու ինստիտուտի վերաբերյալ հիմնախնդիրը: Մասնավորապես, ինչպես նշվեց, դիմողը մատնանշում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս անձի գույքի վրա դնել արգելանք արտադատական կարգով: Բացի դրանից, դիմողը գտնում է, որ օրենքով իրավասու անձի համար չի նախատեսվում արգելանքը տուգանքի չափով դնելու պարտավորություն, ինչի հետևանքով, ըստ դիմողի՝ «...իրավակիրառ պրակտիկայում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ արգելանքը դրվում է ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու հանրային իրավական դրամական պահանջի չափը, ինչը վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշության հետևանք է...»:

Առաջին հիմնախնդրի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1073 որոշմամբ, քննության առնելով նույն հիմնահարցը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի շրջանակներում արգելանքն արտադատական կարգով իրականացնելու վերաբերյալ դրույթը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն ամբողջությամբ կիրառելի են նաև սույն գործի նկատմամբ:

Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված երկրորդ հիմնախնդրին, ապա պետք է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի երկրորդ մասում 2014 թվականի դեկտեմբերին կատարվել է փոփոխություն: Մասնավորապես, ամրագրվել է՝ «Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-

քով սահմանված կարգով» դրույթը: Գիմողը, սակայն, վերաբերելի դրույթը բարձրացված հիմնախնդրի մասով վիճարկում է մինչև նշված հոդվածում փոփոխությունների կատարումը գործած կանոնակարգումների համատեքստում: Այս առումով հարկ է նշել, որ, իրոք, իրավակիրառ պրակտիկայում առկա է եղել հիմնախնդիր, ինչի մասին վկայում է դեռևս 2014 թվականի հունիսի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը, որում այս հարցը ևս բարձրացված էր: ՀՀ սահմանադրական դատարանում նշված դիմումի հիման վրա գործն ընդունվել էր քննության, և այդ կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի նախագահը 23.07.2014 թվականին պարզաբանում էր ուղարկել սահմանադրական դատարան, որում նշված էր հետևյալը. «...Վերջին շրջանում խնդիրներ են առաջացել՝ կապված հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու հետ: Կենտրոնական բանկը իրականացրել է ստեղծված իրավիճակի ուսումնասիրություն..., որի արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ տարածքում գործող **որոշ** բանկերի մոտ խնդիրներ էին առաջացել՝ կապված բանկի հաճախորդ հանդիսացող պարտապանի **քարտային հաշիվների** վրա հարկադիր կատարողի *որոշմամբ սահմանված չափով* արգելանք դնելու հետ»: Հիշատակված պարզաբանման մեջ նշվում է նաև, որ «...ՀՀ տարածքում գործող **որոշ** առևտրային բանկեր, ՀՀ գործող օրենսդրությամբ ունենալով հարկադիր կատարողի որոշումները կատարելու ուղղակի պարտավորություն և չկարողանալով քարտային հաշիվները արգելադրել հարկադիր կատարողի որոշմամբ նախատեսված գումարի չափով, հարկադրված կերպով արգելադրում էին պարտապանի **քարտային հաշիվներում** առկա ամբողջ դրամական միջոցները»: Կենտրոնական բանկի կողմից ներկայացված իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնախնդիրը պայմանավորված չի եղել դիմողի կողմից վիճարկվող՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասում այս կամ այն կանոնակարգման բացակայությամբ: Ի լուծումն առաջ եկած հիմնախնդրի՝ 29.09.2014 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-145-Ն ՀՀ օրենքով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը լրացվել է 2.1-րդ մասով, որով սահմանվում է հետևյալը. «Պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավոր է պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնել միայն այն չափով, որը նշված է հարկադիր կատարողի որոշման մեջ: Սույն մասի պահանջների չպահպանման դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը ավել պահած գումարի համար պարտավոր է յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ նշված գումարի 0.1 տոկոսի չափով: Պարտապանը կարող է պահանջել պատճառված վնասի փոխհատուցում, եթե ապացուցում է, որ պատճառված վնասը գերազանցում է սույն մասով սահմանված տույժի չափը»:

8. Դիմողը վիճարկում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասը՝ դիմումին կցելով հոդվածի տեքստ, որը բովանդակային առումով չի առնչվում բարձրացվող հիմնախնդրին, ինչպես նաև որևէ հիմնավորում չի բերում նշված հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության այս կամ այն հոդվածին չհամապատասխանելու վերաբերյալ:

Ավելին, եթե ենթադրվի, որ որևէ պատճառով դիմողը ճիշտ չի նշել համապատասխան հոդվածի մասը, և ներկայացված սահմանադրաիրավական վեճի ընդհանուր տրամաբանությունից ելնելով խոսքը պետք է վերաբերեր վերոհիշյալ հոդվածով կարգավորվող պատշաճ ծանուցումների ինստիտուտին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիմումում բերված փաստարկները ևս առնչություն չունեն վերոհիշյալ հոդվածի դրույթների հետ: Դիմումում վկայակոչվում են մինչև 2014թ. սեպտեմբերի 29-ի ՀՕ-146-Ն օրենքով փոփոխված օրենսգրքի համապատասխան հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են ծանուցումների ինստիտուտին:

Վերոշարադրյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԳ-ԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ դիրքորոշումն արտահայտվել է անհատական դիմումների քննության վերաբերյալ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այն կիրառելի է սույն գործով վիճարկվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանը 20.01.2015թ. ՍԳ-ԱՌ-4 որոշմամբ գործը նաև ընդունել է քննության վեճի առարկա 283-րդ հոդվածի 6-րդ մասով, գործի վարույթը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասով կարող էր կարճվել:

Միաժամանակ, կարևորելով պատշաճ ծանուցումների հիմնախնդիրը՝ սահմանադրական դատարանը սույն որոշման շրջանակներում հարկ է համարում անդրադարձ կատարել պատշաճ ծանուցումների ինստիտուտի վերլուծությանը և գնահատմանը՝ հաշվի առնելով, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրագեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, հանդիսանում է կարևոր երաշխիք անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հիմնախնդրի առնչությամբ, մասնավորապես, անհրաժեշտ է հիմք ընդունել ՍԳ-Ռ-630, ՍԳ-Ռ-815, ՍԳ-Ռ-832, ՍԳ-Ռ-1052 եւ ՍԳ-Ռ-1189 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, տուգանքի որոշման մասին անձին պատշաճ կարգով ծանուցելու խնդրահարույց իրավիճակն առավելապես պայմանավորված է եղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի կանոնակարգումներով, որոնցով անձը համարվում էր ծանուցված նույնիսկ այն դեպքում, երբ նա «...չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում կամ ճիշտ չի նշել հասցեն կամ հրաժարվել է ստանալ ուղարկված (հանձնվող) որոշումը»:

Այդ հոդվածը վերաբերում է բացառապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումներին: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածը 29.09.2014 թվականին ընդունված ՀՕ-146-Ն ՀՀ օրենքով ենթարկվել է արմատական փոփոխության՝ նախատեսելով անհրաժեշտ երաշխիքներ վարչական ակտի ծանուցման վերաբերյալ: Դիմողը, սակայն, վիճարկում է նախկին կանոնակարգումը:

Այս առումով պետք է նշել, որ ծանուցման վերաբերյալ նախկին կանոնակարգումների կիրառման արդյունքում ոչ միայն անձի սեփականության իրավունքին միջամտություն է տեղ գտել, այլ նաև անձի կողմից տուգանքի չվճարման դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածի ուժով տեղի էր ունենում բռնագանձման ենթակա գումարի չափի ավելացում: Անձը նաև գրկվում էր վարչական ակտը բողոքարկելու հնարավորությունից: Արդյունքում՝ խախտվում էին անձի պատշաճ ծանուցման և դատական պաշտպանության իրավունքները, քանզի անձի նկատմամբ պետության հարկադրանքի միջոցները կիրառվում էին առանց անձի տեղեկացվածության, առանց նրան հնարավորություն ընձեռելու՝ օգտվելու օրենքով նախատեսված պաշտպանական կառուցակարգերից և օրենքով իր վրա դրված պարտականությունը կամովին կատարելու հնարավորությունից:

Անդրադառնալով դիմողի կողմից վիճարկվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այստեղ ևս առկա է անհամապատասխանություն դիմումում մեջբերվող դրույթների և դիմումին կցված համապատասխան հոդվածի դրույթների միջև:

Մասնավորապես՝ դիմումին կցված է օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի հետևյալ տեքստը. «Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած **անձի կողմից ստանալու օրվանից** կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած **անձի կողմից ստանալու օրվանից** 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարածանկետելու մասին դիմումում նշված ժամկետում տու-

գանքը չվճարելու դեպքում **փաստացի չվճարված** տուգանքի չափը ավելանում է **50 տոկոսով**, որը ենթակա է հարկադիր կատարման կարգով բռնագանձման»:

Մինչդեռ օրենսգրքի վիճարկվող 305-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ դիմողը նշում է. «Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած **անձին հանձնելու օրվանից**, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը **հնգապատկվում է**»:

Դիմողի կողմից վերոհիշյալ հոդվածի 4-րդ մասը վիճարկվում է հետևյալ հիմքերով: Առաջին՝ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից վարչական պատասխանատվություն կրելու պարագայում արդյոք արդարացված է նշանակված տուգանքի չափի ավելացված մասը ևս արտադատական կարգով բռնագանձելը: Երկրորդ՝ տուգանքի՝ օրենքի ուժով ավելացված մասն արտադատական կարգով բռնագանձելն արդյոք չի խախտում անձի՝ դատական պաշտպանության իրավունքն այն պարագայում, երբ որևէ օբյեկտիվ պատճառով նա հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում կատարել իր տուգանքի վճարման հետ կապված պարտականությունները:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ 2012թ. նոյեմբերի 13-ի ՄԴՈ-1056 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին, այն է՝ «Ելնելով ... ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը և գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի և գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ և անհատթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար և այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները»:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի դրույթները չեն կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ սահմանափակվեն անձի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները տուգանքի ավելացված գումարը գանգատարկելու կամ բողոքարկելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասը, 298-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 305-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և 223-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**26 մայիսի 2015 թվականի
ՍԳՈ-1210**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 293-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 294-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի և 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական քննություն նշանակելու մասին որոշումը» վերտառությամբ 293-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները, ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություն և/կամ լրացում չի կատարվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Որոշում՝ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» վերտառությամբ 294-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, երբ դա հնարավոր է առանց դատաքննության, դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Եթե քրեական հետապնդումը բացառող հանգամանքները վերաբերում են մեկ մեղադրյալի, քրեական հետապնդումը դադարեցվում է միայն նրա նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասում ՀՀ Ազգային ժողովի կողմից կատարվել է փոփոխություն (28.11.07 ՀՕ-270-Ն):

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 19.08.2014թ. հարուցվել է թիվ 29155514 քրեական գործը, որի շրջանակներում Մարին» Սայդոյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, իսկ Նորիկ Բաբոյանին, Ոստիկանության Սայդոյանին և Զոհրաբ Նասիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածներով մեղադրանք է առաջադրվել: Քրեական գործի նախաքննությունն ավարտվել և մեղադրական եզրակացությունը կազմվել է 29.12.2014թ.: Քրեական գործը ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է 14.01.2015թ., որը 15.01.2015թ. որոշմամբ ընդունվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Մարաբյանի վարույթ:

19.01.2015թ. քրեական գործը վերադարձվել է մեղադրողին՝ մեղադրական եզրակացությունում առկա թերությունները վերացնելու և օրենքով սահմանված կարգով մեղադրական եզրակացությունը հաստատելու համար՝ սահմանելով ժամկետ մինչև հինգ օր տևողությամբ: 26.01.2015թ. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է թիվ 29155514 (ԱՐԱԳ-1/0003/01/15) քրեական գործը, որի ուսումնասիրությունից դատարանը, պարզելով, որ իր որոշման պահանջները չեն կատարվել, 27.01.2015թ. հիշյալ քրեական գործը կրկին վերադարձրել է մեղադրողին՝ մեղադրական եզրակացությունում առկա թերությունները վերացնելու, օրենքով սահմանված կարգով մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու համար՝ սահմանելով ժամկետ՝ երկու աշխատանքային օր տևողությամբ:

03.02.2015թ. վերոհիշյալ քրեական գործն ստացվել է դատարանում, որի ուսումնասիրությունից դատարանը հանգել է այն հետևությանը, որ դատախազը կատարել է դատարանի որոշման պահանջը: Դատախազը միաժամանակ հայտնել է, որ արագացված կարգ կիրառելու դեմ չի առարկում, քանի որ տուժողները հաշտվել են մեղադրյալների հետ, և գործի հետ դատարան է ուղարկել նաև հաշտության վերաբերյալ տուժողների և մեղադրյալների դիմումները:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2015 թվականի փետրվարի 10-ին կայացրել է որոշում՝ թիվ 29155514 (ԱՐԱԳ-1/0003/01/15) քրեական գործով դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի և 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչելու խնդրանքով, և թիվ 29155514 (ԱՐԱԳ-1/0003/01/15) քրեական գործի վարույթը կասեցնել մինչև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը:

3. Ըստ դիմողի՝ դատական քննության նախապատրաստական մասում, դատավորի կողմից միանձնյա, իր աշխատասենյակում՝ առանց դատական նիստ հրավիրելու, առանց հրապարակայնության պայմաններում, կողմերի մասնակցությամբ, մրցակցության և իրավահավասարության ապահովմամբ ապացույցներ հետազոտելու և գնահատելու քրեական գործով «գործն ըստ էության լուծող» դատական ակտ կայացնելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ հրապարակային դատական քննության սկզբունքներին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ և 294-րդ հոդվածների կանոնակարգումների պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, որ դատարանն իրականացնում է «գաղտնի» արդարադատություն, «հրաժարվում է» անձանց՝ իրենց խախտված իրավունքներն արդյունավետ վերականգնելու իրավունքից՝ գրկելով ինչպես տուժողին, այնպես էլ մեղադրյալին արդարադատության մատչելիությունից, դատարանում լսվելու, իր գործը հավասարության պայմաններում ներկայացնելու իրավունքներից: Ավելին, ստաց-

վում է, որ դատարանի կողմից գործն ըստ էության լուծվում է առանց դատական նիստի անցկացման, պատշաճ կարգով քննության, քանի որ գործող դատավարական նորմերը և դրանց ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունները դատարանին պարտավորեցնում են քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու դրանց ի հայտ գալու պահից:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի սահմանադրականության հարց է առաջանում նաև այն առումով, որ դատական քննություն նշանակելը կախվածության մեջ է դրվում՝ մինչդատական վարույթում քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հանգամանքից: Դիմողն արձանագրում է, որ եթե քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության դեպքում օրենսդիրը սահմանում է համապատասխան լուծում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի կարգով գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու ձևով, ապա օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումների մասով որևէ իրավակարգավորում սահմանված չէ, առկա է իրավական անորոշություն: Խնդիր է առաջանում այն առումով, թե որքանով է ՀՀ Սահմանադրության տեսանկյունից իրավաչափ դատական քննության նախապատրաստական մասում, առանց ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների ապահովման՝ քրեադատավարական օրենքի էական խախտում արձանագրելու դատարանի լիազորությունը:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի այն մասը, որը սահմանում է արգելք դատական քննություն նշանակելու՝ կապված մինչդատական վարույթում քրեադատավարական օրենքի էական խախտումներ թույլ տալու հանգամանքի հետ, փոխկապված է լրացուցիչ նախաքննության ինստիտուտին, որը ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԳՌ-710 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր, ուստի օրենսգրքի 293-րդ հոդվածի պահանջը չի կարող իրացվել, հետևաբար՝ այս դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքին:

4. Սույն գործով վիճարկվող դրույթների վերաբերյալ պատասխանող կողմը, մասնավորապես, հայտնում է, որ գործը դատական քննության նշանակելու առաջին պայմանը քրեական գործի նյութերում գործի վարույթը կարճելու հանգամանքների բացակայությունն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը սահմանում է քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները, որոնց առկայությունը բացառում է վարույթի հետագա ընթացքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածը, որպես դատական քննություն նշանակելու համար անհրաժեշտ պայման, նշում է նաև մինչդա-

տական վարությամբ քրեադատավարական օրենքի էական խախտումների բացակայությունը, որ նախատեսելը, առաջին հերթին, պայմանավորված էր նախկինում գործող՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու դատարանի լիազորության առկայությամբ: Վերջինիս ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ հակասահմանադրական ճանաչվելուց հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածը չի կարող հանդիսանալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հիմք:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է գործի քննության նախապատրաստական փուլում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու թույլատրելիությունը՝ նպատակ ունենալով հատուկ շեշտել, որ գործի քննության նախապատրաստական փուլում վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը պետք է կասկած չհարուցեն: Քրեական գործի վարույթը կարող է կարճվել, եթե դրա հարուցման համար հիմք հանդիսացած բոլոր հանգամանքները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի բացահայտված են և առկա են գործով վարույթի կարճման փաստական և իրավական հիմքերը: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ օրենսդիրը գործի քննության նախապատրաստական մասում գործի վարույթի կարճումը թույլատրում է, եթե դա հնարավոր է առանց դատաքննության իրականացման: Եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված կարճման հիմքերը, ըստ դատարանի, ակնհայտ չեն, կամ առկա է դրանց կապակցությամբ ապացույցներ հետազոտելու կամ կողմերի իրավական դիրքորոշումը քննարկելու անհրաժեշտություն, ապա դատարանը պետք է նշանակի դատաքննություն: Այսինքն, կարճման հիմքի առկայությունը պետք է լինի ակնհայտ և անվիճելի:

Պատասխանողի կարծիքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով խոչընդոտում է դատարանին նշանակել դատական քննություն այն քրեական գործերով, որոնցով մինչդատական վարույթը կատարվել է քրեադատավարական օրենքի էական խախտումներով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, իսկ 294-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողը հայտնում է նաև, որ ՀՀ Ազգային ժողովի չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (Կ-084-14.09.2012, 29.11.2013-ՊԻ-010/0) «դատական քննության նախապատրաստելը» ինստիտուտը փոխարինվել է «նախնական դատալսումներով», որի ընթացքում դատարանը քննության առարկա է դարձնում նաև քրեական հետապնդումը դադարեցնելու և/կամ վարույթը կարճելու հարցը:

5. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողության նպատակն է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմա-

նադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները կարող են սահմանադրական դատարանում վիճարկել ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտերի սահմանադրականությունը, որոնք ենթակա են կիրառման **իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով**: Այլապես, դատարանների դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը չի ծառայի իր հիմնական նպատակին:

Քննության առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է.

առաջին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (օրենսգիրք) 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթի և օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը, ընդ որում, հիշյալ դրույթներն օրենսգրքի 35-րդ հոդվածի հետ հարաբերակցության շրջանակներում,

երկրորդ՝ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի «...ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթի սահմանադրականության հարցը:

Դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, սակայն, որ դիմողի բարձրացրած հարցը վերաբերում է ոչ թե օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասին ամբողջությամբ, այլ միայն հիշյալ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությանը: Իսկ ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների և օրենսգրքի 35-րդ հոդվածի հարաբերակցությանը, ապա սույն գործով քննության առարկա նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ դրույթների հարաբերակցության շրջանակներն ընդգրկում են ոչ թե օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, այլ միայն հիշյալ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, համաձայն որի՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ:

Նկատի ունենալով վերոնշյալը՝ սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա է համարում.

- օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթի և օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության սահմանադրականության հարցը՝ այդ դրույթների՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ հարաբերակցության շրջանակներում, և
- օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթի սահմանադրականության հարցը:

6. Սույն գործի քննության շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու հիմքով դատարանի կողմից քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման կայացման գործող իրավակարգավորման իրավաչափությունը՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու համատեքստում,
- «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի քրեադատավարական նշանակությունը՝ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից քրեադատավարական օրենքի էական խախտման գնահատման լիազորություն ունենալու իրավաչափության և իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

7. Սահմանադրական դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, արձանագրում է, որ օրենսդիրը դատական քննության նախապատրաստման ինստիտուտի համար նախատեսել է քրեական դատավարության ընդհանուր խնդիրներից բխող անմիջական խնդիրներ, որոնք հիմնականում ուղղված են պարզելու գործը դատարանում քննելու բավարար հիմքերի առկայությունը, ձեռնարկելու բոլոր միջոցառումները՝ դատաքննության փուլում գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև գործի հետագա քննությանը խոչընդոտող հանգամանքերի առկայության դեպքում լուծելու վարույթի հետագա ընթացքին վերաբերող հարցերը: Օրենսգրքով իրավական կարգավորման են ենթարկվել նաև գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից ընդունվող որոշումների հետ կապված հարցերը՝ սահմանելով որոշման կայացման ժամկետը և կայացվող որոշման տեսակները (292-րդ հոդված): Համաձայն հիշյալ իրավակարգավորման, ի թիվս այլնի, դատարանը կայացնում է նաև դատական քննություն նշանակելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ: Վերջիններիս բովանդակության բացահայտմանն են ուղղված օրենսգրքի 293-րդ և 294-րդ հոդվածները:

Օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթի և 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության սահմանադրականությանն անդրադառնալով օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ հարաբերակցության շրջանակներում՝ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը, այնպես էլ առաջացնում են պարտավորություն՝ կարճել քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի

բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման: Մինևույն ժամանակ, այս ընդհանուր մոտեցումն ունի վերապահումներ, ինչն ամրագրված է օրենսգրքի 35-րդ հոդվածում, ի դեպ, որի մասին համապատասխան իրավական դիրքորոշումներ է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը (մասնավորապես, Վահագն Եղիազարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԳ-0012/11/13 որոշում և Կարեն Ստեփանյանի և Սկրտիչ Հովհաննիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԳ-2/0030/01/13 որոշում): Հետևաբար, հիմնավոր չէ դիմողի պնդումն առ այն, որ «...եթե գործի նյութերին ծանոթանալուց դատավորը հայտնաբերում է քրեական գործի վարույթը կարճելու հանգամանք կամ հանգամանքներ, ապա Օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն դատական քննություն չի կարող նշանակել և 294-րդ հոդվածի կարգով պարտավոր է կարճել գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը»:

8. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը քննության առնելով օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթի և օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության սահմանադրականության հարցը՝ այդ դրույթների՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ հարաբերակցության շրջանակներում, անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

ա) վիճարկվող դրույթների միջև եղած ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի բարձրացրած հարցադրմանը,

բ) վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումներով դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների և երաշխիքների ապահովման սահմանադրականության գնահատմանը,

գ) օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...երբ դա հնարավոր է առանց դատաքննության...» դրույթով պայմանավորված դատարանի հայեցողությանը:

Վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործով վարույթը կարճելուն անդրադառնում է որպես պայման՝ դատական քննություն նշանակելու մասին հարցի շրջանակներում, իսկ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված հիմնական հարաբերությունները, այդ թվում՝ թույլատրելիության շրջանակները, կարգավորում է օրենսգրքի 294-րդ հոդվածով: Հետևաբար, օրենսգրքի 294-րդ հոդվածը (վերջինիս բաղադրատարր հանդիսացող 1-ին մասը) ուղղված է քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգմանը, ինչը, բնականաբար, ենթադրում է առավել մանրամասն կարգավորում, ինչպիսին համարվում է նաև օրենս-

գրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...երբ դա հնարավոր է առանց դատաքննության...» դրույթը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի և 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ քրեական գործով վարույթը կարճելու կանոնակարգումները պետք է դիտարկել իրենց համակարգային ամբողջականության մեջ:** Ուստի հիմնավոր չէ դիմողի պնդումն առ այն, որ վիճարկվող դրույթների միջև գոյություն ունի որոշակի հակասություն:

Գնահատելով վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումներով դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների և երաշխիքների ապահովման սահմանադրականության հարցը՝ հարկ է նշել, որ և՛ սահմանադրական դատարանը (մասնավորապես, 2010 թվականի դեկտեմբերի 28-ի ՍԳՌ-931 որոշմամբ), և՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել են հիշյալ սկզբունքներին, մասնավորապես, ամրագրելով հետևյալը.

- «Քրեական գործերով մրցակցային դատաքննության իրավունքը նշանակում է, որ և՛ մեղադրանքի կողմին, և՛ պաշտպանության կողմին պետք է տրվի հնարավորություն ծանոթանալու միմյանց ներկայացրած փաստարկներին և ներկայացնելու իրենց դիտողությունները միմյանց փաստարկների վերաբերյալ (տե՛ս, Ռուվը և Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2000թ. փետրվարի 16-ի վճիռը, *Rowe and Davis v. the United Kingdom*): Մրցակցային դատավարությունում դատարանը չի կարող ստանձնել ո՛չ մեղադրանքի, ո՛չ պաշտպանության գործառույթ: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում».

- «Մրցակցային դատավարության կարևոր բաղադրատարրերից է նաև դատավարության կողմերի հավասարությունը: Կողմերի հավասարությունը, ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ (տե՛ս, ի թիվս այլնի, Դոմբո Բեհերն Նիդեռլանդների գործով 1993թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, *Dombo Beheer v. Netherlands*)»:

Մրցակցության սկզբունքին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես նշելով, որ «Մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեա-

կան դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը» (Արմեն Բաբայանի և Մուրեն Թումանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշում):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, ի թիվս այլ հոդվածների, 117-րդ և 118-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Այս և փոխկապակցված այլ դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը, հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է՝ եթե օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման: Այս իրավակարգավորման վերլուծությունից բխում է, որ առկա է դատավարական հակադիր շահերով օժտված սուբյեկտների փոխադարձ կամքը, որն արտահայտվում է հաշտության միջոցով: Որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ հիշյալ սուբյեկտներն ազատորեն արտահայտում են իրենց կամքն առ հաշտություն: Այլ կերպ ասած, քրեական գործի վարույթը կարճելու՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառելիս համապատասխան իրավասու սուբյեկտները, այդ թվում՝ դատարանը, հիմք են ընդունում տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու հանգամանքը՝ ելնելով այն կանխավարկածից, որ երկու կողմերի կամքը գիտակցված է և նպատակային:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով մրցակցային դատավարության այն հիմնական հատկանիշներից մեկը, ըստ որի՝ մրցակցային դատավարության պայմաններում կողմերն են տնօրինում իրենց դատավարական լիազորությունների ծավալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթների՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ հարաբերակցության շրջանակներում՝ փոխադարձ համաձայնությամբ պայմանավորված, **չեն խախտվում դատավարության կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները:** Բացի դրանից, դա հնարավորություն է տալիս զերծ մնալ քրեական գործերն անտեղի դատաքննության փուլ տեղափոխելուց:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել նաև, որ ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում այն իրավիճակը, երբ գործը դատական քննության նախապատրաստելիս, առանց դատական քննության, օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի առ-

կայության դեպքում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Միաժամանակ, կողմերի կամքն արտահայտող հաշտության առկայության դեպքում, երբ դատարանը, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, գտնում է, որ առանց դատական քննության հնարավոր չէ որոշում կայացնել քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, ապա դատարանը պետք է **պատճառաբանված և հիմնավոր** որոշում կայացնի դատական քննությունն նշանակելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...երբ դա հնարավոր է առանց դատաքննության...» դրույթի՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի մասով, իրավական բովանդակությունից բխում է, որ այն պայմանավորված է կոնկրետ գործի հանգամանքներով, դրանք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու հիմնավորված անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման դատարանի կողմից:

Հետևաբար, ընդհանուր կանոնն այն է, որ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, իսկ երբ հիշյալ հիմքի առկայության դեպքում դատարանը դատական քննությունն նշանակելու մասին որոշում է կայացնում, ապա այն բացառություն է ընդհանուր կանոնից: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ դեպքում չի խախտվում նաև քրեական դատավարության այն կարևոր սկզբունքը, ըստ որի՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը: Ավելին, այս համատեքստում էական նշանակություն է ձեռք բերում նաև այն հանգամանքը, որ **օրենսդրորեն առկա է դատարանի կողմից օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավական հնարավորություն (օրենսգրքի 376¹-րդ հոդված), որը հանդես է գալիս որպես իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք**: Այս ամենը վկայում է, որ ստեղծված են համապատասխան իրավական երաշխիքներ տվյալ իրավահարաբերության սուբյեկտների սահմանադրական իրավունքների պաշտպանության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերից բխող կոնկրետ գործով պայմանավորված այն հանգամանքների պարագայում, երբ առկա չէ դատական քննությունն նշանակելու օբյեկտիվ անհրաժեշտություն, դատարանը պետք է որոշում կայացնի քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

9. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անդրադառնալով «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթին՝ արձանագրում է, որ վերջինիս բովանդակությունը բացահայտված է օրենսգրքի 398-րդ հոդվածում, որը կրում է հենց «Քրեադատավարական օրենքի էական խախտումը» վերտառությունը: Հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Սույն գործի շրջանակներում քննության առարկա՝ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի և օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ դրանք գործում են տարբեր իրավահարաբերությունների շրջանակներում: Այսպես, օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված դրույթները, ի թիվս այլնի, կոչված են կարգավորելու նախ՝ ոչ թե մինչդատական վարույթի, այլ դատական քննության ժամանակ թույլ տրված խախտումները, երկրորդ՝ դրանք վերաբերում են վերաքննիչ դատարանում գործի քննությանը: «Քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի՝ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրումը փոխկապակցված էր քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի հետ, որի իրացման հիմքում ընկած իրավակարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանը 2007 թվականի հուլիսի 24-ի ՄԳՌ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը՝ արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն նաև սույն գործի առնչությամբ և, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- երբ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածին, դրանք որպես ապացույց չօգտագործելու և մյուս ապացույցների գնահատմամբ գործի ելքը լուծելու փոխարեն գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դատավարության կարևոր մի սկզբունք, համաձայն որի՝ դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (օրենսգրքի 23-րդ հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը,

- ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղադրանքի կողմի՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,
- ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ:

Սահմանադրական դատարանի ՍԳՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածը, որը որպես քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշման կայացման իրավական հիմք դիտարկում էր քրեադատավարական օրենքի էական խախտումներ թույլ տված լինելու հանգամանքը: Ընդ որում, օրենսգրքի 297-րդ հոդվածի հիման վրա կայացվող որոշումը դասվում էր այն որոշումների շարքին, որոնք հանդես են գալիս որպես գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումներ: Այսինքն, ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը բովանդակություն էր ստանում հակասահմանադրական ճանաչված նորմերի հետ հարաբերակցությամբ: Ներկայումս, բնականաբար, այդ եզրույթը դարձել է կիրառման տեսանկյունից անհնար, և այն ունակ չէ միջամտելու քրեադատավարական առկա իրավահարաբերություններին, առկա չեն իրավական գնահատման օբյեկտիվ չափանիշներ՝ դրանով առաջացնելով իրավական անորոշություն:

Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանն իր՝ 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԳՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, ամրագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝

ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»։ Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ։

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը հանդես է գալիս որպես հակասահմանադրական ճանաչված դրույթների ամբողջականության բաղադրատարր, որն օրենսդրի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությամբ չի շտկվել։

Մինևույն ժամանակ, սահմանադրական դատարանն էական է համարում շեշտադրել, որ խնդիրը ո՛չ այնքան և ո՛չ միայն վերոնշյալի մեջ է, այլ նրա, որ գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի խնդիրը չէ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներ բացահայտելը և հենց այդ փուլում գնահատելը։ Նման մոտեցումն ինքնին կհակասեր քրեադատավարական տվյալ փուլի ողջ տրամաբանությանը և կպարունակեր ինչպես քրեադատավարական մի շարք սկզբունքներից բխող պահանջների, այնպես էլ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են և պետք է դառնան համարժեք գնահատման առարկա։

Հարկ է նաև արձանագրել, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթի վերաբերյալ սույն գործով դիմող և պատասխանող կողմերի միջև ըստ էության սահմանադրաիրավական վեճ առկա չէ, քանի որ երկու կողմերն էլ նշել են հիշյալ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու մասին։

Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը՝ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից քրեադատավարական օրենքի էական խախտման գնահատման լիազորություն ունենալու տեսանկյունից իրավաչափ չէ։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդ-

վածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթը և 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «... ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ և 19-րդ հոդվածների պահաջներին հակասող և անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**9 հունիսի 2015 թվականի
ՍԳՈ-1213**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՁԻՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 223-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 231-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ
ԵՎ 5-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Հ. Սահակյանի ներկայացուցիչ Ռ. Այվազյանի, դիմող Կ. Հաջիյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի և Կարապետ Հաջիյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի և 231-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Հ. Սահակյանի և Կ. Հաջիյանի՝ համապատասխանաբար 16.02.2015թ. և 23.03.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 07.04.2015թ. ՍԴԱՌ-20 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացի Կարապետ Հաջիյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի և 231-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և ՍԴ-ի կողմից քննության ընդունված՝ «Քաղաքացի Հովհաննես Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի և 231-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 223-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասը սահմանում է.

«3. Գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից վերոնշյալ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, իսկ վիճարկվող դրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ և 5-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են.

«4. Վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

5. Վճռաբեկ բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա

վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից վերոնշյալ հոդվածում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, իսկ վիճարկվող դրույթները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով:

2. Միավորված գործերի դատավարական նախապատմությունները հանգում են հետևյալին.

Դիմողներից Հովհաննես Սահակյանի դեմ հայց ներկայացնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ քաղաքացի Գառնիկ Իսաղուլյանը պահանջել է Երևան քաղաքի Օրբելի փողոցի 12-րդ շենքի թիվ 1 բնակարանը վաճառել հրապարակային սակարկություններով՝ բռնագանձումը տարածելով Հովհաննես Սահակյանի բաժնի վրա: Դատարանը 23.04.2014թ. վճռով հայցը բավարարել է: Դիմող Հովհաննես Սահակյանը և Միլվա Ստեփանյանն ընդհանուր իրավասության դատարանի՝ 23.04.2014թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 17.09.2014թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, իսկ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 23.04.2014թ. վճիռը թողել օրինական ուժի մեջ: Հովհաննես Սահակյանի, Միլվա Ստեփանյանի և Ռուբեն Այվազյանի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 17.09.2014թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 12.11.2014թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում՝ որոշումը ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար սահմանելով տասնհինգօրյա ժամկետ: Հիշյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, նշել է, որ «Տվյալ դեպքում Հովհաննես Սահակյանը և Միլվա Ստեփանյանը, ..., վճռաբեկ բողոքը չեն ներկայացրել փաստաբանի միջոցով: ... Տվյալ դեպքում վճռաբեկ բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքին չեն կցել վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը»: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 14.01.2015թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում:

Դիմողներից Կարապետ Հաջիյանը՝ որպես երրորդ անձ, ներգրավված է եղել թիվ ԵԱԲԳ/1517/02/14 քաղաքացիական գործում, որով, հայց ներկայացնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, քաղաքացի Նուն» Չաքարյանը պահանջել է վերացնել սեփականության իրավունքի խախտումները և վերականգնել սեփական հողամասը տնօրինելու իրավագործությունը: Դատարանը 10.10.2014թ. որոշմամբ Կարապետ Հաջիյանի դիմումը՝ պարզաբանում տալու վերաբերյալ, մերժել է: Կա-

րապետ Հաջիյանն ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.10.2014թ. որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր 30.10.2014թ. որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ բողոքը: Կարապետ Հաջիյանի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2014թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 03.12.2014թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում՝ որոշումը ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար սահմանելով տասնհինգօրյա ժամկետ: Հիշյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, նշել է, որ՝ «Բացի այդ, բողոք բերած անձը, ..., վճռաբեկ բողոքը չի բերել փաստաբանի միջոցով...»: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 18.02.2015թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում:

3. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը և 231-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 և 42-րդ հոդվածներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, քանի որ բացառում են ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից իր անունից անձամբ կամ իր ընտրած անձի միջոցով վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը:

Նշելով, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը չի կարող պարտադրված լինել և հատկապես այն պարագայում, երբ անձն ի վիճակի չէ վճարել փաստաբանի մատուցած ծառայությունների համար, դիմողները գտնում են, որ վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով բերելու իրավանորմը խախտում և անհամաչափորեն սահմանափակում է դատարանի մատչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու՝ դատավարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով: Միաժամանակ, փաստելով, որ նախկինում անձը կարող էր առանց որևէ խոչընդոտի վճռաբեկության կարգով բողոքարկել դատական ակտերը, դիմողներն այն համոզմունքն են հայտնում, որ ներկայումս վերացվել է «ՀՀ վճռաբեկ դատարան անմիջապես դիմելու կարգը՝ սահմանափակելով իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները: Իրենց պահանջը հիմնավորելու համար դիմողները նշում են նաև, որ «ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկման ենթակա ակտերը բացառապես փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական արգելքի պայմաններում անհրաժեշտ է օրենքով կարգավորել փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ՝ անկախ կողմի նյութական դրությունից»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ սույն գործով դիմող Հովհաննես Սահակյանի փաստարկները

հանգում են նրան, որ օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19, 20, և 42-րդ հոդվածներին:

Իր պահանջը հիմնավորելու համար դիմողը նշում է, որ վճռաբեկ բողոքին էլեկտրոնային կրիչը կցելու պահանջը լրացուցիչ նյութական միջոցների վատնում է նախատեսում, ինչն անձի իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորում է, քանի որ օրենսդրությամբ արգելված չէ վճռաբեկ բողոքի ձեռագիր տարբերակը: Դիմողը գտնում է նաև, որ առկա իրավակարգավորման պայմաններում ձեռագիր գրվածը պետք է թվայնացվի, բացի դրանից, ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է ունենա այնպիսի համակարգիչ, որը կընթերցի ներկայացված վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը:

4. Պատասխանողը նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և հատկապես բողոքի ընդունելիության պայմանների կապակցությամբ կարող է ենթարկվել սահմանափակումների: Բոլոր դեպքերում, պետություններն այս կապակցությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Ասվածի հետ մեկտեղ, պատասխանող կողմը նաև ընդունում է, որ, այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը:

Պատասխանողը գտնում է, որ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարտադիր պահանջն ուժը կորցրած ճանաչելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-6331-09.10.2014,03.04.2015-ՊԻ-010/0), որն ընդգրկվել է հերթական նստաշրջանի օրակարգում:

Պատասխանողը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության հարցին, գտնում է, որ թեև դատավարական օրենսգրքերում չեն կոնկրետացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևաչափն ու էլեկտրոնային կրիչի տեսակը, սակայն այդ հանգամանքը գործող իրավակիրառական պրակտիկայի պայմաններում չի կարող իրավունքների խախտման տեղիք տալ: Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կարող է հասանելի դառնալ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կրելու ունակ որևէ կրիչի միջոցով: Օրենսդիրը, կրիչի տեսակը չորոշակիացնելով, ըստ էության, որպես ընդունելի տարբերակ է դիտել վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը պահպանելու և փոխանցելու համար պիտանի կրիչի ցանկացած տեսակ: Օրենսգրքով էլեկտրոնային կրիչի տեսակը չկոնկրետացնելը վճռաբեկ բողոք

բերող անձին ընտրության լայն հնարավորություն է տալիս՝ նվազագույնի հասցնելով էլեկտրոնային կրիչի ձեռքբերման կապակցությամբ կատարվելիք ծախսերը: Պատասխանողը գտնում է, որ դիմողի այն պնդումը, որ վճռաբեկ բողոքն էլեկտրոնային կրիչով ներկայացնելու պարտադիր պահանջը լրացուցիչ ներդրումներ է պահանջում, ուստի այդ առումով անհնարին է դարձնում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, հիմնավոր չէ, քանզի վճռաբեկ բողոքի ներկայացումն ինքնին բողոքաբերից որոշակի ծախսեր է պահանջում՝ պետական տուրք, բողոքի պատճենը գործը քննող դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելը և այլն, որոնք իրենց ամբողջության մեջ ներառված են դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայմաններում:

Պատասխանողի կարծիքով, ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի պահանջները չպահպանելը չի կարող արգելակել վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը: Նշված հոդվածի պահանջները չպահպանելը վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք է, որը հնարավորություն է տալիս դատարանի կողմից մատնանշված թերությունները վերացնելուց հետո կրկին դիմել դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն:

Պատասխանողի եզրահանգումն այն է, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը և 231-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներն այնքանով, որքանով փոխկապակցված են փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավակարգավորման հետ /ներկայացուցչին վերաբերող մասով/, հակասում են ՀՀ Սահմանադրությանը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը»:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ, դիմող Հ. Սահակյանի բարձրագրած հարցը, ըստ էության, վերաբերում է ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասին՝ ամբողջությամբ, այլ միայն հիշյալ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը 223-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսելով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքը՝ 231-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում օգտագործում է «ներկայացուցիչ» եզրույթը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ներկայացուցչին առնչվող դրույթները վերաբերելի են փաստաբանին:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի, 231-րդ հոդվածի 4-րդ

մասի և 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթների առնչությամբ կիրառելի են և վերահաստատման ենթակա ՄԳՌ-765, ՄԳՌ-833, ՄԳՌ-1192 և ՄԳՌ-1196 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ներկա օրենսդրական կարգավորման առնչությամբ իր հիշյալ որոշումներում արդեն ձևակերպել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք, ի թիվս այլնի, էական նշանակություն ունեն նաև սույն գործի լուծման համար: Մասնավորապես, հաշվի առնելով ՄԳՌ-1192 որոշմամբ և սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճերի միջև որոշակի ընդհանրությունը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին վկայակոչել այդ որոշումների մեջ արձանագրված իրավական դիրքորոշումները.

ա) «...պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ սովորական անձի ֆինանսական հնարավորություններից (ՄԳՌ-765)»,

բ) «... վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ...՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ստյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը» (ՄԳՌ-833)»:

Սահմանադրական դատարանն իր ՄԳՌ-1192 որոշման մեջ նաև արձանագրել է հետևյալը. «Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական

պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ»:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հաշվի առնելով ՍԳՈ-1192 և ՍԳՈ-1196 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4141-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի) և սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, հիմք է ընդունվում նաև հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած մյուս իրավական դիրքորոշումները: Դա վերաբերում է հատկապես այն սկզբունքային մոտեցմանը, համաձայն որի՝ առաջադրված իրավաչափ նպատակը պետք է իրացվի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման շրջանակներում, ինչը ենթադրում է, որ օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից՝ դրա արդյունքում չապահովելով անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը: Այս համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը միանշանակ ճանաչում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, ինչն օրենքով նախատեսված դեպքերում ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականն անդամ երկրներին նույնպես առաջարկում է բացառել «տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց» դատարանի մատչելիության իրավունքի հնարավոր արգելափակումը:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ՀՀ դատական դեպարտամենտի 22.04.2015թ. թիվ ԳԳ-1 Ե-2262 պատասխան գրության մեջ ներկայացված վիճակագրական տվյալները: Համաձայն այդ վիճակագրության՝ 03.07.2014թ. մինչև 21.04.2015թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ վճռաբեկ դա-

տարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 849 վճարեկ բողոքներից 120-ը վերադարձվել է, 170-ը թողնվել է առանց քննության, 506-ով վարույթ ընդունելը մերժվել է և միայն 53 դիմում է ընդունվել վարույթ, որը կազմում է ստացված վճարեկ բողոքների ընդամենը 6.24 տոկոսը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջանում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 4-րդ մասը՝ վճարեկ բողոքը ստորագրելու պահին փաստաբան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած՝ գործին մասնակցող անձանց մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճարեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված՝ «Վճարեկ բողոքին կցվում են նաև ... վճարեկ բողոքի էլեկտրոնային կրիչը» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1192 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 հունիսի 2015 թվականի
ՍԳՈ-1220**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՄՎԵԼ ԱԼԱՎԵՐԳՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 181-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Ս. Ալավերդյանի, դիմողի ներկայացուցիչ Մ. Դուլյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սամվել Ալավերդյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սամվել Ալավերդյանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմումը և պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ին:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 181-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 181. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը

1. Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) այդ դատական ակտը կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքների, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացության, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանության, կեղծ փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների հիման վրա.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ դատավարության մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը կամ դատավորը գործի քննության առնչությամբ կատարել է հանցագործություն»:

28.11.2007թ. խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման կարգը նախատեսված էր օրենսգրքի 134-րդ հոդվածում, համաձայն որի՝

«Վարչական դատարանի դատական ակտերը կարող են վերանայվել նոր երևան եկած հանգամանքներով կամ նոր հանգամանքներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունո հարկային տեսչությունը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է արձակել վճարման կարգադրություն՝ սույն գործով դիմող՝ անհատ ձեռնարկատեր Սամվել Ալավերդյանից 6.242.610 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ: Գիմողը 09.02.2012 թվականին դատարան ներկայացրած հակընդդեմ հայցով խնդրել է անվավեր ճանաչել Էրեբունո հարկային տեսչության թիվ 10000445 ստուգման ակտը: ՀՀ վարչական դատարանի 29.07.2013 թվականի թիվ ՎԳ 3170/05/12 որոշմամբ հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.12.2013 թվականի որոշմամբ մերժվել է: Գիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 19.02.2014 թվականի որոշմամբ վերադարձվել է:

Գիմողը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 29.05.2014 թվականի որոշմամբ մերժվել է: Իսկ դիմողի՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարան կրկին ներկայացրած վճռաբեկ բողոքը նույն դատարանի 27.08.2014 թվականի

որոշմամբ թողնվել է առանց քննության, իսկ 05.11.2014 թվականի որոշմամբ մերժվել է վարույթ ընդունելը:

Մինչ այդ, նախաքննական մարմնի 2012 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով՝ հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարներից խուսափելու համար: Թիվ ԵԿԳ/0233/01/12 քրեական գործի շրջանակներում դատարանը նշանակել է դատահաշվապահական լրացուցիչ փորձաքննություն, որի հիման վրա հաստատված է համարվել այն փաստը, որ դիմողն ունի ընդամենը 924.882 ՀՀ դրամ գումարի լրացուցիչ հարկային պարտավորություն, ճանաչելով նրա անմեղությունն առանձին դրվագով առաջադրված մեղադրանքում՝ կայացնելով համապատասխան դատավճիռ: Վերջինս բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան և 19.09.2014 թվականի որոշմամբ թողնվել է անփոփոխ:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 18 և 19-րդ հոդվածների պահանջներին՝ ներկայացնելով հետևյալ հիմնավորումները.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում սպառիչ կերպով թվարկված են նոր երևան եկած հանգամանքները, «ինչը հնարավորություն չի տալիս դատարանին այդ հիմքերից բացի դատական ակտի վերանայման համար այլ հիմք կիրառել», տվյալ դեպքում առկա է մի իրավիճակ, «երբ ՀՀ դատական համակարգի երկու դատական ակտերը հակասում են միմյանց, մասնավորապես, ՀՀ վարչական դատարանի դատական ակտով հաստատվել է պարտավորության մի չափ, իսկ քրեական գործով դատական ակտով նույն պարտավորության մեկ այլ չափ է ամրագրվել: Եվ գործող օրենսդրությունը չի նախատեսում այս իրավիճակի լուծման որևէ կառուցակարգ»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, քանի որ «սահմանափակվում է արդարադատության մատչելիության իրավունքը»: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմի սահմանափակ կարգավորման պարագայում «անձը գրկվում է դատական պաշտպանության իրավունքից այն դեպքում, երբ ի հայտ է գալիս գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանք, որը մինչ այդ անձին հայտնի չէր»: Իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են տարատեսակ իրավիճակներ, երբ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ անձանց հայտնի չեն եղել, չէին կարող հայտնի լինել և չեն ներկայացվել նրանցից անկախ պատճառներով, և ինչպես գտնում է դիմողը՝ արդարադատության շահերից ելնելով օրենքը պետք է նախատեսի որոշակի կառուցակարգեր նման իրավիճակներում անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Եվ ինչպես վկայակոչում է դիմողը՝ նմանատիպ հիմք նախատեսում են նաև ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, որոնց համաձայն նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե ի հայտ են եկել

դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածին «տրված մեկնաբանությունը սահմանափակում է արդարադատության մատչելիության իրավունքը, քանի որ նոր երևան եկած հանգամանքների թվում չի նախատեսում այն հանգամանքների ի հայտ գալը, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»:

Այսպիսով, դիմող կողմը հանգում է այն հետևությանը, որ «գործող օրենսդրությունը տարբեր մոտեցում է դրսևորում վարչական և քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի հանդեպ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման հիմքերի սահմանման հարցում», ինչն առկա չէր նախկին իրավակարգավորման պարագայում:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ, ի տարբերություն ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման հիմքերի սպառիչ ցանկ սահմանելը պայմանավորված է «նախևառաջ վարչական դատավարության առանձնահատկություններով: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության՝ վարչական դատավարությունը խարսխված է գործի հանգամանքներն ի պաշտոն» պարզելու սկզբունքի վրա, որը ենթադրում է, որ դատավորը ինքնուրույն՝ կողմերից անկախ, պետք է ձեռնարկի բոլոր համարժեք միջոցները գործի իրական փաստերը բացահայտելու համար», և որ «վարչական դատարանը պետք է ձեռնարկի համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար»: Ըստ պատասխանող կողմի դիրքորոշման՝ ելնելով գործի հանգամանքներն ի պաշտոն» պարզելու վերոնշյալ սկզբունքից, «եթե գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք չի բացահայտվել, ապա առկա է դատարանի կողմից թույլ տրված դատավարական խախտում, քանի որ դատարանն ունի պարտականություն այդ հանգամանքը վեր հանելու: Իսկ դատարանի կողմից թույլ տված դատավարական խախտման պարագայում համապատասխան հանգամանքը չի կարող համարվել նոր երևան եկած»:

Միաժամանակ, անդրադառնալով վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության իրավաչափության հետ կապված և նոր երևան եկած հանգամանքների հետազոտման խնդրին, ապա պատասխանողը գտնում է, որ՝ «ոչ թե պետք է դատարանի կողմից վերանայվի նախկինում կայացված դատական ակտը, այլ համապատասխան փաստական հանգամանքի շրջանակում վարչական մարմնի կողմից վերանայվի նախկինում կայացրած վարչական ակտը»:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը որոշելիս հաշվի առնել.

- ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու ինստիտուտի շրջանակներում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական համատեղելիությունը՝ ելնելով տվյալ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից, հաշվի առնելով նաև եվրոպական իրավահամակարգում ձևավորված պրակտիկան,
- դիմումի առարկա հանդիսացող վեճի շրջանակներում անձի իրավունքների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափությունը՝ այն դիտարկելով վարչադատական և վարչական վարույթի ընթացակարգերի առանձնահատկությունների համատեքստում:

6. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՄԳՈ-701, ՄԳՈ-709, ՄԳՈ-751, ՄԳՈ-758, ՄԳՈ-765, ՄԳՈ-767, ՄԳՈ-833, ՄԳՈ-872, ՄԳՈ-935, ՄԳՈ-1049, ՄԳՈ-1114 և այլն): Դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներից, հանգեցնում են ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

- նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,
- այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և (կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր.-ի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)՝ նորահայտ են,
- իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները)

առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

- դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,
- ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,
- ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված:

Նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ վերոհիշյալ գործերով դատաքննությունների շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրումը նույնպես վկայել է ներպետական արդարադատական գործընթացներում վերոշարադրյալ չափորոշիչների կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան նոր երևան եկած հանգամանքներով «գործի վերաքննու-

թյուն» նախաձեռնելու համար: Մասնավորապես, ՄԻԵԳ-ն իր մի շարք որոշումներով վերահաստատել է, որ այն հանգամանքները, որոնք արդեն իսկ առկա են դատաքննության ժամանակ, սակայն որևէ պատճառով չեն ներկայացվել դատարան և հայտնի են դարձել միայն դատավարությունից հետո, համարվում են «նոր երևան եկած»: Դատարանի ակտն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դիմած անձը պետք է ցույց տա, որ ապացույցն անհնար է եղել ներկայացնել վերջնական նիստի ժամանակ, և այդ ապացույցն ունի որոշիչ նշանակություն (*Xheraj v. Albania*, application no. 37959/02, §53-54, *Yerogova v. Russia*, application no. 77478/01, §33, *Maltseva v. Russia*, application no. 76676/01, «33, *Kumkin and others v. Russia*, application no. 73294/01, §31):

Մեկ այլ գործով, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման գործընթացի իրավական կարևորության խնդրին՝ ՄԻԵԳ-ն արձանագրել է. «... գործի նորոգումը նոր երևան եկած հանգամանքների հիման վրա ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով այն օգտագործվում է արդարադատության սխալներն ուղղելու համար: Դատարանի խնդիրն է պարզել արդյո՞ք ընթացակարգը կիրառվել է այնպես, որ համահունչ է 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆին (*Case of Kuznetsova v. Russia*, Application no. 67579/01, see *Pravednaya*, cited above, § 28):

Եվրոպական միության անդամ հանդիսացող մի շարք պետություններում նոր երևան եկած հանգամանքների հիման վրա գործի նորոգման վերաբերյալ ներպետական առկա իրավակարգավորումների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ վարչադատավարական գործընթացներում, վկայում է, որ ի թիվս այլնի, որպես «նոր երևան եկած» հանգամանք են որակվում գործի քննության ժամանակ գոյություն ունեցող էական այն փաստերը, ապացույցները, որոնք հայտնի չեն եղել դատարանին և կարող են հանգեցնել բոլորովին այլ որոշման (Լատվիա (Վարչական դատավարության օրենք, գլուխ 39, Գործերի *de novo* քննությունը նոր երևան եկած հանգամանքների հիմքով, Բաժին 353. Նոր երևան եկած հանգամանքներ), Էստոնիա (Վարչական դատավարության օրենսգիրք (Ուժի մեջ է մտել 01.01.2012թ.), §240, Վերաբացման հիմքերը), Բոսնիա և Հերցեգովինա (Վարչական դատավարության մասին օրենք, հոդված 238), Խորվաթիա (Վարչական դատավարության մասին ընդհանուր ակտ, հոդված 123), Բուլղարիա (Վարչական դատավարության օրենսգիրք, գլուխ 14, Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը, Բաժին 1, հոդված 239.), Չեխիա (Վարչական դատավարության օրենսգիրք, Բաժին 2, Վարույթի վերաբացումը, §111. Վերաբացման պատճառները), Լեհաստան (Վարչական դատարաններում դատավարության վերաբերյալ օրենք, հոդված 273), Գերմանիա (Գ-Գ-Հ վարչական դատավարության օրենսգիրք, 153-րդ հոդված, Գ-Գ-Հ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, §580), Ֆինլանդիա (Վարչական դատական ընթացակարգի վերաբերյալ ակտ, Բաժին 27, Բողոքի վերանայում) և այլն): Այսպես, օրինակ՝ իրավական ուժի մեջ մտած վճռով ավարտված վարույթն ըստ Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքի §153-ի՝ կարող է վերսկսվել միայն

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ գլխի դրույթների, այսինքն՝ սույ վճիռն առ ոչինչ ճանաչելու պահանջով ներկայացվող հայցի հիման վրա՝ ըստ նույն օրենսգրքի §579-ի, եթե առկա են որոշակի ծանրակշիռ դատավարական խախտումներ, կամ որպես ռեստիտուցիայի պահանջով ներկայացվող հայցի հիման վրա՝ ըստ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի §580-ի, եթե դատարանի որոշումը հիմնված է ոչ ճիշտ, մասնավորապես՝ կեղծված կամ այլ պատճառներով թերի կամ անբավարար հիմքերի վրա: Գ-Դ-Հ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը սահմանում է. «Ավարտված դատավարությունը կարող է վերսկսվել՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ Գլխի դրույթներին համապատասխան», իսկ վերջինիս §580-ը սահմանում է. «Դատավարությունը վերսկսելու հայց ներկայացվում է՝

1. եթե հակառակ կողմը հանդիսանում է մեղավոր՝ դիտավորյալ կամ անզգուշությամբ երդվելու պարտականության խախտմամբ այն ապացույցները ներկայացնելիս, որոնց վրա հիմնված է որոշումը,

2. եթե փաստաթուղթը, որի վրա հիմնված է որոշումը, եղել է կեղծ կամ կեղծված,

3. եթե վկան ցուցմունք տալիս կամ փորձագետը եզրակացություն ներկայացնելիս, որոնք դրվել են որոշման հիմքում, թույլ են տվել պատժելի արարքի հատկանիշներ պարունակող կեղծիքներ,

4. եթե որոշման հնարավոր է եղել հասնել կողմի կամ նրա ներկայացուցչի կողմից պատժելի արարք կատարելու միջոցով,

5. եթե որոշումը կայացնող դատարանը կողմերի նկատմամբ իր պարտականությունները կատարելիս թույլ է տվել պատժելի արարք,

6. եթե դատարանը հիմնվել է մեկ այլ դատարանի որոշման վրա, որը բեկանվել է,

7. եթե կողմը՝ ա) հայտնաբերի, որ այդպիսի գործով նախկինում կայացվել է օրինական ուժի մեջ մտած վճիռ, կամ՝ բ) հայտնաբերել է փաստաթուղթ, որի պարագայում դատարանը կկայացներ իր նկատմամբ առավել բարենպաստ վճիռ»:

Այսպիսով, վերահաստատելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության, դրա միակերպ ընկալման ու կիրառելիության սկզբունքների վերաբերյալ իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հիմնված մաս եվրոպական իրավահամակարգում ներդրված համապատասխան չափորոշիչների համակողմանի ուսումնասիրման վրա, սահմանադրական դատարանն արձանագրում է այդ ինստիտուտի սահմանադրաիրավական կարևորությունն արդարադատական տարբեր, այդ թվում վարչադատական գործընթացներում՝ ուղղված արդար, արդյունավետ և մատչելի դատաքննության միջոցով անձի իրավունքների պաշտպանության ապահովման երաշխավորմանը:

7. Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հարցը դիտարկել ինչպես նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուցիոնալ առկա ընդհանուր լուծումների (քաղաքացիական և քրեադատավարական), այնպես էլ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ անձի իրավունքների պաշտպանության (դատարանի մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների) երաշխավորման սահմանադրական իրավաչափության և վարչադատական, ինչպես նաև վարչական վարույթի ընթացակարգերի գոյություն ունեցող առանձնահատկությունների համատեքստում, ելնելով նաև սույն գործով կողմերի հարցադրումներից, կարևորելով, մասնավորապես՝

- թե որքանով են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի նորմերն իրավական իմաստով լիարժեք երաշխավորում գործի համար նշանակություն ունեցող այս կամ այն տեղեկատվության (ապացույցի) որպես «նոր երևան եկած հանգամանք» գնահատելու հնարավորությունը և, մասնավորապես՝ այն իմաստով, որ եթե դատավարության մասնակցի կողմից ներկայացված տվյալ հանգամանքը հայտնի լիներ դատարանին (հետազոտված լիներ դատարանի կողմից), ապա կկայացվե՞ր այլ որոշում, քան այն, որն այդ հանգամանքի երևան գալու հիմքով վիճարկվում է,
- սույն գործով վիճելի իրավակարգավորմամբ որքանով են երաշխավորվում «նոր երևան եկած հանգամանք» իրավական եզրույթի հատկանիշներ պարունակող (ՄԳՌ-935) այս կամ այն տեղեկատվության (ապացույցի) հետազոտման ու գնահատման արդյունավետ արդարադատական գործընթացներ,
- քննության առարկա իրավակարգավորմամբ որքանով է երաշխավորված անձի իրավունքներն արդար, մատչելի ու արդյունավետ դատաքննությամբ պաշտպանելու՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում նախատեսված իրավունքի լիարժեք իրացումը,
- սահմանադրական օրինականության տեսանկյունից որքանով է իրավաչափ նոր երևան եկած հանգամանքների հիմքով ծագած իրավահարաբերությունները վարչական վարույթի շրջանակներում կարգավորելը:

Հաշվի առնելով վերոթվարկյալ հարցադրումները և նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուցիոնալ առկա ընդհանուր լուծումները, սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև վիճելի իրավակարգավորման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելը» վերտառությունը կրող 25-րդ գլխում ներառված նորմերի համատեքստում վերլուծությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու ինստիտուտ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսելը այդ ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, ինչ-

պես նաև անձի խախտված իրավունքների պաշտպանությունն ապահովելու լրացուցիչ երաշխիք է,

- որպես «նոր երևան եկած» հանգամանք գնահատելի փաստարկներն ու տեղեկություններն ուսումնասիրելու և դրանց պատշաճ իրավական գնահատական տալու համար օրենսդիրը նախատեսել է համապատասխան ընթացակարգ, դատավարության մասնակիցների իրավական կարգավիճակ, որը թույլ է տալիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում նախատեսված հիմքերի քննության շրջանակներում իրականացնել որոշակի դատավարական իրավունքներ և կրել պարտականություններ, այդ թվում՝ ներկայացված հանգամանքների «նոր երևան գալը» դատարանում ապացուցելը,
- նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հիմքեր նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է այդպիսի հանգամանք հանդիսացող հնարավոր տեղեկությունների (փաստերի) անվանացանկը սահմանափակելու սկզբունքով, քանի որ որպես ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հնարավոր հիմք են դիտարկվել միայն տվյալ գործով դատավարության մասնակիցների (մրանց ներկայացուցիչների), դատավորի կողմից կատարված, ինչպես նաև դատական տվյալ ակտի կայացման հիմքում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հանցավոր գործողությունները, դրանով իսկ բացառելով տվյալ գործով դատական ակտի կայացման պահին օբյեկտիվորեն առկա և (կամ) դատավարության մասնակիցներին, դատարանին անհայտ այլ հիմքեր, որոնց պատշաճ հետազոտումն ու իրավական գնահատականն անխուսափելիորեն կհանգեցնեին դատական այլ որոշման, քան՝ կայացվել է:

Հարկ է նշել նաև, որ վիճարկվող նորմերում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանցավոր գործողությունները որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելը քննության առարկա իրավակարգավորման շրջանակներում ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում: Այդպիսի հանգամանքի գոյությունն օբյեկտիվորեն կարող է որոշիչ նշանակություն ունենալ վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտերի վերանայման և արդար որոշումներ կայացնելու համար: Նման հանգամանքները, ի թիվս այլնի, համապատասխան հատկանիշների առկայությամբ որպես «նոր երևան եկած» գնահատելու իրավական հնարավորություն է նախատեսված նաև ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում: Սակայն այդպիսի հանգամանքներում հատկապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին իրավական բացառիկ նշանակություն հաղորդելն էականորեն սահմանափակում է հանցավորության փաստը հաստատող այլ փաստական հանգամանքներ որպես նոր երևան եկած հանգամանք դիտարկելու և վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտը վերանայելու իրավական հնարավորությունը (օրինակ՝ համաներման և ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված այլ հիմքերով ու կարգով քրեական վարույթի կարճման, քրեական պատաս-

խանատվությունից ազատելու դեպքերում), երբ օրենքով սահմանված կարգով հաստատված են հանցագործության փաստն ու այն կատարած անձը: Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումն ինքնին էապես սահմանափակում է վարչական դատավարության շրջանակներում վերոհիշյալ հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման հնարավոր շրջանակները, հետևաբար՝ անձի իրավունքների լիարժեք պաշտպանության արդյունավետ միջոց չի կարող հանդիսանալ:

Վիճարկվող նորմերի իրավական բովանդակությունից նաև հետևում է, որ անձը գրկված է որպես «նոր երևան եկած» գնահատելի **այլ հանգամանքների** հիմքով վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտը վիճարկելու հնարավորությունից, մասնավորապես՝ իրավաբանորեն փաստագրված հանցագործության հետ չկապված նոր երևան եկած այնպիսի հանգամանքների հիմքով, որպիսիք տվյալ գործով դատական ակտի կայացման պահին գոյություն են ունեցել, գործի արդար լուծման համար ունեցել են էական նշանակություն, սակայն դատավարության մասնակիցների կամքից անկախ չեն ներկայացվել, դատարանին անհայտ են մնացել: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 181-րդ հոդվածում, ի տարբերություն ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան իրավակարգավորումների, օրենսդիրը չի նախատեսել որպես «նոր երևան եկած» գնահատելի այլ հանգամանքների հիմքով վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտի վերանայման հնարավորություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման այնպիսի իրավակարգավորումը, համաձայն որի՝ էականորեն սահմանափակվում են ապացուցողական նշանակություն ունեցող փաստական այլ հանգամանքների իրավագնահատման պատշաճ դատավարական գործընթացներն այն դեպքերում, երբ այդպիսի հանգամանքների օբյեկտիվ գոյությունն անխուսափելիորեն հանգեցնում է (կհանգեցնի) դատական այլ որոշման, քան մինչ այդ հանգամանքների երևան գալը կայացվել է, կամ որ նույնն է՝ արդար, հիմնավոր, օրինական դատական ակտի կայացմանը, հետևաբար՝ նաև անձի խախտված իրավունքների վերականգնմանը, սահմանափակում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի արդյունավետ և մատչելի դատաքննության իրավունքը, հակասում է արդարադատության բուն նպատակներին ու ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներում և 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին:

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսդրի կողմից (ի տարբերություն նախորդ իրավակարգավորման (ՀՀ վարչ. դատ. օր. 134-րդ հոդված (28.11.2007թ. խմբ.) վիճարկվող իրավակարգավորմամբ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող հիմքերի սպառնիչ ցանկ նախատեսելը կամ այլ հնա-

րավոր նման հիմքեր չնախատեսելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում՝ դատարանի կողմից փաստական հանգամանքներն ի պաշտոն» պարզելու վերաբերյալ արդարադատական սկզբունքի ամրագրմամբ:

Ակնհայտ է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն» պարզելու իրավական պահանջն ու ընթացակարգային սկզբունքը պայմանավորված են վարչադատավարական քննության առանձնահատկություններով և, մասնավորապես՝ դատարանի կողմից հանրային-իրավական վեճերի լուծման շրջանակներում լուծվող խնդիրներով, վարչական դատավարության մասնակիցների (կողմերի) միջև մրցակցային հարաբերություններում դատարանի ունեցած առանձնահատուկ դերով և այլն: Սակայն սահմանադրական դատարանը գտնում է, որ **դատավարական ընթացակարգի որևէ առանձնահատկություն չի կարող սահմանափակել տվյալ գործով ըստ էության կայացված դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը կասկածահարույց դարձնող որևէ, այդ թվում՝ նոր երևան եկած, հանգամանքի արդար, արդյունավետ և մատչելի դատաքննությամբ հետազոտումն ու օրենքով անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում կայացված դատական ակտի վերանայումը:**

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ընդգծել, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն» պարզելու դատավարական սկզբունքի առկայության պայմաններում էլ (ինչին հղում է կատարում պատասխանող կողմը) որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանքները ներկայացնելու (ապացուցելու) իրավունքն ու պարտականությունը կրում է ոչ թե դատարանը, այլ՝ **դատավարության շահագրգիռ մասնակիցն իր կամահայտնությամբ և նախաձեռնությամբ:** Եվ վարչական դատավարության շրջանակներում մրցակցային քննության որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդրադարձել է դատարանի մատչելիության, ինչպես նաև արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ հավասարապես կարևորելով դրանք դատարան-թացակարգային բոլոր բնագավառներում (քրեական, քաղաքացիական և վարչական): Սահմանադրական դատարանը վերահաստատելով իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործով ևս գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԵԵԳ-ի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ պետությունը դա-

տարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

Սահմանադրական դատարանն ընդգծում է վերոհիշյալ չափորոշչի սահմանադրաիրավական սկզբունքային կարևորությունը ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման օրենսդրական կարգի սահմանման յուրաքանչյուր և, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման դեպքում:

9. Սահմանադրական դատարանն իր՝ տարբեր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին չհամապատասխանող և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից անթույլատրելի է համարում նաև պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ուժի մեջ մտած դատական ակտի վիճարկելիությունը նոր երևան եկած հանգամանքով հիմնավորող այս կամ այն ապացույցի առկայության դեպքում «ոչ թե պետք է դատարանի կողմից վերանայվի նախկինում կայացված դատական ակտը, այլ համապատասխան փաստական հանգամանքի շրջանակում վարչական մարմնին կողմից վերանայվի նախկինում կայացրած վարչական ակտը»: Այսինքն, ուժի մեջ մտած դատական ակտը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու հետ կապված իրավահարաբերության կարգավորման, և, ի վերջո՝ դատական տվյալ ակտի օրինականության վիճարկման, նոր երևան եկած հանգամանքի ուժով առաջացած դատական սխալն ուղղելու և գործին արդար լուծում տալու խնդրում առաջնային նշանակություն է տրվում արտադատական միջոցին:

Չանդրադառնալով վարչական դատավարության և վարչական վարույթի՝ օրենքով սահմանված նպատակների ու խնդիրների, ինչպես նաև իրավական այդ գործընթացների, դրանց իրավակարգավորիչ ընդհանուր դերի սահմանադրական բովանդակության մեկնաբանմանը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իր՝ ՍԳ-Ո-652, ՍԳ-Ո-665, ՍԳ-Ո-673, ՍԳ-Ո-690, ՍԳ-Ո-719, ՍԳ-Ո-954 և մի շարք այլ որոշումներում, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին, սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից **ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն է նաև իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական**

քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումը: Սահմանադրական դատարանը գտել է, որ **այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ:** Հետևաբար, սույն գործով, ելնելով նաև պատասխանող կողմի պնդումներից, սահմանադրական դատարանը վերահաստատում է իր վերոհիշյալ դիրքորոշումը: Եթե որպես «նոր երևան եկած» հանգամանք գնահատելի այլ փաստարկների (ապացույցների) հիմքերով դատական ակտի օրինականությունը կասկածահարույց է, ապա օրենսդիրը պարտավոր է սույն գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում ոչ թե սահմանափակել նման ակտի վիճարկման իրավական հնարավորությունը, որն ուղղակի սահմանափակում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի իրավունքներն ու դրանց դատական պաշտպանության հնարավորությունը, այլ ընդլայնել որպես «նոր երևան եկած» գնահատելի այլ հանգամանքները դատավարական համապատասխան գործընթացների շրջանակներում քննելու և դրանց իրավագնահատման արդյունքում գործին արդար լուծում տալու միջոցները՝ ապահովելով անձի իրավունքների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածների և 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ և 19-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե անձն իր իրավունքների պաշտպանության նպատակով չի դիմել դատարան, այլ ընտրել է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով նախատեսված արտադատական միջոց (տվյալ դեպքում՝ վարչական մարմնին), նման իրավակարգավորումն ինքնին չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածն այն առումով, որով արգելափակվում է ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության վիճարկումը «նոր երևան եկած» իրավաչափ այլ հանգամանքների հիմքերով՝ հանգեցնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի երկրորդ մասին, 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ

նորմերի ուժը կորցնելու արդյունքում հաստատվելիք իրավական անվտանգությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասով, սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ հաշվի առնելով նաև հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**26 հունիսի 2015 թվականի
ՍԳՈ-1222**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 21.06.2014Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ /ՀՕ-67-Ն/ ԵՎ ԿԻՑ՝
ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն,
ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն ԵՎ ՀՕ-77-Ն ՕՐԵՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ (ՀՕ-246-Ն) 6-ՐԳ ԵՎ 10-ՐԳ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 հուլիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Մինասյանի, Մ. Խաչատրյանի, Ա. Ջեյնալյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.06.2014թ. ընդունված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն

կատարելու մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-67-Ն/ և կից՝ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն օրենքների, ինչպես նաև դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ և 10-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի թվով 33 պատգամավորների՝ 03.10.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Դիմողի միջնորդությամբ գործի դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 2015թ. հուլիսի 7-ին:

Ուսումնասիրելով գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ՀՀ կառավարության կողմից ՀՀ սահմանադրական դատարանի պահանջով ներկայացված պարզաբանումները, հետազոտելով վեճի առարկա օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը, ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն ՀՀ օրենքները ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են 2014թ. հունիսի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014թ. հունիսի 27-ին և ուժի մեջ են մտել 2014թ. հուլիսի 1-ից:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին (ՀՕ-246-Ն), ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010թ. դեկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 1-ից:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածով, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԳՌ-1142 որոշումն ու դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ:

ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն ՀՀ օրենքներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել համապատասխանաբար՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Եկամտային հարկի մասին», «Սնանկության մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներում, որոնք կոչված են ապահովելու «Կուտակային

կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի իրացումը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Նվազեցվող եկամուտները» վերտառությամբ վիճարկվող 6-րդ հոդվածը սահմանում է նվազեցվող եկամուտների տեսակները, որոնք, համաձայն նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի, հաշվի են առնվում հարկվող եկամուտը որոշելիս:

Տվյալ հոդվածը փոփոխվել է վիճարկվող ՀՕ-71-Ն օրենքով, ինչի արդյունքում որպես **նվազեցվող եկամուտ են համարվում նաև, ի թիվս այլնի, ՀՀ օրենսդրության համաձայն վճարված բոլոր տեսակի կենսաթոշակները**, այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում վճարվող կուտակային կենսաթոշակները («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարված կամավոր կենսաթոշակային վճարները՝ հարկ վճարողի հարկվող եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ՀՀ կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անձանց համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ), «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում հարկ վճարողի համար (օգտին) կատարած կուտակային վճարների հաշվին մինչև կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքի ձեռքբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացվող եկամուտները («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ), ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և դրամական միջոցները («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ):

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ «Եկամտային հարկի դրույքաչափերը» վերտառությամբ վիճարկվող 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է եկամտային հարկի դրույքաչափերը, իսկ նույն հոդվածի 2-9-րդ մասերով սահմանված են բացառությունները: Դրանցից երկուսը, որոնք սահմանված են նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, առնչվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքին: Մասնավորապես, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են հետևյալ բացառությունները.

«2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում կուտակված միջոցները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվազ ստացման դեպքում եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի

1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կամավոր կուտակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացված կենսաթոշակներից եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները»:

2. Գիմողը վերը նշված օրենքները վիճարկում է երկու տեսանկյունից՝ ընթացակարգային՝ կապված վերը նշված օրենքների ընդունման ընթացակարգերի պահպանվածության խնդրի և բովանդակային՝ կապված վերը նշված օրենքների տարբեր նորմերի սահմանադրականության խնդրի հետ:

Ընթացակարգային տեսանկյունից դիմողը, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 1-ին և 5-րդ հոդվածներին, «Իրավական ակտերի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներին, «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 18.07.2007թ. թիվ ՆՀ-174-Ն հրամանագրին, գտնում է, որ վիճարկվող իրավական ակտերի ընդունման ընթացակարգային խախտումներն այնքան էական են, որ բավարար հիմքեր են տալիս դրանք ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու համար:

Ի հիմնավորում վերը նշվածի, վկայակոչելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածը, ընդգծելով տվյալ հոդվածի այն դրույթները, որոնք վերաբերում են հանրային քննարկումներ կազմակերպելուն և դրանց իրականացման 15-օրյա ժամկետին, դիմողը փաստարկում է, որ առանց հանրային կարծիքի բացահայտման, այլընտրանքային տարբերակների, հնարավոր ծախսերի, օգուտների և հավանական ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների ստացման և իրավաստեղծ աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովման, անտեսելով օրենսդրության պահանջները, արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկվեց համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթը և նախատեսվեց, որ այն երեք ընթերցումներով պետք է ընդունվեր նույն արտահերթ նստաշրջանում, ընդ որում՝ առաջինից երկրորդ ընթերցումը՝ 24-ժամյա ռեժիմով:

Միաժամանակ, դիմողը փաստարկում է, որ համապատասխան օրենսդրական նախագծերը «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 18.07.2007թ. թիվ ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 39, 40, 42, 43, 46, 49 և 92-րդ կետերի պահանջների հիման վրա չեն անցել պատշաճ ընթացակարգ, չեն ներկայացվել ո՛չ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին, ո՛չ էլ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին: Բացի դրանից, ըստ դիմողի, դրանք պատշաճ կարգով չեն դրվել շրջանառության մեջ, չեն քննարկվել ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովում:

Արձանագրելով վիճարկվող իրավական ակտերում օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումներ՝ դիմողը գտնում է նաև, որ վիճարկվող իրավական ակտերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Դիմողը՝ 14.05.2015թ. և 06.07.2015թ. սահմանադրական դատարան ներկայացրած գրություններով ևս գտնում է, որ ՀՀ կառավարության կողմից տրված պարզաբանումները նույնպես համոզիչ չեն դիմումում առաջադրված հարցերի սպառիչ պատասխանն ունենալու համար:

Հարցին անդրադառնալով **բովանդակային տեսանկյունից**՝ դիմողն իր փաստարկները շարադրել է դիմումի 16-30-րդ կետերում: Մասնավորապես.

դիմողը սահմանադրականության խնդիր տեսնում է նրանում, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի նախաբանում ամրագրված է կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորությունը, ինչը, ըստ դիմողի, իրենից ներկայացնում է իրավունք, մինչդեռ օրենքի մյուս հոդվածներում այդ իրավունքը վերածվում է պարտադրանքի՝ կատարելու սոցիալական վճար, ընտրելու կենսաթոշակային ֆոնդ և կառավարիչ, կրելու ֆինանսական և աշխատուժի շուկաներից բխող և սոցիալական վճար կատարողի կամքից անկախ ռիսկեր: Նման կարգավորումը, ըստ դիմողի, «չի համապատասխանում «սոցիալական պետության» սահմանադրական նորմին (պետության պոզիտիվ պարտավորությունների) և Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքին»:

Դիմողը սահմանադրականության խնդիր է տեսնում նաև նրանում, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով սահմանված «սոցիալական վճար» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ պարզ չէ, թե սոցիալական վճարը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված հարկ, տուրք, պարտադիր այլ վճար, թե՛ ոչ:

Հղում կատարելով 2014 թվականի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքին, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2-րդ հոդվածին, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքին, արձանագրելով, որ սոցիալական վճարները ներառված չեն 2014 թվականի պետական բյուջեում, դիմողը գտնում է, որ եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքում «սոցիալական վճար» եզրույթն օգտագործվում է որպես ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված պարտադիր այլ վճար, ապա այն չի համապատասխանում Սահմանադրության նույն հոդվածով նախատեսված «պարտադիր այլ վճար» հասկացության իրավական բովանդակությանը, քանի որ պարտադիր վճարը չի ներկայացնում դրա հանրային-իրավական բնույթը, ըստ էության չի մուտքագրվում պետական բյուջե (չի հանդիսանում պետական բյուջեի եկամուտ), չի համապատասխանում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2-րդ հոդվածի 14-րդ մասով սահման-

ված «նպատակային բյուջետային մուտքեր» հասկացությանը, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը չի բացահայտում, թե պետությանը վերապահված որ իրավասությունների իրականացմանը պետք է ուղղված լինեին սոցիալական վճարները:

Ըստ այդմ, դիմողը գտնում է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով սահմանված «սոցիալական վճար» եզրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Դիմողը սահմանադրականության խնդիր է տեսնում նաև նրանում, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքում օգտագործվում է «սոցիալական վճարի պարտավորություն» եզրույթը, ինչը, ըստ դիմողի, չի համապատասխանում ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011թ. ՍԴՈ-975 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումներին, որոնք վերաբերում են «պարտավորություն» և «պարտականություն» եզրույթների տարբերակիչ հատկանիշներին:

Դիմողը գտնում է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը չի համապատասխանում ՍԴՈ-1142 որոշման մեջ սեփականության իրավունքի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին, պետական սեփականությունը կառավարելու` ՀՀ կառավարության իրավասությունը սահմանող` ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածին, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 3, 9 և 11-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածին, 168-րդ հոդվածի 3-րդ մասին, 279-րդ հոդվածի 3-րդ մասին, դիմողը գտնում է, որ, նախ` սոցիալական վճարը չի կարող հանդիսանալ անձի սեփականություն, երկրորդ` եթե սոցիալական վճարը պետական բյուջեի միջոց է, ապա այն Հայաստանի Հանրապետության սեփականությունն է, որը ենթակա է կառավարման ՀՀ կառավարության կողմից, ինչը չի կարող ներառել անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության կառավարումը: Ըստ այդմ էլ, դիմողը, արձանագրելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով սահմանված «սոցիալական վճար» եզրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, գտնում է, որ այդ հիմքով նույն օրենքի 7-րդ հոդվածով գործատուի վրա սոցիալական վճարներ հաշվարկելու, փոխանցելու կամ գանձելու պարտականություն դնելը, այդ պարտականությունը չկատարելու համար նույն օրենքի 71-րդ հոդվածով գործատուի համար պատասխանատվություն նախատեսելը խախտում է ՀՀ Սահմանադրության 8, 31 և 43-րդ հոդվածների պահանջները:

Ըստ դիմողի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի՝ սոցիալական վճար կատարողների շրջանակին, սոցիալական վճարի մեծությանը (տոկոսադրույքին) և սոցիալական վճարի աղբյուրներին վերաբերող դրույթները խախտում են «իրավունքի գերակայության, անձի՝ սոցիալական կամ տարիքային գործոնով պայմանավորված խտրականության և իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձ ուժի կիրառման արգելքի, ինչպես նաև իրավական համաչափության սահմանադրական նորմերն ու սկզբունքները»: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը հղում է կատարում ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-1142 որոշմանը և գտնում, որ սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի՝ սոցիալական վճար կատարողների շրջանակին, սոցիալական վճարի մեծությանը (տոկոսադրույքին) և սոցիալական վճարի աղբյուրներին վերաբերող դրույթների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները չեն արտացոլվել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքում:

Դիմողը մեջբերում է նաև ՍԳ-Ո-1142 որոշման 10 և 11-րդ կետերում սահմանադրական դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումները, որոնք վերաբերում են եկամտային հարկին, կենսասպահովման նվազագույն զամբյուրին, կենսասպահովման նվազագույն բյուջեին: Ընդհանրացնելով և նկատի առնելով Սահմանադրության 14.1-րդ կետի պահանջը՝ դիմողը գտնում է, որ սոցիալական վճարները չեն կարող վերաբերել որոշակի տարիքից ավելի ցածր կամ բարձր տարիքի անձանց, և որ «նույն տարիքային և աշխատանքային ոլորտի խտրականության արգելման սկզբունքը վերաբերում է նաև պետական բյուջեից կատարվող կուտակային վճարներին»:

Համադրելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի 2-րդ և 81-րդ հոդվածները՝ դիմողը սահմանադրականության խնդիր տեսնում է նրանում, որ, ի թիվս այլնի, սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու իրավունքի համար տրվել է ակնհայտ ոչ համաչափ ժամանակահատված, նշված իրավունքը տրվել է այդ իրավունքից մեկ անգամ օգտվելու հնարավորությամբ, մնան իրավունք տրվել է 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց, ինչի պարագայում նշված ժամկետից մեկ օր ուշ կամ մեկ օր շուտ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելն անձին գրկում է նշված իրավունքից, նշված իրավունքը չի բավարարում իրավական որոշակիության պահանջներն այն անձանց մասով, ովքեր աշխատանքը համատեղում են, որևէ ձևով չի հիմնավորվում սոցիալական վճարի կատարման պահանջի և այդ վճարը վճարելուց հրաժարվելու իրավունքի իրացման կապը 1974թ. և դրանից հետո ծնված անձանց համար, օրենսդիրը չի սահմանել հարկային մարմնին՝ սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումների ներկա-

յացման և այդ մարմնի կողմից դրանց ընդունման կարգը, առկա է իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձ ուժի կիրառման արգելքի, ինչպես նաև իրավական համաչափության սահմանադրական սկզբունքների խախտում՝ կապված կենսաթոշակային ֆոնդերի փոփոխության, կենսաթոշակային ֆոնդերի փայերի ժառանգման, կենսաթոշակային հաշվին առկա միջոցներն ստանալու վերաբերյալ դրույթների՝ 2015 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ: Այս կապակցությամբ դիմողը գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 3-րդ և 14.1-րդ հոդվածների, 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ինչպես նաև իրավական որոշակիության, անվտանգության, օրինական ակնկալիքների և համաչափության սկզբունքները:

Մասնավորապես, կենսաթոշակային հաշվին առկա միջոցներն ստանալու վերաբերյալ դրույթների՝ 2015 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելու հանգամանքի առնչությամբ դիմողը փաստարկում է, որ անձի կողմից իր սեփականության իրավունքի իրացումը տարածամկետելով՝ նախատեսված չէ այդ ժամանակահատվածի համար որևէ ողջամիտ փոխհատուցում:

Դիմողը փաստարկում է նաև, որ նախկին օրենքով գանձված կուտակային վճարներն արագընթաց ձևով քաղաքացիներին վերադարձնելու փոխարեն նախատեսված է, որ դրանց մի մասի վերադարձը 2015թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում, և այն էլ ոչ թե ամբողջ գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսային եկամուտները, այլ մայր գումարը՝ առանց պետական բյուջեից քաղաքացու սեփականությանը հանձնված գումարի և 2014թ. հունվարի 1-ից մինչև առնվազն 2015 թվականը կենսաթոշակային ֆոնդում առկա գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսային եկամուտները:

Դիմողը, հղում կատարելով սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1142 որոշման մեջ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումների, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 83.3 և 83.5-րդ հոդվածները, սահմանադրականության խնդիր է տեսնում նաև նրանում, որ վիճարկվող ակտերով լուծված չէ կենսաթոշակային համակարգի նկատմամբ հանրային վստահության հարցը, կուտակային կենսաթոշակային համակարգում գործում է բարդ վարչարարություն և առկա է վարչական ծախսերի մեծ անհրաժեշտություն:

Մասնավորապես, դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները կառուցված են «պետք է», «անհրաժեշտ է» դարձվածքներից բխող ցանկությունների վրա՝ ի խախտումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և, մասնավորապես, դրա 45-րդ հոդվածի, ինչպես նաև առկա են անորոշ և իրավական հետևանքներ չառաջացնող ձևակերպումներ ՀՕ-67-Ն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում և 39-րդ հոդվածի 3-րդ մասում, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքը չի նախատեսել համակարգի բնականոն գործունեության երաշխավորման համար ՀՀ կենտրոնական բանկի համարժեք հանրային-իրավական պատասխանատվության որևէ միջոց կամ վերջինիս տվել է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդ-

վածին հակասող իրավասություններ, նախատեսել է, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափը սահմանի ՀՀ կենտրոնական բանկը, մինչդեռ այն պետք է սահմանվեր օրենքով:

Գլխողը, հղում կատարելով սահմանադրական դատարանի՝ ՍԳՈ-1142 որոշման մեջ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումների, գտնում է, որ վիճարկվող ակտերով լուծված չէ նաև կենսաթոշակային համակարգի հուսալիության հարցը՝ կենսաթոշակային ֆոնդում առկա փայերի ինդեքսավորման կամ տարեկան գնաճով ճշգրտման խնդրի տեսանկյունից, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի երաշխավորվածության հարցը՝ իրավունքների և պարտականությունների հավասարակշռման, պարտականությունների հարցում թերացման համար համարժեք պատասխանատվության սահմանման և հետևողական իրացման տեսանկյունից:

Մասնավորապես, դիմողն անթույլատրելի է համարում, որ տարեկան գնաճով ճշգրտվում են միայն քաղաքացիների կատարած սոցիալական վճարները, այլ ոչ թե ամբողջ կուտակային հատկացման գումարը, երկրորդ՝ արձանագրելով, որ վիճարկվող ակտերից և ոչ մեկով սահմանված չէ «կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտությունը, գտնում է, որ այն, մի կողմից, չի կարող երաշխավորել կուտակային հատկացումների օգտագործման կանոնների միատեսակ կիրառությունը, մյուս կողմից՝ ակնհայտ հակասություն կարող է առաջանալ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շրջանակներում կուտակային համակարգի նպատակի առումով, երբ այն ներկայացվում է, մի կողմից, որպես ապագա կենսաթոշակառուներին արժանապատիվ կենսաթոշակ երաշխավորելու համակարգ, իսկ մյուս կողմից՝ որպես երկրի տնտեսությանն անհրաժեշտ «երկար փողի ձևավորման» ինստիտուտ:

Գլխումի 31-րդ կետում դիմողն ամփոփում է դիմումի 16-30-րդ կետերում շարադրված իր փաստարկները և փաստում, որ վիճարկվող իրավական ակտերը պահպանել են մի շարք ձևակերպումներ, որոնք, իր կարծիքով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արդեն իսկ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Մասնավորապես, դիմողը գտնում է, որ կուտակային պարտադիր վճարը սոցիալական նպատակային վճար վերանվանելով՝ չի փոխվել դրա իրավական բովանդակությունը, չի վերանայվել պարտադիր վճարի չափի սահմանման տրամաբանությունը, չի վերացվել գործատուի համար վերջինիս սեփականության իրավունքի հակասահմանադրական սահմանափակումը, ըստ էության չեն վերանայվել մասնավոր ֆոնդերում կուտակված միջոցների անարդյունավետ օգտագործման նկատմամբ պատասխանատվության մեխանիզմները, անտեսվել են իրավունքի գերակայության և իրավական որոշակիության, սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության, համաչափության և համամասնության սահմանադրական սկզբունքները, համակարգի նկատմամբ հանրային վստահությունը ձևավորող կառուցակարգերի հստակությունն ու պատշաճ վերահսկողությունը, գործատու-աշխատող-պետություն շղթայի գործողության սկզբունքը:

3. Պատասխանողը խնդրին անդրադառնում է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքը ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1142 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով օրենսդրական կարգավորումների տեսանկյունից և դիմողի կողմից առաջ քաշված փաստարկների տեսանկյունից՝ ընթացակարգային և բովանդակային առումներով:

Խնդրին անդրադառնալով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքը ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1142 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով օրենսդրական կարգավորումների տեսանկյունից՝ պատասխանողը սահմանադրական դատարանի նշված որոշման վերլուծության հիման վրա արձանագրում է, որ, **առաջին**՝ նոր օրենսդրական կարգավորումների արդյունքում, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1142 որոշման պահանջների, կուտակային վճարը փոխարինվեց նպատակային սոցիալական վճարով, **երկրորդ**՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքն ամբողջությամբ գործողության մեջ դնելու համար պահանջվում է տևական ժամանակահատված, օրենքում նախատեսվեցին անցումային դրույթներ՝ անձին իրավունք վերապահելով մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար հրաժարվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից, **երրորդ**՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014թ. հուլիսի 1-ից հանրային ծառայողների համար նախատեսվում էր իրականացնել աշխատավարձերի նոր համակարգի ներդրում և աշխատավարձերի չափերի բարձրացում, որի շրջանակներում տեղի չի ունենա տնօրինվող եկամտի նվազում, կենսաթոշակային նոր համակարգի ներդրման առաջին փուլում ընգրկվեցին հանրային ծառայության համակարգի պետական աշխատողները, **չորրորդ**՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված և 2014 թվականի հուլիսի 1-ից հետո վարձու աշխատողի կարգավիճակ ձեռք բերած, նոտարի պաշտոնում նշանակված, անհատ ձեռնարկատեր դարձած այն անձանց համար, որոնք 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ չեն հանդիսացել վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, սահմանվեց կենսաթոշակային նոր համակարգում ընդգրկվելու կամավորության սկզբունքը, որը գործում է երեք տարի, **հինգերորդ**՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՄԳՈ-1142 որոշմամբ հակասահմանադրական ճանաչված նորմերը՝ բացառապես օրենքով սահմանվեցին երաշխիքային ֆոնդի տնօրինման կարգն ու պայմանները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված), կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման քանակային և արժույթային սահմանափակումները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված), ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված), սոցիալական վճարները տարեկան գնաճով ճշգրտելու կարգը («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հավելված):

Խնդրին անդրադառնալով **ընթացակարգային տեսանկյունից** և արձանա-

գրելով, որ սույն գործով վիճարկվող իրավական ակտերն ընդունվել են ՀՀ կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում՝ պատասխանողը, հղում կատարելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 39 և 51-րդ հոդվածներին, նույն օրենքի՝ խորհրդարանական լսումների վերաբերյալ դրույթներին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի 4-րդ մասին, արձանագրում է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում օրենքի նախագծերի քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ ներկայացնելու պարտադիր իրավական պահանջը վերաբերում է հերթական նստաշրջաններին, մինչդեռ վիճարկվող իրավական ակտերն ընդունվել են արտահերթ նստաշրջանի շրջանակներում, որը բացառում էր մշտական հանձնաժողովների կողմից եզրակացություններ ներկայացնելու իրավական հնարավորությունը, իսկ օրենքն այս կամ այն նախագիծը հանրային քննարկման դնելու իրավասությունը թողել է հանձնաժողովների հայեցողությանը: Ընդ որում, խորհրդարանական լսումները, որպես կանոն, իրականացվում են հերթական նստաշրջանների ընթացքում: Միաժամանակ, արձանագրելով, որ հասարակական քննարկումների կազմակերպումն առավելագույնս նպաստում է իրավական ակտերի նախագծերի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը, պատասխանողը նշում է, որ արտահերթ նստաշրջանի ընթացքում վիճարկվող իրավական ակտերն ընդունելու հանգամանքը պայմանավորված էր վերջիններիս նախագծերի ընդունման հրատապությամբ՝ պայմանավորված կուտակային կենսաթոշակային օրենսդրության իրավակարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի որոշմանը՝ այդ որոշման մեջ նշված ժամկետում, համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Խնդրին անդրադառնալով **բովանդակային տեսանկյունից** և հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 8, 37, 43, 45 և 47-րդ հոդվածներին, ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳ-Ո-753 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումներին, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիային կից №1 արձանագրության՝ «Սեփականության պաշտպանությունը» վերտառությամբ 1-ին հոդվածին, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին՝ պատասխանողը գտնում է, որ կատարված փոփոխությունների արդյունքում կուտակային կենսաթոշակային օրենսդրության իրավակարգավորումները սոցիալական վճարի մասով համապատասխանեցվել են ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, մասնավորապես, **առաջին** սոցիալական վճարները կրում են հանրային-իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում և վճարվում են հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների՝ կենսաթոշակային համակարգի շրջանակներում, **երկրորդ**՝ սոցիալական վճարները մուտքագրվում են պետական բյուջե՝ պետական բյուջեի հատուկ հաշվին փոխանցվելու միջոցով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է նաև, որ սոցիալական

վճարն ամբողջությամբ տեղավորվում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի կարգավորման տիրույթում, և սոցիալական վճար կատարելու պարտականությունը չի կարող դիտարկվել որպես անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի սահմանափակում կամ մարդու կամաարտահայտությունից՝ անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակումից:

Պատասխանողը նշում է, որ եթե նախկինում «Կուտակային կենսաթոշակների մասին» 22.12.2010թ. ՀՕ-244-Ն օրենքով քաղաքացին կատարում էր պարտադիր կուտակային վճարներ, որոնց դիմաց ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը հանդիսանում էին տվյալ քաղաքացու սեփականությունը, ապա սոցիալական վճարի պարագայում գումարները փոխանցվում են ՀՀ պետական բյուջե: Եվ եթե քաղաքացին չունենա իր հաշվում հաշվառվող կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ սեփականության իրավունք, որը պաշտպանված է Սահմանադրությամբ և օրենքներով, ցանկացած այլ պաշտպանության երաշխիք կլինի շատ ավելի թույլ:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների առավելագույն պաշտպանվածություն ապահովելու նպատակով օրենքում ներառվեց կենսաթոշակային ֆոնդերի փայերի սեփականության իրավունքը ՀՀ քաղաքացիներին փոխանցելու մեխանիզմը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես՝ պետությունը քաղաքացիների կատարած սոցիալական վճարներն ուղղում է հատուկ տեսակի արժեթղթերի՝ կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերմանը: Տվյալ դեպքում իրավահարաբերության **օբյեկտը արժեթուղթն է**, որի տիրապետումը, օգտագործումը, տնօրինումը, դրանով հավաստվող իրավունքների փոխանցումը սահմանափակված են որոշակի նպատակային նշանակությամբ: Պատասխանողի կարծիքով՝ նշվածը վկայում է, որ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արժեթղթի վերաբերյալ իրավակարգավորումներն ամբողջությամբ համահունչ են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ գլխով արժեթղթերի նկատմամբ սահմանված պահանջներին:

Արձանագրելով, որ պետությունն արժեթղթերը ձեռք է բերում ոչ թե իր, այլ քաղաքացիների օգտին՝ յուրաքանչյուր քաղաքացու համար իր կատարած սոցիալական վճարի և պետության կողմից կատարված հավելավճարի չափով, որ դրա արդյունքում կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդունման համար անհրաժեշտ է նաև երրորդ կողմի՝ քաղաքացու կամաարտահայտությունը, պատասխանողը նշում է, որ քաղաքացու կամաարտահայտության համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը, որի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում լուծությունը համարվում է գործարք կնքելու կամքի արտահայտություն:

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առնչությամբ դիմողի այն փաստարկին, որ սոցիալական վճարները չեն կարող վերաբերել որոշակի տարիքից ավելի ցածր կամ բարձր տարիքի անձանց, կամ որոշակի ոլոր-

տում աշխատող անձանց՝ պատասխանողը, հղում կատարելով խտրականության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, նշում է, որ թեև օրենքը տարբերակված մոտեցում է դրսևորում որոշակի կատեգորիայի անձանց նկատմամբ, սակայն այդպիսի մոտեցումը պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով: Պատասխանողը նշում է նաև, որ կուտակային կենսաթոշակային համակարգի անցած բազմաթիվ երկրներ, որոնց սահմանադրություններում ևս ամրագրված է տարիքային և այլ հատկանիշներից ելնելով խտրականության արգելքը, կուտակային կենսաթոշակային համակարգին անցում են կատարել ոչ թե անմիջապես, այլ՝ փուլերով: Տվյալ դեպքում, օրենսդիրը՝ սոցիալական նպատակային վճարը նախատեսելով միայն 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց համար, հիմք է ընդունել պետության կողմից կենսաթոշակային ապահովման փաստացի հնարավորությունը: Ինչ վերաբերում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային այն ծառայողներին, որոնք օրենքի անցումային դրույթների ուժով չեն կարող հրաժարվել սոցիալական վճարներ կատարելուց, պատասխանողը նշում է, որ նման իրավակարգավորումն ընդունվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թվականի հուլիսի 1-ից հանրային ծառայողների աշխատավարձերը, որոնք վճարվում են պետական բյուջեից, զգալիորեն բարձրացան, ինչպես նաև հաշվի է առնվել նշված անձանց կողմից առաջիկայում նման վճարներ կատարելու փաստացի հնարավորությունը: Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳ-Ո-1142 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին հակասող չի ճանաչել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախկին խմբագրությամբ գործող 5-րդ հոդվածը, որը ևս համանման կարգավորում էր նախատեսում:

Անդրադառնալով օրենքի նախաբանում ամրագրված՝ կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորության և օրենքի հաջորդ հոդվածներում սոցիալական վճարներ կատարելու՝ դիմողի կարծիքով պարտադրանքի վերաբերյալ դիմողի փաստարկներին և արձանագրելով, որ սոցիալական ապահովության ոլորտում պետությունն իր պոզիտիվ պարտականությունը կատարում է պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ որպես պետական բյուջեի միջոցների ձևավորման աղբյուրներ առաջին հերթին հանդիսանում են անձանց կողմից վճարվող հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, պատասխանողը նշում է, որ նշված հանգամանքով է պայմանավորված հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարներ կատարելու սահմանադրական պարտականության կարևորությունը հասարակության և պետության համար: Ըստ պատասխանողի՝ այդպիսի պարտականություններից է սոցիալական վճարների կատարումը:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ ՀՕ-71-Ն ՀՀ օրենքը չի անդրադարձել կենսաապահովման նվազագույն բյուջեի չափով եկամուտների նվազեցման, նվազագույն աշխատավարձը և սոցիալական վճարը չհարկելու խնդիրներին, պատասխանողը նշում է, որ 21.06.2014թ. ՀՀ Ազգային ժողովի կող-

մից ընդունված կուտակային կենսաթոշակային օրենսդրության վերաբերյալ նախագծերի փաթեթում ներառվեց նաև «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, **նպատակային սոցիալական վճարները**, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները:

Անդրադառնալով սոցիալական փաթեթը որպես սոցիալական վճարի աղբյուր հանդիսանալու վերաբերյալ դիմողի փաստարկին՝ պատասխանողը նշում է, որ դիտարկվող իրավակարգավորումը նպատակ ունի ապահովելու սոցիալական փաթեթի գումարների առավելագույն օգտագործումը, որոնք տարվա ընթացքում հաճախ չեն օգտագործվում կամ օգտագործվում են մասնակի:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ օրենքով չի ապահովվել գործատուների մասնակցությունը սոցիալական վճարների կատարման գործընթացին, պատասխանողը նշում է, որ գործատուների մասնակցությունը ցանկացած պարագայում առկա է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատավարձից անվանական կատարվող վճարումները, ի վերջո, գործատուի կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ են:

Պատասխանողը նշում է նաև, որ գործատուի մասնակցությունն առավել առարկայական է դառնում նվազագույն աշխատավարձի մասով: Այս կապակցությամբ հղում կատարելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին՝ պատասխանողն արձանագրում է, որ նվազագույն աշխատավարձ ստացող անձանց համար սոցիալական վճարներ պետք է կատարի գործատուն:

Հղում կատարելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասին՝ պատասխանողը նշում է նաև, որ սոցիալական փաթեթից օգտվող անձինք իրավունք ունեն սոցիալական վճարների կատարմանն ուղղելու սոցիալական փաթեթի գումարները, որոնք ևս պետություն-գործատուի կողմից կատարվող վճարումներ են:

Անդրադառնալով «պարտավորություն» և «պարտականություն» եզրույթների վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ, նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանը ՄԴՈ-975 որոշման մեջ «պարտականություն» և «պարտավորություն» եզրույթների բովանդակությունը բացահայտել է կոնկրետ գործով, երկրորդ՝ սոցիալական վճարի պարտավորությունն իր էությանը համարժեք է «պարտականություն» եզրույթին՝ որպես հանրային-իրավական բնույթի հարաբերությունների բաղադրիչ:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի իրացման ժամկետային սահմանափակման, ինչպես նաև նշված իրավունքը մեկ անգամ օգտագործելու հետ, և արձանագրելով, որ իրավունքների իրականացումը հաճախ ուղեկցվում է որոշակի ժամկետների սահմանմամբ, և որ այդ ժամկետներն ինքնին պետք է այնպիսին լինեն, որ խելա-

մտորեն ապահովեն նախատեսված իրավունքների իրականացման հնարավորությունը, պատասխանողը գտնում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը սահմանել է խելամիտ ժամկետ, որը բավարար է սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու իրավունքի իրականացման համար: Միաժամանակ, պատասխանողը նշում է, որ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու հետ կապված հարցերը մանրամասն կարգավորվել են ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի թիվ 826-Ն որոշմամբ:

Դիմողի այն փաստարկի առնչությամբ, ըստ որի՝ տարեկան գնաճով ճշգրտվում են միայն քաղաքացիների կատարած սոցիալական վճարները, այլ ոչ թե ամբողջ կուտակային վճարները, պատասխանողը նշում է, որ սոցիալական վճարումների տարեկան գնաճով ճշգրտման հանգամանքը պայմանավորված է վերջիններիս համար նվազագույն երաշխիքներ ապահովելու անհրաժեշտությամբ, որն անձին հնարավորություն կտա ստանալու առնվազն այնքան, որքան վճարել է՝ պահպանելով վճարած գումարների գնողունակությունը:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ՀՀ կենտրոնական բանկին կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավական հնարավորության ընձեռումը հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջներին, պատասխանողը նշում է, որ օրենքը ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահում ընդունելու ոչ թե կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար պարտականություններ, այլ լրացուցիչ պահանջներ նախատեսող իրավական ակտեր, որը բխում է իրավիճակին արագ արձագանքելու և դրանով իսկ կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

Կենսաթոշակային ֆոնդի փայերի պաշտպանվածության վերաբերյալ դիմողի մտահոգության առնչությամբ պատասխանողը նշում է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի կարգավիճակը՝ սահմանելով կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի ձեռքբերման կարգը: Պատասխանողը նշում է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 968.9-րդ հոդվածով ֆոնդի կառավարչի համար նախատեսված է քաղաքացիաիրավական պատասխանատվություն: Իր հերթին, սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է նաև քրեաիրավական նորմերով:

Ամփոփելով՝ պատասխանողն արձանագրում է, որ կենսաթոշակային օրենսդրության ոլորտի ներկա կարգավորումներն ուղղված են սոցիալական ապահովության ոլորտում պետության պոզիտիվ պարտականությունների կատարմանը, որի շրջանակներում կերաշխավորվի կատարված վճարումներին համարժեք կենսաթոշակ, կապահովվի կենսաթոշակառուների արժանապատիվ կենսամակարդակը և հնարավոր սոցիալական խնդիրների հաղթահարումը: Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից

21.06.2014թ. ընդունված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-67-Ն) և կից ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն օրենքների, ինչպես նաև դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 10-րդ հոդվածների դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

4. ՀՀ կառավարությունը սահմանադրական դատարանի պահանջով 24.12.2014 թվականին ներկայացրել է դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ՝ խնդրին անդրադառնալով երկու տեսանկյուններից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքը ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով տրված լուծումների տեսանկյունից և դիմողի կողմից առաջ քաշված փաստարկների տեսանկյունից՝ բովանդակային և ընթացակարգային առումներով: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը 31.03.2015թ. թիվ 01/13.11/5050-15 գրությամբ ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել քննության առարկա գործին առնչվող լրացուցիչ պարզաբանումներ և կից փաստաթղթեր՝ անհամաձայնություն արտահայտելով դիմումում առաջ քաշված հարցադրումների վերաբերյալ:

Խնդրին անդրադառնալով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքը ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով ձեռնարկված լուծումների տեսանկյունից՝ ՀՀ կառավարությունը, **նախ**՝ մեջբերում է ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 որոշման եզրափակիչ մասի դրույթները, **երկրորդ**՝ սահմանադրական դատարանի նշված որոշման վերլուծության հիման վրա արձանագրում է, որ կուտակային վճարի փոխարեն սահմանվել է նպատակային սոցիալական վճարը, որը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական բյուջե վճարվող նպատակային վճար է և, որպես հարկային եկամուտ, պետական բյուջեի եկամտի աղբյուր է, **երրորդ**՝ վերոշարադրյալի հիման վրա եզրակացնում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՍԳՈ-1142 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի են առնվել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, և որ սոցիալական վճարն ամբողջությամբ տեղավորվում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի կարգավորման տիրույթում, **չորրորդ**՝ արձանագրում է, որ ՀՀ պետական բյուջե վճարվող սոցիալական վճար սահմանելու միջոցով լուծում է տրվել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հետ կապված խնդրին:

ՀՀ կառավարությունը նշում է, որ եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքով քաղաքացու կատարած պարտադիր կուտակային վճարների դիմաց ձեռք

բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը հանդիսանում էին քաղաքացու սեփականությունը, ապա գործող իրավակարգավորման պարագայում սոցիալական վճարների գումարները փոխանցվում են պետական բյուջե: Պետությունը քաղաքացիների կատարած սոցիալական վճարներն ուղղում է հատուկ տեսակի արժեթղթերի՝ կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերմանը: Տվյալ դեպքում իրավահարաբերության **օբյեկտն արժեթուղթն է**, և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արժեթղթի գաղափարն ամբողջությամբ տեղավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ գլխով արժեթղթերի նկատմամբ սահմանված պահանջների շրջանակներում:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ պետությունն արժեթղթերը ձեռք է բերում ոչ թե իր, այլ քաղաքացիների օգտին, և դրա արդյունքում կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդունման համար անհրաժեշտ է նաև երրորդ կողմի՝ քաղաքացու կամահայտությունը, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդունման համար դիմումներ գրելու ավելորդ վարչարարությունից խուսափելու համար ՀՀ կառավարությունն օգտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ մասով ընձեռված հնարավորությունից, որի համաձայն՝ լուծությունը համարվում է գործարք կնքելու կամքի արտահայտություն:

ՀՀ կառավարությունն արձանագրում է նաև, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու և տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴ-Ո-1142 որոշման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով օրենքով են սահմանվել.

- երաշխիքային ֆոնդի տնօրինման կարգն ու պայմանները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված),
- կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման քանակային և արժույթային սահմանափակումները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված),
- ֆոնդերի կառավարիչների ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված),
- կատարված սոցիալական վճարները տարեկան գնաճով ճշգրտելու կարգը («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հավելված):

Խնդրին անդրադառնալով դիմողի կողմից առաջ քաշված և ՀՀ կառավարության՝ վերը նշված լուծումների տիրույթից դուրս մնացած մյուս փաստարկների տեսանկյունից՝ բովանդակային և ընթացակարգային առումով, ՀՀ կառավարությունը վերոնշյալ 24.12.2014թ. թիվ 01/13.7/21785-14 և 31.03.2015թ. թիվ

01/13.11/5050-15 պարզաբանումների շրջանակներում իր դիրքորոշումներն է շարադրել դիմողի կողմից ներկայացված փաստարկների առնչությամբ: Մասնավորապես, դիմումում շարադրված այն փաստարկների առնչությամբ, որոնք վերաբերում են վիճարկվող ակտերի ընդունման ընթացակարգի պահպանվածությանը, ներառյալ՝ հանրային քննարկումներ կազմակերպելուն, ՀՀ կառավարությունը, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածին, արձանագրում է, որ հանրային քննարկումներ իրականացնելու ձևերն ունեն պարտադիր (նորմատիվ իրավական ակտի նախագիծն ինտերնետային կայքում հրապարակելը) և ոչ պարտադիր (շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ, բաց լսումներ, քննարկումներ, հասարակական հարցումներ) բնույթ, որոնք բոլորն էլ պահպանվել են վիճարկվող իրավական ակտերն ընդունելիս: Մասնավորապես, ի թիվս այլնի, 2014թ. ապրիլի 2-ից սկսած հարցը դարձավ հասարակության տարբեր զանգվածների, բոլոր շահագրգիռ անձանց քննարկման և ուսումնասիրության առարկա, որի արդյունքում ընդունվեցին վիճարկվող իրավական ակտերի նախագծերը: Բերվում է նաև թվով 17 զանգվածային լրատվամիջոցների ցանկը, որոնցում հրապարակվել է նախատեսվող օրենսդրական փոփոխությունների ամփոփ նկարագիրը: Անդրադարձ կատարելով նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներին, ինչպես նաև ներկայացնելով օրենսդրական նախաձեռնության իրացման ողջ ընթացքը, ՀՀ կառավարությունը գտնում է, որ «...վիճարկվող իրավական ակտերի ընդունման և «օրենք» հանդիսանալու գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան»:

Դիմումի 21-րդ կետում առաջ քաշված փաստարկների առնչությամբ արձանագրելով, որ բոլոր սոցիալական պետություններում էլ մարդիկ ազատված չեն հարկային, սոցիալական կամ այլ վճարներ կատարելու պարտավորությունից, ինչն ամենևին էլ չի հակասում երկրի սոցիալական բնույթին, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց բացի, նաև պետության պոզիտիվ պարտականությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, և որ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով, ՀՀ կառավարությունը փաստում է, որ տվյալ դեպքում օրենսդրի հայեցողությանն է վերապահված սոցիալական ապահովության ծավալի ու ձևերի ընտրությունը, և որ տվյալ ոլորտում համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:

Դիմումում ներկայացված՝ որոշ հասկացությունների անհստակության վերաբերյալ փաստարկների առնչությամբ ՀՀ կառավարությունը պարզաբանում է, որ օրենքներում կարող են լինել առանձին դրույթներ, որոնք ոչ միանշանակ են ընկալվում: Տվյալ դեպքերի համար նախատեսված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը:

Դիմողի կողմից առաջ քաշված՝ «պարտավորություն» և «պարտականություն» եզրույթների վերաբերյալ փաստարկների առնչությամբ արձանագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011թ. ՄԴՈ-975 որոշման մեջ նշված եզրույթները գնահատվել են բացառապես քաղաքացիաիրավական հարաբերությունների դաշտում, ՀՀ կառավարությունը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները տվյալ դեպքում կիրառելի չեն:

Դիմումում առաջ քաշված այն դիրքորոշման առնչությամբ, համաձայն որի՝ սոցիալական վճարների վճարման պարտավորությունից ազատումը որոշակի տարիքային կամ աշխատանքային խմբերի համար հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի դրույթների խախտման՝ կախված տարիքից և աշխատանքային ոլորտից, ՀՀ կառավարությունը գտնում է, որ տվյալ դեպքում հանրային և մասնավոր ոլորտների աշխատողների միջև տարբերակված մոտեցումն ունի օբյեկտիվ և պատճառաբանված հիմքեր՝ կապված բաշխողական կենսաթոշակային համակարգից կուտակային կենսաթոշակային համակարգին 2 փուլով՝ սկզբում՝ հանրային, հետո մասնավոր ոլորտների աշխատողների համար, անցման հետ, իսկ 2017 թվականի հուլիսի 1-ից համակարգը գործելու է բոլորի համար: Բացի դրանից, ՀՀ կառավարությունը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ միևնույն իրավիճակում գտնվելու հանգամանքը, քանի որ, ի տարբերություն մասնավոր ոլորտի աշխատողների, հանրային ոլորտի աշխատողների աշխատավարձը 2014թ. հուլիսի 1-ից բարձրացվեց, ինչի արդյունքում սոցիալական վճարների կատարման պարտավորությունը վերջիններիս կենսամակարդակում էական փոփոխություններ չի առաջացնի, իսկ մասնավոր հատվածին տրվեց ժամանակ մինչև 2017 թվականը՝ սոցիալական վճարներ կատարելու պարտավորության հետ հարմարվելու համար: ՀՀ կառավարությունը նկատում է նաև, որ ՄԴՈ-1142 որոշմամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի՝ պարտադիր կուտակային վճար կատարողների շրջանակը սահմանող նորմերը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր չեն ճանաչվել, իսկ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր այն մասով, որով այդ նորմերը չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականությունը հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման:

Դիմումի նույն կետում առաջ քաշված՝ սոցիալական ապահովության միջոցները հարկով փոխարինելու վտանգավորության վերաբերյալ դիրքորոշման առնչությամբ ՀՀ կառավարությունը, **կիսելով այդ մտահոգությունը**, արձանագրում է, որ իր կողմից առաջարկվել է կուտակային կենսաթոշակների ձևավորման համար վճարվող գումարներն առանձնացնել հարկերից՝ իրենց ընդգծված նպատակային նշանակությամբ:

Դիմումի նույն կետում առաջ քաշված՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 10-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ դիրքորոշման առնչությամբ, որը վերաբերում է նրան, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-71-Ն օրենքը չի անդրադարձել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով կենսաապահովման նվազագույն բյուջեի չափով եկամուտների նվազեցման, նվազագույն աշխատավարձը և սոցիալական վճարը չհարկելու խնդրին, ՀՀ կառավարությունը, վկայակոչելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, արձանագրում է, որ այդ խնդրին վիճարկվող իրավական ակտերով անդրադարձ է կատարված: Մասնավորապես, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սոցիալական վճարները չեն հարկվում: Այնուհետև նշում է, որ սոցիալական վճարները հարկվում են (չեն նվազեցվում), սակայն չի հարկվում պարտադիր կուտակային կենսաթոշակը, և հակառակը՝ կամավոր կենսաթոշակային վճարները չեն հարկվում (նվազեցվում են), սակայն հարկվում է կամավոր կուտակային կենսաթոշակը՝ հիմնված այն տրամաբանության վրա, որ ցանկացած եկամուտ պետք է հարկվի որևէ փուլում՝ միայն մեկ անգամ:

Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որոնք վերաբերում են սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու իրավունքի համար տրված ժամանակահատվածին, նման իրավունքը միայն 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց տրամադրելուն, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ շուրջ կես տարին առավել քան բավարար ժամանակահատված է կողմնորոշվելու ապագա 3 տարիների ընթացքում սոցիալական վճարների կատարումից հրաժարվելու կամ չհրաժարվելու համար, ինչը վերաբերում է նաև նոր աշխատաշուկա մտած անձանց՝ հաշվի առնելով այն, որ 2017թ. հուլիսի 1-ից կուտակային կենսաթոշակային համակարգում ընդգրկված են լինելու 1974 թվականից հետո ծնված բոլոր աշխատող քաղաքացիները:

Դիմողի առաջ քաշած այն փաստարկի առնչությամբ, որը վերաբերում է հարկային մարմնին սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումների ներկայացման և նրա կողմից ընդունման կարգին, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ այդ հարցը կարգավորված է ՀՕ-67-Ն օրենքի անցումային դրույթներով և ՀՀ կառավարության 31.07.2014թ. 826-Ն որոշմամբ:

Ինչ վերաբերում է դիմողի այն հարցադրմանը, որը վերաբերում է սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու իրավունքի՝ իրավական որոշակիության պահանջները չբավարարելուն՝ այն անձանց մասով, ովքեր աշխատանքը համատեղում են, ՀՀ կառավարությունը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծության հիման վրա արձանագրում է, որ պետական և մասնավոր ոլորտներում համատեղությամբ աշխատողը պարտավոր է կատարել սոցիալական վճարներ բոլոր եկամուտներից:

Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որոնք վերաբերում են կենսաթոշակային հաշվին առկա միջոցները ստանալու վերաբերյալ դրույթների՝ 2015 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելու հանգամանքին և նախկին օրենքով գանձված կուտակային վճարները քաղաքացիներին վերադարձնելու կարգին, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ նախկինում կատարված կուտակային վճարների հաշվին ձեռք բերված փայերի մարման և ձևավորված գումարի ստացման դիմումների ներկայացման համար ողջամիտ ժամկետի սահմանումը պայմանավորված է անընդհատ ստացվող դիմումների բավարարման համար ակտիվները ցածր գնով վաճառելու, իսկ ավանդների դեպքում՝ հաշվարկված տոկոսները կորցնելու դեպքերից խուսափելու համար, քանի որ կենսաթոշակային ֆոնդերում հավաքագրված գումարները ներդրվում են ակտիվներում, այդ թվում՝ արժեթղթերում և ժամկետային ավանդներում: Ընդ որում, մասնակիցներին վճարվում է նաև իրենց կատարած կուտակային վճարների հաշվին մինչև մարման օրը ներառյալ վաստակած եկամուտների գումարը:

Անդրադառնալով նախկին օրենքով գանձված կուտակային վճարները քաղաքացիներին վերադարձնելու կարգին՝ ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ ՍԳՈ-1142 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել պարտադիր կուտակային վճարին վերաբերող դրույթները, ինչի արդյունքում նոր իրավակարգավորմամբ հարկ է վերականգնել նախկին՝ մինչև խախտումը եղած դրույթումը, այն է՝ քաղաքացիներին վերադարձնել կատարված կուտակային վճարները, իսկ պետությանը վերադարձնել վերջինիս կողմից կատարված հավելավճարները:

Դիմողի կողմից առաջ քաշված այն փաստարկների առնչությամբ, որոնք վերաբերում են ՀՕ-67-Ն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում և 39-րդ հոդվածի 3-րդ մասում առկա ձևակերպումներին, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափի սահմանման և մի շարք այլ իրավասություններ ՀՀ կենտրոնական բանկին վերապահելուն, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ ՀՕ-67-Ն օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասում խոսքը վերաբերում է հայտնի վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշներին համապատասխանող օտարերկրյա բանկերին, և օրենքը սահմանում է նվազագույն ներդրումային վարկանիշ, որից ցածր վարկանիշ ունեցող բանկում միջոցների ներդրումն արգելվում է:

Անդրադառնալով կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափի սահմանման իրավասությունը ՀՀ կենտրոնական բանկին վերապահելու վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ, նախ՝ վերը նշված ծախսերից մեկը, որը վերաբերում է ֆոնդի կառավարչի պարզակազմարին, սահմանված է ՀՕ-67-Ն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ մյուս ծախսերի առավելագույն չափի սահմանման իրավասությունը ՀՀ կենտրոնական բանկին վերապահելը պայմանավորված է այդպիսի ծախսերի սահմանմանը ճկուն և մասնագիտական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությամբ, երկրորդ՝ օրենքով նշված ծախսերի մեծ չափի սահմանումը

կհանգեցնի անհարկի մեծ ծախսերի, իսկ փոքր չափի սահմանումը՝ կխաթարի համակարգի ֆինանսական կայունությունը:

Բացի դրանից, ՀՀ կենտրոնական բանկին այլ իրավասություններ վերապահելու առնչությամբ ՀՀ կառավարությունը գտնում է, որ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների պարտականությունները սահմանված են օրենքով, իսկ ՀՀ կենտրոնական բանկը կարող է ընդունել կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար օրենքից բխող լրացուցիչ պահանջներ սահմանող իրավական ակտեր: Բացի դրանից, օրենքի շրջանակներում և օրենքից բխող գերատեսչական ակտեր ընդունելու իրավասությունը ծայրահեղ կարևոր նշանակություն ունի ֆինանսական ոլորտը կարգավորող և վերահսկող մարմնի համար:

Դիմումի 29 և 30-րդ կետերում առաջ քաշված փաստարկների առնչությամբ, որոնք վերաբերում են նրան, որ տարեկան գնաճով ճշգրտվում են միայն քաղաքացիների կատարած սոցիալական վճարները, այլ ոչ թե ամբողջ կուտակային հատկացման գումարը, որ վիճարկվող ակտերից և ոչ մեկով սահմանված չէ «կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտությունը, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ խոսքը չի վերաբերում սոցիալական վճարների կամ կուտակային հատկացումների ինդեքսավորմանը, այլ իրավակարգավորման տրամաբանությունն այն է, որ ցանկացած քաղաքացի ստանա առնվազն այնքան, որքան վճարել է՝ պահպանելով վճարած գումարների գնողունակությունը:

Անդրադառնալով պաշտպանության և պատասխանատվության մեխանիզմների՝ ՀՀ կառավարությունը վկայակոչում է սեփականության իրավունքի և դրա պաշտպանության վերաբերյալ ՀՕ-67-Ն օրենքի 13-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական օրենսգրքերը, արձանագրում է, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարմանը ներգրավված են այնպիսի վստահելի և մեծ փորձ ունեցող կազմակերպություններ, ինչպիսիք են «Ամունդի-ԱԿԲԱ ասեթ մենեջմենթ» և «Յեկվադրատ ամպեգա» փակ բաժնետիրական ընկերությունները, օրենքով սահմանված են ներդրումներ կատարելու շրջանակը և սահմանափակումները:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ վիճարկվող ակտերից և ոչ մեկով սահմանված չէ «կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտությունը, ՀՀ կառավարությունն արձանագրում է, որ «երկար փողի ձևավորման» ինստիտուտը ոչ թե կենսաթոշակային համակարգի և օրենքի նպատակ է, այլ միայն գործընթացի անխուսափելի հետևանք, որը լրացուցիչ օգուտներ կրելի Հայաստանի տնտեսությանը:

Ամփոփելով՝ ՀՀ կառավարությունը եզրակացնում է, որ ՀՕ-67-Ն օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված օրենքների և այլ իրավական ակտերի դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն առաջին հերթին անհրաժեշտ է համարում փաստել, որ.

Ուսումնական՝ դիմողի կողմից ներկայացված հարցադրումների ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը, վիճարկելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, բովանդակային առումով բարձրացնում է դրա 1-ին հոդվածի առանձին դրույթների սահմանադրականության հարց:

Երկրորդ՝ այդ դրույթները «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու փաստի ուժով ինկորպորացվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքում, ուստի սույն գործի քննության շրջանակներում բացահայտման ենթակա են.

- «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը՝ ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի պահանջներից,
- «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-244-Ն օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը:

Երրորդ՝ հաշվի առնելով դիմողի և պատասխանողի փաստարկները, ինչպես նաև ՀՀ կառավարության պարզաբանումները և այն հանգամանքը, որ վիճարկվող իրավական ակտերի մի մասը՝ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն օրենքներն ընդունվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի (ինկորպորացված տարբերակով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-244-Ն օրենք) իրացումն ապահովելու նպատակով, և նույն նպատակով ՀՕ-71-Ն ՀՀ օրենքով փոփոխություններ են կատարվել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 6-րդ հոդվածում, նկատի ունենալով, որ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն և ՀՕ-77-Ն ՀՀ օրենքների, ինչպես նաև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 6-րդ և 10-րդ հոդվածների սահմանադրականությունը, փաստորեն, պայմանավորված է ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի համապատասխան իրավադրույթների սահմանադրականությամբ՝ սույն գործի շրջանակներում վերոթվարկյալ օրենքների, ինչպես նաև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 6-րդ և 10-րդ հոդվածների սահմանադրականությունն անհրաժեշտ է գնահատել ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի համատեքստում՝ բացահայտելով ինչպես վիճարկվող իրավական ակտերի սահմանադրաիրավական բովանդակությունը, այնպես էլ դրանց ընդունման ընթացակարգերի պահպանվածությունը:

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.04.2006 թվականի ՍԳ-Ռ-630 որոշման մեջ ամրագրել է, որ «...որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Իր մեկ այլ՝ 13.05.2008 թվականի ՍԳ-Ռ-753 որոշմամբ սահմանադրական դատարանը սահմանել է նաև, որ «Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»:

Սույն գործի քննության շրջանակներում հարկ է անդրադարձ կատարել վիճարկվող դրույթներում սահմանված որոշ հասկացությունների իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի վկայակոչումներին:

Այսպես. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախաբանում արձանագրվել է, որ «Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում սոցիալական վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում, պետական կենսաթոշակից բացի, կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման **հնարավորության ստեղծումն է՝** ապահովելով կատարված սոցիալական վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը, ինչպես նաև **հնարավորություն ընձեռելով** սոցիալական վճար կատարողին ազդելու կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը»: Ըստ դիմողի՝ այսպիսի կարգավորումը ոչ միայն համահունչ չէ սոցիալական պետության վերաբերյալ սահմանադրական նորմի բովանդակությանը և դրանից բխող՝ պետության պոզիտիվ պարտավորություններին, այլև չի համապատասխանում Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ մարդու իրավունքների ու պարտականությունների օրինական և ազատ իրացման սկզբունքին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Դիմողը գտնում է, որ նման հնարավորությունը հետագա իրավակարգավորումների համատեքստում վերածվում է աշխատողի, իսկ առանձին դեպքերում՝ նաև գործատուի նկատմամբ կիրառվող պարտադրանքի:

Այս առումով էական է նշել, որ ցանկացած օրենք ուղղված է հասարակական որոշակի հարաբերությունների կարգավորմանը՝ հիմքում ունենալով այն նպատակը, որը կիրականանա օրենքի իրացման արդյունքում: Այսինքն՝ հենց օրենքով տվյալ օրենքի նպատակը սահմանելն ուղենշում է այն ցանկալի արդյունքը և դրան հասնելու միջոցները, որին ձգտում է օրենսդիրը հասարակական տվյալ հարաբերություններն իրավակարգավորման ենթարկելիս: Հետևաբար, «հնարավորություն ստեղծելը», «հնարավորություն ընձեռելը» անհրաժեշտ է դիտարկել այս մոտեցման շրջանակներում՝ նկատի ունենալով նաև այն, որ տվյալ

իրավական ակտով սահմանված իրավակարգավորումների իրացումն **այն անհրաժեշտ միջոցն է, որով որպես նպատակ նշված հանգամանքներն իրողություն կարող են դառնալ:**

Վիճարկվող օրենքի նախաբանում գործածվող «հնարավորության ստեղծում» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել որպես կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի՝ սոցիալական վճար կատարելու իրավունք նաև այն հիմքով, որ.

- ՀՕ-244-Ն օրենքի նախաբանում խոսքը վերաբերում է **սոցիալական վճար կատարելու պարտականության** պատշաճ կատարման արդյունքում մասնակցին եկամուտ կուտակելու, կուտակային կենսաթոշակների չափի վրա ազդելու հնարավորություն ընձեռելու միջոցով նաև սոցիալական բարենպաստ վիճակ ստեղծելուն,
- օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ սոցիալական վճար կատարելն օրենքով սահմանված սուբյեկտների համար հանդիսանում է պարտականություն: Մասնավորապես, օրենքի 5-րդ և 71-րդ հոդվածներում գործածվում է «սոցիալական վճար կատարելու պարտականություն» եզրույթը:

Բացի դրանից, ցանկացած իրավունքի իրացում պետք է դիտարկել իրավունքների ու պարտականությունների միասնության ժողովրդավարական սկզբունքի տեսանկյունից, համաձայն որի՝ Սահմանադրությամբ և օրենքներով անձանց համար երաշխավորված իրավունքներն ու դրանց համարժեք պարտականությունները ենթադրում են, որ պետությունը միաժամանակ ստանձնում է դրանց իրացումն ապահովելուն կոչված մի շարք պարտականություններ, այդ թվում՝ իրավական, սոցիալական և այլ պայմանների ապահովման բնագավառում: Անձանց, պետության իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են, միասնական, պայմանավորված՝ հասարակական տվյալ հարաբերության բովանդակությամբ ու առանձնահատկությամբ: Այդպիսի միասնությունն արդյունավետ իրավակարգավորման ոչ միայն պայման է, այլև էական երաշխիք: Տվյալ դեպքում, Սահմանադրության 37-րդ հոդվածով սահմանված սոցիալական ապահովության իրավունքը տվյալ իրավունքն ապահովելու համար պետության պոզիտիվ պարտականությունից զատ տվյալ իրավունքի հասցեատիրոջ համար պարտադիր ենթադրում է նաև համապատասխան պարտականություն, այն է՝ նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականություն, որի արդյունքում ձևավորվում է այն գումարը, որը որպես լրացուցիչ կենսաթոշակային գումար տրամադրվելու է սոցիալական ապահովության իրավունքի սուբյեկտին:

Միաժամանակ, նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականությունը միանգամայն համատեղելի է Սահմանադրության 37-րդ հոդվածի այն դրույթի համատեքստում, համաձայն որի՝ սոցիալական ապահովության ծավալը և ձևերը սահմանվում են օրենքով: Տվյալ դեպքում օրենսդրի հայեցողությանն է վերապահված սոցիալական ապահովության ծավալի ու ձևերի ընտրությունը, և որ տվյալ ոլորտում համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմա-

նավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:

Նոր իրավակարգավորումների համար առանցքային նշանակություն են ստացել «սոցիալական վճար», «կուտակային վճար» և «կուտակային հատկացում» հասկացությունները: Բնության առարկա օրենքի 2-րդ հոդվածի 36-րդ կետով սոցիալական վճարը բնորոշվում է որպես «...սույն օրենքով սահմանված կարգով և չափերով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար»: Այս հասկացությանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել էր իր ՄԳՈ-1142 որոշման 9-րդ կետում, մասնավորապես շեշտելով, որ «...սոցիալական ապահովության համար կատարած վճարն ի սկզբան» նպատակային բնույթ ունի, և այն օրենքով սահմանելը սոցիալական հեռանկարը դարձնում է առավել կանխատեսելի»: Սահմանադրական դատարանը նաև արձանագրել էր, որ «Պետության պարտավորությունն է՝ օրենսդրական կանոնակարգման ճանապարհով այդ հարաբերություններին կայուն և երաշխավորված բնույթ հաղորդել»:

Նույն որոշման մեջ կարևորվել է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության հստակ իրացման պահանջը, համաձայն որի՝ համապետական խնդիրների լուծման, ինչպես նաև մարդկանց սոցիալական ապահովության նյութական երաշխիքներ ստեղծելու նպատակով Սահմանադրության հիշյալ հոդվածով սահմանված է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»: Սահմանադրական դատարանն ընդգծելով տվյալ հարցում իր իրավական դիրքորոշումների հետևողականությունը՝ արձանագրել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի իրավական բովանդակության բացահայտման շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել 2008թ. մայիսի 13-ի ՄԳՈ-753 որոշման մեջ, որին անդրադարձել է նաև դիմող կողմը: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «...հիշյալ հոդվածում նշված հարկերը և տուրքերը ևս պարտադիր վճարումներ են, և, հետևաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից և տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ»:

ՄԳՈ-1142 որոշման 9-րդ կետում անդրադարձ է կատարվել նաև ՄԳՈ-753 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ «Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրության 45-րդ հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա/ կրում են հանրային-իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում և վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

բ/ նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար»:

Վերջինիս հիման վրա սահմանադրական դատարանը գտել է. «Այս ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե պարտադիր կուտակային վճարները հանդես գային որպես սոցիալական վճարներ, խելամիտ հարաբերակցության մեջ դրվեին ոչ սոցիալական ապահովության նպատակ հետապնդող հարկային այլ վճարների հետ, **փոխանցվեին պետական բյուջեի հատուկ հաշվին և պայմանագրային հիմունքներով կամ օրենքով նախատեսված հստակ երաշխիքներով ու պետության պատասխանատվությամբ տրվեին կառավարման, ապա.**

ա/ համակարգը, բյուջետային վերահսկողության շրջանակներում, կհայտնվեր նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ուղղակի վերահսկողության դաշտում, ինչը կմեծացներ միջոցների խելամիտ կառավարման և վերադարձնելիության երաշխավորման հուսալիությունը,

բ/ առարկայական կլիներ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունը՝ արդյունավետ վերահսկողության և հանրային-իրավական պատասխանատվության առումով,

գ/ զգալի չափով կմեծանար հանրային վստահությունը համակարգի հուսալիության նկատմամբ,

դ/ նման համակարգը հնարավորություն կտար օրենքով խրախուսման լրացուցիչ մեխանիզմներ նախատեսել նաև կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների համար»:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքով քաղաքացու կատարած պարտադիր կուտակային վճարների դիմաց ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը հանդիսանում էին քաղաքացու սեփականությունը, ապա քննության առարկա իրավակարգավորման պարագայում սոցիալական վճարների գումարները փոխանցվում են պետական բյուջե, ինչը նախատեսված է նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով, համաձայն որի՝ նպատակային սոցիալական վճարները, որպես հարկային եկամուտ, հանդիսանում են պետական բյուջեի եկամտի աղբյուր: Պետությունն իր պատասխանատվությամբ քաղաքացիների կատարած սոցիալական վճարներն ուղղում է հատուկ տեսակի արժեթղթերի՝ կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերմանը: Տվյալ դեպքում իրավահարաբերության օբյեկտն արժեթուղթն է, և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արժեթղթի գաղափարն ամբողջությամբ համատեղվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ գլխով սահմանված արժեթղթերի նկատմամբ սահմանված պահանջների հետ:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սոցիալական վճարը, որպես պետական բյուջե մուտքագրվող վճար, ամբողջությամբ համատեղելի է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի իրավակարգավորման հետ: Այդ մասին են վկայում նաև ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդ-

վածի 1-ին մասի 36-րդ կետը և ՀՕ-73-Ն ՀՀ օրենքը: Ընդ որում, վերջինիս մասին հիշատակում է նաև դիմողը: Այլ խնդիր է, թե ինչ բնույթ են կրում միջոցների խելամիտ կառավարման օրենսդրական ընթացակարգերը, որքանով են հաղթահարված տարբեր օրենքների իրավակարգավորումների հնարավոր անհամապատասխանությունները, որպեսզի հետևողականորեն իրացվեն տվյալ հարցում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **օրենսդիր մարմնի խնդիրն է համակարգային մոտեցման ապահովումը և բյուջետային ու գանձապետական համակարգերին վերաբերող օրենքներում սոցիալական վճարի վերաբերյալ համապատասխան փոփոխությունների կատարումը:**

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով կենսաթոշակային ֆոնդի փայերը պետությունը ձեռք է բերում քաղաքացիների համար որպես սեփականություն՝ սահմանելով դրա նկատմամբ իրավունքի իրացման առանձնահատկությունները, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ նաև նշված օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերով սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությանը: Այսպես. ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը կարող են տիրապետվել, տնօրինվել, օգտագործվել բացառապես սույն օրենքով սահմանված կարգով և նպատակներով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով հավաստվող իրավունքները ենթակա չեն փոխանցման, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»: ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդի փայը մասնակցի կողմից չի կարող գրավադրվել, ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, նվիրաբերվել կամ օտարվել որևէ այլ եղանակով, բացառությամբ այդ օրենքով նախատեսված դեպքերի, օգտագործվել որևէ այլ եղանակով, քան սահմանված է այդ օրենքով:

ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերի՝ վերը նշված դրույթներից բխում է, որ դրանք հանդիսանում են կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը սահմանափակող նորմեր: Տվյալ դեպքում կարևոր է գնահատել, թե որքանով են նշված նորմերը ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համարժեք:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի համաձայն՝ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի և ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերի դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ **վերջիններիս բովանդակությունն ամբողջությամբ համատեղելի է ՀՀ Սահմանադրության 31-րդ**

հողվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի բովանդակության հետ: Այսինքն՝ կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ սեփականության իրավունքի՝ ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերով սահմանված սահմանափակումները պայմանավորված են պետության օրինական շահով: Տվյալ դեպքում պետության օրինական շահը նպատակային սոցիալական վճարներն իրենց նպատակին ծառայեցնելն է, այն է՝ սոցիալական պետության գաղափարին համահունչ սոցիալական ապահովության ոլորտում իր պոզիտիվ պարտականության կատարումն է, կենսաթոշակային տարիքի հասած անձանց համար լրացուցիչ կենսաթոշակի ձևով կենսաապահովման առավել բարձր մակարդակի ապահովմամբ: Այսինքն՝ իրավունքի մման սահմանափակումը հետապնդում է սոցիալական իրավաչափ նպատակ, միտված է սահմանադրական կարգի հիմունքներով ամրագրված խնդիրների իրագործմանը:

Նույնը վերաբերում է նաև դիմողի կողմից վիճարկվող՝ «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՕ-75-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ մասնակցի օգտին (համար) կատարված կուտակային հատկացումները կարող են օգտագործվել բացառապես կենսաթոշակային համակարգից բխող նպատակներով:

Դիմողը նշում է, որ «... Օրենքում օգտագործվող **«մասնակից»** հասկացությունը նույնպես չի բավարարում իրավական որոշակիության սկզբունքին: Այսպես, ըստ սահմանման՝ **մասնակիցը** սույն օրենքով սահմանված կարգով **սոցիալական վճար կատարած անձն է**, որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում կամ որի համար (օգտին) կատարվում են կամավոր կենսաթոշակային վճարներ: Այսինքն, բոլոր դեպքերում «մասնակից» հասկացության հիմնական բնութագրիչը, այդ սուբյեկտի իրավական գործառույթը՝ սոցիալական վճար կատարելն է, մինչդեռ կամավոր կուտակային համակարգի դեպքում դրանում մասնակցող անձի համար սոցիալական վճար կատարելը անհրաժեշտ պայման չէ»:

Այս առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ոչ միայն օրենքով սահմանված կարգով սոցիալական վճար կատարած անձն է, որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում, **այլև/կամ/ այն անձը, որի համար (օգտին) կատարվում են կամավոր կենսաթոշակային վճարներ:** Եթե օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի համաձայն սոցիալական վճարն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է, ապա կամավոր կենսաթոշակային վճարը բնորոշվում է որպես կամավոր կենսաթոշակ ստանալու նպատակով **մասնակցի** և(կամ) այլ անձի կողմից **մասնակցի համար (օգտին) կատարվող** վճար (2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ): Միաժամանակ, վեճի առարկա օրենքի 1-ին, 61, 63, 64 և 65-րդ ու բազմաթիվ այլ հոդվածների հիման վրա նույնպես կարելի է փաստել, որ «մասնակից» եզրույթը

հստակ վերաբերելի է նաև կամավոր կենսաթոշակային վճար կատարողներին: Երկու դեպքում էլ սահմանման հիմքում ընդհանրականն անձն է, իրավասուբյեկտը, որը մի դեպքում՝ ոչ միայն օրենքով սահմանված կարգով սոցիալական վճար է կատարել, այլև որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում, մյուս դեպքում՝ **այն անձը, որի համար (օգտին) կատարվում են կամավոր կենսաթոշակային վճարներ:**

Դիմողը նաև նշում է, որ «... խախտված է իրավական որոշակիության սկզբունքը Օրենքի 81-րդ հոդվածի 13-րդ մասում»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դրույթը ձևակերպված է բավարար հստակությամբ. օրենսդրի կամքը հստակորեն է արտահայտված և չի գրկում քաղաքացուն իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու հնարավորությունից, հետևաբար՝ նշված կարգավորումը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Ընդ որում, ի կատարումն օրենքի հիշյալ պահանջի՝ ՀՀ ֆինանսների նախարարը 21.10.2014թ. ընդունել է «2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների արդյունքում կուտակային վճարների չմարված կամ մասնակի վճարված կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» թիվ 733-Ն հրամանը, համաձայն որի՝ կատարվել է վերահաշվարկ և համապատասխան գումարների փոխանցում:

Դիմողը գտնում է նաև, որ «... Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված Օրենքի 43-րդ հոդվածին հղումը որևէ կերպ մեկնաբանելը անհնար է»: Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերի իմաստով բաժնային արժեթղթերը չեն ներառում այն ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը), որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն՝ ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել միայն սույն **օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված** բանկային ավանդներում, պարտքային արժեթղթերում կամ դրանց հեջավորման նպատակով ձեռք բերվող ածանցյալ գործիքներում»:

Օրենքի 43-րդ հոդվածով սահմանված կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն իրավական կարգավորման է ենթարկել ոչ թե այն բանկային ավանդների, պարտքային արժեթղթերի կամ դրանց հեջավորման նպատակով ձեռք բերվող ածանցյալ գործիքների հետ կապված իրավահարաբերությունները, որոնց շրջանակներում ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել, այլ ուղղված է մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար կատարվող (գանձվող) վճարների հետ կապված հարցերը կանոնակարգելուն: Այսինքն՝ **օբյեկտիվորեն հնարավոր չէ կիրառել** օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասը, քանզի վերջինիս իրացման հիմքում ընկած իրավադրույթը (43-րդ հոդվածը) ուղղված է բոլորովին այլ հարաբերությունների կարգավորմանը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914 և ՍԴՈ-933 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական

լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում:**

8. Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի հնարավոր անհստակության առնչությամբ ըստ դիմողի՝ «...անհայտ է մնում՝ խոսքը բոլոր ավանդների մասին է, թե միայն օտարերկրյա բանկերում ներդրվող ավանդների»: Օրենքի 39-րդ հոդվածն իրավական կանոնակարգման է ենթարկել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սահմանափակումների հետ կապված հարցերը: Հիշյալ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը սահմանում է. «Ընդ որում, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի **օտարերկրյա բանկում**, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ»: Հիշյալ դրույթով օրենսդիրը հնարավորություն է տալիս պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները որպես ավանդ ներդնել նաև օտարերկրյա բանկում, սակայն, որպես հուսալիության երաշխիք, սահմանում է որոշակի վարկանիշ: Այսինքն՝ հիշյալ նախադասության մեջ օգտագործված «միայն» եզրույթը հանդիսանում է ցուցիչ առ այն, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի համապատասխան վարկանիշ: Այլ կերպ, հիշյալ իրավադրույթով սահմանված իրավակարգավորումը վերաբերում է միայն օտարերկրյա բանկերում ներդրվող ավանդներին, և «միայն» եզրույթը նպատակ է հետապնդում շեշտադրելու այն հանգամանքը, որ օտարերկրյա բանկերը պետք է ունենան համապատասխան վարկանիշ, հուսալիության գնահատման միջազգայնորեն ճանաչելի չափանիշ, որի պայմաններում միայն վերջիններս հնարավորություն կունենան ներգրավվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների՝ որպես ավանդ ներդրման գործընթացին: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, հարկ է արձանագրել, որ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը չի բացառում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրումը նաև Հայաստանի Հանրապետության տարածքում: Այդպիսով, օրենսդիրն իրավական այդպիսի հստակ չափորոշիչներ նախատեսելու միջոցով նպատակ է հետապնդել երաշխավորելու կենսաթոշակային ֆոնդի ակտիվների նպատակային օգտագործումն ու պաշտպանվածությունը, որն անմիջականորեն բխում է սոցիալական պետության առջև դրված սահմանադրաիրավական պարտականության բովանդակությունից:

Իրավական որոշակիության և/կամ համաչափության սկզբունքի տեսանկյունից վիճարկվում է նաև օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը հաշվարկվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի գուտ ակտիվների արժեքի 0.02 տոկոսի չափով՝ օրական կտր-

վածքով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ դրույթը ձևակերպված է բավարար հստակությամբ և չի գրկում քաղաքացուն իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու հնարավորությունից:

Վեճի առարկա է նաև այն հանգամանքը, որ ըստ դիմողի՝ «Օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «վարձու աշխատողը (բացի հարկային գործակալի պարտականությունից ազատված գործատուի վարձու աշխատողից) դիմումը ներկայացնում է գործատուի միջոցով: Սույն մասում նշված անձը սոցիալական վճար կատարելը դադարեցնում է ... համապատասխան դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից»: Փաստորեն Օրենքով դիմումը ներկայացնելու հաջորդող ամսվա 1-ը դա օգոստոս ամիսն է, իսկ հուլիս ամսվա հարցը բաց է և չկարգավորված»:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 01.07.2014թ.: Գործող՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու՝ անձի իրավունքը տարածվում է այդ օրենքի ուժի մեջ մտնելուց մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված է, որ «Սույն մասում նշված անձը սոցիալական վճար կատարելը դադարեցնում է ... համապատասխան դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից»: Այսպիսով, մի կողմից, օրենսդիրն անձին հնարավորություն է ընձեռում սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու իրավունքից օգտվել և դրա հիման վրա ազատվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից օրենքի ուժի մեջ մտնելու պահից, այն է՝ 2014թ. հուլիսի 1-ից, իսկ մյուս կողմից՝ սահմանում է, որ սոցիալական վճար կատարելը դադարեցնում է համապատասխան դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, որը լավագույն դեպքում կարող է լինել օգոստոսի 1-ը: **Արդյունքում՝ սոցիալական վճար կատարելու պարտականությունից ազատվելու ժամանակահատվածը նեղացվում է՝ դուրս թողնելով հուլիս ամիսը:** Հետևաբար, համապատասխան փոփոխություններ կատարելիս անհրաժեշտ էր սահմանել այնպիսի կանոնակարգումներ, որոնք թույլ կտային անձանց սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու իրավունքից լիարժեքորեն օգտվել և դրա հիման վրա ազատվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից օրենքի ուժի մեջ մտնելու պահից, այն է՝ 2014թ. հուլիսի 1-ից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **ստեղծված իրավիճակն օրենսդրի կողմից պետք է շտկվի՝ ապահովելու համար սոցիալական վճար կատարելու պարտականությունից ազատվելու հնարավորությունը նաև հուլիս ամսվա համար՝ այն անձանց նկատմամբ, ովքեր համապատասխան դիմումը ներկայացրել են 2014թ. հուլիս ամսվա ընթացքում:**

Դիմումում նաև նշվում է. «Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հաշվի օպերատորին իրավունք է վերապահվել մասնակիցների դիմումների հա-

մար սահմանել և գանձել վճար, որը չի կարող ավելի լինել, քան այդ նպատակով կատարվող ծախսումների և ողջամիտ շահութաբերության հանրագումարը: Հատկանշական է, որ օրենքով ոչ միայն չեն սահմանվում ծախսերի կառուցվածքը կամ որևէ չափանիշ, այլ նաև միանշանակ ընկալելի ու չափելի չի կարող լինել «ողջամիտ շահութաբերություն» հասկացությունը»: Նախ՝ օրենքում օգտագործվող ոչ բոլոր հասկացություններն են, որ պետք է ունենան իրավաձևաբանական կանոններով շարադրված սահմանում: Երկրորդ՝ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում ամրագրված համապատասխանաբար՝ «ողջամիտ եկամտաբերություն», «ողջամիտ շահութաբերություն» եզրույթների իրավական բովանդակությունը պետք է դիտարկել այն համատեքստում, որ տվյալ դեպքում եկամտաբերության, շահութաբերության ողջամիտ բնույթը պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում՝ տվյալ կոնկրետ իրավիճակը բնութագրող հանգամանքներին համապատասխան, ոչ միայն ձևական իրավական, այլև ֆինանսատնտեսական և այլ չափորոշիչներով՝ չխախտելով իրավակարգավորման այն սկզբունքները, միջոցներն ու ձևերը, որոնք նախատեսված են քննության առարկա օրենքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքում «ողջամիտ» եզրույթի նախատեսումն ինքնին խնդրահարույց չէ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, սակայն պետք է նկատել, որ շահույթի, եկամտի ողջամիտ բնույթը ստուգելու համար պետք է հաշվի առնել այն օբյեկտիվ իրավիճակը, որի շրջանակներում վերջիններս գնահատման և հաշվարկման առարկա են դարձել: Այնուամենայնիվ, կոնկրետ իրավիճակում քննության առարկա եզրույթների բովանդակության շուրջ առաջացած տարակարծության պարագայում անհրաժեշտ է առաջնորդվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «ողջամիտ ժամկետ» հասկացության «ողջամիտ» եզրույթի բովանդակության շրջանակներում տրված իրավական դիրքորոշումներին համահունչ՝ այնքանով, որքանով վերջիններս իրենց էությամբ համադրելի և կիրառելի կլինեն կոնկրետ փաստական հանգամանքների առնչությամբ:

Բացի դրանից, օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար **վճարի առավելագույն չափը** սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության և մասնակիցների ռեեստրը վարողի միջև կնքված պայմանագրով»: Այս իրավակարգավորումը հանդես է գալիս որպես իրավական երաշխիք՝ զսպելու համար կոնկրետ իրավիճակում «ողջամիտ եկամտաբերություն» եզրույթի ոչ համարժեք, չհիմնավորված և հայեցողական ընկալումը, հետևաբար՝ նաև իրավական կողմնորոշիչ է օրենքով կարգավորվող հասարակական տվյալ հարաբերության սուբյեկտների համար իրենց հնարավոր գործողությունների պլանավորման ու իրականացման առումով:

9. Վեճի առարկա է նաև այն հանգամանքը, որ, ըստ դիմողի՝ «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՕ-75-Ն

ՀՀ օրենքը պարունակում է հռչակագրային դրույթներ, որոնք չեն առաջացնում իրավական հետևանքներ: Այսպես. «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասնամասնակցում է. «Մասնակցի օգտին (համար) կատարված կուտակային հատկացումները կարող են օգտագործվել բացառապես կենսաթոշակային համակարգից բխող նպատակներով»: Դիմողը դիմումի 30-րդ կետում նշում է. «...վիճարկվող ակտերից որևէ մեկով սահմանված չէ «կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտությունը»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ դիմողը, վիճարկելով «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՕ-75-Ն ՀՀ օրենքը, ըստ էության բարձրացնում է ոչ թե ամբողջ օրենքի սահմանադրականության, այլ այդ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում ամրագրված «կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտության սահմանադրականության հարցը: **Նախ**՝ դիմողը հիշատակում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այն պահանջը, ըստ որի՝ օրենքում չեն կարող ներառվել հոդվածներ, որոնք չեն առաջացնում իրավական հետևանքներ: Փաստորեն, բարձրացվում է քննության առարկա օրենքի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հարաբերակցությանն առնչվող հարց, ինչն իր բնույթով սահմանադրական վեճ չի առաջացնում: **Երկրորդ**՝ այս իրավակարգավորման մեջ իրավական անորոշություն առկա չէ, քանզի կենսաթոշակային համակարգի նպատակները կարող են բացահայտվել վերաբերելի ոլորտի իրավական կանոնակարգումների վերլուծությունից, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի բուն տրամաբանությունից, որը, ըստ էության, հետապնդում է կենսաթոշակային տարիքի հասած անձանց բարեկեցությունն ապահովելու, մի կողմից, համերաշխության սկզբունքի հիման վրա կենսաթոշակային տարիքի հասած անձանց սոցիալական ապահովության իրավունքն իրացնելու, մյուս կողմից՝ կուտակային սկզբունքի հիման վրա յուրաքանչյուր անձի ըստ կատարած աշխատանքի և համակարգում ներդրման աստիճանի սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորելու սահմանադրորեն արդարացված նպատակ: **Երրորդ**՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը վերաբերում է ՀՀ կենսաթոշակային համակարգին՝ սահմանելով նաև վերջինիս մեջ ներառվող բաղադրատարրերը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-967 որոշման մեջ արձանագրել է. «...օրենքի առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնաբավ լինել: Դրանք պետք է դիտարկել ընդհանուր իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ»: «Կենսաթոշակային համակարգից բխող նպատակ» արտահայտությունը նույնպես չի կարող ինքնաբավ լինել, այլ այն պետք է ընկալել որպես ամբողջի մաս՝ դիտարկելով այն միայն ընդհանուր տրամաբանության շրջանակներում՝ որպես միասնական և ներդաշնակ ամբողջություն:

«Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախաբանում ամրագրվել է, որ «Սույն օրենքի նպատակը «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների ապահովման նպատակով սոցիալական վճարներ կատարող անձանց համար (օգտին) կատարված կուտակային հատկացումների հաշվին ձեռք բերված՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ սեփականության անձեռնմխելիության ամրագրումն է, կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների սահմանումը, դրանց պաշտպանության անընդհատության ապահովման սահմանումը օրենքով նախատեսված արտակարգ դրության հայտարարման դեպքերում»։ Դիմողը նշում է, որ այս սահմանման առանցքային արտահայտություններից մեկը «օրենքով նախատեսված արտակարգ դրություն» բառակապակցությունն է, որը ոչ միայն որևէ ձևով սահմանված կամ նկարագրված չէ, այլ նաև բացակայում են այս իրավիճակի առաջացման կարգավորումն ու դրա իրավական հետևանքը։ Այսուհանդերձ, չի մատնանշվում Սահմանադրության որևէ նորմ, որին վեճի առարկա դրույթը ենթադրաբար հակասում է։ Բացի դրանից, օրենքի նախաբանում այս կամ այն արտահայտության՝ այդ օրենքով ամրագրված չլինելը չի կարող առաջացնել օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության հարց, քանզի հենց ինքը՝ նախաբանը, առաջին հերթին, ունի առավելապես արժեքանական գործառույթ։ Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում գործում է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը, որում բացահայտվում է «արտակարգ դրություն» իրավական եզրույթը, այսինքն՝ տվյալ հարցադրման իրավական, բովանդակային մեկնաբանությունն իրավասու սուբյեկտի կողմից անհրաժեշտաբար պետք է իրականացվի ելնելով ՀՀ իրավական համակարգի միասնության սկզբունքից։

Որպես իրավակարգավորման բաց վիճարկվում է նաև այն, որ, ըստ դիմողի. «... օրենսդիրը չի սահմանել հարկային մարմնին սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումների ներկայացման և ընդունման կարգ»։

Օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն՝ «Անձը իրավունք ունի սույն օրենքի ուժի մեջ մտնելուց մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար հրաժարվելու սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը հարկային մարմնին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով»։ Սույն դրույթով օրենսդիրն անձին իրավունք է վերապահել որոշակի ժամանակահատվածի համար հրաժարվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ սահմանելով այդ իրավունքն իրականացնելու պայմանները և կարգը, այն է՝ համապատասխան դիմումի առկայությունը և այն հարկային մարմնին ներկայացնելը։ Անձի՝ հիշյալ իրավադրույթով սահմանված իրավունքն ապահովելու համար ՀՀ կառավարությունը 31.07.2014թ. ընդունել է «Հայաստանի Հանրապետության

կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 826-Ն որոշումը, որով սահմանվել է «Սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու և սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումները հարկային մարմիններ կայացնելու մասին» կարգ: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել են իրավունքն իրականացնելու պայմանները և կարգը, իսկ ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ՝ այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ և պարտադիր բաղադրատարր հանդիսացող դիմումները հարկային մարմնին ներկայացնելու կարգը, այսինքն՝ օրենքով սահմանված իրավակարգավորման իրացման կարգը:

10. Վեճի առարկա է համարվում նաև օրենքի իրավակարգավորման շրջանակներում ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցման հարցը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳ-Ո-1142 որոշման 12-րդ կետում նշել է. «... քննության առարկա օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 44-րդ հոդվածով այդ իրավասությունը՝ քանակային և արժութային սահմանափակումների սահմանման շրջանակներում, ինչպես նաև երաշխիքային ֆոնդի տնօրինման և կառավարման կարգի ու պայմանների սահմանման մասով վերապահվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Այստեղ ուշադրության է արժանի և այն, որ կառավարությունը սահմանում է նաև այդ ֆոնդի **տնօրինման** պայմանները: Տնօրինումը ենթադրում է նաև իրավական կարգավիճակի կամ գույքի ճակատագրի որոշման իրավունք: Ֆոնդի միջոցները քաղաքացիների սեփականություն է ճանաչվել օրենքով, սակայն սեփականության տնօրինման պայմանները ոչ թե օրենքով են սահմանվում, այլ սահմանում է կառավարությունը: Նման կանոնակարգումը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի և 89-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից»:

Արդյունքում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...որի տնօրինման ... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը և 44-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներկա իրավակարգավորման շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածը կարգավորում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սահմանափակումների հետ կապված իրավակարգավորումները՝ այլևս պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման քանակային և արժութային սահմանափակումների կա-

նոնակարգման իրավասությունը չվերապահելով ՀՀ կառավարությանը: Իսկ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 9-11-րդ մասերով սահմանված են երաշխիքային ֆոնդի տնօրինման և կառավարման կարգի ու պայմանների հետ կապված իրավակարգավորումները՝ ինչի արդյունքում երաշխիքային ֆոնդի տնօրինման և կառավարման կարգն ու պայմանները կանոնակարգելը ՀՀ կառավարության իրավասությունը չէ և ենթակա է օրենքով կարգավորման:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ իր՝ ՄԳՈ-1142 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներն այս համատեքստում հաշվի են առնվել, և սահմանված նոր իրավակարգավորումներով վերոթվարկյալ հարցերն օրենքով կարգավորման են ենթարկվել:

11. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1142 որոշմամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր: Անդրադառնալով այս դրույթի սահմանադրականությանը՝ հիշյալ որոշմամբ սահմանադրական դատարանն արձանագրել է.

- «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված է. «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով»,
- կարևորվում է կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջների, հիմնական սկզբունքների, ինչպես նաև կուտակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների հիմնական շրջանակի օրենքով կանոնակարգումը:

Ներկա իրավակարգավորումների պայմաններում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013թ. դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշմամբ սահմանված «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» /կանոնակարգ 10/16/ ընդհանուր առմամբ իրենց ամրագրումն են արդեն գտել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մասնավորապես՝ 36-րդ հոդվածում: Այս առումով որոշակիորեն **իրացվել են ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները**: Միաժամանակ, **անտեսվել է այն հանգամանքը**, որ սահմանադրական դատարանը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հիշյալ որոշմանը, նշել է, որ «... բովանդակային առումով նույնպես փաստաթուղթը հեռու է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, մասնավորապես՝ դրա 45-րդ հոդվածի պահանջներից,

կառուցված է «պետք է», «անհրաժեշտ է» դարձվածքներից բխող ցանկությունների վրա և համակարգի հուսալիության ապահովման կոնկրետ երաշխիքներ չի բովանդակում»: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հիշյալ որոշմամբ սահմանված իրավակարգավորումներն ընդհանուր առմամբ տեղափոխելով օրենքի կանոնակարգման հարթություն՝ բովանդակային առումով փոփոխության չեն ենթարկվել՝ պահպանելով «պետք է», «պարտավոր է» դարձվածքները, ինչին օրենսդիր մարմինը պետք է իր իրավասության շրջանակներում անդրադարձ կատարի:

Գիմողը նշում է նաև, որ «...Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջներին չի համապատասխանում Օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ Կենտրոնական բանկը կարող է ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք լրացուցիչ պահանջներ կսահմանեն կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար: Նույն անհամապատասխանությունն առկա է նաև Օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ, 63-րդ հոդվածի 7-րդ մասերում, 67-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում, 68-րդ հոդվածի 1-ին մասում, երբ կենտրոնական բանկին իրավունք է վերապահվել ընդունել օրենքի պահանջներից տարբերվող առավել խիստ պահանջներ»: Վերլուծելով տվյալ դրույթները՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ բացառությամբ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի, մնացած իրավադրույթները խնդիրներ չեն հարուցում Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից, քանի որ նշված նորմերով սահմանված կարգավորումներն անմիջականորեն չեն վերաբերում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններին և կարգին, այլ կարգավորում են գլխավորապես կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, բանկերի գործունեության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք օրենքի պահանջների իրացմանն են վերաբերում:

Վիճակն այլ է օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի պարագայում, ըստ որի՝ «Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները սույն օրենքի 67-րդ հոդվածում թվարկված ֆինանսական գործիքներում կարող են ներդրվել Կենտրոնական բանկի սահմանած քանակական և արժույթային սահմանափակումների շրջանակում»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Այնինչ, օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով այդ իրավասությունը՝ քանակային և արժույթային սահմանափակումների սահմանման շրջանակներում, վերապահվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 որոշման պահանջները հաշվի առնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

39-րդ հոդվածի 1-7-րդ մասերով պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումները սահմանվել են օրենքով, ինչին պետք է համահունչ լինի նաև 68-րդ հոդվածի 1-ին մասը:

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1142 որոշմամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր՝ ելնելով իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու և տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից: Այդ որոշման 14-րդ կետում սահմանադրական դատարանն անդրադարձել է կենսաթոշակային ֆոնդում առկա փայերի ինդեքսավորման կամ տարեկան գնաճով ճշգրտման խնդրին: Սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. «Միաժամանակ, այս հարցում օրենքով նախատեսված երաշխիքների առկայությունը համակարգի հուսալիության կարևորագույն գրավականներից է: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գրեթե շրջանցել է այս հիմնախնդիրը՝ օրենքով իրավական համարժեք երաշխիքներ չնախատեսելով կուտակային վճարների գումարի տարեկան գնաճով ճշգրտումն ապահովելու համար»:

Որպես իրավական երաշխիք՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սույն մասով նախատեսված սոցիալական վճարների՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը **սահմանվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով**»: Այսինքն, եթե նախկին իրավակարգավորման համաձայն կուտակային վճարների գումարի՝ տարեկան գնաճով ճշգրտման կարգը սահմանում էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ապա ներկա իրավակարգավորմամբ այն սահմանվում է օրենքով, մասնավորապես՝ օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով: Հավելվածում, ի թիվս այլ հարցերի, սահմանված է, որ մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտումը հաշվարկվում է բանաձևով, որը նույնպես ներառված է հավելվածում:

Դիմողը փաստում է, որ «...ինդեքսավորվում է միայն կուտակային վճարի (որը գոյանում է սոցիալական վճարի և պետական բյուջեից հատկացվող գումարի հանրագումարից), միայն սոցիալական վճարը, իսկ պետական բյուջեից կառավարչին փոխանցված գումարը ենթակա չէ ինդեքսավորման: Սա ոչ միայն թերի մոտեցում է, այլ նաև էականորեն նվազեցնում է կուտակային համակարգի նկատմամբ հանրային վստահությունը՝ անտեսելով սեփականության իրավունքի համարժեք պաշտպանության սահմանադրական սկզբունքն ու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները»:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված անձի օգտին կատարված կուտակային հատկացումների վերադարձելիությունը մասնակցին՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն կատարված սոցիալական վճարների՝ տարեկան գնաճով ճշգրտված չափով»:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ **կուտակային հատկացումը** օրենքով սահմանված կանոնների համաձայն՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու նպատակով սոցիալական վճար կատարող անձի համար (օգտին) կատարվող դրամական հատկացում է, որը ձևավորվում է այդ **սոցիալական վճարներից և** օրենքի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից**, իսկ նույն մասի 36-րդ կետի համաձայն՝ սոցիալական վճարն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը և դրույքաչափը, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կուտակային հատկացումներ կատարելու հետ կապված հարցերը կարգավորված են օրենքի 9-րդ հոդվածով: Բացի դրանից, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «**Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայը** սոցիալական նպատակներով թողարկվող անվանական **արժեթուղթ է**, որը հավաստում է դրա տիրոջ (քաղաքացու)՝ սույն օրենքով սահմանված կարգով կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքը»: Իսկ կենսաթոշակային ֆոնդի փայ, այսինքն՝ անվանական արժեթուղթ, ձեռք բերելու նպատակով կատարվում են **կուտակային հատկացումներ**: Ստացվում է այնպիսի իրավիճակ, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է ոչ թե **կուտակային հատկացումների, այլ միայն կուտակային վճարների** վերադարձնելիությունը մասնակցին: Նույն մոտեցումն է հիմք ընդունվել նաև կուտակային հատկացումների հատուցման չափն օրենքի 45-րդ հոդվածով սահմանելու պարագայում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը չունի արդարացված հիմք՝ հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի՝ ՄԳՌ-1142 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ «Հարցն այն է, որ կենսաթոշակի համար անհրաժեշտ միջոցի ձևավորման և սոցիալական ապահովության իրավունքի իրացման միջև առկա է ժամանակի գործոնի ազդեցությունը: Այն հաշվի չառնելու դեպքում անհնարին կլինի համարժեք միջոցներ կուտակել և երաշխավորել մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը: Բացի դրանից, կուտակային վճարների ամբողջ գումարի տարեկան գնաճով ճշգրտումն այդ գումարներն ամբողջությամբ հետ ստանալու

իրավունքի պաշտպանության նպատակ է հետապնդում և օրենքի կարգավորման առարկա է»: Առկա իրավակարգավորումը չի երաշխավորում կենսաթոշակային բարեփոխումների նպատակի և կենսաթոշակառուի իրավաչափ ակնկալիքների ներդաշնակությունը, չի բխում իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացման պահանջներից, իմաստագրկում է սոցիալական ապահովության բնագավառում պետության պոզիտիվ պարտականության ստանձնումը կուտակային կենսաթոշակային հմարավոր հուսալի համակարգի արմատավորման հարցում, անվստահություն է սերմանում ամբողջ գործընթացի նկատմամբ:

13. Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1142 որոշման 17-րդ կետում իրավական դիրքորոշում է հայտնել, համաձայն որի՝ «...«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Ճառայությունների համար վճարները» վերտառությամբ 9-րդ գլուխը կանոնակարգում է այդ իրավահարաբերությունները: Սակայն կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափի սահմանումը վերապահված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին /հոդվ. 45, մաս 1/: Առանձին երկրներում կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափը նույնպես սահմանվում է օրենքով: Հայաստանի Հանրապետությունում նույնպես այն կարող է սահմանվել օրենքով, կամ դառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության և կենսաթոշակային ֆոնդի միջև պայմանագրային պարտավորությունների շրջանակներում կանոնակարգման առարկա»: Չնայած ՀՀ սահմանադրական դատարանի այս դիրքորոշմանը՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափի սահմանումը կրկին վերապահվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին («Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդված, 1-ին մաս): Այսինքն՝ ՍԳՈ-1142 որոշման 17-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը դեռևս չի իրացվել: Սահմանադրական դատարանը կրկին շեշտադրում է այն հանգամանքը, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերի առավելագույն չափը կարող է սահմանվել օրենքով, կամ դառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության և կենսաթոշակային ֆոնդի միջև պայմանագրային պարտավորությունների շրջանակներում կանոնակարգման առարկա: Ինչ վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի վերոհիշյալ գործառնության, ապա հիշյալ կանոնակարգման շրջանակներում օրենսդիրը պարտավոր է առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 83.3-րդ և 83.5-րդ հոդվածների պահանջներով:

14. Դիմողն արձանագրում է, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-71-Ն օրենքը չի անդրադարձել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով կենսաապահովման նվազագույն բյուջեի չա-

փոլ եկամուտների նվազեցման, նվազագույն աշխատավարձը և սոցիալական վճարը չհարկելու, խնդիրներին:

Նվազագույն աշխատավարձի հետ կապված հարցերին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր ՍԳՌ-1142 որոշման 11-րդ կետում:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-74-Ն օրենք) 1-ին հոդվածով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի 4-րդ հոդվածը «հարկերը,» բառից հետո լրացվել է «նպատակային սոցիալական վճարները,» բառերով: Ըստ այդմ, գործող «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, **նպատակային սոցիալական վճարները**, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները»: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից հետո հիշյալ օրենքում կատարվեց համապատասխան լրացում, որով սահմանվեց, որ **նպատակային սոցիալական վճարները նույնպես չեն ներառվում** նվազագույն ամսական աշխատավարձի չափի մեջ: Հետևաբար, պետք է փաստել, որ նվազագույն ամսական աշխատավարձի հարկման հետ կապված խնդիրը տվյալ իրավալարգավորման շրջանակներում հաղթահարված է:

15. Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չի կարելի համարել պետության պոզիտիվ պարտավորությունն օտարելու և քաղաքացու համար անհամաչափ պարտավորություն սահմանելու վերաբերյալ փաստարկները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված ու երաշխավորված նպատակային սահմանադրաիրավական գործառույթ է: ՍԳՌ-1142 որոշման մեջ սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. սոցիալական ապահովության «իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի հիման վրա /հոդվ. 37/ սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալտնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով»:

Հարկ է նկատի ունենալ, որ կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում մասնակիցների համար սահմանված պարտականությունների

ծավալը որոշվում է ելնելով մի շարք հանգամանքներից. պետության սոցիալա-տեսական հնարավորություններից, սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներից, կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի ընթացիկ և հեռանկարային կենսաապահովման միջև խելամիտ հարաբերակցությունից և այլն:

Բացի դրանից, վիճարկվող օրենքը նախատեսում է, որ պետությունը կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում կատարելով իր՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման պոզիտիվ պարտավորությունը, մինչև անձի կենսաթոշակային տարիքի լրանալը կատարում է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի օգտին/համար կենսաթոշակային հատկացումներ, դրա մասին է վկայում ՀՕ-244-Ն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անձանց համար (օգտին) մինչև նրանց կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային հատկացումները կատարվում են հետևյալ չափով.

1) ամսական համախառն եկամտի 10 տոկոսի չափով՝ ամսական համախառն եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 25000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմի 10 տոկոսը.

2) ձեռնարկատիրական եկամտի 10 տոկոսի չափով՝ ձեռնարկատիրական եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 300 000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմի 10 տոկոսը.

3) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 10 000 դրամի չափով.

4) անձնավորված (պարզեցված) հաշվարկի հիման վրա ներկայացված՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող՝ սույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով չնախատեսված եկամուտներից հաշվարկված սոցիալական վճարների չափով»:

16. Գիմողը գտնում է, որ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի իրացման համար մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը նախատեսված ժամկետն ակնհայտ ոչ համաչափ ժամանակահատված է, դրանից փաստացի օգտվելը դառնում է անհնարին և բերում է

իրավական որոշակիության և իրավունքի գերակայության սկզբունքների խախտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության և իրավունքի գերակայության սահմանադրաիրավական սկզբունքները ոչ միայն չեն բացառում, այլև ենթադրում են, որ որոշակի իրավունքների իրացման համար օրենսդիրը նախատեսի առանձին իրավապայմաններ, տվյալ դեպքում՝ ժամկետներ: Իրավունքի իրացման համար որոշակի ժամկետ նախատեսելու, այդ իրավունքից օգտվելու կարգ սահմանելու նպատակահարմարությունը գտնվում է օրենսդրի իրավասության շրջանակներում, և բարձրացված հիմնահարցը որևէ առնչություն չունի վիճարկվող դրույթների սահմանադրականության հետ:

Սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի իրացման հնարավորությունն ընտրաբար, տարբերակված կերպով տրամադրելու հետ կապված հիմնահարցի առնչությամբ դիմողը տարբերակված մոտեցման երկու առանձին իրավիճակ է դիտարկում.

1. տարբերակված մոտեցում սոցիալական վճարներից հրաժարվելու համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո աշխատաշուկա մտած անձանց և վերոնշյալ ժամկետի ընթացքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց նկատմամբ,

2. տարբերակված մոտեցում հանրային ծառայողների, պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, դրանց կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վարձու աշխատողների և կուտակային կենսաթոշակային համակարգի մնացած մասնակիցների նկատմամբ:

Վերոնշյալ հարցադրումներն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի, խտրական վերաբերմունքի մասին սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Այսպես. անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա/ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց **հավասար հնարավորություն կտան իրացնելու**, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները /ՄԳՈ-731, 29 հունվարի 2008թ./,

բ/ սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շր-

ջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից /ՄԳՈ-881, 4 մայիսի 2010թ./:

Նմանատիպ իրավական դիրքորոշումներ հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը /տես, մասնավորապես՝ *Stec and Others v. the United Kingdom* [GC], nos. 65731/01 and 65900/01, « 51, ECHR 2006-VI և *Carson and Others v. the United Kingdom* [GC], no. 42184/05, ECHR 2010:

Համադրելով դիմողի կողմից նկարագրված տարբերակված մոտեցման առաջին իրավիճակը՝ հարկ է նշել, որ վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորումը չի կարող հանգեցնել սոցիալական կարգավիճակից ելնելով խտրականության: Սոցիալական վճարներից հրաժարվելու համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո աշխատաշուկա մտած անձանց և վերոնշյալ ժամկետի ընթացքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցումը պայմանավորված է սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի իրացման ժամկետային սահմանափակմամբ, ինչը կարող է համարվել օբյեկտիվ հիմք, ինչպես նաև այդպիսի տարբերակված մոտեցում նախատեսելով՝ հետապնդվում է իրավաչափ նպատակ:

Գիմողի կողմից մատնանշված տարբերակված մոտեցում դրսևորելու երկրորդ իրավիճակի վերաբերյալ հարկ է, նախ, նշել, որ վիճարկվող դրույթով նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքից չեն կարող օգտվել որոշ կատեգորիայի անձինք, որոնք գլխավորապես հանրային հատվածի աշխատողներ են, ընտրաբար է այդ իրավունքը տրամադրվել, սակայն դրա հիմքում միանշանակ դրված է որոշակի օբյեկտիվ հիմք, և իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Հանրային և մասնավոր ոլորտների աշխատողները չեն կարող համարվել նույն կատեգորիայի անձինք՝ ելնելով նրանց աշխատանքային ոլորտների առանձնահատկություններից, աշխատավարձի ձևավորման աղբյուրներից և մի շարք այլ հանգամանքներից: 2014 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը, որի ուժով բարձրացվեց պետական աշխատողների աշխատավարձը և սոցիալական վճարների կատարման պարտավորությունը վերջիններիս կենսամակարդակում էական բացասական փոփոխություններ չի առաջացնի և սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի սահմանափակումն այդ կատեգորիայի անձանց համար վերոնշյալ օրենսդրական փոփոխություններով նախատեսված երաշխիքների պարագայում սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ: Այլ կլիներ խնդիրը, երբ պետությունը չիրականացներ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջով պայմանավորված իր պարտականությունը:

17. Գլխողն օրենքի հետադարձ ուժի կիրառման արգելքի հետ կապված հիմնահարցը կապում է վեց ամսվա ընթացքում հաշվարկված կուտակային վճարների վերադարձման վերաբերյալ իրավակարգավորումների հետ՝ փաստելով, որ ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի մայիսի 15-ին ընդունեց ՀՕ-13-Ն՝ 5 հոդվածներից բաղկացած օրենքը, որի 3-րդ հոդվածով նախատեսվեց, որ գործատուն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված վարձու աշխատող և պայմանագրային եկամուտ ստացող մասնակիցների համար (անունից) կուտակային վճարներ չի հաշվարկում և չի փոխանցում, եթե մասնակիցը առձեռն կամ փոստային առաքմամբ գործատուին ներկայացնում է դիմում: Արդյունքում՝ դիմողը գտնում է, որ անձն օգտվելով այս հնարավորությունից՝ արդեն իսկ դիմել է պարտադրվող վճար չկատարելու՝ օրենքով նախատեսված իր իրավունքն իրացնելու համար, սակայն վիճարկվող ակտերով փաստորեն գրկվում է այդ իրավունքից, ինչը հետադարձ ուժ է ստանում 1996թ. և դրանից հետո ծնված վարձու աշխատողների, 2014թ. հունիսի 1-ի դրությամբ վարձու աշխատանքային հարաբերությունների մեջ չգտնվող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների, պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, դրանց կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վարձու աշխատողների համար:

Գլխողի կողմից վկայակոչված ՀՕ-13-Ն օրենքն ուժը կորցրել է 2014 թվականի հուլիսի 1-ին: 1996թ. և դրանից հետո ծնված վարձու աշխատողների վերաբերյալ իրավակարգավորում նախատեսված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ-224-Ն ՀՀ օրենքի՝ «Անցումային դրույթներ» վերտառությամբ 81-րդ հոդվածի 5-րդ մասում, որի համաձայն՝ «5. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված՝ 1996 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձի կողմից վճարվող սոցիալական վճարի գումարը մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը նվազեցվում է նրա կողմից վճարման ենթակա եկամտային հարկի գումարից»:

Իսկ վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում խոսքը վերաբերում է 2014 թվականի հուլիսի 1-ից հետո վարձու աշխատողի կարգավիճակ ձեռք բերած, նոտարի պաշտոնում նշանակված, անհատ ձեռնարկատեր դարձած՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված այն անձանց, որոնք 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ չեն հանդիսացել վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր:

Այդ անձանց նկատմամբ օրենքի դրույթների հետադարձ կիրառման վերաբերյալ փաստարկների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետադարձ ուժի արգելման սկզբունքը վերաբերելի է միմիայն այն դեպքերին, եթե անձը գտնվելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի փոփոխման պատճառով նրա իրավական վիճակը վատթարանում է, նա գրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը:

18. Գլխողի կարծիքով՝ անհամաչափ է նաև ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դրույթը, որի համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդերի փոփոխության, կենսաթոշակային ֆոնդերի փայերի ժառանգման վերաբերյալ դրույթները, ինչպես նաև կենսաթոշակային հաշվին առկա միջոցները ստանալու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից: Ըստ դիմողի՝ ակնհայտորեն տարածամեծությունը անձի կողմից իր սեփականության տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքի իրացումը՝ օրենքի հիշյալ դրույթը չի նախատեսում որևէ ողջամիտ փոխհատուցում նշված ժամանակահատվածի համար: Ըստ դիմողի՝ նույնը վերաբերում է նաև նույն օրենքի 81-րդ հոդվածի 13-րդ մասին, որի համաձայն՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների արդյունքում կուտակային վճարների չմարված կամ մասնակի վճարված կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը: 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների արդյունքում կուտակային վճարների չմարված կամ մասնակի վճարված կուտակային վճարների պարտավորությունները վերահաշվարկվում են մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է այս կամ այն դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետի սահմանումը, սակայն օրենքի գործողության տարածամեծությունը չպետք է հանգեցնի անձի իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակմանը: Ուստի այս կարգավորումները պետք է դիտարկել առաջին հերթին սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են՝ շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ:

Վիճարկվող նորմով նախատեսված սեփականության իրավունքի իրացման սահմանափակումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ. այդ իրավակարգավորումը ժամանակավորապես սահմանափակում է մասնակիցների սեփականության իրավունքի իրացումը՝ ելնելով կուտակային կենսաթոշակային համակարգի մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, որոնք, հնարավոր է, որ ցանկություն չեն հայտնել հետ ստանալ իրենց կատարած կուտակային վճարները: Կենսաթոշա-

կային ֆոնդերում հավաքագրված կուտակային վճարները ներդրվում են օրենքով նախատեսված ակտիվներում, օրինակ՝ ժամկետային ավանդներում կամ արժեթղթերում, և դրանց անմիջական իրացման դեպքում կենսաթոշակային համակարգի մյուս մասնակիցները զգալի վնասներ կկրեն, քանի որ ստիպված կլինեն ակտիվները վաճառել ակնկալվածից ավելի ցածր գնով կամ, օրինակ՝ ավանդների պարագայում կորցնել արդեն իսկ հաշվարկված ավանդային տոկոսները:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ նշված ժամանակահատվածի համար որևէ ողջամիտ փոխհատուցման բացակայության վերաբերյալ հարցին, հարկ է նշել, որ 2014 թվականի հուլիսի 1-ից 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ժառանգման հարցեր առաջանալու դեպքում ժառանգներն իրենց հասանելիք գումարները կարող են ստանալ 2015 թվականի հուլիսի 1-ից սկսած, և այդ գումարները կներառեն նաև վերոնշյալ ժամանակահատվածի ընթացքում դրանց ներդրումից վաստակած եկամուտները, ինչը կարող է ողջամիտ փոխհատուցում համարվել այդ ժամանակահատվածի համար:

19. Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ ապահովելու առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1142 որոշման մեջ անհրաժեշտ էր համարել ընդգծել, որ օրենքի իրավակարգավորումներին բնորոշ իրավախախտումների համար հարկ է ամրագրել իրավական պատասխանատվության (քրեական, քաղաքացիական, վարչական) կոնկրետ և տարբերակված մոտեցումներ: Դիմողն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել էր, որ քննության առարկա դարձած օրենքն այս հարցերին գլխավորապես անդրադարձել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողական լիազորությունների ապահովման շրջանակներում (հոդվածներ 77-84): Սակայն, օրենքի կիրարկման հետ մեկտեղ, համարժեք փոփոխություններ չեն կատարվել նաև իրավական պատասխանատվություն նախատեսող այլ իրավական ակտերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը գործնականում շրջանցել են այդ հիմնախնդիրը: Իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 968.9-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որ «Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասները հատուցվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով», ավելի շատ ունի վերացական բնույթ: Այնինչ այս ոլորտում պատասխանատվության հստակ կանոնակարգումը համակարգի նկատմամբ վստահության կարևոր երաշխիք կարող էր հանդիսանալ: Այս խնդրին նույնպես մեծ կարևորություն է տրվում միջազգային պրակտիկայում: Սա արձանագրվել է ՄԴՈ-1142 որոշմամբ, որով այս առնչությամբ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «...ուշադրության են արժանի Սլովենիայի և Ռումինիայի օրինակները: Իսկ ԱՄՆ-ում թոշակային ֆոնդերի հետ կապված ֆինանսական իրավախախտումներն օրենքով համարվում են **առանձնապես ծանր հանցանք** և ազատագրկման ձևով պատիժ է սահմանվում 20 տարի և ավելի»: Հաշվի առնե-

լով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, ըստ որի՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայլը սոցիալական նպատակներով թողարկվող անվանական արժեթուղթ է, և նույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, համաձայն որի՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը պետության կողմից դրանց ձեռքբերման պահից հանդիսանում են մասնակցի սեփականությունը, սահմանադրական դատարանը փաստում է, որ կենսաթոշակային ֆոնդերի փայերի նկատմամբ տարածվում են քաղաքացիական և քրեական օրենսդրությամբ նախատեսված սեփականության և արժեթղթերի պաշտպանությանն ուղղված ընդհանուր կառուցակարգերը: Մինևույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՍԳՈ-1142 որոշման մեջ սահմանադրական դատարանը մատնանշել է «պատասխանատվության կոնկրետ և տարբերակված միջոցներ» մշակելու նպատակահարմարությունը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՍԳՈ-1142 որոշման մեջ արտահայտված վերոնշյալ իրավական դիրքորոշումները ՀՀ օրենսդրության շրջանակներում իրենց արտացոլումը գտել են մասամբ, ինչը, սակայն, չի հանգեցնում քննության առարկա օրենքների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության, քանզի սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշումների կատարումը պահանջում է համակարգային փոփոխություններ, որոնք իրենց տեղը պետք է գտնեն նաև քաղաքացիաիրավական, վարչաիրավական և քրեաիրավական բնագավառների համապատասխան իրավական ակտերում: Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն ուղղված էր ՀՀ Ազգային ժողովին և կոչված էր համակարգային մոտեցմամբ ապահովելու կուտակային կենսաթոշակային համակարգի արդյունավետ գործողությունը: Այն դեռևս ամբողջությամբ չի իրացվել և պահպանում է իր հրատապությունը:

20. Դիմողը գտնում է, որ վիճարկվող ակտերը բազմաթիվ դեպքերում չեն համապատասխանում նաև օրենսդրական տեխնիկայի կանոններին: Դիմողը, մասնավորապես, նշում է փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մեկ իրավական ակտով սկզբունքորեն նոր օրենք ընդունելու փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ փոփոխությունների արդյունքում մի շարք նորմեր փոփոխվել են, սակայն պահպանել են նույն համարները: Դիմողը նաև գտնում է, որ այս փաստարկների ուժով առաջ է գալիս իրավական անորոշության հիմնահարց:

Վերը նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է փաստել, որ հոդվածի համարը պահպանվում է իրավական ակտում այն դեպքում, երբ այդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվում: Սակայն, երբ այն փոփոխվում է, այս պարագայում ոչ թե նախկինն է ուժը կորցրած ճանաչվում և մեկ այլ հոդված ամրագրվում, այլ նախկին հոդվածը փոփոխվում է: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի՝ բարձրացված հիմնախնդրին վերաբերող պահանջները վերաբերում են գործողությունը դադարեցրած բաժիններին, գլուխներին, հոդվածներին, հոդվածների մասերին, կետերին, ենթակետերին: Հետևաբար, դիմողի այն պնդումները, որ

փոփոխություններ կատարելիս ևս պետք է նախկին խմբագրության հոդվածի համարը նույնը մնա, և նոր խմբագրությունն այլ՝ լրացուցիչ հոդվածով ամրագրվի, իրավական տեխնիկայի գոյություն ունեցող կանոնների շրջանակներում հիմնավոր չէ: Նույնը կարելի է ասել նաև դիմողի այն փաստարկի վերաբերյալ, ըստ որի՝ վիճարկվող ակտը պետք է ոչ թե փոփոխվեր, այլ նոր օրենք ընդունվեր: Այս առնչությամբ հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում որևէ սահմանափակում իրավական ակտում կատարվող փոփոխությունների ծավալի առնչությամբ, ուստիև միայն այն փաստը, որ վիճարկվող օրենքը ենթարկվել է մեծ ծավալով փոփոխությունների, չի կարող հանգեցնել օրենսդրական տեխնիկայի խախտման, առավել ևս՝ այդ իրավական ակտի հակասահմանադրականության: Բացի դրանից, տվյալ դեպքում օրենսդրական տեխնիկայի կանոնները բովանդակային առումով չեն հանգեցնում իրավական անորոշության, այսինքն՝ չեն զրկում անձին իր վարքագիծը կանխատեսելու հնարավորությունից և չեն հանգեցնում սահմանադրաիրավական հետևանքներ առաջացնող հակասությունների:

21. Գիմողի կողմից վիճարկվում է նաև այն հանգամանքը, որ նոր իրավական կարգավորումներով չի ապահովվել կուտակային բաղադրիչի վճարման՝ գործատու-աշխատող-պետություն եռամիասնությունը, ինչի արդյունքում չի կատարվել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-1142 որոշումը:

Այս հիմնահարցն իրավամբ շեշտվել է ՍԳՈ-1142 որոշման շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն այս առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «Արդյունքում՝ գործատուն, որպես իր իսկ աշխատողների սոցիալական ապահովության խնդիրների լուծման անմիջական մասնակից, դուրս մղվեց այս իրավահարաբերություններից, պետությունը հարկատուների հաշվին ստանձնեց լրացուցիչ պարտավորություններ, անհատակություն մտցվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման և 45-րդ հոդվածով նախատեսված՝ այդ իրավունքի իրացման նախադրյալների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական մոտեցումները կյանքի կոչելու հարցերում»,
- «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային պրակտիկայում գործատուների և աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների տոկոսային հարաբերակցությունն այնպիսին է, որ հիմնականում գործատուների հաշվին են ձևավորվում սոցիալական ապահովության ընդհանուր նպատակային վճարների կեսից մինչև երկու երրորդը: Անկախ թոշակային համակարգի առանձնահատկություններից, աշխարհի բազմաթիվ երկրների /Շվեդիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Սինգապուր, Լեհաստան, Հունգարիա, Սլովենիա, Խորվաթիա, Սլովակիա և այլն/ փորձը վկայում է, որ հա-

մենատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն և աշխատողը»:

Տվյալ հիմնախնդրի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա օրենքների համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ մոտեցումները չեն ստացել համարժեք իրավական լուծումներ: Միևնույն ժամանակ, դա ինքնին չի հանգեցնում «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության՝ այն պատճառաբանությամբ, որ, նախ՝ չի ենթադրվում, որ սույն հիմնահարցը պետք է իրավական ամրագրում ստանար կոնկրետ այս օրենքով, և ոչ թե որևէ այլ՝ տվյալ իրավահարաբերության կանոնակարգմանը նվիրված իրավական ակտով: Երկրորդ՝ ՄԳՈ-1142 որոշմամբ սահմանադրական դատարանը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը չի պայմանավորել դիմողի կողմից բարձրացված վերոհիշյալ հիմնահարցի օրենսդրական իմպերատիվ ամրագրվածությամբ: Սահմանադրական դատարանն այդ որոշմամբ փաստել է նման համակարգի բացակայությունը ՀՀ-ում, ինչպես նաև վերլուծելով միջազգային փորձը՝ արձանագրել է, որ «...համենատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետությունը, գործատուն և աշխատողը»: Սահմանադրական դատարանն այդ որոշմամբ դիրքորոշում է արտահայտել կուտակային կենսաթոշակային համակարգի առավել արդյունավետ գործելու հնարավոր տարբերակի վերաբերյալ, իսկ հարցի ամբողջական լուծումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը վերահաստատելով տվյալ իրավական դիրքորոշումը՝ գտնում է, որ խնդրի համակարգային լուծման արդյունավետ ուղիներից մեկը հենց նման ներդաշնակ եռամիասնության ապահովումն է:

22. Դիմողը գտնում է, որ չի կատարվել ՄԳՈ-1142 որոշումը՝ կապված տարիքային խտրականության հետ, քանի որ գործող կանոնակարգումը շարունակում է պահպանել տարբերակված մոտեցում՝ պայմանավորված որոշակի տարիքային շեմով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՄԳՈ-1142 որոշման եզրափակիչ մասում առանձին նորմեր ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել ոչ տարիքային խտրականության հիմքով: ՄԳՈ-1142 որոշման պատճառաբանական մասում ևս ՀՀ սահմանադրական դատարանը չի արձանագրել տարիքային խտրականության առկայություն: Հետևաբար, այս հիմքով ՄԳՈ-1142 որոշման չկատարման մասին խոսք լինել չի կարող:

Ինչ վերաբերում է տարիքային խտրականության վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ ընդհանրապես, ապա հարկ է նշել, որ խտրականությունն առկա է

այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք գրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ: Խնդրո առարկա իրավիճակում չի կարող արձանագրվել նման վիճակ, քանզի խոսքը վերաբերում է ոչ թե նույն իրավական կարգավիճակի շրջանակներում՝ տարիքով պայմանավորված խտրականությանը, այլ տարբեր իրավական կարգավիճակ ունենալու հիմքով անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքներին և պարտականություններին, այսինքն՝ իրավական հիմնավորում ունեցող օբյեկտիվ պայմաններին:

23. ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ սոցիալական վճար կատարող անձն իրավունք ունի սոցիալական վճարների կատարմանն ուղղելու սոցիալական փաթեթի գումարները: Այս դեպքում սոցիալական վճար կատարող անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, որպես կատարված սոցիալական վճարների փոխհատուցում, միանվագ ստանալու սոցիալական փաթեթի հաշվում ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա մնացորդը, բայց ոչ ավելի, քան նախորդ տարվա ընթացքում ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների չափն է:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սոցիալական փաթեթի գումարները սոցիալական վճարների կատարմանն ուղղելն օրենքով նախատեսված իրավունք է և կոչված է ոչ թե սահմանափակելու, այլ նպաստելու անձի իրավունքների արդյունավետ իրացմանը: Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, համաձայն որի՝ սահմանափակ թվով անձինք կարող են այդ իրավունքից օգտվել, պետք է արձանագրել, որ այդպիսի իրավակարգավորմամբ օրենսդիր մարմինը սոցիալական փաթեթի իրավունքը նախատեսել է որոշակի խումբ անձանց համար, օրենքով նախատեսված որոշակի պայմաններում, և այդ իրավունքը նախատեսող իրավանորմը նման ձևակերպմամբ չի վիճարկվել ՀՀ սահմանադրական դատարանում, չի ճանաչվել Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Այս առնչությամբ դիմողը գտնում է նաև, որ՝ «...եթե սոցիալական վճարի համար կարող է օգտագործվել աշխատանքային եկամուտներից տարբերվող եկամուտներ, ապա ինչու է սահմանափակվում միայն սոցիալական փաթեթով և չի ներառվում այլ եկամուտները՝ օրինակ շահութաբաժինները կամ փոխառու միջոցների դիմաց ստացվող տոկոսագումարները կամ վարձակալությունից ստացվող եկամուտները և այլն»:

Վերը նշված հարցադրումն անմիջականորեն չի վերաբերում սույն գործով վիճարկվող կանոնակարգման սահմանադրականությանը, այլ կարող է քննության առնվել ՀՀ Սահմանադրությանը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ այլ դիմումի շրջանակներում:

24. Վեճի առարկա ընթացակարգային հարցերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու պահանջը նախատեսված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ նշված օրենքի 27.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Նախագիծ մշակող մարմինը նորմատիվ իրավական ակտի նախագիծը ազդեցության գնահատողներին ներկայացնելու հետ մեկտեղ կազմակերպում է նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ, որոնց նպատակը նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա նորմատիվ իրավական ակտի նախագծի անհրաժեշտ լրամշակման աշխատանքների իրականացումը: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հանրային քննարկումները սկսվում են պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հանրային քննարկումներն իրականացվում են նախագիծը մշակող մարմնի ինտերնետային կայքում նորմատիվ իրավական ակտի նախագիծը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված այլ նյութերը հրապարակելու միջոցով, իսկ նախագիծ մշակող մարմնի նախաձեռնությամբ կարող են իրականացվել հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, հասարակական հարցումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով:

Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է:

Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդվածից բխում է, որ հանրային քննարկումներ իրականացնելու կարգից որոշակի առանձնահատկություններ նախատեսված են միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հանրային քննարկումների իրականացման համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.03.2010թ. «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N296-Ն որոշումն Ազգային ժողովում արտահերթ նստաշրջանի շրջանակներում քննարկվող օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու մասին որևէ հատուկ կարգավորում չեն նախատեսում:

ՀՀ Սահմանադրության 71, 72, 75 և 76-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ սահմանադիրն օրենսդրական գործընթացի իրականացման կարգին առնչվող միայն կարևորագույն հարցերն է կարգավորել: Մասնավորապես, Սահմանադրության վերոնշյալ հոդվածները սահմանում են օրենքների ընդունման քվեարկության համար անհրաժեշտ ձայների քանակը, քվեարկությանը մասնակից պատգամավորների անհրաժեշտ նվազագույն քանակը/քվորում/, ՀՀ Նախա-

գահի կողմից վերադարձված օրենքի՝ Ազգային ժողովի կողմից արտահերթ քննարկելու պահանջը, օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների, ՀՀ կառավարության ներկայացմամբ պետական բյուջեն հաստատելու հետ կապված հարցեր և այլն:

Այսպիսով, սահմանադիրն օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը որպես օրենքների ընդունման ընթացակարգային սահմանադրական պահանջ չի դիտարկում: Հետևաբար, բարձրացված հարցն իր բնույթով ոչ թե սահմանադրաիրավական, այլ օրենսդրական կարգավորման բնագավառին է առնչվում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները, որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը:

Նմանատիպ իրավական դիրքորոշում առկա է նաև սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում /օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 2013 թվականի փետրվարի 14-ի N 4-II որոշումը/:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ անհրաժեշտ է քննության առարկա հարցը դիտարկել նաև վիճարկվող իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում»:

«Ազգայի ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ «Արտահերթ նստաշրջանի գումարման կարգը» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առն-

վազն մեկ երրորդի կամ Կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանն անցկացվում է նախաձեռնողի **սահմանած օրակարգով և ժամկետում**»: Իսկ նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է արտահերթ նստաշրջանի անցկացման ընթացակարգը՝ բացառությամբ, եթե Ազգային ժողովի որոշմամբ այլ բան է նախատեսված: Քննության առարկա հարցի դեպքում ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «2014թ. հունիսի 18-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի անցկացման հատուկ ընթացակարգի մասին» որոշում, որով, ի թիվս այլ հարցերի, սահմանվել է հետևյալը՝ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի առաջին օրը գումարել մեկուկես ժամ տևողությամբ երեք նիստ: Առաջին ընդմիջման տևողությունը մեկուկես ժամ է: Երկրորդ օրվանից, յուրաքանչյուր օր, գումարել մեկուկես ժամ տևողությամբ չորս նիստ: Յուրաքանչյուր ընդմիջման տևողությունը՝ կես ժամ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ «Արտահերթ նստաշրջանում հարցերի քննարկման կարգը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկված են մինչև հարցը մի քանի ընթերցմամբ քննարկելու մասին հարցեր, ապա մինչև դրանց քննարկումն սկսվելն Ազգային ժողովում քննարկվում է այդ հարցերի քննարկման հատուկ ընթացակարգի մասին նախաձեռնողի(ների) կողմից ներկայացված Ազգային ժողովի որոշման նախագիծը, որով առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար նախատեսվում է **առնվազն 3 ժամ**»: 18.06.2014թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մի շարք օրենքների նախագծերի քննարկման հատուկ կարգի (երկրորդ ընթերցմամբ քննարկումն առաջին ընթերցմամբ ընդունումից հետո 24 ժամվա ընթացքում անցկացնելու) մասին» որոշում, որում, ի թիվս այլ հարցերի, ընդգրկված է եղել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ օրենսդրական գործունեության արդյունավետությունը երաշխավորելու տեսանկյունից հստակ կանոնակարգման առարկա պետք է լինեն օրենքների և Ազգային ժողովի որոշումների ընդունման ընթացակարգերը թե՛ հերթական և թե՛ արտահերթ նստաշրջանի /նիստի/ ընթացքում: Մասնավորապես, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 21, 27-29-րդ, 39-41-րդ, ինչպես նաև 51 և 52-րդ հոդվածների ուսումնասիրությունից հետևում է, որ արտահերթ նստաշրջանների /նիստերի/ դեպքում հստակեցված չէ Ազգային ժողովի հանձնաժողովների դերակատարությունը: Սակայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի դրույթների սահմանադրականությանն անդրադարձը դուրս է քննության առարկա գործի շրջանակներից:

Վերլուծելով առկա իրավակարգավորումները և փաստական հանգամանքները՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը գումարվել է կառավարության նախաձեռնությամբ, և ՀՀ կառավարությունը, հաշվի անելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադ-

րությունը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը հնարավորություն են տալիս նախաձեռնողին սահմանել արտահերթ նստաշրջանի անցկացման օրակարգը և ժամկետը, համապատասխան նախաձեռնությամբ է հանդես եկել: Գլխող կողմի վերլուծությունից բխում է, որ առաջինից երկրորդ ընթերցումը՝ 24-ժամյա ռեժիմով կազմակերպելը խնդրահարույց է, սակայն, ինչպես վերը նշվեց, առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար նախատեսվում է **առնվազն 3 ժամ**: Այսինքն՝ առաջինից երկրորդ ընթերցումը՝ 24-ժամյա ռեժիմով կազմակերպելն իրավաչափորեն համատեղվում է սահմանված իրավական կանոնակարգումների շրջանակներում:

Ըստ դիմողի՝ վերաբերելի օրենքի ենթադրյալ հակասահմանադրականությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ արդարադատության նախարարությունը սույն գործով քննության առարկա օրենքների առնչությամբ չի ներկայացրել համապատասխան իրավական փորձաքննության եզրակացություն: Մակայն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ համապատասխան եզրակացությունն առկա է: Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարը, ի պատասխան սահմանադրական դատարանի հարցման, 16.03.2015թ. թիվ 01/14/2932-15 գրությամբ տեղեկացնում է, որ «2014 թվականի հունիսի 19-ի 02/4231-14 գրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական փորձագիտական եզրակացություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»: Նույն գրությամբ տեղեկացվում է, որ հիշյալ գրությամբ համարժեք եզրակացություններ են ներկայացվել նաև սույն գործով վեճի առարկա մյուս բոլոր օրենքների նախագծերի վերաբերյալ: ՀՀ արդարադատության նախարարի պատասխան գրությամբ կից ներկայացվել են համապատասխան պետական փորձագիտական եզրակացությունների պատճենները, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

25. Վերոշարադրյալ դիրքորոշումները վերաբերում են դիմողի կողմից վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցերին: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նախորդ իրավակարգավորումների համեմատ որոշակի դրական տեղաշարժեր ապահովելով հանդերձ, նոր իրավակարգավորումներում սույն որոշման մեջ արձանագրված ոչ լիարժեք կարգավորումները նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1142 որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների դեռևս ոչ ամբողջական իրացման հետևանք են: **Օրենսդրական հետագա կարգավորումները համալիր բնույթ պետք է հաղորդեն խնդրի համակարգային լուծմանը՝** հետևողականորեն հաշվի առնելով նաև տվյալ հիմնահարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԳՈ-1142 և սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վեճի առարկա 2-րդ հոդվածի 1-ին մասի 28, 36 և 37-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ մասը, 9-րդ հոդվածի 10-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ և 13-րդ մասերը, 37-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի՝ «օրենքի 43-րդ հոդվածով» դրույթը, 39-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «որոնց կազմը և առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը» դրույթը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «ողջամիտ եկամտաբերություն» եզրույթը, 43-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ողջամիտ շահութաբերություն» եզրույթը, 44-րդ հոդվածի 2-րդ մասը, 46-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 62-րդ հոդվածի 5-րդ մասը, 62-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը, 63-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 67-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 81-րդ հոդվածի 5-րդ մասը, 81-րդ հոդվածի 7-րդ մասը, 81-րդ հոդվածի 13-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

3. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այն մասով, որով տարեկան գնաճով ճշգրտված չափով վերադարձնելու երաշխիքը չի տարածվում նաև տվյալ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների վրա, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ և 48-րդ /կետ 12/ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

4. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-68-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-69-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ և 10-րդ հոդվածները, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-74-Ն օրենք), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-76-Ն օրենք), «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-70-Ն օրենք), «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-71-Ն օրենք), «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-72-Ն օրենք), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-73-Ն օրենք), «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-77-Ն օրենք), «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՎ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**7 հուլիսի 2015 թվականի
ՍԳՈ-1224**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻՎՍԵՔԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 197-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ
ԵՎ 6-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 18-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված երկու դիմումներն են, որոնց հիման վրա քննության ընդունված գործերը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, մինչև դատաքննությունն սկսվելը, 2015

թվականի մայիսի 12-ի ՄԳ-ԱՌ-29 որոշմամբ միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Նախնական քննության ժամկետները» վերտառությամբ 197-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ և 6-րդ մասերը սահմանում են.

«5. Նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա:

6. Քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ»:

Օրենսգրքի 197-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ և 6-րդ մասերում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. ՀՀ ոստիկանության Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի քննիչ Ե. Պետրոսյանի կողմից 2014 թվականի հուլիսի 21-ին և նույն թվականի օգոստոսի 21-ին հարուցվել և վարույթ են ընդունվել համապատասխանաբար՝ թիվ 16138514 և թիվ 16146914 քրեական գործերը: 2014 թվականի հոկտեմբերի 17-ին քննիչ Ե. Պետրոսյանը կարացրել է վերոնշյալ քրեական գործերով նախաքննությունների ժամկետները երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումներ /թիվ 16146914 քրեական գործով նախաքննության ժամկետը մեկ անգամ արդեն երկարացվել էր 2014 թվականի սեպտեմբերի 18-ին/: Որոշումներն ուղարկվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին, որն իր՝ 2014 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 587քր-14 և թիվ 56/664քր-14 համապատասխան գրություններով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումները վերադարձրել է քննչական բաժնի պետին՝ քննիչի կողմից որոշումն ստորագրված չլինելու պատճառաբանությամբ և այն պատշաճ կարգով կազմելու և կրկին ներկայացնելու ցուցումով: Քննիչի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումներն ստորագրվելուց հետո դրանք 2014 թվականի հոկտեմբերի 22-ին կրկին ուղարկվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին, որն էլ նույն օրը վերադարձրել է վերոնշյալ քրեական գործերը և նախաքննության ժամկետը երկարացնելու միջ-

նորոգություն հարուցելու մասին որոշումները, հայտնելով, որ ժամկետը երկարացնելու միջնորդությունները չեն բավարարվել, քանի որ միջնորդությունները ներկայացնելու պահին քրեական գործերի նախաքննության ժամկետները լրացած են եղել: Վերոնշյալ քրեական գործերով տուժողների ներկայացուցիչները 2014 թվականի դեկտեմբերի 4-ին միջնորդություններ են հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ համապատասխան քրեական գործերով նախաքննությունների բաց թողնված ժամկետները վերականգնելու, վարույթն իրականացնող մարմնին նախաքննությունների կատարումը շարունակելու հանձնարարություն տալու և օրենքով սահմանված կարգով քրեական գործերի ընթացքը լուծելու վերաբերյալ: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Խաչատրյանը քրեական գործերով տուժողների ներկայացուցիչներին 2014 թվականի դեկտեմբերի 16-ին համապատասխան գրություններով հայտնել է, որ վերոնշյալ գործերով վարույթ չի իրականացվում, ինչի պատճառով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին հասցեագրված միջնորդությունները չեն կարող քննարկվել: Թիվ 16138514 քրեական գործով տուժողի ներկայացուցիչը 2015 թվականի հունվարի 14-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Խաչատրյանի գործողությունների դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան: Թիվ 16146914 քրեական գործով տուժողների ներկայացուցիչը 2015 թվականի հունվարի 13-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին իր վստահորդների իրավունքների խախտումը վերացնելու, այն է՝ թիվ 16146914 քրեական գործով նախաքննության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու և համապատասխան աշխատակիցներին նախաքննության կատարումը շարունակելը պարտավորեցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերը նշված բողոքի և միջնորդության քննության արդյունքում 2015 թվականի ապրիլի 6-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել վերոնշյալ դատական գործերով վարույթները կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

3. Ըստ դիմողի՝ օրենսգրքի 188, 196 և 197-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր քրեական գործերով պարտադիր պետք է իրականացվի նախաքննություն, որը կարող է ավարտվել մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով, իսկ նախաքննության ժամկետը կարող է երկարացնել բացառապես դատախազը՝ քննիչի պատճառաբանված որոշման (նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման) հիման վրա, որը վերջինս պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ:

Դիմողը գտնում է, որ տվյալ դեպքում դատախազը նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին քննիչի որոշման վրա ստորագրությամբ պարզապես երկարացնում է նախաքննության ժամկետը, կամ, չստորագրելով քննիչի որոշումը՝ չի երկարացնում նախաքննության ժամկետը՝ առանց ներկայացնելու իր դիրքորոշումը դրանց վերաբերյալ, ինչպես թիվ 16146914 և թիվ 16138514 քրեական գործերի պայմաններում:

Օրենսգրքի 197-րդ հոդվածով կարգավորված չէ, թե դատախազն ինչ դատավարական ակտով է երկարացնում նախաքննության ժամկետը, սակայն, նկատի ունենալով, որ նախաքննության ժամկետը երկարացնելը դատավարական գործողություն է, ուստի, դիմողի համոզմամբ, դատախազը նախաքննության ժամկետը կարող է երկարացնել առանձին պատճառաբանված որոշում կայացնելով:

Ըստ դիմողի՝ ցանկացած միջնորդություն իրավասու մարմնի կողմից քննարկվելու արդյունքում կարող է մերժվել, բայց օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված չէ դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու (նախաքննության ժամկետը չերկարացնելու) իրավական ռեժիմ, ինչպես նաև՝ այդ իրավիճակում քրեական գործի հետագա ընթացքը լուծելու ընթացակարգ: Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելու դեպքում նախաքննությունը հայտնվում է փակուղային իրավիճակում, քանի որ նախաքննության ժամկետից դուրս քննիչն իրավունք չունի կատարել որևէ դատավարական գործողություն, այդ թվում՝ նախաքննությունն ավարտելուն ուղղված գործողություններ: Այս պարագայում քրեական գործի հետագա ընթացքը մնում է առկախված վիճակում: Ուստի դատախազի՝ նախաքննության ժամկետը չերկարացնելու իրավական գործիքի կիրառումը, դիմողի կարծիքով, չի տեղավորվում գործող քրեական արդարադատության տրամաբանության շրջանակներում:

Նման պայմաններում, ըստ դիմողի՝ օրենսգրքի վիճարկվող նորմերը հակասում են իրավական որոշակիության սկզբունքին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել **օրենք**, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

Ամփոփելով վերոգրյալը՝ թիվ ԵՄԴ/0001/11/15 և թիվ ԵՄԴ/0003/11/15 դատական գործերով քննության ընթացքում, դիմողի կարծիքով, պարզվել է, որ առկա է վարույթում գտնվող գործերով կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության խնդիր, և նա գտնում է, որ օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 18, 19 և 103-րդ հոդվածներին:

4. Սույն գործով վիճարկվող դրույթների վերաբերյալ պատասխանողը, մասնավորապես, գտնում է, որ նախաքննության ժամկետի երկարաձգումը հանդիսանում է բացառություն ընդհանուր կանոնից, և այն պետք է իրականացվի բավարար իրավական և փաստական հիմնավորվածության պարագայում:

Ըստ պատասխանողի՝ նախաքննության ժամկետի երկարացման հարցի շուրջ վերջնական որոշում կայացնելու իրավասությունն օրենսդիրը վերապահել է դատախազին, որն օժտված է հայեցողական լիազորությամբ: Հայեցողական լիազորությունների առկայությունն իրավական պետությանը բնորոշ հատկանիշ է, բայց օրենսդրորեն պետք է նախատեսվեն հնարավոր չարաշահումները կանխելու կառուցակարգեր, այսինքն՝ օրենսդիրը պետք է սահմանի հայեցողության իրականացման սահմանները և դրանց իրականացման եղանակները, ինչն անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է: Հակառակ պարագայում, անսահմանափակ հայեցողական լիազորություններով օժտելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին:

Պատասխանողը համակարծիք է դիմողի այն պնդմանը, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու և քրեական գործի հետագա ընթացքը լուծելու ընթացակարգ, ինչի պատճառով նախաքննությունը հայտնվում է փակուղային իրավիճակում, իսկ քրեական գործի հետագա ընթացքը մնում է առկախված վիճակում: Ուստի դատախազի՝ նախաքննության ժամկետը չերկարացնելու իրավական գործիքի կիրառումը, պատասխանողի կարծիքով, չի տեղավորվում գործող քրեական արդարադատության տրամաբանության շրջանակներում:

Պատասխանողի կարծիքով՝ դատախազը, ստանալով քննիչի՝ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն պարունակող պատճառաբանված որոշումը, կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

- համաձայնելով քննիչի դիրքորոշմանը՝ կայացնել առանձին որոշում նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին,
- համաձայնելով քննիչի դիրքորոշմանը՝ կայացնել որոշում նախաքննության ժամկետը երկարացնելու կամ նախաքննության ժամկետն այլ պատճառաբանությամբ երկարացնելու մասին,
- չհամաձայնելով քննիչի դիրքորոշմանը՝ կայացնել որոշում քրեական գործի վարույթը կարճելու մասին կամ նախաքննության ժամկետը երկարացնել այնքանով, որքանով անհրաժեշտ է նախաքննությունն ավարտելու և մեղադրական եզրակացություն կազմելու համար:

Պատասխանողը գտնում է, որ անկախ այն հանգամանքից, թե նախաքննության ժամկետը երկարացնելու հարցի վերաբերյալ դատախազի որոշումն ինչպես կարտահայտվի՝ առանձին դատավարական փաստաթղթի ձևով, թե քննիչի՝ միջնորդություն պարունակող որոշման մեջ մակագրություն կամ նշում կատարելով, այդպիսի որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Միաժամանակ պատասխանողը հայտնում է, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (Կ-084-14.09.2012, 29.11.2013-ՊԻ-010/0) 24-րդ հոդվածով նախատեսվում է, որ նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում, իսկ 194-րդ հոդվածով նախատեսվում է, որ բացառիկ դեպքերում, երբ դա

պահանջում է արդարադատության շահը, նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը 2 ամսով:

5. Սույն գործի քննության շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

ա) վեճի առարկա դրույթների իրավակարգավորման առարկան եւ սահմանադրափրավական բովանդակությունը,

բ) քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու ինստիտուտի շրջանակներում հնարավոր օրենսդրական բացի կամ թերի իրավակարգավորման առկայությունը,

գ) քրեական գործերով նախաքննության ժամկետը երկարացնելու մասին ընդունվող դատավարական ակտի բնույթի վերաբերյալ ձեւավորված իրավակիրառ պրակտիկան:

6. Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:

Վերոնշյալ սահմանադրափրավական դրույթն իր արտացոլումն է գտել, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի վիճարկվող մասերում, որոնց համաձայն՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար դատախազը լուծում է նախաքննության ժամկետի երկարացման հարցը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը քրեական գործերով որպես նախաքննության իրականացման առավելագույն ժամկետ է սահմանել երկամսյա ժամկետը: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից եւ ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը /հոդվ. 197, մաս 2/:

Միաժամանակ, օրենսգրքի վերաբերելի նորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ.

- օրենսգիրքը նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու վերաբերյալ քննիչի որոշումը դատախազի կողմից հաստատելու հստակ ժամկետ չի նախատեսում,
- նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու վերաբերյալ քննիչի որոշումը մերժելու իրավական հետևանքներն օրենսգրքով հստակ կանոնակարգված չեն,
- օրենսգրքով նաև հստակ կանոնակարգված չէ սահմանված ժամկետի խախտմամբ նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդության ներկայացման հանգամանքը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԳ-Ո-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ սկզբունքային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումները.

ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը:»,

բ) «... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորման բացերն օրենսգրքի այս կամ այն հոդվածում լրացնելու հարցը գտնվում է բացառապես օրենսդրի իրավասության շրջանակներում, և այս պարագայում առկա է մի իրավիճակ, երբ իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ բացակայում են մի շարք նորմատիվ պատվիրաններ, և այդ բացերի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ օրենսդրի կողմից նախաքննության ժամկետի երկարացման ինստիտուտի շրջանակներում վերոգրյալ հարցերի նորմատիվ կարգավորումը թույլ կտա խուսափել սահմանադրականության տեսանկյունից հնարավոր խնդրահարույց իրավիճակներից, կբարձրացնի նախաքննության մասնակիցների համար այդ ինստիտուտի իրավական որոշակիության և մատչելիության մակարդակը, կհստակեցնի քննիչդատախազ փոխհարաբերությունների իրավական սահմանները:

Կարևորելով քրեական գործերով նախաքննության իրականացման համար պատշաճ իրավակարգավորված ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորման բացերով պայմանավորված նախաքննության հնարավոր փակուղային վիճակում հայտնվելն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել անձի մի շարք սահմանադրական իրավունքների, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

Սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 17-ով թվագրված եզրակացության վերլուծությունից հետևում է, որ բացակայում է նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միասնական իրավակիրառ պրակտիկան, ավելին, ձևավորվել է նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ տարբեր մոտեցումներ, որոնք պայմանականորեն դասակարգվել են երեք խմբի.

- նախաքննության ժամկետը երկարացվում է քրեական վարույթ իրականացնող քննիչի՝ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության մասին որոշման վերին աջ անկյունում տպագրված նշագրման ազատ հատվածում դատախազի ստորագրություն դնելով,
- հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման վրա՝ վերին մասում կամ որոշման եզրափակիչ մասից հետո ձեռագիր կերպով երկարացնում կամ չի երկարացնում նախաքննության ժամկետը, ընդ որում, որոշ դեպքերում համապատասխան գրառման բացակայության պատճառով պարզ չի լինում, թե ինչ ժամանակով է երկարացվել նախաքննության ժամկետը,
- հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման հիման վրա կայացնում է առանձին դատավարական ակտ:

Նման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական կարգավորումների հստակեցման, ինչպես նաև դատախազական հսկողության իրականացման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջի ամրագրման պայմաններում: Սակայն առկա վիճակը պայմանավորված չէ վեճի առարկա դրույթների սահմանադրականությամբ: Վերջիններիս իրավական բովանդակության հիմնական բաղադրատարրերն են.

- դատախազի վերահսկողական լիազորության ամրագրումը՝ նախաքննության ժամկետը երկարացնելու կապակցությամբ,
- քննիչի կողմից դատախազին պատճառաբանված որոշում ներկայացնելու պարտավորության ամրագրումը,
- նման որոշում ներկայացնելու վերաբերյալ ժամկետի հստակ սահմանումը:

Նման բոլոր իրավակարգավորումները սահմանադրականության տեսանկյունից հետապնդում են իրավաչափ նպատակ եւ խնդրահարույց չեն:

Միաժամանակ, հստակ է նաեւ, որ դատախազն օժտված չէ նախաքննության ժամկետը երկարացնելու ինքնուրույն լիազորությամբ:

Տվյալ դեպքում դատախազը՝ հանդես գալով որպես հսկողություն իրականացնող սուբյեկտ, կարող է ստուգել քննիչի որոշման պատճառաբանվածությունը և հաշվի առնելով քրեական գործերով նախաքննության օրինականության, լրիվության, բազմակողմանիության և արդյունավետության սկզբունքները՝ հաստատել կամ չհաստատել քննիչի համապատասխան դատավարական ակտը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հուլիսի 2015 թվականի
ՍԳՈ-1225**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՕՎՍԱՆԱ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 71-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 սեպտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Դազարյանի, Ե. Վարոսյանի, Ա. Ջեյնալյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Օվսանա Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Օվսանա Գալստյանի՝ 17.04.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Սահմանադրական

րական դատարանի մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընունվել է 01.06.2006 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 14.06.2006 թվականին և ուժի մեջ է մտել 01.07.2006 թվականից:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Սույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարան դիմում են դատարանները, ինչպես նաև գլխավոր դատախազը, եթե գտնում են, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Օվսանա Գալստյանը 09.07.2014թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ առողջապահության նախարարության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.12.2013թ. թիվ 15/2-134 և 13.01.2014թ. թիվ 15/2-02 որոշումներն անվավեր ճանաչելու և ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին դիմումներով հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 17.07.2014թ. որոշմամբ մերժել է հայցադիմումի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ. ա/ առկա չէ ՀՀ առողջապահության նախարարության կողմից դրսևորված անգործության փաստ, քանի որ վերջինս արձագանքել է դիմումին և տվել պատասխան, բ/ ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.12.2013թ. թիվ 15/2-134 և 13.01.2014թ. թիվ 15/2-02 որոշումներն իրենցից ներկայացնում են գրություններ և չեն հանդիսանում այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտեր, գ/ ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին դիմումներով հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը հանդիսանում է հետևանքների վերացման ածանցյալ պահանջ և, քանի որ վերը նշված երկու հիմնական պահանջների մասով նշված հարցի լուծումը կանխորոշում է նաև հետևանք հանդիսացող ածանցյալ պահանջի լուծումը, ուստի այդ պահանջի մասով ևս հայցադիմումի ընդունումը, որպես ածանցյալ պահանջ, ենթակա է մերժման:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 12.09.2014թ. որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի 17.07.2014թ. որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 22.10.2014թ. որոշմամբ մերժել է դիմողի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Գործի վերաքննության փուլում դիմողը միջնորդել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին կասեցնել գործի վարույթը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված լիազորության իրացմամբ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարցով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 12.09.2014 թվականի որոշմամբ անդրադարձել է միջնորդությանը և վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը, 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը՝ նշել հետևյալը. «... Վերոհիշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական պաշտպանության դիմելու իրավունքը, որպես ընդհանուր կանոն, վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ, իսկ որպես բացառիկ կանոն գործում է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ նախատեսված է նաև իրավական նորմերի կոնկրետ վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել դիմելու ՀՀ սահմանադրական դատարան, այն դեպքերում, երբ դատարանի կարծիքով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Ընդ որում նշված իրավանորմի կիրառմանը դատարանի իրավունքն է և այդ իրավունքն իրականացնելը պետք է բխի արդարության պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից:

Վերաքննիչ դատարանի կարծիքով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ դատական պաշտպանության իրավունքը համարվում է սահմանափակվող իրավունք և օրենսդիրը՝ վարչական դատարան դիմելու իրավունքի իրականացումը, յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների առկայությամբ, իսկ հայց հարուցելու իրավունքի նախադրյալների բացակայությունն ինքնին բացառում է տվյալ հայցադիմումի քննության ընդունումը:

Տվյալ դեպքում, երբ բացակայում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի առարկան՝ բացակայում է նաև նշված հայցատեսակով հայց հարուցելու իրավունքի նախադրյալը, ինչն էլ հանգեցնում է Դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ղեկավարվելու պարտականությանը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի կարծիքով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը և, ըստ այդմ բացակայում է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտությունը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վարչական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման...»:

3. Գիմնողի փաստարկները հանգում են հետևյալին. դիմողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության իրավունքից բխում է ինչպես Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ Սահմանադրական դատարան դիմելու՝ անձի սուբյեկտիվ իրավունքը, այնպես էլ դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը՝ կիրառման ենթակա իրավական ակտի՝ ընդհանրապես, և օրենքի դրույթի՝ մասնավորապես, վերաբերյալ դատավարության կողմի արտահայտած՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ կասկածի դեպքում:

Ըստ դիմողի՝ իրավակիրառական պրակտիկայում դատարանները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասին հաղորդել են այնպիսի իմաստ, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը դատարաններին իրավունք է վերապահում գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին հարուցված միջնորդությունը քննարկելիս դրսևորել լայն հայեցողություն կամ լռելյայն մերժել միջնորդությունը, չպատճառաբանել միջնորդության մերժումը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը ոչ թե պարտականություն է, այլ բացարձակ հայեցողություն, որ միջնորդության մեջ նշված հիմքերի և դրանց առնչությամբ շարադրված փաստարկներին համաձայն չլինելու պարագայում միջնորդությունը կարելի է մերժել՝ արտահայտելով առաջադրված դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ դիրքորոշում:

Գիմնողը նաև նշում է, որ անձի կողմից համապատասխան միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարանը պետք է քննության առնի միջնորդությունը՝ դրա ակնհայտ անհիմն լինել-չլինելու տեսակետից, և ընդունի պատճառաբանված որոշում. ընդհանուր իրավասության դատարաններն իրավունք չունեն իրականացնել սահմանադրական արդարադատություն՝ որոշել, որ դատավարության կողմի մոտ հակասահմանադրականության մասին կասկած հարուցած դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Պատասխանողը գտնում է, որ, ըստ էության, վիճարկվող նորմից հետևում է, որ այստեղ գործ ունենք դատարանի հայեցողական լիազորության հետ, որը, սակայն, չի կարող կամայականորեն իրականացվել: Այն պետք է իրականացվի օրենքի շրջանակներում՝ հաշվի առնելով նման իրավակարգավորման նպատակները: Սահմանադրական դատարան դիմելու՝ դատարանի լիազորությունն ինք-

նանպատակ չէ, այլ պայմանավորված է անձանց իրավունքները հնարավոր հակասահմանադրական օրենքի հետևանքներից պաշտպանելու անհրաժեշտությամբ: Ուստի կիրառման ենթակա դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածները, որոնք կարող են վտանգել անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը, դատարանների համար պետք է հիմք հանդիսանան սահմանադրական դատարանում նշված դրույթի սահմանադրականության հարցը բարձրացնելու համար: Պատասխանողը նաև նշում է, որ «Սահմանադրական դատարան դիմելու յուրաքանչյուր միջնորդության չհիմնավորված բավարարումը կարող է հանգեցնել նաև դատական քննության ողջամիտ ժամկետի խախտման», ինչպես նաև՝ «... դատարանների կողմից միջնորդությունների մերժման հնարավորությունը, որը դատավարական օրենսգրքերի կարգավորման առարկա է, ըստ էության, արդյունավետ մեխանիզմ է սահմանադրական դատարան դիմելու իրավունքի հնարավոր չարաշահումները կանխելու համար»: Ըստ պատասխանողի՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում սահմանադրական դատարան դիմելը դատարանների համար սահմանադրական պարտականություն է, որը պետք է իրականացվի ՀՀ Սահմանադրության և օրենքի շրջանակներում՝ հաշվի առնելով անձանց հիմնական իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, իսկ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության կողմերի միջնորդությունների մերժումը պետք է լինի հիմնավորված:

5. Ուսումնասիրելով գործի նյութերը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից վկայակոչված՝ իր դատական պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմի սահմանադրականությամբ և նույնիսկ այդ նորմի կիրառմամբ կամ չկիրառմամբ, առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ վիճարկվող նորմի և դիմողի դատական պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտման միջև: Դիմողի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես իր իրավունքների ենթադրյալ խախտման հանգեցրած նորմի վիճարկումը հիմնավորված չէ: Դիմողն ընդհանուր իրավասության դատարանից պահանջում էր դիմել սահմանադրական դատարան հայցադիմումի մերժման հիմքերի սահմանադրականության հարցով: Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ այդ իրավիճակում դատարանը կարող էր կասեցնել հայցադիմումը վարույթ ընդունելու գործընթացն ու դիմել սահմանադրական դատարան այն դեպքում, երբ գտներ, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որեւէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իր վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը: Թեև դատարանի պարտականությունն է դիմել սահմանադրական դատարան, այնուհանդերձ, նման պարտականությունը ծագում է այն պահից, երբ դատարանը հիմնավոր կասկածներ ունի, որ կիրառման ենթակա նորմը հակասում է Սահմանադրության:

նր: Բոլոր այն դեպքերում, երբ առկա չեն այդ հիմնավոր կասկածները, ըստ օրենքի՝ դատարանը պարտավոր չէ դիմել սահմանադրական դատարան: Հետևաբար, դիմողի այն պնդումը, ըստ որի՝ իր միջնորդության առկայության պարագայում դատարանը պարտավոր է անվերապահորեն դիմել սահմանադրական դատարան, համահունչ չէ արդարադատության էությանը, քանի որ հայտնի է, որ դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների միջնորդություններով, և դատավորն էլ գործում է, ի թիվս այլնի, իր ներքին համոզմունքի հիման վրա: Այս հանրահայտ սկզբունքները կոչված են երաշխավորելու դատավորի անկախությունն ու ինքնուրույնությունը: Հետևաբար, միայն այն փաստը, որ դատարանը հիմնվելով օրենքի վրա՝ չի դիմել սահմանադրական դատարան՝ չտեսնելով տվյալ գործով կիրառման ենթակա իրավանորմի և Սահմանադրության միջև հակասություն, դեռևս բավարար հիմք չէ, որ դիմողը պնդի իր սահմանադրական իրավունքների խախտման մասին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողն անուղղակիորեն առաջ է քաշում դատական ակտի իրավաչափության գնահատման խնդիր, ինչը դուրս է սահմանադրական դատարանի իրավասությունից, և դիմողն այդ հարցով իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:

Ուստիև, հիմնվելով վերոշարադրյալի վրա՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքերով:

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև դիմողի այն փաստարկներին, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության իրավունքից բխում է դատարանների՝ սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը, որ իրավակիրառական պրակտիկայում դատարանները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասին հաղորդել են այնպիսի իմաստ, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը դատարաններին վերապահում է սահմանադրական դատարան դիմելու իրավունք, այլ ոչ թե սահմանում է պարտականություն, որ դիտարկվող նորմը դատարաններին վերապահում է սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ միջնորդությունն առանց պատճառաբանման մերժելու իրավունք:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթում «եթե գտնում են» բառակապակցությունից բխում է, որ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ միջնորդության առկայության պայմաններում դատարանները միջնորդության վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելու պարտականության նկատառումներով բոլոր դեպքերում պարտավոր են դիրքորոշում /կարծիք/ արտահայտել միջնորդության մեջ նշված իրավանորմի սահմանադրականության առնչությամբ իրենց հիմնավոր կասկածի կամ դրա բա-

ցակայության վերաբերյալ, ինչը չի նշանակում այդ նորմերի սահմանադրականությունը որոշելու իրավասություն: Վերջինս վերապահված է բացառապես սահմանադրական դատարանին: Դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու և սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ ներկայացված միջնորդության առնչությամբ արտահայտած կարծիքը չի նույնանում սահմանադրական արդարադատության իրականացման հետ և չի դառնում վերջինիս այլընտրանք, քանզի նման կարծիքն ուղղված է բացառապես միջնորդության մերժմանը կամ բավարարմանը: Հետևանքների տեսանկյունից այն երբեք չի նույնանում սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշման հետ և չի հանգեցնում վերաբերելի իրավական նորմի իրավաբանական ուժի փոփոխության:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթով դատարաններին վերապահված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը, անշուշտ, ենթադրում է դատարանի պարտականության առկայություն: Դեռևս 18.09.2013 թվականին ընդունված ՍԳ-Ո-1114 որոշման մեջ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացման խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք»:

Սահմանադրական դատարանը նաև հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել, որ «իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն»: Օրենսդրական հետագա զարգացումները պետք է ընթանան այս ուղղությամբ:

Նման պարտականությունը, սակայն, դատարանների համար ծագում է այն պահից, երբ դատարանները հիմնավոր /ողջամիտ/ կասկած կունենան, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Օվսանա Գալստյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հաստատանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**29 սեպտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1227**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 196-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 հոկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 1-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 7-ից:

Ընդունման պահից ի վեր օրենսգիրքը փոփոխվել և լրացվել է չորս անգամ /ԱԺ 21.06.2014 ՀՕ-99-Ն, ԱԺ 21.06.2014 ՀՕ-89-Ն, ԱԺ 17.12.2014 ՀՕ-250-Ն, ԱԺ 18.05.2015 ՀՕ-66-Ն օրենքներով/, բայց 196-րդ հոդվածը մնացել է անփոփոխ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի կազմը» վերտառությամբ 196-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն գլխով նախատեսված գործերը, ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 12.11.2014թ. Հ. Մարությանը, Ա. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Ստեփանյանը, Մ. Աղաջանյանը, Ն. Սահակյանը և Գ. Ասոյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 29.05.2009թ. թիվ 604-Ն որոշման առաջին կետի 5-րդ ենթակետը՝ Երևանի Մ. Մաշտոցի պողոտա թիվ 48 շենք հասցեում գտնվող թիվ 78 տարածքի մասով, ինչպես նաև այդ որոշման հիման վրա թիվ 78 տարածքի նկատմամբ կատարված՝ Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի քաղաքապետարանի կողմից 14.06.2014թ. նշված տարածքը վաճառելու համար հայտարարված աճուրդը և այդ աճուրդի արդյունքում Երևան համայնքի և քաղ. Ն. Հարությունյանի միջև 18.07.2012թ. կնքված պայմանագիրը: Հայցվորները միջնորդել են նաև վերականգնել նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար օրենքով սահմանված և բաց թողնված դատավարական ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի 19.11.2014թ. որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են:

Նշված որոշումների դեմ հայցվորները 03.12.2014թ. վերաքննիչ բողոք են ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

19.12.2014թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի հիմքով բողոքի ընդունումը մերժվել է և նշված որոշումը սահմանված ժամկետում չի բողոքարկվել:

30.01.2015թ. հայցվորները վերաքննիչ բողոքը ներկայացրել են ՀՀ վարչական դատարան:

09.02.2015թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանը վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

Վերոնշյալ բողոքի քննության արդյունքում 2015թ. մայիսի 22-ին ՀՀ վարչա-

կան դատարանը որոշում է կայացրել կասեցնել վերը նշված դատական գործով վարույթը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

3. Դիմողը գտնում է, որ գործի լուծումը հնարավոր է միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի կիրառմամբ և այդ նորմի՝ «ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները» արտահայտությունը խնդրահարույց է **ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխանության տեսանկյունից:**

Ըստ դիմող դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բողոքների քննությունը վարչական դատարանին լիազորելը ոչ միայն պատճառաբանված չէ, այլև խնդիրներ է ստեղծում ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով երաշխավորված **աստիճանակարգության** տեսանկյունից:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ դիմողը գտնում է, որ գործող իրավակարգավորման արդյունքում չի ապահովվում արդյունավետության և օբյեկտիվության լրացուցիչ երաշխիքը, քանի որ վարչական վերաքննիչ դատարանի առկայության պայմաններում վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը վերանայում է այդ ակտն ընդունած դատարանը՝ այն էլ դատավորների նույն թվով:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող իրավադրույթը խառնաշփոթ է ստեղծում վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացման հարցում, քանի որ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ գլխով վերաքննիչ վարույթը հստակ կանոնակարգված է, իսկ խնդրո առարկա նորմը դրան տրամագծորեն հակառակ կարգավորում է տալիս՝ առաջացնելով անորոշություն:

Դիմողը նշում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորված չեն նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննող դատարանի լիազորությունները, քննության կարգը և դրա արդյունքում ընդունվելիք ակտերի բնույթը:

Դիմողի կարծիքով՝ ստեղծվել է մի իրավիճակ, որի պայմաններում վիճարկվող նորմի հիման վրա վարչական դատարանը պետք է քննության ընդունի վերաքննիչ բողոքները, սակայն հետագա գործողությունների համար որևէ լիազորություն չունի, ինչը վտանգում է **ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով** երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրագործումը՝ դարձնելով այն անիրական:

4. Ըստ պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող եռաստիճան դատական համակարգի պայմաններում դատական ատյաններից յուրա-

քանչյուրն ունի իր գործառույթները՝ **առաջին ատյանի դատարանը** գործերի ըստ էության քննության և լուծման միջոցով իրականացնում է անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, **վերաքննիչ դատարանը** դատական սխալներն ուղղելու գործառույթի միջոցով իրականացնում է անձանց իրավունքների պաշտպանությունը, իսկ **վճռաբեկ դատարանը** կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսդիրը տարբեր դատական ատյանների միջև գործառնական կապ ստեղծելով նպատակ ունի ապահովել դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը, անձանց խախտված իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Եռաստիճան դատական համակարգի առկայության պայմաններում վարչական դատարանի կողմից իր կայացրած դատական ակտերի վերանայումը շեղվում է դատական պաշտպանության եռաստիճան համակարգի ընդհանուր տրամաբանությունից և նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը պետք է իրականացվի ՀՀ վարչական վերաքննիչ դատարան բողոքարկելու միջոցով:

Պատասխանողը նաև նշում է, որ վերը նշված խնդիրը լուծելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, որն առաջիկայում կդրվի շրջանառության մեջ:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը գնահատել.

- ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական ատյանների աստիճանակարգությունը պահպանելու տեսանկյունից,

- անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացումը երաշխավորելու տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

Դատական ատյանների աստիճանակարգությունն առաջին հերթին կոչված է ապահովելու դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վերահսկողությունը վերադաս դատարանների կողմից, դատական սխալների ժամանակին ուղղումը, որն էլ երաշխավորում է ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական շահերի և իրավունքների առավել պաշտպանությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով

նախատեսված վարչական գործերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Նույն օրենսգրքի՝ «Վերաքննիչ դատարանի իրավասությունը» վերտառությամբ 39-րդ հոդվածը սահմանում է դրույթ, համաձայն որի՝ վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ միջանկյալ դատական ակտերը՝ որպես այդպիսին, չեն կարող դիտվել որպես որոշիչ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առումով և, որպես կանոն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով չեն պաշտպանվում, եթե, իհարկե, միջանկյալ որոշման բացառիկությունը դա չի պահանջում / *Markass Car Hire Ltd v. Cyprus*, (dec.), no. 51591/99, 23 October 2001/:

Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը, դիտարկելով որպես նման բացառիկ դեպք, օրենսդիրն այն ընդգրկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ 22-րդ գլխի 131-րդ հոդվածում թվարկված վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի ցանկում:

ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը մասնագիտացված դատարաններ են, այնուամենայնիվ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթը վճարեկ դատարանում» վերտառությամբ 23-րդ գլխի 153-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել վճարեկության կարգով վճարեկ դատարանում:

Օրենսդիրը, ըստ էության, պահպանելով աստիճանակարգության տրամաբանությունը՝ նախատեսել է միջանկյալ դատական ակտերի՝ վերադաս դատարաններում բողոքարկման հնարավորություն, որը, սակայն, չի տարածվում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վրա:

Մասնագիտացված դատարանների առնչությամբ սահմանադրական դատարանն իր ՄԳ-Ո-1190 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունվետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի քաղաքատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է ՀՀ Սահմա-

նադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ»:

Ի լրումն վերը նշվածի, սահմանադրական դատարանը վերահաստատում է իր ՍԳ-Ո-719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը»:

6. Անդրադարձ կատարելով դատարանի մատչելիության երաշխիքն ապահովելու պետության պարտականությանը՝ սահմանադրական դատարանն իր **ՍԳ-Ո-765** որոշմամբ վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևյալ մոտեցումը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին **չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ**, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի գործնական և արդյունավետ իրագործմանը, գտնում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածն ինքնին չի նախատեսում ստորին դատական ատյանի որոշումն ավելի բարձր առյանում գանգատարկելու իրավունքը, սակայն, երբ մյան իրավունք նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, ապա 6-րդ հոդվածը կիրառելի է դատական իրավասություն ունեցող վերադաս ատյանների նկատմամբ /Delcour v. Belgium, «25, Application no. 2689/65, 17.01.1970):

Վիճարկվող իրավադրույթի կիրառման պրակտիկան վկայում է այն մասին, որ վարչական վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ իրավասու չէ այն քննելու: Ստեղծված իրավիճակում վարչական դատարանն ստիպված է իրականացնել վերաքննության գործառնությունը, որն ի սկզբանե իրենը չէ՝ խախտելով դատական համակարգի աստիճանակարգությունը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ նույնաբովանդակ փաստական հանգամանքներով **ՎԳ/6478/05/14** վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. հուլիսի 27-ի նախադեպային որոշմամբ ձևավորվել է վիճարկվող դրույթով նախատեսված նորմի այնպիսի իրավակիրառ պրակտիկա, որը բացառում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու

գործերով միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը ՀՀ վարչական դատարանում: Մասնավորապես, վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ վարչական վերաքննիչ դատարան:

Վերը նշված գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ասված է՝ «...**դատավարության մասնակիցները պետք է հնարավորություն ունենան վիճարկելու** ... որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը վերադաս դատական ատյանում՝ **ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում**, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է, և նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտի բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն գրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտը վերադաս դատական ատյանում բողոքարկելու իրավունքից»:

7. Սահմանադրական դատարանը կարևորում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները նույն դատարանի կողմից քննելու պարագայում դատարանի անկողմնակալության գնահատման խնդիրը: Գործի քննությունն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հանդիսանում է Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներից մեկը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը տարբերակում է **անկողմնակալության սուբյեկտիվ չափորոշիչ**՝ դատավորի անձնական առնչությունը տվյալ գործին, և **օբյեկտիվ չափորոշիչ**՝ այդ հարցում ողջամիտ կասկածները բացառող բավարար երաշխիքների առկայությունը /Gautrin and others v. France, ՄԻԵԳ-ի 1998թ. մայիսի 20-ի գործը/:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը վիճահարույց է համարում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթը դատարանի կողմնակալությունը գնահատելու տեսանկյունից՝ արդյո՞ք կարող է անկողմնակալ լինել դատարանն իր իսկ կայացրած դատական ակտի վերանայման հարցում:

Քննության առարկա գործով առաջադրված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքի /28.11.2007թ./ և ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա. 2010 թվականի հոկտեմբերի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության դա-

տական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն 2010 թվականի դեկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը և վարչական արդարադատությունն իրականացվում է եռաստիճան համակարգի շրջանակներում, նախկինում գործող երկաստիճանի փոխարեն,

բ. սույն գործով վիճարկվող իրավադրույթը, որը նախատեսում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայումը նույն դատարանի կողմից, փաստորեն շարունակել է գործել նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի ստեղծումից հետո:

Ինչ վերաբերում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրագործման հարցին, ապա հարկ է մատնանշել, որ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները հաճախ դիտարկում է որպես մեկ միասնական իրավական երևույթ և բազմիցս դրանց անդրադարձել է իր մի շարք որոշումներում /ՄԳՌ-719, ՄԳՌ-780, ՄԳՌ-936, ՄԳՌ-1037, ՄԳՌ-1190 և այլն/:

ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները երաշխավորում են յուրաքանչյուրի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Դատական օրենսգրքի 7-րդ հոդվածը նույնպես ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Նման մոտեցումը համապատասխանում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ոլորտում միջազգային իրավական պահանջներին, որոնք իրենց արտացոլումն են գտել, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում /հոդվածներ 7, 8 և 10/, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում /հոդված 14/, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում /հոդվածներ 6, 13/ և այլն:

Անդրադառնալով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրագործման խնդրահարույց լինելու հարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խախտված լինելու դեպքում այդ իրավունքների վերականգնումը **որոշակի կառուցակարգի և ընթացակարգերի հաստատման միջոցով պետության պարտականությունն է**: Պետությունն է պարտավոր նաև ապահովել ստեղծված կառուցակարգի կողմից խախտումների արդյունավետորեն կանխումը և վերացումը:

Իրավիճակը, երբ գործող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան անհնարին են դարձնում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը, անհամատեղելի է իրավական պետության կողմից որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին:

Սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-936 որոշման մեջ կարևորել է դատական ակտերի վերանայման ապահովման հնարավորությունը՝ «...սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության /դրա արդյունավետության/ երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է /դատական բողոքարկումը/: Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը»:

8. Անդրադառնալով դիմողի այն փաստարկներին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում իրավակարգավորման ենթարկված չեն նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության կարգը և դրա արդյունքում ընդունվելիք ակտերի բնույթը, քննության իրականացման եղանակը և քննության արդյունքում՝ վարչական դատարանի լիազորությունները, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի վերոնշյալ փաստարկներն ըստ էության հանգում են **օրենսդրական բացի** առկայության և դրանով պայմանավորված՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների երաշխավորման գործընթացի խաթարման հարցերին: Դա իր հերթին խոչընդոտ է ստեղծում դատարանի մատչելիության իրավունքն իրագործելու հարցում և դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորության տեսանկյունից:

Վիճարկվող դրույթի հիման վրա նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների՝ վարչական դատարանի կողմից վարույթ ընդունվելու հնարավորության նորմատիվ առկայությունը վերոնշյալ գործերով միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի շրջանակներում **անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումն ապահովելու համար բավարար չէ:**

Հայաստանի Հանրապետությունում սահմանված դատական համակարգի յուրաքանչյուր ատյանում գործերի հարուցումը, նախապատրաստումը, քննությունը, գործի լուծման փուլերի հաջորդականությունը, և այլն, պետք է հստակորեն կարգավորված լինեն համապատասխան դատավարական օրենսգրքերով և օրենքներով:

Ավելին, Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով /Galstyan v. Armenia, Application no. 26986/03/ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված բողոքարկման ընթացակարգը պետք է հստակ ձևակերպված լինի, ունենա կիրառության հետևողական պրակտիկա և անձին պետք է ընձեռի բողոքարկելու հստակ և մատչելի իրավունք:

Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածը խնդրահարույց է ինչպես օրենսդրորեն ամրագրված դատական աստիճանակարգության համապատասխանության տեսանկյունից, այնպես էլ օրենքի հստակության առումով, և, հետևաբար, բավարար չափով չի ապահովում դատական պաշտպանության ու արդար դատաքնության սահմանադրական իրավունքների լիարժեք իրագործման հնարավորությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ «ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և 92-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդված 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**6 հոկտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1231**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀՐԱՊԱՐԱԿ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ-Ի ԵՎ «ՍՏԱՐՏ ՄԵԳԻԱ» ՍՊԸ-Ի
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ,
41-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 279-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 հոկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,
Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)
դիմող «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Ա. Ջեյնայանի,
Ա. Ղազարյանի,

դիմող «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Լ. Հա-
կոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ
Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հրապարակ օրաթերթ»
ՍՊԸ-ի և «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Ձանգվածային
լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատա-
վարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին

կետի, 279-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի և «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի՝ համապատասխանաբար 01.06.2015թ. և 02.07.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 28.07.2015թ. ՍԳԱՌ-46 աշխատակարգային որոշմամբ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի «այլ հաղորդումների» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 279-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց.**

1. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 13-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 8-ին:

Օրենքի՝ «Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը» վերառությամբ 5-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է. «Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»:

Վերը նշված դրույթներում որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 01.07.1998թ., ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 01.09.1998թ. և ուժի մեջ է մտել 12.01.1999թ.:

Օրենսգրքի՝ «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը» վերտառությամբ 14-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

Օրենսգրքի 14-րդ հոդվածում որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է. «Դատարանի լիազորություններն են, մասնավորապես ... որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող 1-ին կետը փոփոխվել է 25.05.2006թ. ՀՕ-91-Ն և 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով:

Օրենսգրքի՝ «Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները» վերտառությամբ 279-րդ հոդվածը սահմանում է. «Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները, ինչպես նաև բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և ազգրավումները»:

Օրենսգրքի 279-րդ հոդվածը «գործողությունները» բառից հետո 21.06.2014թ. ՀՕ-115-Ն ՀՀ օրենքով լրացվել է՝ «, ինչպես նաև բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և ազգրավումները» բառերով:

2. Միավորված գործերի դատավարական նախապատմությունները հանգում են հետևյալին. դիմողները ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերի քննիչից ստացել են գրություն առ այն, որ 26.06.2014 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԿԴ/0032/08/14 գործով որոշում է կայացրել «Հրապարակ» օրաթերթին և «Ի լուր էլ էմ» ինտերնետային կայքին համապատասխանաբար՝ «Հրապարակ» օրաթերթում 09.05.2014 թվականին տպագրված՝ «Ծուխ առանց կրակի, կամ ոստիկանապետի գլխին ամպեր են կուտակվում» և

«Ի լուր էլ էմ» ինտերնետային կայքում 12.05.2014 թվականին տեղադրված՝ «Շիրակի ոստիկանապետը հարձակվել է հայտնի ըմբիշի վրա. Մարգիկը մտածում է Հայաստանի դրոշի տակ հանդես չգալու մասին» հոդվածները հրապարակելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության աղբյուրը բացահայտելուն պարտավորեցնելու մասին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԳ/0032/08/14 գործով 26.06.2014 թվականին կայացրած որոշման դեմ դիմողների ներկայացուցիչները բերել են վերաքննիչ բողոք, որը մերժվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22.09.2014թ. որոշմամբ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22.09.2014թ. որոշման դեմ դիմողների ներկայացուցիչները բերել են վճռաբեկ բողոք, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 23.12.2014 թվականին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողները գտնում են, որ օրենքի և օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 18-րդ և 19-րդ, 27-րդ, 43-րդ հոդվածներին: Ընդ որում, դիմողներից «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն, որպես, իր կարծիքով, հակասահմանադրական դրույթներ մատնանշում է օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով», «հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը», «սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները» դրույթները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի՝ «այլ հաղորդումներ» դրույթը:

Սահմանադրաիրավական վեճի շրջանակներում «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն, վկայակոչելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 08.03.2004թ. թիվ R(2000)7 հանձնարարականը, նույն Հանձնարարականի Բացատրական գեկույցը, ներկայացնում է հետևյալ փաստարկները.

նախ՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ արտահայտվելու ազատության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու՝ անձանց իրավունքի ապահովման երաշխիքներից է լրատվամիջոցների ազատությունը: Լրատվամիջոցի և/կամ լրագրողի ազատության սուբյեկտիվ իրավունքին միջամտությունը հանգեցնում է միջամտության՝ անձանց՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու օբյեկտիվ իրավունքին: Ուստի լրատվամիջոցի և/կամ լրագրողի ազատությունն ապահովելը և պաշտպանելը, խոսքի ազատությունն ապահովելու և պաշտպանելու՝ պետության պարտականության մաս է կազմում, իսկ լրատվամիջոցի և/կամ լրագրողի կողմից իր ազատությունը պաշտպանելը՝ անձանց խոսքի ազատության իրավունքն ապահովելու և պաշտպանելու պարտականություն է: Ան-

ձանց՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության իրավունքի բովանդակության մաս է կազմում տեղեկության անանուն տարածման իրավունքը, ինչը, իր հերթին, պարտականություն է առաջ բերում լրագրողի և/կամ լրատվամիջոցի համար՝ գաղտնի պահել տեղեկատվության աղբյուրը:

Երկրորդ՝ աղբյուրի ինքնությունը չբացահայտելու իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման, սակայն այն պետք լինի հիմնավորված և համապատասխանի Կոնվենցիայի և ներպետական օրենսդրության պահանջներին: Այս իրավունքի սահմանափակման հիմքերն են «պարտավորությունները» և «պարտականությունները», որոնք կարող են լրագրողի իրավունքը սահմանափակել աղբյուրների գաղտնիությունը պահպանելու առումով: Եթե նման պարտավորությունները և պարտականությունները բախվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում տրված շահերին, ապա այստեղ վճռորոշ դեր է կատարում այն շահը, որը գերակշռում է ազատ խոսքի իրավունքի նկատմամբ:

Երրորդ՝ ըստ իրավակարգավորման՝ տեղեկատվության աղբյուրը բացահայտելու պահանջը դատարան կարող է ներկայացվել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն բացահայտելու նպատակով: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:

Այս պարագայում, ըստ դիմողի՝ «սահմանադրաիրավական վեճի առարկա ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով դրույթը չափազանց լայն հնարավորություն է ընձեռում՝ միջամտելու խոսքի ազատության իրավունքին. սահմանադրական իրավունքը նախատեսում է՝ արդեն կատարված, ավարտված հանցագործության պարագայում պարտավորեցնել լրատվամիջոցին և/կամ լրագրողին բացահայտել տեղեկատվության աղբյուրը, պաշտպանելու համար մեղադրյալին, ամբաստանյալին, այն էլ ոչ բոլոր հանցագործությունների մեջ մեղադրվող՝ միայն ծանր, իսկ խնդրո առարկա դրույթը՝ բացահայտելու համար հանցագործությունները, թեև՝ ծանր կամ առանձնապես ծանր», ինչից հետևում է, որ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով» դրույթը հակասում է Կոնվենցիայի 1-ին և 10-րդ հոդվածներին, ՀՀ Սահմանադրության 27, 3, 43-րդ (2-րդ մաս) հոդվածներին:

Չորրորդ՝ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը» և «սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները» դրույթների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 279-րդ հոդվածում՝ «այլ հաղորդումներ» դրույթի առնչությամբ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն, վկայակոչելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ներկայացնում է հետևյալ փաստարկները. ՀՀ Սահմանադրությանը հակասում է նաև լրատվամիջոցի և/կամ լրագրողի՝ տեղեկատվության աղբյուրի կողմից տեղեկատվության աղբյուրը գաղտնի պահելու իրավունքին միջամտության դատավարական հիմքերը:

Ըստ դիմողի՝ լրատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել արդարացված, եթե դատավարության երկու կողմերն սպառել են բոլոր այլ միջոցները: Այդպիսի միջոցներն են, օրինակ, գաղտնի տեղեկության տարածման կապակցությամբ ընկերության ներսում ներքին քննության վարումը, գաղտնի տեղեկություն ստանալու սահմանափակումների ուժեղացումը կամ որպես հակազդող քայլ՝ հակառակ տեղեկության տարածումը և այլն: Մինչ լրագրողին աղբյուրը բացահայտելու պահանջ ներկայացնելը, դատավարության կողմերը պետք է սպառեն նաև այլ ոչ-լրագրողական աղբյուրները: Այլ միջոցների առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրը բացահայտելու անհրաժեշտությունը վերանում է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի՝ «այլ հաղորդումների» եզրույթը հնարավորություն է տալիս դատարանին տեղեկատվության աղբյուրի բացահայտման վերաբերյալ միջնորդությունները քննարկել և որոշում կայացնել լրատվամիջոցի ներկայացուցչի կամ լրագրողի բացակայությամբ և առանց վերջինիս կողմից համապատասխան դատավարական կարգավիճակ ունենալու:

Վկայակոչելով օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել, և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն գտնում է, որ այդ առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի իրավակարգավորումները, ըստ որոնց՝ դատարանը գործի դատական քննությունն իրականացնում է բացառապես դռնփակ դատական նիստերի ձևաչափով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մաս), անհամատեղելի են արդար դատաքննության և խոսքի ազատության իրավունքների կոնվենցիոն և, հետևաբար՝ սահմանադրական սկզբունքների հետ: Հետևաբար՝ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները» ու «հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը» դրույթները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի՝ «այլ հաղորդումների» դրույթները՝ աղբյուրը բացահայտելու վարույթների մասով, հակասում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառու-

թյուններին, հետևաբար՝ ՀՀ Սահմանադրության 3, 18 և 19, 27, 43-րդ (երկրորդ մաս) հոդվածներին:

Դիմող «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ն, ներկայացնելով, ընդհանուր առմամբ, նույնաբովանդակ փաստարկներ, ինչ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն, միաժամանակ առաջ է քաշում օրենքի դրույթների որոշակիության և օրենսդրական բացի խնդիրներ՝ վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես, ըստ «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի՝

Նախ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չեն «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ տեղեկատվության աղբյուրի բացահայտման դատավարական հնարավորություն և ընթացակարգ: Առկա է ընդամենը մեկ դրույթ՝ 16-րդ հոդվածը՝ լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դռնփակ դատական քննություն իրականացնելու վերաբերյալ:

Երկրորդ՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ» և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ» դրույթներից ուղղակիորեն բխում է, որ լրագրողը դատավարության մասնակից և սուբյեկտ է, առանց որի այդ վարույթը չի կարող իրականացվել: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված քննչական գործողություններ իրականացնելու թույլտվություն տալուն ուղղված դատական վարույթներին պետք է մասնակցի միայն նման թույլտվություն հայցող պաշտոնատար անձը (նրա ներկայացուցիչը) և դատախազը, իսկ իրավունքի միջամտության օբյեկտի մասնակցությունը բացառվում է:

Երրորդ՝ օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 279-րդ հոդվածում օգտագործված՝ «այլ հաղորդումներ» եզրույթում առկա է դրա բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշություն:

Չորրորդ՝ օրենսգրքի 33-րդ գլխի նորմերով բացահայտվում են թե նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների և դրանց նկատմամբ վերահսկողության բովանդակությունը և թե այն սուբյեկտները, որոնց նկատմամբ ներգործության միջոցները կարող են կիրառվել: Այդ անձինք պետք է ունենան կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ, քրեադատավարական ներգործության միջոցները կարող են կիրառվել քրեադատավարական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ: Այս գլխի նորմերն առնչվում են բացառապես անձի մասնավոր կյանքին, մինչդեռ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված միջամտությունն առնչվում է ոչ թե լրագրողի մասնավոր կյանքին, այլ նրա ազատ արտահայտվելու իրավունքին, այլ խոսքով՝ առնչվում է հանրային իրավունքին:

Ըստ «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի՝ օրենսդրական բացը հանգեցրել է այնպիսի

իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, որի պայմաններում խախտվում են այն լրատվական գործունեություն իրականացնողների կամ լրագրողների արտահայտվելու ազատության, դատական պաշտպանության և ազատ արտահայտվելու իրավունքները, որոնց ներկայացվում է տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջ: Ընդ որում, ըստ «Ստարտ Սեդիա» ՍՊԸ-ի՝ նշված օրենսդրական բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ իրոք լրագրողական աղբյուրի պաշտպանությունը մամուլի ազատության հիմնարար պայմաններից մեկն է: Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ կխաթարի մամուլի՝ որպես հասարակության շահերի պաշտպանի կենսականորեն կարևոր դերը: Լրագրողական աղբյուրի բացահայտման դատական հրամանը, ըստ պատասխանողի, չի կարող համարվել համատեղելի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե դա արդարացված չէ հասարակական շահի կարևոր պահանջով:

Պատասխանողը միաժամանակ արձանագրում է, որ Եվրոպական դատարանը նշել է նաև, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը Պայմանավորվող պետություններին թողնում է հայեցողության որոշակի ոլորտ, որն էլ վերապահված է ինչպես օրենսդիր, այնպես էլ այն մարմիններին, որոնք կոչված են մեկնաբանելու և կիրառելու գործող օրենսդրությունը: Այդուհանդերձ, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը նրանց չի տալիս հայեցողության անսահմանափակ ազատություն:

Անդրադառնալով տեղեկատվության աղբյուրների պաշտպանության վերաբերյալ պետությունների իրավական կարգավորումներին՝ պատասխանողը նշում է, որ դրանք միմյանցից էապես տարբերվում են: Լրագրողական աղբյուրների անձեռնմխելիության սահմանափակման հիմքերը յուրաքանչյուր պետությունում իրենց ուրույն կարգավորումն են ստացել, սակայն, բոլոր դեպքերում, տեղեկատվության աղբյուրների անձեռնմխելիությունը սահմանափակվում է առանձին սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Պատասխանողը որպես օրինակ է բերում Ֆրանսիան, ինչպես նաև Վրաստանը՝ մատնանշելով, որ այդ երկրում «...մասնագիտական գաղտնիքի աղբյուրներն օգտվում են բացարձակ պաշտպանությունից»: Խորհրդապահական տեղեկատվության բացահայտումն օրենքով նախատեսված դեպքերում առանց դատարանի պատճառաբանված որոշման անթույլատրելի է:

Որպես օրինակ բերելով Բելգիան, Հունգարիան, Գերմանիան, Ռուսաստանի Դաշնությունը՝ պատասխանողը մատնանշում է, որ այդ երկրների համապատասխան օրենսդրություններով սահմանված են լրագրողական տեղեկատվության աղբյուրների պաշտպանության սահմանափակումներ, որոնք իրականացվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքերի շրջանակներում:

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ «Լրագրողների՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ» թիվ R(2000)7 հանձնարարականին կից Բացատրական զեկույցին՝ պատաս-

խանողը գտնում է, որ Բացատրական զեկույցը ներառում է ինչպես հանցագործությունների կանխման դեպքերը, այնպես էլ արդեն ավարտված և դատարանի վարույթում գտնվող հանցագործությունների բացահայտման դեպքերը:

Պատասխանողի պնդմամբ՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, տեղեկատվության աղբյուրի բացահայտման շրջանակները սահմանափակելով ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով, հաշվի է առել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Ինչ վերաբերում է նշված ոլորտը կարգավորող օրենքի որակին, դրա հստակությանը, ապա, ըստ պատասխանողի, պետք է նկատի ունենալ, որ նշված ոլորտը կարգավորող նորմերը հնարավոր չէ բացարձակ որոշակի ձևակերպել:

Պատասխանողի համոզմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը նպատակ ունեն ապահովելու դատական վերահսկողությունը լրագրողական աղբյուրների բացահայտման դեպքերի նկատմամբ:

Անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, որ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներից ուղղակիորեն բխում է, որ լրագրողը դատավարության սուբյեկտ է, պատասխանողը գտնում է, որ նշված դրույթները վերաբերում են տեղեկատվության աղբյուրը բացահայտելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո միայն տվյալ հանցագործությունների մասով իրականացվող դատական քննությանը, որտեղ լրագրողն արդեն կարող է հանդես գալ համապատասխան դատավարական կարգավիճակով:

Միաժամանակ, պատասխանողն ընդունում է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգերն առավել հստակեցնելու անհրաժեշտություն ունեն, որի պարագայում կապահովվի նշված ինստիտուտի լիարժեք իրավական գործողությունը, այդ իրավական գործընթացում ներգրավված սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի ամբողջական իրավական պաշտպանությունը:

Եզրափակելով՝ պատասխանողը եզրահանգում է, որ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերով նախատեսված՝ լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանության սահմանափակումները հետապնդում են իրավաչափ նպատակներ, որոնք սահմանված են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերն ընթացակարգային մասով կոչված են ապահովելու նշված նպատակների իրագործումը:

5. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին.

1) որքանով է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատության պայման

հանդիսացող՝ տեղեկատվության աղբյուրի չբացահայտման իրավունքի սահմանափակումն իրականացվել է՝ Սահմանադրության մեջ ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքներին ու սահմանափակման պահանջներին համապատասխան,

2) արդյոք տեղեկատվության աղբյուրի բացահայտման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դատավարական կանոնները բավարարում են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության՝ արդար դատաքննության իրավունքի իրացման պահանջները,

3) արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված «այլ հաղորդումներ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ներառում է նաև ՁԼՄ-ի կամ լրագրողի տեղեկատվության աղբյուրը:

6. Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը (Financial Times LTD and others, v. The United Kingdom, 15.12.2009, appl. N 821/03, Goodwin v. The United Kingdom, 27.03.1996, appl. N 17488/90, Roemen and Schmit v. Luxembourg, 25.02.2003, appl. N 51772/99, Voskuil v. The Netherlands, 22.11.2007, appl. N 64752/01) հանգում է նրան, որ խնդրո առարկա իրավունքին միջամտությունը պետք է նախատեսված լինի օրենքով, այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Մասնավորապես՝ միջամտության նպատակը պետք է լինի այլոց իրավունքների պաշտպանությունը, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելը և հանցագործությունների կանխումը, և որ տվյալ միջամտությունն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ հետևյալ սկզբունքների հաշվառմամբ.

- ազատ արտահայտվելու իրավունքը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկը, և այս իմաստով լրատվամիջոցների համար նախատեսված երաշխիքներն առանձնակի կարևորություն ունեն,
- լրատվական աղբյուրի պաշտպանությունը լրատվական ազատության հիմնական պայմաններից մեկն է,
- առանց նման պաշտպանության աղբյուրները կխուսափեն աջակցել լրատվամիջոցներին հասարակությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տալու հարցում: Դրա հետևանքով կթուլանա լրատվամիջոցների կենսական դերը և բացասական ազդեցության կենթարկվի լրատվամիջոցների ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն տալու ունակությունը,
- հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում ազատ մամուլի լրագրողական աղբյուրների պաշտպանության կարևորությունը և աղբյուրի

բացահայտման պահանջի բացասական ազդեցությունն այդ ազատության վրա, նման միջոցը չի կարող համապատասխանել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին, քանի դեռ այն չի հիմնավորվել հանրային շահի գերակա պահանջով:

Որպես ընդհանուր սկզբունք՝ ազատ արտահայտվելու իրավունքի ցանկացած սահմանափակման «անհրաժեշտություն» պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Առաջին հերթին ազգային իշխանություններն են գնահատում սահմանափակումների համար «ծանրակշիռ սոցիալական պահանջի» առկայությունը, և նման գնահատական տալիս նրանք օժտված են որոշակի հայեցողությամբ:

Մյուս կողմից՝ հաշվի է առնվում, որ ազգային հայեցողության շրջանակները սահմանափակված են ժողովրդավարական հասարակության՝ ազատ մամուլը երաշխավորելու և պահպանելու շահով: Այդ շահը մեծ դեր է կատարում հավասարակշռման գործում, որով որոշվում է, թե արդյոք սահմանափակումները համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին: Բացահայտման պահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն աղբյուրի վրա, որի ինքնությունը կարող է պարզվել, այլ նաև լրատվամիջոցի վրա, որի հեղինակությունը կարող է խաթարվել սպազա հնարավոր աղբյուրների և հասարակության անդամների շրջանակում, որոնք շահագրգռված են ստանալ տեղեկատվություն անանուն աղբյուրից, և որոնք, իրենց հերթին, կարող են դառնալ աղբյուր:

7. «Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի վեճի առարկա դրույթի վերլուծությունից հետևում է, որ.

նախ՝ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է պարտադրվել միայն դատարանի որոշմամբ,

երկրորդ՝ այն կարող է իրականացվել միայն քրեական գործի առիթով,

երրորդ՝ նպատակը պետք է լինի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտումը,

չորրորդ՝ հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ պետք է լինի, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը,

հինգերորդ՝ պետք է սպառված լինեն հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները:

Վեճի առարկա նորմի իրավական բովանդակությունից հետևում է, որ **նշված միայն բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայությունն է հիմք հանդիսանում տեղեկատվության աղբյուրի բացահայտման պարտադրանք կիրառելու համար:**

Հետևաբար, դատարանը պարտավոր է հիմնավոր փաստարկել դրանց առկայությունը և իրավաչափ հետևություն անել՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, ինչպես նշվեց, լրատվամիջոցների տեղեկատվության

աղբյուրների պաշտպանությունը հանդիսանում է մամուլի ազատության հիմնարար պայմաններից մեկը:

Քրեադատավարական տվյալ իրավակարգավորման միջազգային պրակտիկայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերաբերելի հանձնարարականների ուսումնասիրությունը վկայում է, որ **առանցքային խնդիրը վերոնշյալ չորրորդ իրավապայմանի ճիշտ ընկալումն ու իրավաչափ կիրառումն է՝** բացառելու համար դատական պրակտիկայում դրան լայն հայեցողական մեկնաբանություն տալու հնարավորությունը: Դրանից ելնելով է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականին ընդունված թիվ R(2000)7 հանձնարարականը սահմանում է մի շարք չափանիշներ, որոնց դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել իրավաչափ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի Բացատրական հուշագրում հստակեցված են նաև այն չափանիշները, որոնց պահպանման պայմաններում կարող են կիրառվել տեղեկատվության աղբյուրի պաշտպանության սահմանափակումներ, մասնավորապես՝

- ա) այլընտրանքային միջոցների սպառում,
- բ) իրավաչափ նպատակի գերակայում:

Ընդ որում, «գերակայող իրավաչափ նպատակը» ենթադրում է.

- անձի կյանքի պաշտպանության անհրաժեշտություն,
- ծանր հանցագործության կանխման անհրաժեշտություն,
- ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դատական

պաշտպանության անհրաժեշտություն:

Միաժամանակ, նման բացահայտումը պետք է լինի **բացառիկ դեպքերում՝** պայմանավորված հասարակության քրեաիրավական բնույթի կենսական շահով:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգի տեսանկյունից անձի՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու իրավունքի սահմանափակումը կարող է արդարացված լինել սահմանադրական այնպիսի կարևոր իրավունքների երաշխավորմամբ, ինչպիսիք են կյանքի իրավունքը (հոդվ. 15), ազատության և անձեռնմխելիության իրավունքը (հոդվ. 16), դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև արդյունավետ միջոցներով իրավական պաշտպանության իրավունքը (հոդվ. 18), խախտված իրավունքները վերականգնելու իրավունքը (հոդվ. 19):

Հետևաբար, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է համարվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր հանցագործությունը կանխելու կամ ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության

և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող:

Այս մոտեցումն է նաև դրված եվրոպական բազմաթիվ երկրներում տվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հիմքում (Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա և այլն), ինչը շեշտվում է նաև պատասխանողի բացատրության մեջ:

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 42.1-րդ հոդվածով՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նշված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

Գործի հանգամանքների և ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վեճի առարկա իրավանորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ՝ հիմնական շեշտադրումը կատարելով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման անհրաժեշտության վրա, առանց հիմնավոր անդրադարձ կատարելու իրավաչափ նպատակի գերակայության բացահայտմանը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործով տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահի գերակա համարվելն այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ դիտարկելով որպես դատավորի բացարձակ հայեցողություն: Մինչդեռ դատարանի հայեցողությունն իրավաչափ տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորություն է: Իսկ ընտրության չափանիշները հստակ են ու ըստ էության սահմանափակվում են վերոթվարկյալ երեք հանգամանքներով՝ անձի կյանքի պաշտպանություն, ծանր հանցագործության կանխում, ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանություն:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության և մարդու հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքների պահանջներից չի բխում դատարանի այնպիսի եզրահանգումը, համաձայն որի՝ «Աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահին», նկատի ունենալով, որ հրապարակումները վերաբերում են հանրային ճանաչում ունեցող մարդկանց և նպատակը հասարակության մոտ առկա կասկածների փարատումն է (ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.06.2014թ. ԵԿԳ/0032/08/14 որոշում, էջ 5, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22 սեպտեմբերի 2014թ. որոշում, էջեր 20-21):

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. սեպտեմբերի 22-ի որոշման մեջ, անդրադառնալով սույն գործով վեճի առարկա իրավադրույթներին, տրվում է նաև այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ «...օրենսդրի կողմից սահման-

ված «այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման» արտահայտության մեջ է ընդգրկվում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը, որը կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ...»:

Նման եզրահանգում արվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև 279-րդ հոդվածի դրույթների առնչությամբ: ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, կարևոր է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլուխը նվիրված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը, որը սահմանում է դատավարական երաշխիքներ անձի ազատության և անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, ինչպես նաև խախտված իրավունքների դատական պաշտպանության համար: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակը սահմանափակ է, այսինքն՝ դատական պաշտպանության երաշխիքները տարածվում են անձի իրավունքների պաշտպանության վրա: ‘Դրանից ելնելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածում թվարկված են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտները: Այսինքն՝ դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև նշված մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները: Իր հերթին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածում թվարկված են այն քննչական գործողությունները, որոնք կարող են իրականացվել դատարանի որոշմամբ, այսինքն՝ դատարանը **միայն նախնական հսկողություն է** իրականացնում քրեական հետապնդման մարմինների կողմից համապատասխան գործողությունների կատարման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ:

Եական է այն շեշտադրումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածում թվարկված են **նախնական դատական վերահսկողության ենթակա քննչական գործողությունները**: ‘Դրանք են՝ բնակարանի խուզարկությունը, բանկային և նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը և առգրավումը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակումը:

Տվյալ պարագայում դատական պաշտպանությունը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 23-24-րդ հոդվածներով և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների պաշտպանությանը:

Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող իրավունքները, մասնավորապես՝ խոսքի ազատությունը և լրատվության միջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը (հոդվ. 27), չեն կարող ապահովվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում, որովհետև պաշտպանության ենթակա օբյեկտները տարբեր են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 179, 239 և 279-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ «այլ հաղորդումներ» բառակապակցությունը **բացառապես վերաբերում է** որոշակի ձևի մեջ **տեղեկատվության հաղորդմանը** (ինչը հիշյալ 239-րդ հոդվածում ընդհանրացվում է և դիտարկվում որպես նամակագրություն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով սահմանված են քրեադատավարական կոնկրետ փուլում դատարանի լիազորությունները և քննչական այն գործողությունները, որոնք առանց նախնական դատական վերահսկողության իրականացվել չեն կարող: Այդ նորմերն ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Վերոշարադրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում վեճի առարկա դրույթների առնչությամբ դատական պրակտիկայի կողմից տրված այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ «այլ հաղորդումների» գաղտնիության սահմանափակման մեջ օրենսդրի կողմից ընդգրկվել է նաև տեղեկատվության աղբյուրի բացահայտումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վեճի առարկա հոդվածներում «այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման» արտահայտությունը կարող է մեկնաբանվել բացառապես յուրաքանչյուրի անձնական կյանքի հարգման սահմանադրական իրավունքի տեսանկյունից և չի կարող իր բովանդակության մեջ ներառել լրատվական գործունեություն իրականացնողի, ինչպես նաև լրագրողի «տեղեկատվության աղբյուրի բացահայտումը», ինչպես շեշտվում է դատական ակտում:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ», այսուամենայնիվ, օրենսգիրքը չի նախատեսում տեղեկատվության աղբյուրի բացահայտման հստակ ընթացակարգ, ինչին անդրադարձել է նաև պատասխանողը: Իրավակարգավորման այս բացն իրավակիրառական պրակտիկայում չի կարող լրացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության

նը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրախրավական բովանդակության շրջանակներում:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրախրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:** Այդ իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն իրավաչափ հիմք կարող է հանդիսանալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրույթում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և 279-րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արձանագրված իրավակարգավորումների շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքների պաշտպանության առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 279-րդ հոդվածի սահմանադրախրավական բովանդակության շրջանակներում չի կարող «այլ հաղորդումների գաղտնիության բացահայտման» արտահայտության մեջ ընդգրկվել «տեղեկատվության աղբյուրի բացահայտումը», ինչն ունի այլ նյութախրավական հիմք եւ ինքնուրույն իրավակարգավորման առարկա է:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ վեճի առարկա դրույթները դիմողների նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հոկտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1234**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱԽԱՉԻ
ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (գեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լ. Սարգսյանի,

դիմողի՝ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ. Մելքոնյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ և 8-րդ կետերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38, 68 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 11.08.2015թ. և 21.08.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Հաշվի առնելով, որ վերոհիշյալ դիմումներով գործերը վերաբերում են նույն հարցին, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի՝ սահմանադրական դատարանն իր՝ 08.09.2015 թվականի ՍԴԱՌ-52 աշխատակարգային որոշմամբ միավորել է դրանք՝ դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, դիմումներում բարձրացված հարցերին առնչվող օրենսդրության այլ ակտերը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-248) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը» վերտառությամբ 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Գատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համապատասխանաբար՝ 25.05.2006 թվականի ՀՕ-90-Ն, 21.02.2007 թվականի ՀՕ-93-Ն և 28.11.07 թվականի ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով: Իսկ վիճարկվող դրույթների բովանդակությունը լրացվել է 21.02.2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-93-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի մարտի 15-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

2. Գլխողներից՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 22-րդ հոդվածի 7-րդ մասերին՝ ներկայացնելով հիմնավորումներ, համաձայն որոնց՝ իր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները միևնույն հիմքով մի քանի անգամ վերացնելու դեպքում անձն անորոշ

ժամկետով հայտնվում է քրեական հետապնդման մեջ: Դա «... հակասում է նույն արարքի համար կրկին չդատվելու սկզբունքին (non bis in idem)», և, ըստ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ գլխավոր դատախազի, հսկող դատախազի և քննիչի կողմից քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հետ կապված «առկա են խնդիրներ»:

Մասնավորապես, ինչպես գտնում է դիմողը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը դատախազի կողմից կարող է վերացվել այդ որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո այդ որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Եվ ինչպես դիմողն է գտնում՝ «Տվյալ դրույթներն ինքնին իրավական որոշակիության խնդիր ունեն, պարունակում են հակասական կարգավորումներ, ինչպես նաև կիրառման ժամանակ առաջացնում են տարաբնույթ մեկնաբանություններ իրավասու պետական մարմինների և քաղաքացիների շրջանում»: Մասնավորապես, դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմին գործնականում հնարավոր է երկու մեկնաբանություն տրվի: Մեկի համաձայն՝ հսկող դատախազն իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը՝ առանց քանակական սահմանափակման: Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում իրավասու է վերացնել քննիչի՝ վերոհիշյալ որոշումը, եթե հսկող դատախազը չի վերացրել այն: Այսինքն, ինչպես գտնում է դիմողը, «դատախազական և քննչական գերատեսչությունների միջև դիրքորոշումների անհամաձայնության հետևանքով անձը անորոշ ժամկետով հայտնվում է քրեական հետապնդման մեջ, ինչը հակասում է նույն արարքի համար կրկին չդատվելու սկզբունքի (non bis in idem) բուն էությունը»:

Մյուս հնարավոր մեկնաբանության վերաբերյալ դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործվող «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը, այլ ոչ թե 7-օրյա ժամկետին: Այսինքն՝ հսկող դատախազը կարող է վերացնել վերոնշյալ

որոշումները միայն մեկ անգամ, որից հետո քննիչի որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից: Եվ եթե դիտարկվի, որ «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է ոչ թե 7-օրյա ժամկետին, այլ որոշումը վերացնող դատախազի գործողությանը, ապա ստացվում է այնպես, որ ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները կարող է վերացնել միայն այն դեպքում, երբ հսկող դատախազը մեկ անգամ դրանք վերացրել է:

Ըստ դիմողի՝ գործնականում ձևավորվել է այնպիսի պրակտիկա, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները նաև այն դեպքում, երբ հսկող դատախազը չի վերացրել դրանք: Սակայն «Ստացվում է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից քննիչի՝ քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելուց հետո քննիչն իրավասու է կրկին կարճել քրեական վարույթը, որի հետևանքով կսահմանափակվի ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված ՀՀ դատախազության՝ ... օրինականության նկատմամբ հսկողության գործառույթը, քանի որ դատախազն այլևս հնարավորություն չի ունենա վերացնել քննիչի վերոնշյալ որոշումները»:

Ըստ դիմողի՝ նման հակասական կարգավորումների և մեկնաբանությունների հիմնական պատճառն այն է, որ քննիչի և դատախազի լիազորությունները վիճարկվող նորմով հստակ տարանջատված չեն:

Գիմողներից՝ ՀՀ գլխավոր դատախազը գտնում է, որ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը գործնականում զրկում է հսկող դատախազին՝ հետաքննության մարմնի ու քննիչի՝ քրեական գործը կարճելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին օրենքի խախտմամբ կայացված որոշումը վերացնելու օբյեկտիվ հնարավորությունից: Նույն հոդվածին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազը ևս հնարավորություն չի ունենում իրացնելու այդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը, դրանով իսկ «... զրկվելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով դատախազությանը վերապահված գործառույթի իրականացումն ապահովելու հնարավորությունից»:

Գիմողը նաև ներկայացնում է փաստարկներ այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազությունում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն ստանալուց հետո պահանջվել է ստուգման համար նյութերն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, «սակայն, մի շարք դեպքերում նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն է ուղարկվել 7-օրյա ժամկետն անցնելուց հետո, որի պատճառով դատախազը հնարավորություն չի ունեցել իրացնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ որոշումը ստանալու պահից 7-օրյա ժամկետում վերացնելու լիազորությունը»:

Վիճարկվող նորմի համակարգային վերլուծությունից և այդ նորմին իրավա-

կիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունից դիմողը հանգում է այն հետևությանը, համաձայն որի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությամբ նշված որևէ որոշում գլխավոր դատախազի կողմից վերացնելու իրավունքից զրկումը խաթարում է ոչ միայն նշված հոդվածի տրամաբանական կառուցվածքը, այլև «նսեմացնում է դրա նորմատիվային արժեքը», հակասում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված՝ դատախազության գործունեության միասնականության սկզբունքին, վտանգում է հանցագործությունից տուժած անձանց՝ իրավունքների և ազատությունների պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Բացի դրանից, ինչպես գտնում է դիմողը, պետությունն իր հերթին ստանձնել է անձանց պատճառված վնասի հատուցմանն ուղղված պոզիտիվ պարտականություն, որի իրացման մեխանիզմներից մեկն էլ դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացումն է: «Եթե պետության նշված պոզիտիվ պարտականությունը չի իրացվում հսկող դատախազի կողմից, ապա դրա իրացման պարտականությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով, կրում է գլխավոր դատախազը»:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող հոդվածի դրույթները ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան **իրավակարգավորման նպատակի լույսի ներքո մեկնաբանելու պարագայում** սահմանադրականության խնդիրներ չեն առաջացնի: Պատասխանող կողմի փաստարկները հանգում են հետևյալին:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթի նպատակը **քրեական հետապնդման սպառնալիքի և դրանով պայմանավորված՝ անձի իրավական կարգավիճակի անորոշության վերացումն է**, նախատեսել է քրեական հետապնդման մարմինների՝ վիճելի իրավանորմում նշված որոշումները հսկող դատախազի կողմից միայն 7-օրյա ժամկետում և մեկ անգամ վերացնելու հնարավորություն: Մինչդեռ այդ նորմով նախատեսված 7-օրյա ժամկետի հաշվարկը յուրաքանչյուր անգամ վերսկսելու և դրանով հսկող դատախազին նշված որոշումները բազմակի վերացնելու հնարավորություն ընձեռնելու դեպքում կառաջանա քրեական գործի քննության անվերջանալի շրջապտույտ, անխուսափելիորեն կխախտվեն կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքները՝ նրան դնելով քրեական հետապնդման չվերջացող սպառնալիքի ներքո: ՀՀ գլխավոր դատախազի կողմից օրենքի խախտումները շտկելու վեցամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կողմից որոշում կայացնելուց հետո, որը դարձյալ կասկածյալին կամ մեղադրյալին քրեական հետապնդման անորոշ սպառնալիքից պաշտպանելու նպատակ է հետապնդում:

Պատահական չէ, որ հենց ՀՀ գլխավոր դատախազին է վերապահվել քրեա-

կան գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները վերացնելու հարցում վերջնական որոշում կայացնելու իրավասությունը: Բանն այն է, որ հսկող դատախազի կողմից նշված որոշումները հաստատվելուց հետո կասկածյալի կամ մեղադրյալի իրավական դրության մեջ որոշակիություն է մտցվում, և, հակառակը, նշված որոշումների վերացումն էականորեն շոշափում է անձի իրավունքները, ուստի, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ դրա լուծումը վերապահվել է ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավասությանը:

Պատասխանողն անհիմն է համարում այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ միայն հսկող դատախազի կողմից քրեական հետապնդման մարմնի համապատասխան որոշումը ոչ իրավաչափորեն վերացնելուց հետո միայն գլխավոր դատախազը միջամտության հնարավորություն կստանա: Պատասխանողը գտնում է, որ նման մեկնաբանությունը չի համապատասխանում տվյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին:

Պատասխանողը գտնում է նաև, որ «քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմինների որոշումները բազմակի վերացնելու հնարավորության ճանաչումը... կիմաստազրկի և ի չիք կդարձնի ՀՀ գլխավոր դատախազի իրավասության նշանակությունը»:

Հղում կատարելով դատախազության իրավական կարգավիճակին վերաբերող սահմանադրական նորմերին և միջազգային ակտերին, վերլուծելով «քրեական հետապնդում» եզրույթի իրավական բովանդակությունը՝ պատասխանողը նշում է, որ քրեական գործի հարուցումը և քրեական գործ հարուցելուց հրաժարվելու մասին որոշումների օրինականությունը վճռական նշանակություն ունեն քրեական դատավարության խնդիրների իրականացման համար: Այս առումով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողությունը միտված է վերը նշված նպատակներին: Քրեական գործի հարուցման փուլի օրինականության ապահովման պարտականությունն օրենսդիրը, առաջին հերթին, վերապահել է հսկող դատախազին: Սակայն օրենսդրորեն պետք է նաև համարժեք կառուցակարգեր և երաշխիքներ սահմանվեն դրանց իրականացումն ապահովելու համար: Այս առումով, ինչպես ցույց է տալիս իրավակիրառ պրակտիկան, 7-օրյա ժամկետի հաշվարկի մեկնարկն ընդամենը որոշման պատճենը ստանալու պահից սկսելը, երբ որոշման պատճենի հետ միասին դատախազին չեն ներկայացվում նաև գործի նյութերը, ի գործու չէ լիարժեքորեն ապահովել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, այդպիսի հսկողության իրականացմամբ հետապնդվող նպատակները: Իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրը շտկելու համար ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է օրենքի նախագիծ:

Պատասխանողի հիմնական եզրակացությունն այն է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները կոչված են բացառելու անձի՝ կրկին անգամ դատվելու հնարավորությունը՝ միաժամանակ

երաշխավորելով քրեական հետապնդում հարուցելու և հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազության սահմանադրական լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը»: Հետևաբար՝ «...վիճարկվող հողվածի դրույթները ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորման նպատակների լույսի ներքո մեկնաբանելու պարագայում սահմանադրականության խնդիրներ չեն առաջացնի»:

4. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում պարզել.

- ՀՀ դատախազության՝ որպես ՀՀ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող միասնական համակարգի սահմանադրաիրավական գործառնությունների և դրանց իրացման համարժեք միջոցների առկայությունը,
- իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ապահովման, ինչպես նաև պետական իրավասու մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանների երաշխավորվածությունը,
- իրավական որոշակիության, ինչպես նաև վիճելի իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակների ու նախատեսված իրավական միջոցների համարժեքության սահմանադրաիրավական պահանջներին համապատասխանելիությունը,
- ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձին նույն արարքի համար կրկին անգամ դատելու անթույլատրելիության սկզբունքի լիարժեք պահպանման իրավական հնարավորությունների առկայությունն ու այդ սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության և դրան համապատասխանող իրավական ընթացակարգեր նախատեսելու վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների իրացումը,
- հանցավոր ոտնձգություններից անձի սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության իրավական համարժեք ընթացակարգերի երաշխավորվածությունը:

Սույն գործով դիմումներում ներկայացված փաստարկների ու հիմնավորումների վերլուծությունը վկայում է, որ ինչպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, այնպես էլ ՀՀ գլխավոր դատախազը քննության առարկա իրավանորմերի սահմանադրականությունը վիճարկելիս հիմնվում են առավելապես իրավակիրառական պրակտիկայի վրա՝ ներկայացնելով այդ նորմերին տրված տարաբնույթ մեկնաբանություններ: Ուստի ՀՀ սահմանադրական դատարանն առաջնահերթ է համարում վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

5. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դա-

տախագության առջև դրված են մի շարք սահմանադրաիրավական բացառիկ գործառույթներ, այդ թվում՝ մինչդատական վարույթի շրջանակներում՝ քրեական հետապնդման հարուցումը, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության սահմանումը, իսկ քրեական գործերով դատաքննության փուլում՝ մեղադրանքի պաշտպանությունը: Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազությունն իր գործառույթներն իրականացնում է օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի անմիջական իրացման են միտված «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որոնք ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային նորմերով կոչված են սահմանելու դատախազության, գլխավոր դատախազի սահմանադրական գործառույթներից անմիջականորեն բխող լիազորությունների շրջանակը, այդ լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները՝ դատախազական հսկողության ձևերն ու մեթոդները, ինչպես նաև պետական, այդ թվում՝ հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց հետ դատախազության, գլխավոր դատախազի գործառութային ու կառուցակարգային հարաբերությունների շրջանակը:

Չնայած Սահմանադրության 103-րդ հոդվածի նորմերի անմիջական գործողությանը, դրանք սահմանադրաիրավական նշանակություն ունեցող և, հատկապես՝ օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ են, որոնց նորմատիվ հաստատագրմամբ է նաև պայմանավորված ինչպես դատախազության, այնպես էլ գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունը: Այս առումով, վերոհիշյալ իրավական ակտերը կոչված են ապահովելու նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 5-րդ մասի, Սահմանադրության 2-րդ գլխում ամփոփված բազմաթիվ այլ նորմերի, ինչպես նաև 83.5-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերի նորմատիվ պահանջների կատարումը:

Ելնելով Սահմանադրության վերոհիշյալ նորմերի, դատախազության գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի համակարգային վերլուծությունից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատախազության՝ որպես պետաիրավական միասնական ինստիտուտի (մարմնի) կարգավիճակի առանձնահատկությունը ոչ միայն պայմանավորված է սահմանադրական գործառույթների բացառիկությամբ, այլև դրանց սոցիալիրավական նշանակությամբ, որից բխում է, որ այդ մարմնի գործունեության նպատակն է նաև հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Այս համատեքստում բացահայտելով վեճի առարկա իրավանորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերն իրենց իրավական բովանդակությամբ կոչված են ոչ միայն սահմանելու մինչդատական վարույթում դատախազի (գլխավոր դատախազի) սահմանադրական գործառույթներից բխող կոնկրետ լիազորություններն ու դրանց իրականացման կարգը /կապված հե-

տաքննություն և նախաքննություն իրականացնող մարմնի, ինչպես նաև գլխավոր դատախազի կողմից կոնկրետ գործի շրջանակներում ստորադաս դատախազի գործողությունների օրինականության ու հիմնավորվածության նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ/, այլև երաշխավորել, որպեսզի՝

- քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի,
- ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի,
- ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման / ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվ. 2/:

Այսպիսով, վեճի առարկա իրավակարգավորմամբ հետապնդվող վերոհիշյալ նպատակներն ունեն սահմանադրական հիմնավորում, քանի որ հետաքննություն, նախաքննություն իրականացնող մարմինների՝ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները վերացնելու լիազորության նախատեսմամբ ոչ միայն երաշխավորվում են դատախազության սահմանադրական կոնկրետ գործառույթի իրականացման կարգն ու պայմանները, այլև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Հետևաբար, **հետապնդվող այդպիսի նպատակների առումով** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցում:

Բացահայտելով վեճի առարկա իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև գնահատել վերոհիշյալ հոդվածի վերտառության («**Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը**») իրավական իմաստը, համաձայն որի՝ վեճի առարկա նորմերն ինքնին կոչված են դատախազական հսկողության միջոցով երաշխավորելու կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սահմանադրական սկզբունքի (ՀՀ Սահմ. 22-րդ հոդվածի 7-րդ մաս) պահպանումը քրեական գործերով մինչդատական վարույթում: Այսինքն՝ օրենսդիրն ի սկզբանե» կանխորոշել է վիճարկվող նորմի կարգավորման բնագավառը (առարկան)՝ առաջին պլան մղելով ոչ թե տարբեր ինստիտուտների գործառութային ու կառուցակարգային փոխհարաբերությունների խնդիրը, այլ կողմնորոշել է իրավակիրառ սուբյեկտներին՝ ղեկավարվել բացառապես իրավակարգավորման այն խնդիրներով ու նպատակներով, որոնք բխում են օրենսգրքի 21-րդ հոդվածի նորմատիվ կանոններից՝ **դրանք դասելով քրեադատավարական սկզբունքների շարքին** (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխ 2): Հետևաբար, վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը

պետք է դիտարկել, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 22 և 103-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21 և 53-րդ հոդվածների համակարգային կապի շրջանակներում, ինչի վերաբերյալ իրավա-կիրառական պրակտիկայում առկա չէ միասնական մոտեցում:

6. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորմամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ապահովման, ինչպես նաև պետական իրավասու մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանների երաշխավորման խնդրին՝ սահմանադրական դատարանը ելնում է այն իրողությունից, որ սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական վեճ ծագել է հենց այդ խնդրի տարակերպ ըմբռնման ու մեկնաբանման շուրջ, հետևաբար՝ անհրաժեշտ է, մասնավորապես, պարզել, թե՝

- որո՞նք են մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության մարմինների կողմից քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ կայացված որոշումների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև սահմանները,
- ինչպիսի/ք են քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու հետ կապված հարաբերություններում, մի կողմից, հետաքննության մարմնի, քննիչի, և մյուս կողմից՝ հսկող դատախազի (գլխավոր դատախազի) լիազորությունները, դրանց իրականացման կարգն ու պայմանները (թույլատրելի սահմանները):

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերի համակարգային վերլուծությունը և ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, 103-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության հետ համադրումը (նկատի ունենալով նաև, որ վեճի առարկա իրավակարգավորումը համակարգային առումով փոխկապակցված է վերոթվարկյալ իրավական ակտերով կարգավորվող համանման հարաբերությունների հետ) վկայում են, որ սահմանադրական մակարդակով հստակ տարանջատված են հասարակական կարգի պահպանության, օրինականության պահպանման, հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ դատախազության և այլ մարմինների սահմանադրական գործառույթները: Միաժամանակ, օրենքով հստակեցված են քննչական մարմինների (ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ քննչական կոմիտե) լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները, որոնցից, հաշվի առնելով սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման առանձնահատկությունները, հետևում է, որ.

Ա) դատախազը.

- իր գործունեությունն իրականացնելիս **անկախ է և ենթարկվում է միայն**

օրենքին, այդ գործունեությանն օրենքով չնախատեսված միջամտությունն **արգելվում է**,

- իր լիազորություններն իրականացնելիս **ինքնուրույն է** որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա և **պատասխանատու է** այդ որոշումների համար,
- քրեական հետապնդման հարուցումը նրա **բացառիկ լիազորությունն է**,
- ՀՀ դատախազությունը՝ գլխավոր դատախազի ղեկավարմամբ, **հսկողություն է իրականացնում** հետաքննության և նախաքննության (**անկախ գերատեսչական ենթակայությունից**) օրինականության նկատմամբ, իսկ մինչդատական վարությամբ՝ իրականացնում է **դատավարական ղեկավարում**, որը դատախազի բացառիկ լիազորությունն է,
- **պատասխանատու է** հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար,
- իրավասու է **վերացնել** հետաքննության մարմնի և քննիչի կայացրած որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և **հարուցել** քրեական գործ, ինչպես նաև **իր նախաձեռնությամբ հարուցել** քրեական գործ, **վերացնել** հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին,
- քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում, իսկ դրանից հետո քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը **կարող է վերացվել** մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում,
- հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին իրավասու է **հանձնարարել** նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար,
- իրավասու է հետաքննության մարմնին և քննիչին **հանձնարարել** կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ,
- հետաքննության մարմնին, քննիչին գրավոր **ցուցումներ է** տալիս քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ,
- նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս իրավասու է **պահանջել** փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին,
- օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի **որոշում կայացնելու հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու վերաբերյալ**,
- **հրաժարվում է** մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, **կարճում է** քրեական գործով վարույթը կամ **դադարեցնում** քրեական հետապնդումը:

Բ) քննիչը.

- իր իրավասության շրջանակներում **իրականացնում է** քրեական գործով նախաքննություն, **լիազորված է** հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ, ինչպես նաև **մերժել** քրեական գործի հարուցումը և այդ մասին կայացված որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում **ուղարկում է** դատախազին՝ որոշման օրինականությունն ստուգելու նպատակով,
- **պատասխանատվություն է** կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական կարգով ու ժամանակին կատարելու համար,
- **լիազորված է** կարճել քրեական գործով վարույթը, դադարեցնել քրեական հետապնդումը և **պարտավոր է** այդ մասին կայացրած որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին՝ որոշման օրինականությունն ստուգելու նպատակով,
- **պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները:**

Գ) հետաքննության մարմինը.

- **հարուցում է** քրեական գործ կամ **մերժում է** քրեական գործ հարուցելը, որոնց վերաբերյալ կայացրած որոշումների պատճենները 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ դրանց օրինականությունն ստուգելու նպատակով,
- քրեական գործ հարուցելուց հետո **կատարում է** քննչական անհետաձգելի գործողություններ,
- քրեական գործ հարուցելու պահից տասն օրվա ընթացքում, իսկ որոշ դեպքերում՝ անհապաղ, գործը **հանձնում է** քննիչին,
- քննիչի վարույթում գտնվող հանցագործությունների վերաբերյալ գործերով **կատարում է** քննիչի, **դատախազի հանձնարարությունները** և վերջինիս **ցուցումները,**
- **հնարավորություն է ընձեռում դատախազին՝** իր լիազորությունների շրջանակում ստուգելու հետաքննության մարմնի գործունեությունը,
- դատախազին **տրամադրում է** իր լիազորությունների շրջանակում պահանջած անհրաժեշտ տեղեկությունները,
- **պարտադիր կատարում է** դատախազի՝ օրենքին համապատասխան տված ցուցումները:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ակնհայտ է գործող օրենսդրությամբ, մի կողմից, հետաքննության, նախաքննության մարմինների, մյուս կողմից՝ դատախազության գործառնության լիազորությունների տարանջատումը՝ սույն գործով վեճի առարկա և դրա հետ կապված իրավակարգավորումներում: Ընդ որում, եթե հետաքննության, նախաքննության իրականացումը պետական իրավասու մարմինների՝ **օրենքով նախատեսված** քացառիկ լիազորությունն է, ապա այդ գործունեության նկատմամբ հսկողության (դատավարական հսկողության) իրականացումը դատախազության **սահմանադրական գործառնության ու պարտականությունն է:** Վերջինիս դեպքում օրենսդիրը նկատի է ունեցել, որ հետաքննության և նախաքննության նկատմամբ դատախազական

հսկողության գործառույթը **ոչ թե գերատեսչական հսկողության բովանդակություն ունի, այլ կոչված է օրենքով նախատեսված միջոցներով ապահովելու քրեական գործերով վարույթի օրինականությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում:** Նկատի է առնվում նաև, որ քրեական գործով դատաքննության փուլում պետական մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրականացման բացառիկ իրավունքը նույնպես վերապահված է դատախազին, ով **պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար,** ինչն էլ իրավական կարևոր նախադրյալ է այդ մեղադրանքը դատարանում արդյունավետ պաշտպանելու և քրեական գործով արդար դատաքննություն իրականացնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործառույթային այդպիսի տարանջատումը համահունչ է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, 89-րդ հոդվածի 7-րդ կետի և 103-րդ հոդվածի պահանջներին և կարևոր երաշխիք է հանցավոր ոտնձգություններից մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված գործառույթները (**քրեական հետապնդման հարուցում, հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն, դատարանում մեղադրանքի պաշտպանություն**) իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվեն, մեկնաբանվեն ու կիրառվեն ելնելով դրանց սահմանադրաիրավական **փոխկապակցվածությունից:** Մասնավորապես, վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը չեն կարող մեկնաբանվել հայեցողաբար, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (53-րդ հոդված), նաև՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների համապատասխան փոխկապակցված նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստից դուրս: Այն անխուսափելիորեն կհանգեցնի ինչպես դատախազության սահմանադրական գործառույթների իմաստազրկմանը, այնպես էլ կվտանգի մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի շրջանակներում: Արդյունքում՝ կխախտվի սահմանադրական օրինականությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմատիվ կարգավորման շրջանակներում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի սահմանադրական լիազորություններից անմիջականորեն բխող **իրավունքն ու պարտականությունն է,** անհրաժեշտ իրավական հիմքերի առկայության պայմաններում՝

- վերացնել քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը՝ օրենքով սահմանված ժամկետում ու կարգով (որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս),
- հիշյալ որոշման օրինականությունը (հիմնավորվածությունը) ստուգելու համար օրենքով նախատեսված ողջամիտ ժամկետում հետաքննության մարմնից, քննիչից պահանջել և **ստանալ** դեպքի առիթով նախապատրաստված նյութերը, քրեական գործի նյութերը (քրեական գործը) և դրանց առնչվող այլ տեղեկատվություն (ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս, 53-րդ հոդված),
- ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու պարտականությունն է **հսկող դատախազի վերը նշված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի անօրինական որոշումը: Տվյալ դեպքում՝ **«քրեական հետապնդման մարմին»** եզրույթի ներքո պետք է հասկանալ տվյալ գործով նախաքննություն իրականացնող քննիչ, հսկող դատախազ (ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս, 35-րդ հոդվածի 3-րդ մաս, 53-րդ հոդված): Ընդ որում, ելնելով գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունից, քրեական հետապնդման մարմնի հիշյալ որոշումը վերացնելու մասին գլխավոր դատախազի որոշումը մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված լինելու կամ չլինելու հանգամանքի հետ: Դատախազական հսկողության այդ փուլում գլխավոր դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան իրավասու է իրականացնել հսկողություն ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ, այնպես էլ գերատեսչական հսկողություն ստորադաս (հսկող) դատախազի նկատմամբ:** Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված բոլոր լիազորությունները, այդ թվում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի և քննիչի որոշումը վերացնելու մասին, հավասարապես վերաբերում են նաև գլխավոր դատախազին: ՀՀ դատական պրակտիկան ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի և 53-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական այս բովանդակության հետևողական իրացում չի երաշխավորել:

Անդրադառնալով քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակներում դատախազական հսկողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն իր ՄԳ-Ո-935 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների վերանայումը դատախազի կողմից՝ հանդիսանում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության առանձին տարատեսակ, առնչվում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդում հարուցելու և հանցագործությունը բացահայտելու՝ դատախազի պարտականության իրականացմանը, հանդիսանում է ինքնուրույն վարույթ և, հետևաբար, ունի որոշակի առանձնահատկություններ»:

Վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ առանձնահատկության համատեքստում պետք է նաև դիտարկել մինչդատական վարույթի շրջանակներում հսկող դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումից բխող վերոթվարկյալ լիազորությունները:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ վիճելի իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական օրինականության տեսանկյունից անթույլատրելի է միևնույն հիմքերով քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ մեկից ավելի որոշումների կայացումը, մասնավորապես՝ այդպիսի որոշումները վերացնելու մասին իրավասու դատախազի որոշմանը հաջորդող հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ միևնույն հիմքերով նոր որոշումներ ընդունելը: Մինչդատական վարույթում այդպիսի, թեկուզ տեսական հնարավորության առկայությունը, լուրջ նախադրյալներ է պարունակում իմաստագրելու ոչ միայն հետաքննության, նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրավական բովանդակությունը, այլև վտանգելու հատկապես մարդու խախտված իրավունքներն ու ազատություններն արդյունավետ միջոցներով պաշտպանելու սահմանադրական իրավունքի իրացումը (ՀՀ Սահմ. 18-րդ հոդված): Ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, եզակի չեն այն դեպքերը, երբ քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու՝ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի որոշում մեկից ավելի անգամ է ընդունվում ու ապա վերացվում իրավասու դատախազի կողմից:

Միջազգային պրակտիկայում առավել տարածված է այն իրավակարգավորումը, երբ ընդհանրապես քրեական վարույթը կարճելու մասին **որոշումը ենթակա է հաստատման դատախազի կողմից**: ՀՀ օրենսդրական կարգավորումների հա-

մադրված վերլուծությունից բխում է, որ հատկապես այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարականներ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացվել է միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարականների պարտադիր կատարման պարագայում: Հակառակ դեպքում կիմաստագրկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որպես քրեական դատավարության կարևոր սկզբունքի բաղադրատարրի իրավական բովանդակությունը:

7. Անդրադառնալով վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ ՄԴՌ-1139 որոշմամբ այդ սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «...Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր.օր.-ի 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99)»:

Վերոհիշյալ սկզբունքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերի՝ սույն որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության համադրված վերլուծությունը վկայում է, որ վիճելի իրավակարգավորման առարկան հենց այդ սկզբունքի պահպանումն է, որի համար օրենքով նախատեսված են դատախազական հսկողության կոնկրետ միջոցներ (քրեական գործը կարճելը, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի

հարուցումը մերժելու՝ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի որոշման վերացումը, նյութեր պահանջելն ու ցուցումներ տալը և այլն)՝ բացառելու համար միևնույն հիմքերով նման որոշման մեկից ավելի անգամ կայացումը:

Իրավակիրառ պրակտիկայում տարակերպ է մեկնաբանվում նաև հսկող դատախազի կողմից քննիչից քրեական գործի նյութերը պահանջելու և **ստանալու դրույթը**: Քիչ չեն դեպքերը, երբ նման պահանջի կատարումն իրականացվում է փոստով նյութերն ուղարկելու ճանապարհով, ինչը երբեմն օրենքով նախատեսված 7 օրից ավելի ժամանակ է պահանջում և մարդու խախտված իրավունքների արագ վերականգնմանը կարող է խոչընդոտ հանդիսանալ, ինչպես նաև վտանգում է հսկող դատախազի կողմից վեճի առարկա նորմով նախատեսված ժամկետում իրականացվելիք սահմանադրական գործառույթի իրականացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործի նյութերի վերաբերյալ պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ՝** չխոչընդոտելով դատախազական հսկողության իրականացմանը, ինչպես նաև մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում**, որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛ անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը:

8. Դատախազի՝ մինչդատական վարույթի շրջանակներում հսկողական լիազորությունների իրականացման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի շրջանակներում (ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարական REC(2000)19 Քրեական դատավարության համակարգում հանրային դատախազության դերի վերաբերյալ (ընդունված՝ 2000թ. հոկտեմբերի 6-ին) միջազգային փորձի ուսումնասիրումը վկայում է, որ.

- դատախազները հանրային մարմիններ են, որոնք, հասարակության անունից և ի շահ հանրության, ապահովում են օրենքի կիրառությունը, որոշում են հարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել այն, ինչպես նաև իրականացնում, ուղղորդում կամ վերահսկում են քրեական գործերով հետաքննությունը,
- ընդհանուր առմամբ, հանրային դատախազները պետք է վերահսկեն ոստիկանության կողմից իրականացվող հետաքննության օրինականությունը՝ ոչ ուշ, քան քրեական հետապնդում հարուցելու կամ այն շարունակելու վերա-

բերյալ որոշում կայացնելու ընթացքում: Այս առումով, հանրային դատախազները պետք է հետևեն նաև ոստիկանության կողմից մարդու իրավունքների պահպանմանը,

- դատախազները պետք է իրականացնեն հսկողություն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց ցուցումներին և օրենքին համապատասխանությունը դիտարկելու համար:

Միացյալ ազգերի՝ Հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով կոնգրեսի կողմից ընդունված՝ դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցի (Հավանա, Կուբա, 27 օգոստոս-7 սեպտեմբեր 1990թ.) համաձայն.

- դատախազները պետք է ակտիվ դեր կատարեն քրեական գործի վարույթում, ներառյալ քրեական հետապնդման հարուցումը,
- դատախազները պետք է արդար, հետևողականորեն և անհապաղ իրականացնեն իրենց պարտականություններն օրենքով սահմանված կարգով, հարգեն ու պաշտպանեն մարդու արժանապատվությունը և պաշտպանեն մարդու իրավունքները՝ նպաստելով քրեական արդարադատության համակարգի անխափան գործունեության և պատշաճ ընթացակարգի ապահովմանը,
- եթե անկողմնակալ հետաքննությունը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է, դատախազները չպետք է հարուցեն քրեական հետապնդում կամ շարունակեն այդպիսի հետապնդումը, այլ պետք է գործադրեն բոլոր ջանքերը վարույթը դադարեցնելու համար:

Դատախազների միջազգային ընկերակցության կողմից 1999թ. ապրիլի 23-ին ընդունված՝ դատախազների հիմնական պարտականությունների և իրավունքների ձևակերպման և մասնագիտական պատասխանատվության վերաբերյալ չափանիշների համաձայն.

- քրեական վարույթ հարուցելիս դատախազները պետք է գործին ընթացք տան միայն դրա՝ ողջամտորեն արժանահավատ և ընդունելի համարվող ապացույցներով հիմնավորված լինելու դեպքում և չպետք է շարունակեն հետապնդումն այդպիսի ապացույցների բացակայության դեպքում, վարույթի ողջ ընթացքում գործը պետք է վարեն հաստատականորեն, բայց արդարացի ձևով՝ դուրս չգալով ապացույցներով նախասահմանված շրջանակներից:

Դատական համակարգի անկախության վերաբերյալ եվրոպական չափանիշների մասին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի զեկույցի համաձայն (CDL-AD(2010)040).

- հետաքննության նկատմամբ դատախազական հսկողությունը համարվում է նորմալ և ընդունելի: Դատախազի և քննիչի առանձնացվածությունը դրական առումով նվազեցնում է մեկ ինստիտուտի կողմից իր լիազորությունների չարաշահման ռիսկը:

9. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, ելնելով նաև վերը փաստված միջազգային փորձի ուսումնասիրությունից, օրենսդրական կար-

գավորումների շրջանակներում նախատեսել լրացուցիչ երաշխիքներ՝ բացառելու համար մինչդատական վարույթում սույն գործով քննության առարկա դատախազական հսկողության արդյունքում կայացված որոշումների շրջանցման (չկատարման) կամ հետաքննության մարմնի, քննիչի կողմից միևնույն հիմքերով մեկից ավելի նման որոշումներ կայացնելու որևէ հնարավորություն: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատախազի **համաձայնությամբ** հետաքննության մարմնի, քննիչի կողմից քրեական վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման ինստիտուտի ներդրումն առավելապես կհամապատասխաներ վիճելի իրավահարաբերության՝ միջազգային կարգավորման փորձին, կներդաշնակեցներ մինչդատական վարույթում, մի կողմից, հետաքննության մարմնի, քննիչի, և մյուս կողմից՝ դատախազի գործառնության հետ: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի իրազեկումն այն մասին, որ «իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդիրը շտկելու համար ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է օրենքի նախագիծ» և շրջանառության մեջ է դրված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որում համարժեք լուծումներ նախատեսված են:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին.

առաջին՝ այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում,

երկրորդ՝ մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով

դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**,

Երրորդ՝ մինչդատական վարությամբ դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ:**

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**17 նոյեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1236**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼՅՈՒԲՈՎ ՓԻԼՈՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 124-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ
ԿԵՏԻ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 63-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Ղազարյանի, Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լյուբով Փիլոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լ. Փիլոյանի՝ 17.08.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև օրենսգիրք)՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերը» վերտառությամբ 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ ... 3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեին տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն»:

Օրենսգրքի 124-րդ հոդվածում որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ նաև օրենք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի փետրվարի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ից:

Օրենքի՝ «Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում»:

Օրենքի 63-րդ հոդվածը փոփոխվել է 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-10-Ն ՀՀ օրենքով, որով 63-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունում «չհամարվող» բառը փոխարինվել է «չհանդիսացող» բառով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը, ակնկալելով իր իրավունքների դատական պաշտպանություն, տարիներ շարունակ մասնակցել է դատավարական տարբեր գործընթացների: Սույն գործով

վիճարկվող նորմերի կիրառման դատավարական նախապատմությունն սկսվում է 2012 թվականի փետրվարի 27-ից, երբ դիմողի անունից նրա փաստաբանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Երևանի քաղաքապետի և «Սոզլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի՝ Երևանի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 2249-Ա որոշումը, դրա հիման վրա Երևանի քաղաքապետարանի և «Սոզլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի միջև 2008 թվականի մայիսի 27-ին կնքված՝ «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և «Սոզլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի անվամբ կատարված պետական գրանցումը մասնակի առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 02.08.2013թ. թիվ ՎԳ/2085/05/12 վարչական գործով կայացված վճռով հայցը մերժվել է:

Դիմողի փաստաբանի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2014թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մասնակի բավարարվել է:

Երևանի քաղաքապետարանի և «Սոզլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. որոշմամբ մասնակի բեկանվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2014թ. որոշումը և օրինական ուժ է տրվել ՀՀ վարչական դատարանի 02.08.2013թ. վճռին:

3. Դիմողը գտնում է, որ վարչական դատարանը կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ և այլ ակտերի իրավաչափության ստուգման և վերլուծության փուլում պարտավոր է ստուգել նաև այդ ակտերի համապատասխանությունը նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտերին և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին: Իր հիմնավորումների շրջանակներում դիմողը վկայակոչում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածը, իրավական որոշակիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 05.04.2011թ. ՍԳ-Ո-947 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, իրավունքի գերակայության, սահմանադրական նորմերի գերակայության, դրանց անմիջական գործողության, օրենքների, ենթաօրենսդրական, գերատեսչական, վարչական ակտերի նկատմամբ գերակայության սկզբունքը: Դիմումում վերլուծվում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի բովանդակությունը, ինչպես նաև վկայակոչվում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Ըստ դիմողի՝ վարչական դատարանի լիազորությունը սահմանափակելը, այն է՝ նշված ակտերի՝ միայն «օրենքին», այլ ոչ թե նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումներին հակասելու հանգամանքն ստուգելը, հակասում է իրավական որոշակիության, իրավական կանխատեսելիության, իրավահավասարության, օրենքի առջև բոլորի հավասարության, սահ-

մանադրական դատարանի և վարչական դատարանի դատական ակտերի՝ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ակտերի նկատմամբ գերակա լինելու սկզբունքներին:

Գլխողը նաև գտնում է, որ նույն հիմնավորումներով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին և/կամ 3, 18 և 19-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով բացառում են կոնկրետ վարչական գործով կիրառման ենթակա վարչական ակտերի՝ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով կայացված որոշումներին համապատասխանությունն ի պաշտոն» ստուգման առարկա դարձնելը:

Միաժամանակ, դիմողը սահմանադրական դատարանին խնդրում է նաև բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «օրենքին հակասելու պատճառով» դրույթի ու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են բավարար իրավական կառուցակարգեր ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումների պահանջները ՀՀ իրավական համակարգում իրացնելու համար:

Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը, 22-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 և 69-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30, 134, 158, 161, 198 և 199-րդ հոդվածները՝ պատասխանողը գտնում է, որ «օրենքի խախտում» եզրույթը լայն հասկացություն է, որը, վարույթի առանձնահատկություններով պայմանավորված, ընդգրկում է իրավական ակտի օրինականության ստուգման պահանջն ինչպես նշված իրավական ակտի ընդունման և գործողության մեջ դնելու ընթացակարգի պահպանվածության տեսանկյունից, այնպես էլ դրա բովանդակության համապատասխանության ստուգումն առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի պահանջներին:

Վերը նշված իրավադրույթների վկայակոչմամբ՝ պատասխանողը գտնում է նաև, որ կոնկրետ գործով կիրառման ենթակա իրավական ակտերի, ինչպես նաև օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասում նշված վարչական ակտերի՝ օրենքին համապատասխանությունն ստուգելու պահանջն անուղղակիորեն ներառում է նաև օրենքի կամ նորմատիվ այլ իրավական ակտի, այդ թվում՝ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած, նորմի վերաբերյալ համապատասխանաբար՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումները հաշվի առնելու պահանջը:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ, և դիմողը, ըստ էության, բարձրացնում է իր նկատմամբ կայացված դատական ակտերի իրավաչափության հարց:

5. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳ-ԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ դիմողի շատ փաստարկներ թերևս քննության առարկա կարող էին դառնալ վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում, սակայն անհատական դիմումների վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հստակ պահանջներ: Այս առումով, սույն գործի նյութերի ուսումնասիրման արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով անհատական սահմանադրական գանգատին ներկայացվող պահանջներն ու այն գործերի քննության առանձնահատկությունները, որոնք սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «օրենքին հակասելու պատճառով» դրույթը **դիմողի նկատմամբ չի կիրառվել**, և առկա է գործի վարույթն այդ մասով կարճելու հիմք՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի դրույթների:

Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը բաղկացած է երկու դրույթներից.

ա/ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը,

բ/ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն:

Գլխողի առնչությամբ կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանը փաստում է, որ դրանցում ոչ միայն առկա չէ հղում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ վերը նշված երկրորդ դրույթին, այլ նաև դատական ակտերից և ոչ մեկում դատարանները չեն նշել այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը ձևականորեն վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԳԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ **դիմողը չի հիմնավորել** օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը: Գլխողի ներկայացրած հիմնավորումները վերաբերում են բացառապես օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետին: Այսինքն՝ առկա է դիմումն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի մասով կարճելու հիմք՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի և 69-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների:

6. Անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը նշված դրույթի վերաբերյալ իր փաստարկները կառուցել է հետևյալ երկու դիրքորոշումների հիման վրա.

առաջին՝ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված՝ **անհատական վարչական ակտի** անվավերության հիմքերի շարքում բացակայում են այնպիսի հիմքերը, ինչպիսիք են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումները,

երկրորդ՝ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթը վարչական դատարանին վերապահում է լիազորություն՝ ի պաշտոն» ստուգելու **կիրառման**

ենթակա անհատական վարչական ակտի համապատասխանությունն օրենքներին՝ բացառելով դրանց՝ նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին համապատասխանությունն **ի պաշտոն» ստուգելու** հնարավորությունը:

Դիմողի՝ վերը նշված առաջին փաստարկի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը **չպետք է հակասի** հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Վերը նշված դրույթից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ դեպքում՝ **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ դատարանը որոշում է այն նորմատիվ իրավական ակտերի շրջանակը, որոնց հիման վրա ընդունվել է **անհատական վարչական ակտը**, ինչպես նաև պարզում է **անհատական վարչական ակտի** ընդունման պահին վերը նշված նորմատիվ իրավական ակտերի՝ ուժի մեջ գտնվելու հանգամանքը: Այսինքն՝ վարչական դատարանը պարզում է, ի թիվս այլնի, համապատասխան նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների առկայությունը: Այստեղից էլ բխում է, որ եթե վարչական դատարանում **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ առկա է սահմանադրական դատարանի համապատասխան որոշում, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել **անհատական վարչական ակտի** ընդունման համար հիմք հանդիսացած նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը), կամ տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բռնկանդակությամբ, կամ առկա է վարչական դատարանի համապատասխան որոշում, որով տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է անվավեր, և **անհատական վարչական ակտն** ընդունվել է վերը նշված նորմատիվ իրավական ակտի հիման վրա, ապա վարչական դատարանում վիճարկվող **անհատական վարչական ակտը** համարվում է օրենքին, մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին հակասող: Այստեղից էլ բխում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում, որպես **կոնկրետ դեպքում, անհատական վարչական ակտի** անվավերության հիմք նշված՝ օրենքին հակասելու վերաբերյալ դրույթը

միաժամանակ ներառում է նաև **անհատական վարչական ակտի**՝ այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին հակասելու հանգամանքը, և բացակայում է **անհատական վարչական ակտի** անվավերության հիմքերի շարքում այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների վերաբերյալ դրույթներ ամրագրելու անհրաժեշտությունը: Մինևույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումները համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում **պարտադիր են** բոլորի համար:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, ի թիվս իրավակիրառողների համար իրավասություն սահմանող այլ իրավական ակտերի, անուղակիորեն սահմանում է պարտականություն՝ վարչական ակտ ընդունելիս կանխատեսել դրա անվավերության հիմքերը, այն է՝ տվյալ վարչական ակտի **ոչ միայն ընդունման կարգին, այլ բովանդակությանը** վերաբերող օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի, այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վարչական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների և վճիռների պահանջների պահպանվածությունը և վարչական ակտն ընդունել միայն այդ պահանջների պահպանվածության հանգամանքի մասին հավաստիանալուց հետո: Այսինքն՝ ի թիվս այլնի, հիմք ընդունել **ոչ միայն տվյալ վարչական ակտն ընդունելու իրավասություն սահմանող օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտ (նրա համապատասխան դրույթները), այլ նաև հաշվի առնել տվյալ վարչական ակտի բովանդակությանն առնչվող այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի և, մասնավորապես,** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 66-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումները, տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ սահմանադրական դատարանի և վարչական դատարանի որոշումները, ինչպես նաև վարչական ակտի հասցեատիրոջ՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

Անդրադառնալով դիմողի երկրորդ փաստարկին՝ կապված վարչական դատարանի լիազորության հետ՝ **ի պաշտոն» ստուգելու կիրառման ենթակա անհատական վարչական ակտի** համապատասխանությունը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական

ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝ ... 3) եզրահանգում՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք դատարանը վերաբերելի է համարում»։ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ վերը նշված դրույթներից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ գործի քննության ընթացքում կիրառելի իրավունքի շրջանակներում ընդգրկվում են կամ կիրառման ենթակա իրավական ակտեր են համարվում բացառապես միջազգային պայմանագրերը, օրենքները, նորմատիվ իրավական ակտերը, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները։ Հետևաբար, վարչական դատարանում կոնկրետ գործի քննության շրջանակներում **անհատական վարչական ակտերը** չեն հանդիսանում տվյալ գործով կիրառման ենթակա ակտեր և չեն ներառվում տվյալ գործով կիրառելի իրավունքի շրջանակներում։

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով։

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգիրքը չի պարունակում որևէ նորմ, որը վարչական դատարանին հնարավորություն կընձեռեր մեկ այլ գործի քննության շրջանակներում քննության առարկա դարձնելու տվյալ գործի լուծման համար էական նշանակություն, սակայն **տվյալ գործով հայցի առարկա չհանդիսացող** մեկ այլ անհատական վարչական ակտի իրավաչափության հարցը։ Այսինքն՝ օրենսդրի տրամաբանությունը հիմնված է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի, այդ թվում՝ նաև անհատական վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վրա, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը՝ ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից։

Այս տրամաբանությունն է ընկած նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ դիմողի վերաբերյալ թիվ ՎԴ/2085/05/12 գործով 30.04.2015թ. կայացրած որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների հիմքում։ Մասնավորապես, նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին։ Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունք-

քը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (տե՛ս, օրինակ, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը)»:

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝ ... 3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը. ... 5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները»:

Սույն գործի շրջանակներում, ելնելով վերը նշված դրույթներից, օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Երևանի քաղաքապետի 25.11.2005թ. թիվ 2594-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 399-Ն որոշումը, որպես փոխհատուցում դիմողին գնման նախապատվության, կառուցապատման և 99 տարով վարձակալության իրավունքներով տրամադրվել է հողամաս, կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, տրվել է հատակագիծսխեմա: Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել խնդրո առարկա հողամասի նկատմամբ **կառուցապատման, վարձակալության իրավունքներ, ինչպես նաև սեփականության իրավունքի օրինական ակնկալիք**, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ մասնավորապես, Տրզոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44) գույք է համարվում ոչ

միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը վկայակոչված է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. հուլիսի 7-ի ՍԳՈ-902 որոշման մեջ: Իսկ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-723, ՍԳՈ-741, ՍԳՈ-881 որոշումներում սահմանադրական դատարանը փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, ՍԳՈ-741 որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Մինչդեռ Երևանի քաղաքապետի 16.03.2006թ. թիվ 357-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչվել խնդրո առարկա հողամասը տրամադրելու վերաբերյալ 25.11.2005թ. թիվ 2594-Ա որոշումը և վաղաժամկետ լուծվել է վարձակալության պայմանագիրը, **ինչը ոտնահարել է դիմողի՝ կառուցապատման, վարձակալության իրավունքները, ինչպես նաև սեփականության իրավունքի օրինական ակնկալիքը, հետևաբար՝ նաև սեփականության իրավունքը:** ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանն իր՝ 16.04.2006թ. ՍԳՈ-630 որոշման 8-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Համաձայն Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»: Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի սեփականության իրավունքի խախտմանն առնչվող խնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա իրավանորմների սահմանադրականության հանգամանքով, այլ դիմողի՝ **կառուցապատման և վարձակալության իրավունքները, ինչպես նաև սեփականության իրավունքի օրինական ակնկալիքը գործնականում**

իրավունքի գերակայության սկզբունքին համարժեք ձևով հաշվի չառնելու համ- գամանքով:

Գործում առկա այն փաստարկները, որոնք առնչվում են դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնության պայմանների չկատարմանը և Երևանի քաղաքապետի 16.03.2006թ. թիվ 357-Ա որոշմանը, այդ թվում՝ նաև դիմո-
ղի լավելու իրավունքի խախտման և օրենքի 35, 37, և 38-րդ հոդվածների պահանջ-
ների անտեսմանը, վեճի առարկա նորմերի սահմանադրականությանը չեն
վերաբերում, այլ առաջադրում են ընդունված ակտերի իրավաչափության խնդիր
և դուրս են սահմանադրական դատարանի քննության շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի
Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդ-
վածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածով, 63, 64
և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դա-
տարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Լյուբով Փիլոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության
վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի
և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի
63-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությա-
նը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մա-
սամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի
3-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ
օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի մասով կարճել:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրեն-
քի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը համապատասխանում է Հայաստանի
Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված
իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի
երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրա-
պարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**1 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1238**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
8-ՐԳ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ, 8-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ
ԵՐՐՈՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԳ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյան-նի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լ. Սարգսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասության, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասության և «Բնակչության պետական ռեգիստրի մասին»

ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 06.07.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Նույնականացման քարտերի մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 30-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունը սահմանում է.

«Անձնական տվյալների տեղեկատվական բազաներում անձի նույնականացումն ապահովելու նպատակով նույնականացման քարտ ստանալիս քաղաքացին ուստիկանության մարմնում հանձնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը սահմանում է.

«Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը և օրենքով նախատեսված դեպքերում 2014 թվականի հունվարի 1-ից հետո տրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի վավերականության ժամկետը լրանալու դեպքում քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիր չի տրամադրվում (փոխանակվում), բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Հիշյալ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասության մեջ ՀՀ Ազգային ժողովի կողմից որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել: Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը վիճարկվող խմբագրությամբ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-136-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 11-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի սեպտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից

մից ստորագրվել՝ 2002 թվականի հոկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 31-ից:

Հիշյալ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է.

«1. Ռեզիստորում մշակվում են բնակչի հետևյալ անհատական տվյալները.

...

10) կենսաչափական տվյալները, եթե դրանց մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով»:

Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը վիճարկվող խմբագրության օրենքում ամրագրվել է «Բնակչության պետական ռեզիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-290-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 30-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ից:

2. Դիմողը գտնում է, որ «Նույնականացման քարտերի մասին» և «Բնակչության պետական ռեզիստրի մասին» ՀՀ օրենքների՝ իր կողմից վիճարկվող դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածին, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 37-րդ, 43-րդ և 48-րդ հոդվածներին, ներկայացնելով հետևյալ փաստարկները.

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ՝ այն քաղաքացիները, որոնք կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվել են օրենքով սահմանված կարգով նույնականացման քարտեր ստանալուց, գրկվել են կենսաթոշակ ստանալու իրավունքից: Խնդիրն այն է, որ «նույնականացման քարտերի որոշ բաղկացուցիչ հատկանիշներ և մասեր (օրինակ՝ քարտի էլեկտրոնային բնույթը և էլեկտրոնային պահոցի առկայությունը) հակասում են տվյալ քաղաքացիների կրոնական համոզմունքներին, ուստի վերջիններս ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի վավերականության ժամկետը լրանալուց հետո հրաժարվել են նույնականացման քարտեր ստանալուց: Արդյունքում՝ նրանք չեն կարողանում իրականացնել ՀՀ Սահմանադրության 37-րդ, 8-րդ, 31-րդ և 48-րդ հոդվածներով երաշխավորված սոցիալական ապահովության և սեփականության իրավունքները»: Ըստ դիմող կողմի՝ օրենքի ներկայիս կարգավորումներով սահմանված չէ անձնագրերի տրամադրում այն դեպքերում, երբ կրոնական համոզմունքներից ելնելով՝ քաղաքացին հրաժարվել է ձեռք բերել նույնականացման քարտ: Եվ, ինչպես գտնում է դիմող կողմը՝ «օրենքը որոշ խմբի անձանց դնում է երկրնտրանքի առաջ. կամ իրականացնել իրենց խղճի և կրոնի ազատության իրավունքը, կամ, հրաժարվելով այդ իրավունքից, ստանալ նույնականացման քարտ՝ իրենց սոցիալական ապահովության իրավունքից արդյունավետ օգտվելու համար»: Հետևաբար, ինչպես եզրակացնում է դիմող կողմը, կրոնի ազատության, սոցիալական ապահովության և սեփականության իրավունքների

սահմանափակումը համաչափ չէ անձնագրային նոր համակարգ ներդնելու միջոցով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակներին և «համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 8-րդ, 26-րդ հոդվածների, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ և 48-րդ հոդվածների պահանջներին»:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ դիմող կողմը գտնում է, որ՝ «... նախատեսված անհատական տվյալների տեղեկատվական բազայի առկայությամբ անձի անձնական կյանքի հարգանքի իրավունքի հնարավոր սահմանափակումն իր մեջ պարունակում է այս իրավունքի ոտնահարման ռիսկեր, քանզի պետությունը չի կարող լիարժեքորեն երաշխավորել տեղեկատվական բազայի անվտանգության հարցը ... ներկայումս գոյություն ունեցող ամենաապահով տվյալների բազաները նույնիսկ ամբողջովին ապահովագրված չեն հնարավոր կիբերհարձակումներից՝ ապօրինի ներխուժման և այդ բազայում առկա տեղեկատվությանը ապօրինի տիրանալու ռիսկերից»: Դիմող կողմը նաև գտնում է, որ եթե նույնիսկ վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու կրճատմանն ուղղված քաղաքականության իրականացումը, ինչպես նաև փաստաթղթի կեղծման հնարավորությունը նվազագույնի հասցնելը և ազգային անվտանգության ապահովումը դիտարկվեն որպես օրինական նպատակ, ապա աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները պահպանող անձնագրային համակարգի տեղեկատվական բազայի ստեղծումը հանգեցնում է Սահմանադրության 23-րդ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքի այնպիսի սահմանափակման, որը համաչափ չէ հետապնդվող նպատակին: Այդպիսով, դիմող կողմը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով նախատեսում են անհատական տվյալների այնպիսի տեղեկատվական բազաների առկայություն, որոնք պարունակում են անձանց մատնադրոշմների կամ այլ կենսաչափական տվյալներ, համահունչ չեն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մասի և 43-րդ հոդվածի պահանջներին:

Որպես վերոհիշյալ փաստարկների հիմնավորումներ դիմող կողմը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ՄԻԵԴ նախադեպային որոշումներ, եվրոպական պետությունների իրավակիրառական պրակտիկան:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում նույնականացման քարտերի ներդրումն անձանց կրոնական իրավունքներին ուղղակիորեն չի առնչվում: Նույնականացման քարտը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ: Այն նախատեսված է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Ըստ պատասխանող կողմի՝ չեն բացառվում այնպիսի իրավիճակները, որ հին նմուշի անձնագրերը ևս իրենց առանձին տարրե-

րի պատճառով «հասարակության որոշ հատվածի կողմից դիտվեն որպես իրենց կրոնական համոզմունքներին հակասող: Մակայն դա չի նշանակում, որ նման անձնագրերի կիրառություն նախատեսող իրավական նորմերը հակասահմանադրական են»: Եվ, ինչպես փաստում է պատասխանողը, քաղաքացիների իրավունքների ամբողջական իրացումն ապահովելու նպատակով օրենսդիրն առանձին վերապահում է կատարել հանրային ծառայությունների համարանիշի մասով և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսել է նույնականացման քարտի տրամադրում առանց հանրային ծառայությունների համարանիշը նույնականացման քարտում ամրագրելու՝ այն դեպքերում, երբ քաղաքացին հրաժարվել է ձեռք բերել այդպիսի համարանիշ կամ սոցիալական քարտ:

Պատասխանողը միաժամանակ փաստում է. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձնական տվյալները հատուկ իրավական ռեժիմով պաշտպանության ենթակա օբյեկտներ են, ինչը պայմանավորված է անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքերի տարածվածությամբ և հիշյալ բնագավառում մարդու անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ 2015թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի ընդունմամբ անձնական տվյալների մշակման ու պաշտպանության կարգավորման ներպետական մեխանիզմները համապատասխանեցվեցին եվրոպական ստանդարտներին, մասնավորապես՝ Եվրամիության 1981 թվականի հունվարի 28-ի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի և Եվրապաառլամենտի ու Եվրախորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի դրույթների պահանջներին»:

Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ «հասարակական կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեցնի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»:

4. Սույն գործի քննության շրջանակներում, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը որոշելիս նախ գնահատել.

- վեճի առարկա իրավակարգավորումներում «իրավունքների» ու «պարտականությունների» փոխադարձության ու համարժեքության ապահովումը՝ որպես վիճարկվող նորմերի կիրառման շրջանակներում առաջացող հարաբերությունների արդյունավետ կարգավորման երաշխիք,

- վիճարկվող նորմատիվ կարգավորմամբ պայմանավորված իրավական հետևանքների հնարավոր ազդեցությունը սահմանադրական այլ իրավունքների ազատ իրացման վրա,
- քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցների համաչափությունը՝ պարզելու համար, թե որքանով է այն համահունչ խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացման և այդ ազատության սահմանափակման պետության հայեցողության՝ Սահմանադրությամբ կանխորոշված չափանիշներին,
- վիճարկվող իրավակարգավորման և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրելիությունը (այդ թվում կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացման շրջանակներում)՝ պարզելու համար նաև այդ իրավակարգավորմամբ անձի հիմնական իրավունքների ու ազատությունների հնարավոր սահմանափակումների համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատել նաև իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների, անձնական տվյալների պաշտպանությունն ապահովող սահմանադրական և օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացումն ապահովող օրենսդրության այլ ակտերի համապատասխան դրույթների համատեքստում:

5. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության քաղաքացուն՝ իր ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տրամադրման հետ կապված հարաբերություններն է, որոնք օբյեկտիվորեն, ՀՀ Սահմանադրության և քաղաքացիության ինստիտուտը կարգավորող օրենսդրության այլ ակտերի հիմքով ծագում են, մի կողմից, պետության, մյուս կողմից՝ ֆիզիկական անձի միջև, հաստատագրելով Հայաստանի Հանրապետության և քաղաքացու միջև իրավաբանական կապը, որը հիմք է հասարակական կյանքում փոխադարձ իրավունքների և պարտականությունների ստանձնման ու կատարման համար: Այդպիսի փաստաթուղթը, ըստ հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի, նույնականացման քարտն է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Այսինքն, ըստ իր իրավական բովանդակության՝ նույնականացման քարտը նախ և առաջ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատող և պետության կողմից տրվող պաշտոնական փաստաթուղթ է, առանց որի քաղաքացին անկարող է իրավահարաբերությունների լիարժեք (գործունակ) սուբյեկտ լինել, իրացնել Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքները և կատարել (ստանձնել) պարտականություններ:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան անհատական հաշվառման (գրանցման) հետ կապված հարաբերություններն են, որոնց իրավակարգավորման նպատակը ՀՀ բնակչի ազատ տեղաշարժվելու, բնակչության վայր ընտրելու` ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի (25-րդ հոդվածի առաջին մաս) իրացումն ապահովելն ու ըստ բնակչության վայրի սահմանված անհատական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգի (ռեգիստրի) ստեղծումն ու վարելն է:

Այդպիսով, ինչպես «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի, այնպես էլ սույն գործով քննության առարկա «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների **ընդհանուր տրամաբանությունից բխում է**, որ ինչպես պետությունը, այնպես էլ անհատը, իրացնելով այդ օրենքներով նախատեսված համապատասխան իրավունքներ ու պարտականություններ` ձեռք են բերում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ծագող հարաբերությունների մասնակից (սուբյեկտ) լինելու իրավական հնարավորություններ, որպիսիք անհրաժեշտ են նախ և առաջ` ժողովրդավարական, իրավական պետության պայմաններում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ապահովելու, պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներն արդյունավետ լուծելու համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի նպատակն արդարացի է և իրավաչափ, բխում է իրավունքի գերակայության սկզբունքից: Վերջինս ենթադրում է նաև անհատի և պետության **փոխադարձ իրավունքներին համարժեք պարտականությունների բաշխման և հավասարակշռման** սկզբունքի պահպանում, որը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի սույն գործով վիճարկվող և դրանց կարգավորման առարկային վերաբերող օրենքի այլ նորմերի ընդհանուր վերլուծությունը` կապված նույնականացման քարտ տրամադրելու առնչությամբ ծագող հարաբերությունների կարգավորման հետ, վկայում է, որ.

- քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրվում կամ այդ քարտը փոխանակվում է **կամավորության սկզբունքով**, իր դիմումի համաձայն (3-րդ հոդված),
- նույնականացման քարտ տրամադրվում է նաև ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ նախատեսված նմուշի ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը լրանալու դեպքում (8-րդ հոդված),
- քարտում ամրագրվում են քաղաքացու անձնական տվյալները, այդ թվում քարտի տեխնիկական մասում` էլեկտրոնային պահոցում (4-րդ հոդված),
- նույնականացման քարտ տրամադրվում է **այն դեպքում**, երբ քաղաքացին ոստիկանության մարմնում հանձնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների կամ` աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները (4-րդ հոդվածի 8-րդ մաս),

- նույնականացման քարտուս ամրագրվում են նաև հանրային ծառայությունների համարանիշը՝ եթե քաղաքացին չի հրաժարվել ձեռք բերել սոցիալական ապահովության քարտ, **ինչպես նաև քաղաքացու լուսանկարը, ստորագրությունը, արյան խումբը և ռեզուսը՝ քաղաքացու կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի համաձայնությամբ:**

Այսպիսով, հիշյալ օրենքի համապատասխան նորմերի բովանդակությունից հետևում է, որ նույնականացման քարտ ստանալը **քաղաքացու իրավունքն է**, որի իրացումը պայմանավորված է ինչպես քաղաքացու կամաարտահայտությամբ, այնպես էլ նրա կողմից որոշակի **պարտականությունների կատարմամբ:**

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի ինչպես վիճարկվող, այնպես էլ այլ նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ.

- ռեգիստրում մշակվում են բնակչի որոշակի անհատական տվյալներ, այդ թվում՝ կենսաչափական տվյալներ պարունակող, **եթե դրանց մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով (5-րդ հոդված),**
- ՀՀ բնակիչը **պարտավոր է** սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան ռեգիստրին (անձամբ կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության, դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով) ներկայացնել իր բնակության վայրի (կացարանի) հասցեն և սահմանված անհատական տվյալներ, **այդ թվում՝ կենսաչափական (7-րդ հոդված),**
- օրենքի պահանջները խախտելու դեպքում **նախատեսվում է պատասխանատվություն (10-րդ հոդված):**

Այսինքն, հիշյալ օրենքով երաշխավորելով ՀՀ տարածքում ազատ տեղաշարժի **իրավունքի իրացումը՝** միաժամանակ օրենքով բնակչի առջև դրվում են **կատարման համար պարտադիր պահանջներ**, որոնց իրավական նպատակահարմարությունը պայմանավորված է պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վեճի առարկա դրույթի սահմանադրականության հարցը էապես պայմանավորված է պատասխանողի կողմից մատնանշված՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի /ուժի մեջ է մտել 2015թ. հուլիսի 1-ից/ իրավակարգավորումների բնույթով, ինչը, սակայն, սահմանադրական դատարանում դիմողի կողմից չի վիճարկվել և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով սույն գործի շրջանակներում քննության առարկա լինել չի կարող: Ընդ որում, այդ օրենքով են սահմանվում կենսաչափական տվյալների մշակման առանձնահատկությունները, որոնց համաձայն՝ **կենսաչափական անձնական տվյալներ մշակվում են միայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և եթե օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով: Նման բացառություն նախատեսված է «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվա-

ծով, որը կենսաաշխատանքի տվյալներից առանձնացնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: **Մնացած բոլոր կենսաաշխատանքի տվյալները կարող են մշակվել բացառապես կամավորության սկզբունքով՝ տվյալ սուբյեկտի համաձայնությամբ:**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կենսաաշխատանքի տվյալների մշակման և պահպանության հարցերը սույն գործով քննության առարկա կարող են հանդիսանալ միայն դիմումի առարկայի շրջանակներում՝ պայմանավորված մատնադրոշմներ վերցնելու և պահպանելու հանգամանքով:

6. Անհատական, այդ թվում՝ կենսաաշխատանքի տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրությունը վկայում է որոշակի հատակ չափորոշիչների կիրառման անհրաժեշտության մասին, մասնավորապես.

- այդ տվյալները պետք է հավաքվեն և մշակվեն արդար և օրինական ճանապարհով,
- պահպանվեն հատուկ և իրավաչափ նպատակների համար և չօգտագործվեն այդ նպատակներին չհամապատասխանող ձևով,
- լինեն համարժեք, համապատասխան և համաչափ հավաքման համար հիմք ծառայած նպատակներին,
- լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում թարմացվեն,
- պահպանվեն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտին այնպիսի ժամանակահատվածում, որը չի գերազանցում տվյալների հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար պահանջված ժամանակահատվածը,
- անվտանգության համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն ավտոմատացված տվյալների բազաներում պահպանվող անհատական տվյալների պաշտպանության համար՝ ընդդեմ պատահական կամ չթույլատրված ոչնչացման կամ կորստի, ինչպես նաև չթույլատրված մուտքի, փոփոխության կամ տարածման (Եվրոպայի խորհուրդ, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա, 1981, վավերացվել է 09.05.2012թ.):

Կենսաաշխատանքի տվյալների հավաքման, մշակման և օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1797 (2011) բանաձևի շրջանակներում անդամ պետություններին կոչ է արվում.

- ընդունել հատուկ օրենսդրություն կենսաաշխատանքի տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ՝ պաշտպանելու անհատներին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ու մարդու իրավունքների պաշտպանության այլ փաստաթղթերով սահմանված իրավունքների խախտումներից, մասնավորապես.

ա) ապահովել համաչափություն կենսաչափական տվյալների հետ գործողություններ կատարելիս,

բ) սահմանափակել դրանց գնահատումը, մշակումը և պահպանումը միայն հստակ անհրաժեշտության դեպքերի համար, մասնավորապես, երբ հանրային անվտանգության կամ հանրային առողջության պահպանման կամ այլոց իրավունքների պաշտպանության շահը գերակայում է մարդու իրավունքներին հնարավոր միջամտության նկատմամբ և եթե այլ, ավելի նվազ միջամտություն հանդիսացող միջոցի օգտագործումն անհնար է,

գ) ապահովել համապատասխան պահպանման համակարգեր՝ մասնավորապես նվազագույնի հասցնելով կենտրոնացված համակարգերում տվյալների պահպանումը, ինչպես նաև խուսափել պահպանման համակարգերում անվերաբերելի տվյալներ պահպանելու չարաշահումներից,

դ) ապահովել, որպեսզի կենսաչափական տվյալներն օգտագործվեն միայն դրանց իրավաչափ հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար՝ կանխելով այդպիսի տվյալների չթույլատրված փոխանցումն ու հասանելիությունը:

Անհատական տվյալների մշակման հետ կապված անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ տարածման մասին Եվրոպական միության շրջանակներում ընդունված 95/46/EC դիրեկտիվի համաձայն (24 հոկտեմբերի 1995թ.) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անհատական տվյալները մշակվեն միայն այն դեպքում, երբ այն անհրաժեշտ է հանրային շահերից կամ վերահսկող մարմնի պաշտոնական լիազորության իրականացումից բխող խնդրի իրականացման համար:

Մասնավոր կյանքի պաշտպանության և անհատական տվյալների միջսահմանային փոխանցման վերաբերյալ ուղեցույցում սահմանված «ազգային կիրառման հիմնարար սկզբունքների» համաձայն (ընդունված՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության շրջանակներում) նախատեսված են հետևյալ չափորոշիչները.

ա) հավաքման սահմանափակման սկզբունք.

- անհատական տվյալների հավաքման հետ կապված պետք է լինեն սահմանափակումներ, և այս տվյալները պետք է ստացվեն միայն իրավական ու արդար միջոցներով, անհրաժեշտության դեպքում՝ տվյալների սուբյեկտի իմացությամբ և համաձայնությամբ.

բ) տվյալների որակի սկզբունք.

- անհատական տվյալները պետք է համարժեք լինեն դրանց հավաքման համար հիմք հանդիսացած նպատակներին և դրանց հասնելու համար անհրաժեշտ ծավալ ունենան, պետք է լինեն հավաստի, ամբողջական և թարմացվեն.

գ) նպատակի հստակեցման սկզբունք.

- անհատական տվյալների համար հիմք հանդիսացած նպատակները պետք է հստակեցվեն դրանց հավաքման ժամանակ և դրանց հետագա օգտագործումը պետք է ուղղված լինի միայն այդ նպատակների իրականացմանը:

Եվրոպական միության անդամ պետությունների կողմից տրվող անձնագրե-

րում և ճանապարհորդական փաստաթղթերում կենսաչափական տվյալների անվտանգության հատկանիշների ու չափանիշների վերաբերյալ հանձնարարականի համաձայն.

- անդամ պետությունների կողմից տրված անձնագրերը և ճանապարհորդական փաստաթղթերը պետք է համապատասխանեն սահմանված անվտանգության նվազագույն չափանիշներին,
- անձնագրերը և ճանապարհորդական փաստաթղթերը պետք է ներդրվի կրիչ, որը ներառում է դեմքի լուսանկարը: Անդամ պետությունները պետք է նաև ներառեն մատնահետքերը փոխլրացնող ձևաչափեր: Տվյալները պետք է ապահով լինեն, և տվյալներ պահպանող կրիչը պետք է ունենա համապատասխան հնարավորություն տվյալների գաղտնիությունն ու նույնականությունը երաշխավորելու համար,
- կարգավորման նպատակների համար անձնագրերի և ճանապարհորդական փաստաթղթերի կենսաչափական տվյալները պետք է միայն օգտագործվեն հաստատելու համար՝

ա) փաստաթղթի նույնականությունը,

բ) փաստաթուղթն ունեցող անձի ինքնությունը՝ ուղղակիորեն առկա համադրելի հատկանիշների միջոցով, երբ օրենքը պահանջում է տրամադրել անձնագիր կամ այլ ճանապարհորդական փաստաթուղթ (Եվրոպական միության շրջանակներում 2004թ. դեկտեմբերի 13-ին ընդունված կարգավորում 2252/2004):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), ինչպես նաև Եվրոպական միության արդարադատության դատարանն անդրադառնալով Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման և եվրոպական իրավունքի նորմերի պահանջների տեսանկյունից կենսաչափական տվյալների բնույթի ու դրանց իրավական պաշտպանության հիմնախնդիրներին՝ կարևորել են մի շարք սկզբունքներ, որոնք առանցքային նշանակություն ունեն եվրոպական իրավակիրառական պրակտիկայում, մասնավորապես, մատնադրոշմներ վերցնելու ու պահպանելու, դրանց օգտագործման և կոնվենցիոն իրավունքի տեսանկյունից գնահատման խնդիրների շուրջ ՄԻԵԴ-ը գտել է, որ «...իշխանությունների կողմից մատնադրոշմների պահպանումը՝ կապված նույնականացված կամ նույնականացման ենթակա անձի հետ, ինքնին կարող է առաջացնել մասնավոր կյանքի հետ կապված կարևոր խնդիրներ, անկախ դրանց օբյեկտիվ և անհերքելի բնույթից»: Դատարանը գտել է, որ «... դիմողների մատնահետքերը սկզբնապես վերցվել են քրեական հետապնդման շրջանակներում և հետագայում գրանցվել տվյալների ազգային բազայում՝ մշտապես պահպանելու և քրեական նույնականացման նպատակներով ավտոմատ միջոցներով կանոնավոր մշակման նպատակով: Ընդունելի է համարվում այն հանգամանքը, որ ներառվող տեղեկատվության տեսանկյունից ԴՆԹ-ի և բջիջների նմուշների պահպանումը ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ մասնավոր կյանքի վրա, քան մատնադրոշմների պահպանումը: Այնուամենայնիվ, Դատարանը... գտնում է, որ մատնադրոշմների պահպանումը համարվում է միջամտություն մասնավոր կյանքը հարգելու իրա-

վունքին, չնայած դրա՝ արդարացված լինելու հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է տարանջատել մատնահետքերի վերցնումը, օգտագործումը և պահպանումը, մի կողմից և նմուշներն ու պրոֆիլները, մյուս կողմից (CASE OF S. AND MARPER v. THE UNITED KINGDOM, Applications nos. 30562/04 and 30566/04, 4 of December 2008):

Վերոհիշյալ գործի շրջանակներում դատարանը կարևորել է նաև՝ «... որ հանրային մարմինների կողմից անհատական տվյալների պահպանումն ինքնին պետք է համարել տվյալ անձի մասնավոր կյանքի վրա ուղղակի ազդեցություն ունեցող հանգամանք, անկախ դրանց հետագա օգտագործման հանգամանքից: ... Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պիտակավորման ռիսկը, ելնելով այն հանգամանքից, որ դիմողների կարգավիճակում գտնվող անձինք, ովքեր չեն դատապարտվել որևէ իրավախախտման համար և անմեղության կանխավարկածի իրավունք ունեն, արժանանում են նույն վերաբերմունքին, ինչ դատապարտված անձինք: Այս կապակցությամբ, Դատարանը պետք է հաշվի առնի, որ Կոնվենցիայի համաձայն յուրաքանչյուրի անմեղ համարվելու իրավունքը ներառում է այն ընդհանուր կանոնը, համաձայն որի արդարացումից հետո մեղադրված անձի անմեղության վերաբերյալ որևէ կասկած չպետք է առկա լինի (Rushiti v. Austria, no. 28389/95, « 31, 21 March 2000): Դիշտ է, դիմողների անձնական տվյալների պահպանումը չի կարող հավասարվել կասկածների առկայության հետ: Սակայն, նրանց ընկալումն առ այն, որ նրանց չեն վերաբերում որպես անմեղ մարդկանց, աճում է այն փաստի ուժով, որ նրանց տվյալները պահպանվում են անորոշ ժամանակով նույն կերպ, ինչ դատապարտված անձանց տվյալները, մինչդեռ իրավախախտման մեջ երբևէ չկասկածված անձանց տվյալները ոչնչացվում են: ... Դատարանը համարում է, որ չդատապարտված անձանց տվյալների պահպանումը կարող է վնասակար լինել անչափահասների դեպքում, ինչպես առաջին դիմողի դեպքն է, հաշվի առնելով նրանց հատուկ կարգավիճակը և նրանց զարգացման ու հասարակության մեջ ինտեգրվելու կարևորությունը: Որպես եզրակացություն Դատարանը գտնում է, որ հանցագործության մեջ կասկածված և հետագայում արդարացված անձի մատնադրոշմների, ԴՆԹ-ի և քջիջների նմուշների պահպանման լիազորությունների ընդհանուր և ոչ խտրական բնույթը, ինչպես սույն գործով դիմողների գործում, չի պահպանում արդար հավասարակշռություն բախվող հանրային և մասնավոր շահերի միջև, և որ պատասխանող պետությունը գերազանցել է այս հարցի հետ կապված ընդունելի հայեցողության շրջանակը: Հետևաբար, այդպիսի պահպանումը համարվում է դիմողների մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքին անհամաչափ միջամտություն և չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է կենսաչափական տվյալների հավաքման, օգտագործման իրավաչափության գնահատման սկզբունքային մոտեցումների մասին, համաձայն որոնց.

- մատնահետքերը կարող են օգտագործվել միայն անձնագրի նույնականացման և այն ունեցող անձի ինքնության հաստատման համար,
- իրավակարգավորումը պետք է ապահովի չլիազորված անձանց կողմից մատնահետքերը ներառող տեղեկատվության հասանելիությունից,
- այդ տվյալները պետք է պահպանվեն տվյալ անձի անձնագրում ներդրված խիստ ապահով կրիչում,
- պետք է նկատի ունենալ, որ վերոնշյալ թիվ 2252/2004 կարգավորման 1(2) հոդվածն իրավական հիմք չի սահմանում մատնահետքերի պահպանման համար, բացառությամբ հենց տվյալ անձին պատկանող անձնագրերում պահպանվողների,
- մատնահետքերի պահպանման որևէ այլ մեթոդ կամ ձև չի կարող ինքնին մեկնաբանվել որպես իրավական հիմք՝ հավաքված տվյալների պահպանման կենտրոնական բազա ստեղծելու համար, կամ այդ տվյալների՝ Եվրոպական միությունն ապօրինի մուտք գործելը կանխելու նպատակից տարբերվող այլ նպատակով օգտագործման համար,
- վերոհիշյալի համատեքստում պետք է նշել, որ մատնահետքերի տվյալները չպետք է օգտագործվեն այլ կերպ, որը վերազանցում է կեղծ անձնագրերի օգտագործումը կանխելու նպատակին հասնելու համար անհրաժեշտ սահմանը *Case C 291/12, Michael Schwarz v. Stadt Bochum* (JUDGMENT OF THE COURT (Fourth Chamber), 17 October 2013):

Սահմանադրական դատարանն անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է համարում կարևորել նաև սահմանադրական վերահսկողության փորձը: Մասնավորապես, Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդն իր FRA-2012-1-004 որոշման շրջանակներում անհատական տվյալների համակարգի ստեղծումը, մի կողմից, համարում է նույնականացման քարտեր և ճանապարհորդական փաստաթղթեր տրամադրելու համար պահանջվող տվյալների պահպանմանը և այդպիսի փաստաթղթերի տրամադրման երաշխավորմանն ու դրանց կեղծման դեմ գործողությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթաց: Մյուս կողմից՝ Սահմանադրական խորհուրդը դիտարկել է տեղեկատվական բազայի բնութագիրը և գտել, որ բնակչության վերաբերյալ տվյալների բազայում ներառված ողջ տեղեկատվությունից կենսաչափական տվյալները, մասնավորապես, մատնահետքերը, համարվում են հատուկ վերաբերմունք պահանջող և համարժեք իրավակարգավորման առարկա:

Միաժամանակ, անձնագրերի (նույնականացման քարտերի) տրամադրման և դրա հետ կապված անհատական (կենսաչափական) տվյալների հավաքման, օգտագործման և պահպանման հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է դրա տարաբնույթ բովանդակության մասին: Որոշ պետություններում կենսաչափական տվյալների հավաքումն ունի երկակի նպատակ՝ անձի նույնականացման և հան-

ցավորության դեմ պայքարի (Արգենտինա, Ավստրալիա, Բրազիլիա, Իսրայել, Շվեդիա, ԱՄՆ և այլն):

7. Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորումներում «իրավունքների» ու «պարտականությունների» փոխադարձության և համարժեքության ապահովումը երաշխավորելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներում (ՍԳ-Ո-792, ՍԳ-Ո-833, ՍԳ-Ո-844, ՍԳ-Ո-934 և այլն) իրավունքի տարբեր բնագավառներում իրավասուբյեկտների **իրավունքների ու պարտականությունների փոխադարձության, համարժեքության** և դրանց արդյունավետ իրացման խնդիրների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով՝ ընդգծել է դրանց կարևորությունը ոչ միայն տվյալ իրավակարգավորման արդյունավետության, այլև սահմանադրական օրինականության ապահովման տեսանկյունից: Վերահաստատելով իր հիշյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև պարզել, թե վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում «իրավունքի» և «պարտականության» փոխադարձության ապահովմամբ իրավական ինչպիսի՝ հետևանքներ կարող են առաջանալ հասարակական այլ հարաբերությունների կարգավորման շրջանակներում և, մասնավորապես՝ սահմանադրական այլ իրավունքների ու ազատությունների ազատ իրականացման առնչությամբ, ինչպես նաև, փոխադարձությամբ հանդերձ՝ վիճելի նորմերում ապահովված է, արդյոք, «իրավունքի» և «պարտականության» **համարժեքությունը**՝ որպես իրավակարգավորման ժողովրդավարական սկզբունք, այն դիտարկելով նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի պահանջների համատեքստում:

Այդ տեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- իրավաչափ է, արդյոք, քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրելիս ոստիկանության մարմնում նրա աջ և ձախ ձեռքերի ցուցամատների կամ՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները վերցնելը,
- իրավաչափ է, արդյոք, քաղաքացու կենսաչափական տվյալների կենտրոնացված մշակումը,
- անձի մատնադրոշմները վերցնելը, կենսաչափական տվյալների մշակումն առնչվում են, արդյոք, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով երաշխավորված անձի իրավունքների ու ազատությունների իրացման հետ, և որպես իրավական հետևանք՝ անձի սահմանադրական ի՞նչ այլ իրավունքներ ու ազատություններ կարող են սահմանափակվել, հետևաբար՝ անձանց, այդ թվում հասարակության կրոնական համոզմունքներ ունեցող անդամների նկատմամբ երաշխավորվո՞ւմ է, արդյոք, իրավահավասար մոտեցում:

Վիճելի իրավակարգավորում նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, նախ՝ որ դրանցում սուբյեկտիվ բնույթի պարտականությունների սահմանումն ինքնանպատակ չէ և պայմանավորված չէ ձևական անհրա-

ժեշտությամբ, այլ ծառայեցվում է ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային շահերին: Մասնավորապես, պետության կողմից անձին տրվող պաշտոնական փաստաթղթում (նույնականացման քարտում) անձնական տվյալների արտացոլումն իրավական անհրաժեշտություն է, առանց որի սկզբունքորեն անհնարին է իրականացնել անձի նույնականացում՝ որոշելու համար նրա ինքնությունը, քաղաքացիությունը և այլն: Նման տվյալների ներկայացման պարտականություն նախատեսված էր նաև ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ (կից հավելվածի 2-րդ բաժին) սահմանված անձնագրի (նախկին մմուշի) տրամադրման դեպքում: Ընդ որում, եթե «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քարտ ստանալը քաղաքացու իրավունքն է, ապա ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ այն **պարտականություն էր**, որի կատարումն էլ պայմանավորված էր մի շարք այլ պարտականությունների կատարմամբ: Բացի դրանից, անձի նույնականացումը, ելնելով նաև ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված պահանջներից ու իրողություններից, օբյեկտիվորեն անհրաժեշտ է իրականացնել իրավական և առաջավոր տեխնիկական այնպիսի եղանակներով ու միջոցներով (այդ թվում և՛ մատնադրոշմներ վերցնելու միջոցով), որոնց գործադրման պայմաններում հնարավորինս երաշխավորվի անձի նույնականացման **ճշգրտությունը, օբյեկտիվությունը** և այդ գործընթացների արդյունքում ձեռք բերված **անձնական տվյալների պաշտպանվածությունը**, որը նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված պետության բացառիկ իրավագործությունն է, ինչպես նաև սահմանադրական պարտականությունը, որը բխում է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջներից: Իր հերթին, նույնականացումը միտված է երաշխավորելու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անձի՝ որպես իրավասուբյեկտի լիարժեք գործունեությունը (քաղաքացիա-իրավական գործունակությունը): Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող իրավակարգավորման ընդհանուր բովանդակությունից անմիջականորեն հետևում է, որ ինչպես նույնականացման քարտի տեխնիկական մասում ամփոփված անձնական տվյալները, այնպես էլ հանձնված մատնադրոշմները **բացառապես անհրաժեշտ են անձի՝ որպես ՀՀ քաղաքացու նույնականացումն ապահովելու համար**, որն անհրաժեշտ է տարբեր իրավահարաբերություններում նրա՝ որպես ՀՀ քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների իրացման նպատակով: Միաժամանակ, Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված իրավական պահանջի համաձայն «...արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական մասն համարժեք պայմանների ստեղծումը, երբ հստակեցված է անձնական (կենսաչափական) տվյալների հավաքման իրավական նպատակը, **օրենքով չնախատեսված այլ նպատակներով (պայ-**

մաններով) օգտագործման բացառումը պետության սահմանադրաիրավական պարտականությունն է: Այն միտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 11.3-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված և մի շարք այլ սահմանադրաիրավական նպատակներով պայմանավորված խնդիրների լուծմանը: **Իրավակարգավորման այսպիսի սկզբունքի ընկալման և կիրառման պայմաններում սույն գործով վիճարկվող նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցի:**

Մյուս կողմից, սահմանադրական դատարանը գտնում է, որ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների կատարմանն ուղղված օրենսդրական այս կամ այն կարգավորմամբ չպետք է վտանգվի (արգելափակվի) քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների ազատ իրականացումը: Սահմանադրությունն իրավական միասնական փաստաթուղթ է, որում սահմանված նորմերը գործում են անմիջականորեն և ենթակա են անվերապահ կատարման: Օրենքով են սահմանվում դրանց կատարման կարգն ու պայմանները (Սահմ. 6-րդ հոդված): Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի նորմերի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման համատեքստում վերլուծությունը վկայում է, որ նախատեսելով սուբյեկտիվ բնույթի որոշակի իրավունքներ՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է պարտականություններ, որոնք թեև միտված են հիշյալ օրենքով հետապնդվող իրավական նպատակի իրագործմանը, այն է՝ ՀՀ քաղաքացիների նույնականացմանն ապահովելուն, այնուհանդերձ, որոշակի քաղաքացիների նկատմամբ, որոնք իրենց կրոնական համոզմունքներից ելնելով ի վիճակի չեն կատարելու մատնադրոշմներ հանձնելու վերաբերյալ նույն օրենքի պահանջը, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար այդ պարտականության կատարման անհնարինության հետևանքով, երբ սահմանված չեն իրավական այլընտրանքային պայմաններ, այդ անձինք զրկվում են նույնականացման քարտ ստանալու իրավունքի իրացման, հետևաբար՝ նաև իրավահարաբերություններին լիարժեք մասնակցելու հնարավորությունից: Այս առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ չնայած վիճելի իրավակարգավորումներն ինքնին հետապնդում են իրավաչափ նպատակ, պարունակում են անձի նույնականացում երաշխավորող նորմեր, սակայն բարոյաժողովրդական առումով պետք է ընկալելի լինեն նաև հասարակության այն անդամների կողմից, ովքեր իրենց կրոնական համոզմունքներին համապատասխան ի վիճակի չեն միակերպ ընկալել և կատարել դրանցում բովանդակված պահանջները՝ կապված մատնահետքեր հանձնելու,

կենսաչափական տվյալներ հավաքելու, պահպանելու և օգտագործելու հետ: Նորմատիվ այդ պահանջների իրացումը չպետք է վտանգի կամ արգելափակի անձի Սահմանադրությամբ երաշխավորված (այդ թվում՝ սահմանափակման ոչ ենթակա) այլ իրավունքների ազատ իրականացումը: Օրենսդրական կարգավորումները չպետք է, մի կողմից, սպահովեն կրոնական համոզմունքների ազատ իրականացումը, իսկ մյուս կողմից, երբ խնդիրը հանգում է սահմանադրական այլ իրավունքների կամ պետության սահմանադրաիրավական պարտականությունների իրականացմանը, արգելափակեն կամ անարդյունավետ դարձնեն դրանց իրացումը, ինչը տեղի ունի վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձը հայտնվում է իրավական երկրնտրանքի առջև. կամ կատարել օրենքի պահանջը՝ հրաժարվելով իր համոզմունքներից (ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով, 27-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված), կամ չկատարել այդ պահանջը, համապատասխանաբար՝ իրացնելով իր սահմանադրական իրավունքը (հավատարիմ մնալով իր համոզմունքներին):

Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին:

8. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման սահմանադրականությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի և դրա իրացման թույլատրելի շրջանակների, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշների համատեքստում գնահատելու խնդրին՝ պարզելու համար հանրային շահերով և պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի սահմանադրական կոնկրետ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը նույն հոդվածի երկրորդ մասի հիմքերով կարող է սահմանափակվել միայն օրենքով, «եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար», որից, ինչպես և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումն օրենքով ենթակա է սահմանափակման, եթե.

- եկեղեցական արարողությունները, պաշտամունքի այլ ծիսակատարությունները խախտում են կամ կարող են խախտել հասարակական անվտանգությունը,
- այդ արարողությունները, ծիսակատարություններն սպառնում են մարդկանց առողջությանը, խախտում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Համադրելով «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրական վերոհիշյալ չափանիշների հետ՝ ակնհայտ է, որ վիճելի իրավակարգավորումները չեն պարունակում ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանգամանքներով պայմանավորված որևէ նորմատիվ պահանջ (պայման):

Կրոնական համոզմունքների (մտքի, խղճի և կրոնի) ազատությունը, որպես մարդու հիմնական սուբյեկտիվ իրավունք, երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերով:

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (կից՝ կամընտիր արձանագրություններով) 18-րդ հոդվածի, Կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա ամեն տեսակ անհանդուրժողականության և խտրականության չեզոքացման մասին հռչակագրի (1981թ.), Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության վերաբերյալ կոնֆերանսի Եզրափակիչ ակտի (Գլուխ 1, ա), սկզբունք VII), ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի (1989թ.), ԵԱՀԿ մարդկային չափանիշի մասնակից պետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (1990թ.), «ԱՊՀ երկրներում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների միջազգային պարտավորությունների մասին» հռչակագրի (1994թ.), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԱՊՀ կոնվենցիայի (1995թ.) իրավակարգավորումների շրջանակներում նույնպես երաշխավորված է կրոնական համոզմունքների և դրանց անմիջականորեն առնչվող սուբյեկտիվ այլ իրավունքների ազատությունը և դրա իրավական պաշտպանությունը, որը վերոհիշյալ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների շրջանակներում ներպետական օրենսդրության մակարդակում պարտադիր են ապահովման անդամ պետությունների կողմից: Հայաստանի Հանրապետությունում այդ իրավունքի իրացման երաշխավորման նպատակին է ծառայում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար»: Միաժամանակ, օրենսդիրը հատակեցրել է կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացման շրջանակներում պետության միջամտության սահմանները (օրենքի 17-րդ, 18-րդ հոդվածներ):

9. Սահմանադրական դատարանն իր ՄԴ-Ո-649 որոշմամբ անդրադառնալով օրենքով նախատեսված անձի սուբյեկտիվ պարտականության և Սահմանադրությամբ երաշխավորված խղճի, կրոնի, համոզմունքների ազատության իրավունքի հարաբերակցության, դրանց հավասարակշռման սահմանադրաիրավական գնահատման խնդրին՝ ընդգծել է, որ «... Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են և՛ օրենսդրին, և՛ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ»։ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառման նույնպիսի խնդիր առկա է սույն գործով վեճի առարկա նորմեր պարունակող օրենքներում։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի խնդիրն է սույն գործով վիճելի իրավակարգավորումների շրջանակներում նախատեսել այնպիսի այլընտրանքային ընթացակարգեր, որոնց պարագայում անձը կամընտրական հնարավորություն ունենա իր կրոնական համոզմունքներին համահունչ համապատասխանեցնելու իր վարքագիծը։ Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «... հասարակական կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեցնի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում օրենսդրական լուծումներ գտնելը, ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման համապատասխան փոփոխությունները կարող են կրոնական համոզմունքներ ունեցող անձանց նախկին նմուշի անձնագրերի վավերականության ժամկետի երկարացման պայմաններում ժամանակավոր երաշխիք հանդիսանալ այդ անձանց՝ որպես ՀՀ քաղաքացու՝ իրենց իրավունքների ու ազատությունների իրացման համար։

Սահմանադրական դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի գործող այն իրավակարգավորման վրա, համաձայն որի՝ «Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համա-

պատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ» (19-րդ հոդված): Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավական մոտեցումը պետք է իրացվելի լինի նաև նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է իրավակարգավորման բաց, որի հաղթահարումն ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է, ինչի մասին է վկայում նաև սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բացատրության մեջ բերված՝ սույն որոշման 3-րդ կետում նշված եզրահանգումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությամբ, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

2. «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված նորմը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1244**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱԼԻՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 414.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Ա. Գրիգորյանի և դիմողի ներկայացուցիչ Հ. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ալիսա Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ալիսա Գրիգորյանի՝ 2015թ. օգոստոսի 31-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը» վերաառությանը 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահանում է. «Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ 1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.»:

Սույն գործով վիճարկվող դրույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածում ամրագրվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված և 2014 թվականի հուլիսի 3-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-48-Ն ՀՀ օրենքով:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի հուլիսի 29-ի դատավճռով Ալիսա Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատարանի նշված դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք՝ միջնորդելով բեկանել այն և կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 11.11.2014թ. որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի հուլիսի 29-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ մերժել:

Նշված որոշման դեմ Ալիսա Գրիգորյանի պաշտպանի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել՝ խնդրելով կասեցնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 11.11.2014թ. որոշման ուժի մեջ մտնելը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը 20.02.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ նշելով, որ. «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը ... հրապարակվել է 2014 թվականի նոյեմբերի 11-ին: Գործի նյութերից երևում է, որ պաշտպանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել 2014 թվականի դեկտեմբերի 24-ին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետն անցնելուց հետո»:

3. Դիմողը, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, նշում է, որ սահմանված ժամկետներից ուշ ներկայացված բողոքները վարույթ ընդունելու վերաբերյալ որոշումների համար դատարաններն օժտված են հայեցողական լիազորությամբ: Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկան տարբերակված մոտեցումներ է կիրառում իր կամքից անկախ հանգամանքներում ՀՀ վերաքննիչ դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների պարագայում: Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-1052 որոշումը՝ դիմողը նշում է, որ հիշյալ որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ձևավորվել է այնպիսի իրավակիրառ պրակտիկա, որի պարագայում բողոքաբերը պարտավորություն չի կրում դատարանին խնդրել հարգելի ճանաչել իր կողմից բաց թողնված ժամկետները: Դիմողը նշում է նաև, որ բողոքարկման համար ժամկետի հաշվարկի նման մեխանիզմ է գործում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող բողոքների համար, ինչը վկայում է այն մասին, որ իրավակիրառ պրակտիկան որոշակիության առումով հաստատում է, որ վերադատության կարգով որոշումների բողոքարկման համար ժամկետը հաշվարկվում է դրանք ստանալու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար՝ մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը կարծում է, որ վիճարկվող դրույթներն իրավական որոշակիության, դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության տեսանկյունից խնդրահարույց են: Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողը եզրահանգել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետն այնքանով, որքանով այն բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչում հարգելի, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, նշում է, որ թեև բողոքարկման ժամկետը հաշվարկվում է դատական ակտի հրապարակման պահից, այդուհանդերձ, օրենսդիրն իրավական երաշխիքների ամրագրմամբ ապահովել է անձանց բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը: Բողոքարկման իրավունքի իրականացման համար վճռական նշանակություն ունի դատական ակտը հասցեատիրոջը ժամանակին հանձնելը: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիքներից է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու իրավական հնարավորությունը: Այն իրենից ներկայացնում է որոշակի իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դա-

տարանը գնահատում է դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ «բաց թողնված ժամկետի վերականգնումն այն հարցերից է, որտեղ դատարանը հայեցողություն դրսևորելու իրավասություն ունի»: Պատճառների հարգելիությունը գնահատողական հասկացություն է, և յուրաքանչյուր դեպքում այն գնահատելու անհրաժեշտություն է առաջանում: Սակայն դատական հայեցողությունը պետք է իրականացվի ոչ թե կանայական, այլ օրենքի շրջանակներում: Դատարանը բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում ունի ոչ թե անսահմանափակ հայեցողական լիազորություն, այլ նշված հայեցողական լիազորության իրականացումը սահմանափակված է այդ պատճառների հարգելիությամբ: Բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում վճռորոշը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային է համարվում դատարանի կողմից որոշում կայացնելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով ՄԳՌ-1052 որոշումը, ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշումը, ինչպես նաև ներկայացնելով քննության առարկա հարցի վերաբերյալ օտարերկրյա փորձը, փաստարկում է, որ բոլոր դեպքերում բաց թողնված ժամկետի վերականգնումն իրականացվում է որոշակի իրավական ընթացակարգի պահպանմամբ: Այն է՝ շահագրգիռ անձը պարտավոր է ներկայացնել համապատասխան միջնորդություն՝ միաժամանակ կցելով ժամկետը բաց թողնելու հարգելիությունը հավաստող ապացույցներ, որոնք ենթակա են ուսումնասիրման և գնահատման դատարանի կողմից: Եթե առանձին դեպքերում դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը կարող է ակնհայտ լինել, ինչպես, օրինակ, դատավարական փաստաթղթերն ուշացումով ստանալու կամ ուղարկելու դեպքերը, ապա այլ դեպքերում հարգելիությունը կարող է վիճելի լինել և պահանջել դրանց ուսումնասիրում և գնահատում:

Ամփոփելով իր կողմից ներկայացված հիմնավորումները՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամրագրված իրավական պահանջի նշանակությունը՝ հաշվի առնելով մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների պաշտպանության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքներ:

րի երաշխավորվածությունը՝ հաշվի առնելով նաև վերջիններիս, ինչպես նաև դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր մի շարք որոշումներում (մասնավորապես՝ ՍԳՈ-652, ՍԳՈ-665, ՍԳՈ-673, ՍԳՈ-690, ՍԳՈ-719, ՍԳՈ-758, ՍԳՈ-765, ՍԳՈ-780, ՍԳՈ-873, ՍԳՈ-936, ՍԳՈ-1037, ՍԳՈ-1127, ՍԳՈ-1190, ՍԳՈ-1192) դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Հիշյալ որոշումներում անդրադառնալով նաև դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովման անհրաժեշտությանը՝ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությանմբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան:

Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (*Golder v. United Kingdom*, 21 feb. 1975, *Fayed v. United Kingdom*, 25 aug. 1994, *Ashingdane v. United Kingdom*, 28 may 1985, *Garcia Manibardo v. Spain* (15 feb. 2000), 29.06.2000, *Bellet v. France*, 20 nov. 1995, *Philis v. Greece*, 27 aug. 1991, *Tolstoy Miloslavsky v. United Kingdom*, 23 jun. 1995): Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը շեշտում է, որ. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն» (*Perez de Rada Cavanilles v. Spain*, 28 oct. 1998, *Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece* (16 nov. 2000), 16 feb. 2001) (ՍԳՈ-652),

բ) «... նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բա-

ցի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն:

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը...» (ՄԳՈ-690),

գ) «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԳՈ-719),

դ) «Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիրորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից» (ՄԳՈ- 765),

ե) «Սույն գործի շրջանակներում ևս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ,

սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalifaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000)» (ՄԳՌ-1127),

զ) «Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ:

Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ» (ՄԳՌ-1192):

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը» վերտառությամբ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն իրավապայմանները, որոնց դեպքում վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության: Ըստ այդմ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է երկու իրավիճակ, որոնց դեպքում վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, այն է՝ եթե.

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է,

2) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

Վիճարկվող դրույթում ամրագրված՝ բողոք բերելու համար սահմանված ժամ-

կետի հետ կապված իրավակարգավորումն իր ամրագրումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածում, որի 1-ին մասը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում: Այսպես, սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը, իր ՄԳՈ-1062 որոշմամբ արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք, ինչպես նաև ՄԳՈ-1062 որոշման մեջ վկայակոչված ՄԳՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հանգում են, մասնավորապես, հետևյալին.

ա) «... ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար» (ՄԳՈ-1052),

բ) «...վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը» (ՄԳՈ-1052),

գ) «... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր նման դեպքերում կողմը պետք է ունենա ողջամիտ ժամկետ դատական ակտն ստանալուց կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալուց, նրան պաշտոնապես հասանելի լինելուց հետո հիմնավոր բողոք ներկայացնելու համար: Իսկ, ինչպես նշվեց, բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի ուժով /ex jure/ բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը» (ՄԳՈ-1052),

դ) «Այլ խնդիր է, թե Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների համատեքստում որքանով է երաշխավորված օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետներից օգտվելու իրավական հնարավորությունը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման և դատական ակտը հասցեատիրոջը փաստացիորեն հանձնելու պահերի միջև առկա ժամանակային գործոնը և դրանով պայմանավորված՝ դատական ակտը վիճարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը» (ՄԳՈ-1062),

ե) «... սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար» (ՄԳՈ-1062):

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունն անմիջականորեն փոխկապակցված է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՄԳՈ-1052 և ՄԳՈ-1062 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի քննությունն անհրաժեշտ է իրականացնել այդ դիրքորոշումների լույսի ներքո: ՄԳՈ-1062 որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ ճանաչվում է հարգելի: Այսինքն, սահմանադրական դատարանը որպես դրույթի սահմանադրականության պայման նշել է այն, որ նախ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ պետք է ճանաչվի հարգելի:

Վերոնշյալի հաշվառմամբ, ելնելով նաև անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների առավել արդյունավետ իրացման

երաշխավորվածությունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, որպես ընդհանուր կանոն, այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին **միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է**, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: Միևնույն ժամանակ, որպես հատուկ կանոն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված չէ անձի կամքով, առաջացել է անձից անկախ պատճառներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշյալ դեպքերում ներկայացված միջնորդությունը բավարարելը համապատասխան դատական ատյանի պարտականությունն է հանդիսանում:

Ըստ այդմ, սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով /*ex jure*/ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

9. Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել: Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը՝ նշելով, որ «... ոչ միասնական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանան ժամկետի բացթողման հարգելիությունը գնահատելիս»:

Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային-իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**22 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԳՈ-1249**

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՄԳՈ-1189. «ՄՈՒՍԱԼԵՈ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ» ՄՊԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 90-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 2-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	41
ՄԳՈ-1190. ՀՀ ՎՃՈՒԲԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	51
ՄԳՈ-1191. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԼԱՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 314.1-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 8-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	64
ՄԳՈ-1192. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱ ՍԱՐԳՅԱՆԻ, ԳՎԻՆ ԻՍԱՆՅԱՆՍԻ, ՈՒՒԳՈՒՖ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ, ՍԱԳՂԱ ԵԳԻԱՋԱՐՅԱՆԻ, ԱՐԱՄ ՍԱՐԳՅԱՆԻ, ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱՐՈՉՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 154-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 158-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ	75
ՄԳՈ-1196. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՎԱԼԵՆՏԻՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆԻ ԵՎ ՍՈՖՅԱ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ, 407-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 414.1-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 2-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	95
ՄԳՈ-1197. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 171-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԳ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ, 173-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	105
ՄԳՈ-1202. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐԱ ՎԱՐԳԱՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1058-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	118
ՄԳՈ-1203. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՇԱՀՆՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 69-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ ԱՐԱՍԳՐՎԱԾ ԳՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	123
ՄԳՈ-1205. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԷՄՍԱ ԽՈՋՈՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 199-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	133
ՄԳՈ-1210. ՀՀ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 88-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ, «ԳԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 2-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ 44-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 4-ՐԳ ԿԵՏԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 283-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԳ ՄԱՍԻ, 298-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ, 305-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 223-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	140
ՄԳՈ-1213. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 293-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 294-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ...	160

ՄԳՈ-1220. ԲԱՆԿԱՎՈՐՈՒՄԻ ԿՈՎՈՐԴԱՆՆԵՄ ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՋԻՅՈՒՄԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԲԱՆԿԱՎՈՐՈՒՄԻ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 223-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 231-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ԵՎ 5-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 175

ՄԳՈ-1222. ԲԱՆԿԱՎՈՐՈՒՄԻ ՍԱՄՎԵԼ ԱԼԱՎԵՐԳՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 181-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 185

ՄԳՈ-1224. ՀՀ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 21.06.2014Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ Մ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ /ՀՕ-67-Ն/ ԵՎ ԿԻՅ՝ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն ԵՎ ՀՕ-77-Ն ՕՐԵՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԳՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (ՀՕ-246-Ն) 6-ՐԳ ԵՎ 10-ՐԳ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 199

ՄԳՈ-1225. ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԿԱՎՈՐՈՒՄԻ ՍԱՀՄԱՎՈՐՈՒՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԲԱՆԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 197-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ԵՎ 6-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 257

ՄԳՈ-1227. ՕՎՄԱՆԸ ԳԱՄԱՅՈՒՄԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 71-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 266

ՄԳՈ-1231. ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 196-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 274

ՄԳՈ-1234. «ՀՐԱՊԱՐԱԿ ՕՐԱԾԵՐԹ» ՍՊԸ-Ի ԵՎ «ՍՏԱՐՏ ՄԵԳԻՍ» ՍՊԸ-Ի ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ, ՀՀ ԲՐԵԼԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ, 41-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 279-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 284

ՄԳՈ-1236. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱԽԱՋԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԲՐԵԼԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 300

ՄԳՈ-1238. ԼՅՈՒՔՈՎ ՓԵՆՏՈՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 124-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ «ՎԱՐՉԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 63-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 320

ՄԳՈ-1244. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ ԲԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 8-ՐԳ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԳ ՆԱԽԱԳՐԱՍՈՒԹՅԱՆ, 8-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՐՈՐՈՐԳ ՆԱԽԱԳՐԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 332

ՄԳՈ-1249. ԱԼԻՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԲՐԵԼԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 414.1-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ..... 352